0-ից մինչև 100 տարեկան երեխաներին

Ռուբեն Մարուխյան

ՉԻԿԱՐԵԼԻՍ ԱՐԿԱԾՆԵՐԸ

Երրորդ հրատարակություն

ԵՐԵՎԱՆ 2014

ԷԴԻԹ ՊՐԻՆՏ
հրատարակչություն

ՀՏԴ 891.981-93 Մարուխյան
ԳՄԴ 84Հ-4
Մ 399

Մարուխյան Ռուբեն
Մ 399 Չիկարելիի արկածները: Վիպակ/ Ռուբեն Մարուխյան.- Եր.: «Էդիթ Պրինտ» հրատարակչություն, 2015, 248 էջ:

Խմբագիր՝ Սեդա Քուփելյան

Համակարգչային ձևավորումը՝ Նարինե Գևորգյանի

Սուտ խոսել չի կարելի: Չի կարելի չարությամբ ու չար նախանձով լցվել ընկերոջ, բարեկամի, հարևանի հանդեպ: Չի կարելի խարդախությամբ և խաբեբայությամբ իրականացնել երազանքներն ու ցանկությունները՝ ինչքան էլ վեհ ու նվիրական լինեն նրանք: Չի կարելի պարսատիկով թռչուններին ու կենդանիներին հալածել: Չի կարելի ծառ կտրել, ծաղիկներ պոկոտել, տրորել, աղբյուրի ակը աղբով լցնել... Օ՜, մեր կյանքում ինչքան բաներ կան, որ չի՛ կարելի անել, իսկ եթե արդեն քեզ թույլ ես տվել գործել այդ տմարդի արարքներից որևէ մեկը, ապա անպայման, որպես մարդ, այնքան կփոքրանաս, որ քեզ այլևս ոչ ոք չի նկատի, և ընդհանրապես կկորչես, ինչպես այս գրքում ապրող Մուշեղ անունով տղան, որին փրկելու համար երկար ու դժվարին ճանապարհ պետք է անցնել:

ԳՄԴ 84Հ-4

ISBN 978-9939-52-037-7

© Մարուխյան Ռուբեն, 2016 թ.
© Էդիթ Պրինտ, 2016 թ.

Դավիթ Մկր Սարգսյան

ՉԻԿԱՐԵԼԻԻ ՎԵՐԱԴԱՐՁԸ

Երկու և կես տասնամյակ առաջ Ռուբեն Մարուխյանն ընթերցողին հրամցրեց «Չի կարելիի արկածները» վիպակը, որը ջերմորեն և հետաքրքրությամբ ընդունվեց ընթերցող հանրության կողմից. կերպարային ինքնատիպ մտահղացում, սյուժետային անակնկալ լուծումներ, ասելիքի թարմություն և նոր հայացք իրականությանը: Տարիներ անց, 2009 թվականին, «Չի կարելին» կրկին այցելեց իր ընթերցողին, սակայն հարստացած և հագեցած նոր երևույթներով, նոր ընկալումներով և մեկնաբանություններով՝ «Չիկարելիի նոր արկածները» խորագրով: Ո՞րն էր Չիկարելիի վերադարձի պատճառը, ի՞նչն էր դրդել հեղինակին անդրադառնալու իր քսանամյա հերոսի կերպարին... Առաջին հավանական հարցը, որ նման պարագայում ծագում է, վերաբերում է գրողի անբավարարվածությանը ստեղծագործության նախորդ տարբերակից, այն կատարելագործելու նպատակին կամ կերպարի շարունակականությանը, որը ծագել է հասարակական կյանքում տեղի ունեցած էական փոփոխությունների հետևանքով: Ի սկզբանե նշենք, որ, ըստ մեզ, վիպակի վերանայման անհրաժեշտությունը պայմանավորված էր վերոնշյալ վերջին հանգամանքով՝ անցյալ դարավերջին և դրան հաջորդած տարիների ընթացքում ծավալված իրադարձություններով և մարդկային գիտակցության ու հոգեբանության մեջ աշխարհընկալման կտրուկ այլակերպումներով: Չիկարելիի կերպարային հասունացումը և սյուժետային խտացումները դառնում են վիպակի փիլիսոփայական նոր ենթաշերտերի և ակնկալվող խորհրդի բացահայտման հրամայական: Նորանուն հերոսը մեր գեղարվեստական գրականության մեջ իր արկածները մեկնարկեց թույլատրելի բացախոսության և խորհրդային դնչկալներից ձերբազատման թոթով տարիներին, բայց նոր ժամանակներն ի հայտ բերեցին նոր մարտահրավերներ, որոնցում գերիշխում էին անցումային կոչված խառնաշփոթին բնորոշ հրեշավոր սողանցքները, որոնք աստիճանաբար վերածվելու էին կործանարար սպառնալիքի իրական բարձր արժեքների նկատմամբ և ձևախեղելու մարդու մինչ այդ հայտնի և ընդունված տեսակը: Պարզ ու անպաճույճ, ազնիվ և անարատ հայացքով կյանքը դիտարկող հերոսը բացահայտում է աղաղակող անհեթեթություններ, որոնք թափանցում են հասարակական առօրյան, պղծում իրականությունը և բարոյահոգեբանական արժեհամակարգը: Այս տեսակետից Չիկարելին այնքան էլ մանկական

կերպար չէ: Անհատ և հասարակություն փոխհարաբերություններում «չի կարելին» այլևս սասպելու սրտացավ արտահայտություն չէ, այլ հասցեագրված է շարքային մահկանացուներին, ի հակակշիռ ամենակարողների, «կարելիին», որոնց ներաշխարհում և գործողություններում, ըստ էության, կաթվածահար է մարդկային և բարոյական նկարագիրը: Դրվագ առ դրվագ ավելի ցայտուն է դառնում արժեհամակարգը սպառելու և ցմրուր խժռելու տենդը... Այսօր, առավել քան երբևէ, գեղարվեստական նման խնդիրներ հետամտող գրականությունն, ի շարս գեղագիտական բազմաթիվ թիրախների, կոչված է հոգեբանորեն նախապատրաստելու նոր սերնդի մուտքը բարդ ու հակասական իրականություն. ոչ գունազարդելու, ոչ մթագնելու իրականությունը, այլ հեռու պահելու ընթերցողին միամիտ պատրանքներից և կյանքի ճշմարտություններին դեմ հանդիման հայտնվելու անակնկալներից... Իրականության հենքի վրա հյուսված հրաշապատումի միջոցով գործողությունների շղթան ձևավորվում է նախ միանգամայն իրական միջավայրում, ապա թևակոխում բացարձակ հեքիաթային, փուլ, ի վերջո վերադառնում իրական կյանք: Եվ բոլոր դեպքերում, իրականի և հեքիաթայինի փոխհարաբերություններում, նախապատվությունը փոխանցվում է մեկից մյուսին՝ այդպիսով ընթերցողի մեջ պահպանելով գործողությունների հավաստիության զգացողություն: Մանկությանն առնչվող հար անփոփոխ իրողություն. իմացության և ճանաչողության առաջին փորձեր և ընկալումներ, որոնք ուղեկցվում են մշտնջենական «չի կարելի» արգելանքով, որովհետև շրջապատի հետ անմիջական շփումը, իրերի և երևույթների մեծ աշխարհ ոտք դնող նորելուկի մեկնությունները հաճախ հանգեցնում են ամրագրված կանոնիկությունների խախտման, և գեղարվեստական պատումի հորինվածքում «չի կարելի», կրկնվող արտահայտությունը ստանում է գոյականի իմաստ, անձնավորվում, դառնում փոքրիկ Մուշեղի անվանումը: Եթե մինչ այդ նրա վարքագիծը նույնանում էր նրա շատ ու շատ հասակակիցների արարքներին, ապա այդուհետև սկսվում է հեքիաթայինը, արտասովորը, փարօրինակը... Բնության դեմ մեղանչումների, անկարգությունների և չարաճճիությունների շղթան հանգեցնում է ոչ միայն հոգևոր, այլև ֆիզիկական գաճաճացման: Չափից ավելի պաղպաղակ սիրող, թռչնաբույնը քանդող, գազանանոցում փիղ հեծնող և փիկնիկային թատրոնում իրարանցում առաջացնող երեխան յուրաքանչյուր զանցանքից հետո ֆիզիկապես ավելի է փոքրանում: Առօրյա ոչ արտասովոր արկածները նախ ներկայացնում է ինքը՝ երեխան: Մուշեղի անկարգությունները միտումնավոր չեն, այլ մանկական հետաքրքրասիրության, միամտության և անգիտության արդյունք, անմեղ խաղեր, որոնք զավեշտական իրավիճակների, երբեմն արժանվույն, երբեմն

հանիրավի հիմար դրության մեջ են գցում ոչ միայն իրեն, այլև մեծահասակներին: Ասպիճանաբար փոքրացող երեխան, ի վերջո, վերածվում է թզուկի, որն իր ֆիզիկական անկատարությունը թաքցնելու համար մեկուսանում է անտառում և այդտեղ էլ հանդիպում հեղինակին: Չիկարելին հոգեբանորեն ձուլվում է բնությանը, հաշտվում իր վիճակին, որից ելք գտնելն անհնար է, միևնույն ժամանակ կարոտում է մարդկանց և, եթե շուտափույթ չվերականգնվի նրա արտաքին տեսքն ու չափերը, ապա դատապարտված է լինելու հավիտյան հեռու մնալ նրանցից: Ռ. Մարուխյանն ի սկզբանե կարողանում է ստեղծել անմիջականության մթնոլորտ, պահպանել սյուժետային գծի լարվածությունը, նրբորեն միահյուսել իրականն ու հեքիաթայինը, հավաստիության բնույթ հաղորդել պատումին: Պատմությունը հրամցնող ասացող դերն իր վրա է վերցնում հեղինակը, որը հոժարակամ նվիրվում է Չիկարելիի փրկության գործին: Նույնիսկ այն ժամանակ, երբ ծանրության նժարն անցնում է հեքիաթայինին, նա կարողանում է պահպանել իրականության զգացողությունը՝ հավաստիության միջավայր բերելով ընթերցողին: Դրան նպաստում են պատմական էքսկուրսները, լեգենդների և ավանդազրույցների վկայակոչումները, ծանոթությունը բնության հրաշքներին, բազմաթիվ այլ գործոններ, որոնք վարպետորեն սյուժեին է միահյուսել հեղինակը: Դրանց գումարվում է նաև գործողությունների կոնկրետ աշխարհագրական վայրի հիշատակումը, դեղատան վարիչի, բժշկի թերահավատությունը, նրանց կասկածը հեղինակի հոգեկան, առողջացման վիճակի հանդեպ, երբ վերջինս դիմում է նրանց օգնությանը՝ բուժելու Չիկարելիին: Պատմողն ինքն է հաճախ անթաքույց զարմանքով համակվում գործողությունների հեքիաթային ընթացքից, որը կախարդական միջավայրում ծավալվող իրադարձություններին հաղորդում է իրական երանգ, իսկ հրաշքներն ու երևակայական հորինվածքները վերաճում են ոչ ինքնանպատակ, այլ համոզիչ անմիջականության կռվանների, քանի որ ընթերցողը, հետևելով հեղինակին, հեքիաթայինն արձանագրում է իրականության հայեցակետից... Ֆիզիկական ապաքինման բուժամիջոցը, ներումը բնության կողմից հեշտությամբ չի տրվում Չիկարելիին: Նա, հեղինակի ուղեկցությամբ, անցնում է փորձությունների մի ամբողջ շրջան, որի ընթացքում գործնականորեն դրսևորվում են գլխավոր հերոսի հոգեբանական շրջադարձի փարրերը՝ արդեն ներառելով նաև առկա մարդկային հասարակությանը բնորոշ երևույթներ: Չիկարելիի ստորգետնյա ճանապարհորդության ընթացքում, որի նպատակը ցամաքած աղբյուրի ակունքին հասնելն ու կրկին երկրի երես ջրի դուրս գալ համոզելն է, բացվում են մեծ կյանքի իրողությունները, հասարակական կյանքին անհարիր և անմարդկային նսեմ երևույթներ, որոնց հետևանքով բնությունը երես է

թեքել նրանցից: Ամեն մի խոցելի և արատավոր երևույթ (ծուլություն, ընչաքաղցություն, նախանձ, անտարբերություն, շողոքորթություն և այլն) ներկայացվում է որպես առանձին արկածային դրվագ, առանձին գեղարվեստական նպատակադրում, որն ունի իր փիլիսոփայությունը և աղտոտում է աղբյուրի, այսինքն, կենաց գոյության հունը: Դրանք ոչ միայն հոգեպես և բարոյապես, այլև արտաքնապես և ֆիզիկապես չնչին մարդուկներ են, որոնք փորձում են գայթակղել վիպակի հերոսներին, որոնք չարիք են սփռում շուրջբոլորը, բայց թե ասացող հեղինակը, թե գլխավոր հերոս Չիկարելին անհողդողդ են, և կարողանում են խուսափել նրանցից, օգնության ձեռք մեկնել թույլերին, սատարել արդարությանը, հաղթահարել փորձությունը և հասնել մարդկանցից խռոված աղբյուրի ակունքին: Նրանց առաջնորդում է վերադարձի անդիմադրելի ցանկությունը, վերադարձ իրենց մարդկային տեսքին, հարազատ տուն և երկիր, որը նույն է, թե մարդկային բարոյական արժանիքներով օժտված տեսակին...Մինչդեռ երկրի ընդերքից լսվում են երկրի ցավի հառաչանքները, ցավ, որը պատճառում է մարդ արարածը բնությանն՝ իր անհեռատես, անխոհեմ և անհոգ վարքով: Վերջապես գալու է հաշվեհարդարի ժամը, բնությունը վրեժխնդիր է լինելու իր կրած վիրավորանքի համար: Վիպակի հերոսներն աղբյուրի ակունքից վերցված ջրով մաքրում են իրենց հետդարձի ճանապարհը, վերացնում բոլոր քաղաք աղբակույտերը, ախտահանում կեղծիքից և գարշահոտությունից, չարիքից և այլ աղտեղություններից, և աղբյուրը դարձյալ դուրս է հորդում՝ կենդանություն ու շունչ պարգևելով բնությանը: Չիկարելին պատվով է դիմակայում փորձությանը: Այդ ճանապարհին նա ապրում է նաև հուսահատության, հոգեկան տկարության պահեր, որն ավելի բնական և իրական է դարձնում նրա հոգևոր հարստացման և կոփման պատմությունը:

Ռուբեն Մարուխյանի վիպակը ժամանակակից իրականության ճշմարտությունները վերհանող և մարդու ու մարդկության ճակատագրով անհանգիստ գրողի ստեղծագործություն է, Չիկարելիի կերպարը՝ մեր ժամանակակից գեղարվեստական գրականության շարժընթացում հերոսի նոր որակ: Վիպակն իր ընդհանրական նկարագրով հարց է առաջացնում, թե այն ավելի շատ ու՞մ է հասցեագրված՝ մեծահասա՞կ թե ցածր տարիքի ընթեցողին, իսկ միգուցե բոլորին հավասարապե՞ս, որովհետև Չիկարելիի կերպարն իր ենթատեքստում հավակնում է Չիպոլինոների և Բուրատինոների հայկական տարբերակը լինելու: Այս հանգամանքը տեղիք է տալիս նախ ըստ արժանվույն գնահատելու «Էդիթ Պրինտ» հրատարակչության նախաձեռնությունը՝ վերահրատարակելու «Չիկարելիի արկածները» վիպակը, ապա առաջարկելու նախապատրաստել նաև օտարալեզու հրատարակություններ...

Մուտք

Դա ե՞րբ էր... Ո՛չ, ո՛չ վաղուց չէր: Կարծես երեկ լիներ: Մենք ապրում էինք Ծաղկաձորում: Մեր տունը անտառի փեշին էր: Կղմինդրե տանիքով, նախշազարդ փայտերով կառուցված պատշգամբով տուն էր: Աշուն էր, առանց մայրիկին ու հայրիկին ասելու ես գնացի անտառ: Անտառում գույների հանդես էր: Երկինքը մուգ կապույտ էր: Գույները պարում էին, խաղում, խառնվում իրար, բոցավառվում: Ես տարվեցի գույների հրավառությամբ ու մոռացա տուն վերադառնալ: Մայրիկն ու հայրիկն այդ օրը փնտրել-փնտրել են ինձ ու չեն գտել: Անհանգստացել են: Երեկոյան, երբ տուն եկա, մայրիկը գրկեց ինձ ու ասաց.

- Ի՞նչ պատիժ մտածեմ, ի՞նչ պատի՜ժ, որ էլ չկորչես: Չգիտեմ...

- Ես էլ չգիտեմ,- թութակի պես կրկնեցի մայրիկիս խոսքերն ու համբուրեցի նրա ձեռքերը:

- Իսկ ես գիտեմ,- խիստ ասաց հայրիկը,- այնպես պիտի պատժեմ, որ երբեք չմոռանա:

- Ի՞նչ պատիժ,- վախեցած հարցրեց մայրիկը,- չլինի՞ ուզում ես նկուղում...

- Առավոտյան կիմանաք,- խորհրդավոր ասաց հայրիկը:- Այո, այո, առավոտյան կիմանաք...

...Առավոտյան հայրիկն ինձ տարավ լուսանկարչատուն:

Լուսանկարիչը մեր բարեկամն էր, անունը՝ Արմենակ: Սքանչելի մարդ էր՝ բարձրահասակ, թիկնեղ, ինձ կանգնեցրեց եռոտանու վրա ամրացված լուսանկարչական ապարատի առաջ ու ասաց.

- Նայի՛ր մատիս, այստեղից հիմա ծիտը կթռչի... Ուշադի՛ր, հո՜պ, թռա՜վ... ծիտը թռա՜վ... Ծիտը թռավ գերանին, կանաչ խոտը՝ բերանի՜ն...

Ես ծիտ չտեսա... Երևի թռել էր: Թռել էր, ու ես չէի տեսել: Արմենակը ինչո՞ւ պիտի ինձ խաբեր...

Մի քանի օր հետո հայրիկը տուն բերեց մի կապ լուսանկար:

- Ահա իմ պատիժը,- լուսանկարները սեղանին փռելով՝ ասաց նա,- հիմա այս լուսանկարները մենք կբաժանենք մեր ծանոթներին և բարեկամներին ու բոլորին կասենք. «Եթե այս տղային որևէ տեղ հանդիպեք, անմիջապես հայտնեք մեզ»: Սա այլևս չի կորչի...

- Իսկապե՞ս,- ժպտաց մայրիկը:

... Այս բոլոր պատմություններն ու իրադարձությունները, որ գրել եմ այս գրքում, պատահել են այն հեռավոր աշնանը, երբ գնացել էի անտառ ու տարվել անտառի խորհրդավոր հեքիաթով... Եթե հանկարծ ձեզանից որևէ մեկը հանդիպի այս տղային, որի լուսանկարը դուք տեսնում եք, իմացեք, որ դա ես եմ՝

ՁԵՐ **ՌՈՒԲԵՆ ՄԱՐՈՒԽՅԱՆԸ**:

ԱՆԱԿՆԿԱԼ ՂԱՆԴԻՊՈՒՄ

Արևածագը չե՞ք տեսել: Ի՞նչ եք ասում: Ախր ինչպե՞ս կարելի է արևածագը չտեսնել, այն էլ ոչ թե մեկ օր, այլ ամեն օր. չէ՞ որ ամեն նոր օր իր արևածագն ու մայրամուտն ունի, և նրանցից յուրաքանչյուրը անկրկնելի է ու գեղեցիկ:

Հայրիկս ինձ սովորեցրել է միշտ արևածագից առաջ արթնանալ: Հենց ինքն արթնանում էր, շտապում էր իր դարբնոցը, որ մեր տան կողքին էր, վառում էր քուրան ու ինձ ձայն տալիս.

- Արթնացի՛ր, արևը տղամարդուն քնած չպիտի տեսնի:

Ես արթնանում էի, սառը լվացվում, վազում դարբնոց ու փուքսը փչում: Կրակն անմիջապես թեժանում էր, ու կարմրաբոց լեզուները պարում էին քուրայի պատի վրա:

Հայրիկը քուրայից հանում էր վարդի պես կարմիր երկաթը, դնում զնդանին: Հայրիկի զնդանն ու մուրճը սկսում էին զրուցել իրար հետ:

- Ով արթնանում է Արևից առաջ...,- ասում էր զնդանը,- զը՜նգ-զը՜նգ-զը՜նգ...զրը՜նգ ...զրը՜նգ ...զրը՜նգ

- Նա իր գործով միշտ կգնա առաջ... զը՜նգ-զը՜նգ-զը՜նգ-զը՜նգ-



զը՞նգ...,- պատասխանում էր մուրճը: Երբ արևը պիտի ծագեր, հայրիկը մուրճը դնում էր զնդանին ու ասում.

- Գնանք, Արևին բարի լույս ասենք:

Մենք բարձրանում էինք դարբնոցի կտուրն ու սպասում Արևին...

Սարերի ծոցից երկնում էր Արևը:

Հայրիկն ու Արևը ճանաչում էին իրար:

Արևը ժպտում էր հայրիկին ու խնդությամբ օծում աշխարհը: Ահա այդ ժամանակից սկսած՝ տոն լինի, թե սովորական օր, անձրև գա, թե ձյուն, միևնույն է, ես միշտ արթնանում եմ արևածագից առաջ, բարևում Արևին ու սկսում աշխատել:

Դրանից լավ բան չկա: Բոլորը մո՞ւշ-մո՞ւշ քնած են, իսկ դու արդեն ահագին գործ ես արել: Ճիշտ էին ասում հայրիկի զնդանն ու մուրճը.

- Ով արթնանում է Արևից առաջ...

- Նա իր գործով միշտ կգնա առաջ....

Բայց ավելի լավ է սկսեմ իմ պատմությունը:

Թեղենիս սարի անտառապատ փեշերին՝ հինավուրց Կեչառիս վանքի հայացքի ներքո, փռված է Ծաղկաձոր քաղաքը: Այնտեղ հանգստյան տներ, մարզահամալիրներ ու առողջարաններ կան, որտեղ մարդիկ կազդուրվում են, հանգստանում, մարզվում, բուժվում...

Այնտեղ է գտնվում նաև Հայաստանի գրողների միության ստեղծագործական տունը: Ահա այդ տանը դուք կարող եք հանդիպել անվանի ու ոչ անվանի գրողների: Անվանիները նրանք են, ովքեր մտազբաղ

ճեմում են ծառուղիներում, նստում ծառերի տակ դրված նստարաններին ու զրուցում բարդ-բարդ բաների մասին.

- Իմ նոր վեպում ես ապացուցել եմ, որ մարդն է միայն ընդունակ երկնքից աստղեր վայր բերելու և միաժամանակ կատարելու ամենազարհուրելի ոճրագործությունը... Մարդը, այո, մարդն է արվեստի ստեղծագործության նյութն ու ոգին, մենք պետք է բացահայտենք մարդու էությունը, նրա գեղեցկությունն ու վեհությունը և այլն... և այլն... և այլն...

Շատ-շատ հետաքրքիր է նրանց զրույցները լսելը:

Իսկ ոչ անվանիները, սենյակներում փակված, մտածում են. «Վաղը կամ մյուս օրը այնպիսի մի գիրք կգրեմ, որ ողջ աշխարհը կկարդա ու կասի.

- Ա՜յ սա իսկական գրո՛ղ է»:

Եվ որպեսզի նրանք արժանանան այդ գնահատանքին, առավոտից մինչև ուշ երեկո չխկչխկացնում են իրենց գրամեքենաները...

Ես էլ եմ ուզում անվանի գրող դառնալ, դրա համար արթնանում եմ արևածագից առաջ, ինչպես արդեն ասել եմ, ու սկսում՝ չըխկ հա՜ չրխկ, չըխկ հա՜ չրխկ՝ աշխատեցնել գրամեքենաս...

...Այդ օրը արթնացա վաղ, լվացվեցի, նստեցի գրամեքենայի առաջ, ճերմակ թուղթը դրեցի գլանին ու սկսեցի չխկչխկացնել: Մեկ-երկու նախադասություն մեքենագրելուց հետո կանգ առա... Ուզեցի շարունակել՝ չստացվեց: «Գուցե սխալ եմ սկսել, պատահում է՝ ճիշտ բառը չես գտնում, չես կարողանում պատմվածքը շարունակել»: Նոր թուղթ փաթաթեցի գլանին, նորից չխկչխկացրի... Մի քանի նախադասություն հեշտությամբ շարեցի իրար հետևից ու նորից կանգ առա... Չէ, չի ստացվում... Երևի լավ չեմ նախապատրաստվել, ասելիքս նախօրոք ծանրութեթև չեմ արել, դրա համար էլ չի ստացվում:

Որոշեցի հետաձգել պատմվածք գրելն ու գնալ անտառ: Սենյակից դուրս ելա, ոլորապտույտ արահետով գնացի անտառի խորքը... Ծվենծվեն եղած մութի քուլաները կախվել էին ծառերի կատարներից, թափվել հաղարջենիների, մորենիների, մասրենիների թփերին:

Գունաթափ սավանների մեջ բարուրված ծառերը գաղտնիքներ էին շշնջում իրար ականջի: Անտառային շշուկների ու շրշյունների միջից լսվում էր անքուն մնացած բվի կռինչը, որը հազարաձայն արձագանքով տարածվում էր հեռուները... Հետո փայտփորիկը սկսեց համաչափ թակել նոր օրվա դուռը.

- Թա՜կ-թի՜կ, թա՜կ-թի՜կ, թա՜կ-թի՜կ...

Այդ ձայնի վրա բոլոր թռչունները միանգամից ասես արթնացան ու սկսեցին բողոքել.

- Այս ի՜նչ անկարգություն է, ի՜նչ հանդգնություն, չեն թողնում քնենք...

- Լռե՛ք, լռե՛ք,- կչկչացին կաչաղակները,- մի՛ աղմկեք, լույսը դեռ չի բացվել, մի՛ աղմկեք...

Ու հանկարծ այդ ժխորից զատվեց նրբագեղ մի երգ: Դեղնակտուցն էր երգում՝ գետամիջի ողորկ քարին թառած: Այնքան գեղեցիկ ու հմայիչ էր այդ երգը, որ բոլորը ձայնակցեցին, ու այնպիսի համերգ ստացվեց, որ աշխարհի ոչ մի համերգասրահում չես լսի... Հետո անտես մի ձեռք հավաքեց անտառի վրա փռված մութի ծվենները, տարավ լցրեց ծմակներն ու թավուտները, որ իրիկնամուտին նորից բերի ու փռի անտառի վրա... Անտառի կածանն ինձ հասցրեց Աստղատուն: Դա սքանչելի մի բացատ է՝ գրողների ստեղծագործական տնից ոչ այնքան հեռու: Մենք ենք այդ բացատի անունը Աստղատուն դրել: Ինչքա՜ն կարոտներ, ինչքա՜ն երազանքներ են կապված այդ բացատի հետ: Դա մեր մանկության բացատն է: Գիշերները աստղերը թափվում են այդ բացատում գտնվող աղբյուրի մեջ: Քանի որ նրա ջուրը կաթնագույն է, Կաթնաղբյուր են ասում: Աստղատանը կռատուկի մեծ-մեծ թփեր են աճում: Ամռանը, երբ մենք երեխաներ էինք, կտրում էինք այդ թփերից, հովանոցի պես պահում գլխներիս, որ արևահար չլինենք:

Ես մոտեցա իմ մանկության աղբյուրին:

- Բարև՛, աղբյո՜ւր,- շշնջացի ու խոնարհվեցի, որ ջուր խմեմ: Աղբյուրը ճանաչեց ինձ ու այնպես խոխոջաց, որ սիրտս մանկության կարոտով լցվեց: Ծառերի կատարներն սկսեցին վեր ձգվել ու նազանքով օրորվել: Նրանցից յուրաքանչյուրն առաջինն էր ուզում արևածագը տեսնել...

Սարերից այն կողմ՝ անհայտ, հեռու մի տեղ, հորիզոնը բռնկվեց վարդակակաչների կարմիր բոցերով, ու այդ բոցերի միջից, ամպերի թանձրությունը պատռելով, ժպտացին Արևի առաջին շողերը... Երկիր ու երկինք համբուրվեցին: Սարի թիկունքին բազմեց նոր օրվա Արևը:

- Բարո՜վ եկար, բարի՜ Արև, բարո՜վ տեսանք, չքնա՜ղ Արև,- շշնջացին խոտերն ու ծառերը, ծաղիկներն ու թփերը: Գետակներն ու առվակները արշալույսի ողողանջներով լցվեցին:

Արևից պոկված մի շող մտավ անտառի ծոցն ու սկսեց վազվզել մութ կածաններով: Կռատուկի թփերից մեկի մոտ փռեցի ինձ հետ անտառ տարած կարպետը, որ նստեմ ու վայելեմ վաղորդյան անտառի հեքիաթը, և հենց այդ պահին ինչ-որ մեկը ականջ ծակող ձայնով սկսեց ճղճղալ:

- Տրորում ե՜ս..., զգո՜ւյշ, զգո՜ւյշ դիր ոտքերդ... ինձ մի՛ տրորիր... Վա՜յ, մայրիկ ջան... վա՜յ...

- Ո՞վ է, ո՜վ,- չորս կողմ նայելով՝ վախվորած հարցրի ես:

- Ոտքիդ առաջը նայիր, ոտքիդ առաջը,- կշտամբանքով ասաց նույն

ձայնը,- մեծահասակները ուր ասես իրենց ոտքերը դնում են, ինչ ասես տրորում են: Զգո՜ւյշ... Վա՜յ, մայրիկ ջան... վա՜յ...

- Ո՞վ ես. որտե՞ղ ես: Ես քեզ չեմ տեսնում:

- Կռացի՛ր, կռացի՛ր, ուշադի՛ր նայիր կռատուկի թփի տակ...

Ազնիվ խոսք, այդպիսի անհեթեթ բան ինձ հետ առաջին անգամ էր պատահում: Ես ծնկի իջա. կռատուկի թուփն զգուշությամբ տարա մի կողմ: Ա՜յ քեզ հրաշք, ա՜յ քեզ զարմանք... Թփի տակ փոքրիկ, շատ փոքրիկ՝ ճկույթիցս էլ փոքր, մի տղա տեսա, որը վախվորած նայում էր ինձ: Ես անմիջապես հիշեցի ֆրանսիացի գրող Անտուան դը սենտ Էքզյուպերիի Փոքրիկ Իշխանին:

- Ես քեզ ճանաչում եմ,- զարմացած ասացի ես,- դու Փոքրիկ Իշխանն ես, նա, ով իր մոլորակն ունի և ամեն օր...

- Ի՞նչ Փոքրիկ Իշխան, ի՞նչ մոլորակ,- ինձ ընդհատեց ճկույթիցս փոքր տղան:

- Նա, ով հրաժեշտից առաջ օդաչուին ասաց՝ երբ գիշերները նայես երկնքին, քեզ կթվա, թե բոլոր աստղերը ծիծաղում են, որովհետև նրանցից մեկում ապրում եմ ես, նրանցից մեկում ծիծաղում եմ ես: Դու կունենաս ծիծաղող աստղեր...

- Ո՛չ, ո՛չ, այդպիսի բառեր ես չեմ ասել... Ես բոլորովին ուրիշ մարդ եմ:

- Ուրեմն դու Մատնաչափիկն ես: Կոպենհագեն քաղաքում մի մարդ էր ապրում, որի անունը Հանս Քրիստիան Անդերսեն էր: Հանսը ոչ միայն հեքիաթներ էր հորինում, այլև կարողանում էր այնպես պատմել այդ հեքիաթները, որ թե՛ մեծահասակները և թե՛ երեխաները բերանները բաց լսում էին ու զարմանում: Հանսն է հորինել Մատնաչափիկի մասին հեքիաթը...

- Ո՛չ, ո՛չ,- ցրտից ատամներն իրար զարկելով՝ ասաց ճկույթիցս փոքր տղան,- ես Մատնաչափիկը չեմ: Խնդրում եմ, մի կո՛ղմ քաշվեք, մի՛ փակեք իմ Արևը... Երեկոյան մի ուլ կերավ իմ տան տանիքը, գիշերը ցոողը թափվեց վրաս... Թրջվել եմ... Մրսում եմ:

Ես մի կողմ քաշվեցի: Տղան ձեռքերն այնպես պարզեց արևին, ինչպես մենք ձմռանը մեր մրսած ձեռքերն ենք տաքացնում՝ վառարանի վրա պահելով:

- Դու երևի ինձ անծանոթ հեքիաթների հերոսներից ես...

- Ի՞նչ հերոս, ի՞նչ հեքիաթ,- վրդովվեց ճկույթիցս փոքր տղան:

- Հապա ո՞վ ես:

- Մուշեղ Արարատյանն եմ: Երևանի Գարնանային փողոցի երեսուն շենքի տասներորդ բնակարանում եմ ապրում:

- Մուշեղ Արարատյա՞ն:

- Այո՛: Ես հայ եմ, հա՛յ... Երևանցի...

- Ծնողներ ունե՞ս:

- Իհարկե: Մայրիկս ողջ օրը ժպտում է և ուրախությամբ լցնում մեր տունը, իսկ հայրիկս խոսելիս բառերը բռունցքով մեխում է սեղանին: Նա թվաբանության բոլոր խնդիրները կարողանում է առանց թուղթ ու մատիտի լուծել: Մեր շենքի երեխաները, իրենց տետրերն առած, խուժում են մեր տուն, խնդրում հայրիկիս, որ իրենց փրկի երկուսներ ստանալու տհաճությունից...

- Եղբայր, քույր ունե՞ս:

- Քույրս երաժիշտ է: Մի անգամ հեռուստատեսությամբ ելույթ է ունեցել: Նա անվերջ նվագում է մեր մեծ սենյակում դրված դաշնամուրն ու նայում դիմացի շենքի պատշգամբին, որտեղ ապրում է դերասան Սահակ Բերբերյանը. նա, ով «Բարի գիշեր, երեխաներ» հաղորդման մեջ խոզուկ է խաղում: Ճիշտ է, հաղորդման ժամանակ ինքը չի երևում, բայց քույրիկս ճանաչում է նրա ձայնը: Մայրս ասում է, որ Սահակից բացի քույրիկս ուրիշ բանի մասին չի կարողանում մտածել: Հայրս ասում է՝ իզուր, թող իր դասերի մասին մտածի: Ամենից շատ քրոջս եմ սիրում... Տեսնես հիմա ի՞նչ է անում, հը՞,- հառաչեց ճկույթիցս փոքր տղան ու լռեց:

- Ինչո՞ւ ես փոքրացել: Կարո՞ղ է չար խոտ ես կերել կամ ինչ-որ միջատի ոտնափոսից ջուր ես խմել՝ ինչպես Գառնիկ ախպերը,- զգուշությամբ հարցրի ես:

- Ո՛չ, ո՛չ, ի՞նչ եք ասում... ի՜նչ միջատ, ի՜նչ ջուր, ի՜նչ Գառնիկ ախպեր...

- Բա ինչի՞ց ես փոքրացել:

- Չի կարելիից:

- Ինչի՞ց-ինչի՞ց:

- Զզվելի, զզվելի՜ չի կարելիից:

- Ինչի՞ց: Չեմ հասկանում:

- «Չի կարելի» խոսքից: Մեր բակում հաստաբուն մի ընկուզենի կա: Ես մի ակնթարթում կարողանում եմ բարձրանալ դրա գագաթը: Բոլորը բղավում են՝ իջի՛ր, իջի՛ր, իսկ ես ավելի եմ ոգևորվում ու ավելի վեր եմ բարձրանում, գուցեև երկինք թռչեմ, եթե քույրս հևիհև չվազի ծառի մոտ ու չբղավի.

- Չի՛ կարելի, Մուշե՛ղ, չի՛ կարելի, իջի՛ր...

Ես չեմ կարողանում քրոջս չլսել, սուսուփուս ծառից իջնում եմ, կանգնում նրա կողքին:

- Տեսա՞ք, տեսա՞ք, պետք է ասեինք՝ չի՛ կարելի, որ այս տղան հասկանար մեզ,- գլուխները տմբտմբացնում են մեր հարևանները:

- Իմ վատ հատկություններից մեկն էլ անհամբերությունն է: Դրա համար բերանս միշտ այրված է:

- Համբերի՛ր, թող ճաշը սառչի՝ նոր կեր,- զայրանում է մայրս:

- Չեմ կարող, մայրի՛կ, հասկանո՞ւմ ես, չեմ կարող: Շտապում եմ:

- Ինչո՞ւ,- ձեռքը մուրճի պես սեղանին է խփում հայրս,- էդ ի՞նչ կարևոր գործեր ունես, որ չես կարող կերակուրդ հանգիստ ծամել:

- Շեկոն սպասում է:

Շեկոն մեր թաղի ամեն ինչ քանդող տղան է: Նա ֆանտաստիկ արագությամբ կարող է քանդել ցանկացած ժամացույց, լվացքի մեքենա, սառնարան, փոշեծծիչ, մի խոսքով, բոլոր այն մեքենաները, որոնցից կարելի է տիեզերանավ ստեղծել ու թռչել տիեզերք: Ճիշտ է, նա ոչ մի անգամ դեռ տիեզերքում չի եղել, բայց մի հինգ անգամ արդեն ոտքը ոլորել է, մի տասն անգամ քիթը քերծել: Ես հավատում եմ, որ մի օր նա իր Շեկոպլանով կթռչի Լուսին...

Գիտե՞ք, իմ վատ հատկությունները վերացնելու համար բոլորը սկսեցին ինձ դաստիարակել: Նրանք ուզում էին, որ ես դառնամ աշխարհի ամենաօրինակելի տղան: Դրա համար էլ հետևում էին իմ յուրաքանչյուր քայլին ու անվերջ ասում. «Չի՛ կարելի, չի՛ կարելի, չի՛ կարելի...»: Իսկ նրանց «չի կարելիները» կախարդական հատկություն ունեին: Ինչքան ասում էին՝ «չի կարելի», ես ավելի շատ էի ուզում անել այնպիսի բաներ, ինչը չէր կարելի: Չգիտեմ, չգիտեմ ի՞նչ է լինելու,- հառաչեց ճկույթիցս փոքր տղան ու թախծոտ աչքերով նայեց ինձ:

- Ճիշտն ասած, ես էլ չգիտեմ՝ ինչ եմ անելու, բայց մի՛ վախենա, մի հուսահատվիր, այդպես չես մնա,- նրան հուսադրեցի ես:

- Դուք կարծում եք՝ ես ի՞մ մասին եմ մտածում: Ո՛չ: Եթե մերոնք իմանան, որ ես այսպես փոքրացել եմ ու կորել, ամբողջ աշխարհը կխառնեն իրար, լաց կլինեն...

- Նրանք չգիտե՞ն...

- Ոչ, չգիտեն: Հայրիկն ու մայրիկը կարծում են, թե ես պապիկի մոտ եմ: Պապիկս մեղվապահ է, նրա մեղվանոցն այստեղ է: Պապիկս կարծում է՝ ես գյուղ եմ գնացել: Մինչև կիրակի պետք է նախկին տեսքս վերականգնվի, այլապես չգիտեմ՝ ինչ կկատարվի... խնդրում եմ, եթե կարող եք՝ օգնեք ինձ:

- Անկեղծ ասած, չգիտեմ՝ ինչ պետք է անել: Գուցե բժշկի՞ դիմենք:

- Ո՜չ, ո՜չ, բժիշկը կսրսկի... իսկ ես տանել չեմ կարող, երբ ինձ սրսկում են,- անհանգստացավ ճկույթիցս փոքր տղան ու նստեց զանգակածաղկի տերևի վրա,- մինչև ոսկորներս թրջվել եմ... Այս գիշեր ուրիշ տեղ կքնեմ, որ ոչ մի ուլ կամ գառ չկարողանա իմ տան տանիքը ուտել,- զան-

գակածաղկի ցողունով վեր բարձրանալով՝ ասաց ճկույթիցս փոքր տղան,- շուտով ես կթռչեմ Թեղենիս,- ցողունից կախվելով՝ սկսեց ճոճվել:

- Դու կարողանում ես թռչե՞լ,- զարմացած հարցրի ես:

- Թիթեռներն են ինձ թռցնում: Նրանք ինձ նստեցնում են իրենց մեջքին, ու թռչում ենք: Այնքան հաճելի է... Դուք երբևէ թիթեռի մեջքին նստած թռչե՞լ եք,- զանգակածաղկից ափիս մեջ ցատկելով՝ հարցրեց նա:

- Այո՛, իհարկե, իհարկե, թռչել եմ: Երբ փոքր էի, գիշերները իմ ննջարանում հայտնվում էր երկար մորուքով, մեծ-մեծ աչքերով մի թզուկ: Նա բռնում էր իմ ձեռքից, ու մենք միայն թռչում էինք դեպի աստղազարդ երկինքն ու լողում անսահմանության մեջ: Ես այնքա՜ն ուրախ էի, այնքա՜ն երջանիկ... Թեթև, անհոգ լողում էի երկնքում...

- Հիմա չե՞ք թռչում:

- Իմ բարի թզուկը այլևս չի գալիս: Սպասում եմ, սպասում, բայց նա չկա ու չկա... Ո՞ւր գնաց, ի՞նչ եղավ, չգիտեմ,- հառաչեցի ես ու լռեցի: Լռեց նաև ճկույթիցս փոքր տղան ու կարեկցանքով նայեց ինձ:

- Ինչո՞ւ են մեծահասակները հառաչում,- տխրությունս փարատելու համար հարցրեց նա:

- Կարոտում են իրենց մանկությանը,- ասացի ես:

- Ներեցե՛ք, տխրեցրի Ձեզ: Ես չեմ ուզում աշխարհում որևէ մեկը տխրի ու հառաչի:

- Ոչի՜նչ, կանցնի... Գիտե՞ս ինչ, լավ կլինի գնանք Գրողների տուն: Ուր որ է անձրև կգա:

- Ո՞նց իմացաք, որ անձրև է գալու:

- Նայիր Թեղենիսին, նրա կատարին կուտակված սև ամպերը երբ թանձրանում են, անպայման անձրև է գալիս... Գնանք:

- Ո՜չ, ո՜չ,- ափիս միջից գետնին ցատկելով՝ ասաց նա,- չեմ ուզում տուն գնալ:

- Ինչո՞ւ:

- Թիթեռներին խոստացել եմ այստեղ սպասել իրենց:

- Ոչինչ, նրանք կգան, կտեսնեն, որ դու չկաս, կգնան:

- Չեմ ուզում,- ճչաց նա ու ոտքը խփեց գետնին,- ես խոստացել եմ նրանց սպասել: Խոստումը չի կարելի դրժել:

- Այստեղ խոնավ է, ցուրտ... թունավոր սողունները կարող են քեզ կծել: Վերջապես...

- Ես չեմ ուզում տուն գնալ: Ինչպե՞ս եմ դռները բացելու, փակելու, ինչպե՞ս եմ աստիճաններով իջնելու, բարձրանալու: Խնդրում եմ, ինձ տուն մի՛ տարեք: Այս տեսքով չեմ ուզում, որ որևէ մեկը ինձ տեսնի:

- Լավ,- համաձայնեցի ես,- չեմ կարող քեզ մենակ թողնել ու գնալ:

Ուրեմն պետք է քեզ հետ մնամ, որ կարողանամ քեզ օգնել:

- Ուռա՜, միասին կլինենք,- ուրախացավ նա:

- Բայց այստեղ մնալու համար պետք է ապաստարան ստեղծենք, որ կարողանանք անձրևից, ցրտից, քամուց պաշտպանվել: Փոքրի՛կս, սիրելիս, դու ինձ այստեղ սպասի, ես գնամ վրան բերեմ:

- Շուտ կվերադառնա՞ք:

- Մի քանի րոպեից կգամ,- ասացի ես ու վազեցի իմ սենյակ, վերցրի անկողնածածկոցներն ու շտապեցի անտառ:

Թեղենիս սարի կատարին կուտակված սև-սև ամպերը կուլ էին տալիս երկնքի կապույտն ու գոռգոռում անտառի վրա:

- Փոքրի՜կ, փոքրի՜կ,- Աստղատուն հասնելով՝ կանչեցի ես:

- Ես այստեղ եմ,- ուրախացած ընդառաջ վազեց նա:

- Հիմա ես այս դարավոր կաղնու ծառի տակ վրան կխփեմ, որ անձրևի տակ չմնանք:

- Մենք վրանո՞ւմ կապրենք,- հարցրեց նա:

- Այո՛:

- Հրաշալի՜ է, հրաշալի՜...

- Դու ծղոտ հավաքիր, իսկ ես սկսեմ վրանը խփել,- ասացի ու գործի անցա: Անտառի բացատից ես երկարուկ մի փայտ գտա, ամրացրի կաղնու բնին, մյուս ծայրը խցկեցի թխկենիների արանքը, անկողնածածկոցը գցեցի վրան, չորս ծայրերը ձգեցի ու քարեր դրեցի փեշերին: Գեղեցիկ վրան ստացվեց:

- Խնդրեմ, մեր կացարանը պատրաստ է,- ասացի ես,- հիմա ներսը պետք է հարդարենք: Ապա բեր քո հավաքած ծղոտը:

- Խնդրեմ,- պատրաստակամ ասաց նա ու ինձ տվեց իր հավաքած ծղոտը...

Ես չորացած տերևներ հավաքեցի ու լցրի վրանի մեջ, հետո այդ տերևների վրա փռեցի ինձ հետ անտառ տարած կարպետը:

- Հրաշալի բազմոց ստացվեց,- ասաց նա,- բայց ես չեմ կարողանա բարձրանալ ու իջնել:

- Ես քեզ համար աստիճաններ կպատրաստեմ,- ասացի ես, ծառի ճյուղերից աստիճան պատրաստեցի և այնպիսի թեքությամբ դրեցի կարպետի ու գետնի վրա, որ նա հեշտությամբ կարողանա բարձրանալ ու իջնել:

Մինչ մենք տարված էինք գործով, կայծակի շեղբերը պատռեցին ամպերը, ահեղաձայն որոտը արձագանքվեց սարերում ու ձորերում: Երկինք ու երկիր խառնվեցին իրար:

- Շուտ մտնենք մեր վրան,- տաբատիս փողքից կախվելով՝ կանչեց նա:

- Մի՛ վախենա,- նրան զգուշությամբ դրեցի ափիս մեջ ու մտա վրան: Անձրևի շիթերն սկսեցին թմբկահարել վրանը: Անձրևային համանվագով լցվեց անտառը: Ես նստեցի մի անկյունում, փոքրիկին նստեցրի իմ դիմաց:

Ծաղիկների ու խոտերի բուրմունքը խառնվել էր անձրևի բույրին, ու թվում էր՝ մեր մոլորակի վրա ժամանակը կանգ է առել:

- Քեզ դո՞ւր է գալիս մեր ապաստարանը,- հարցրի նրան, որն արքայազնի պես բազմել էր բազկաթոռ հիշեցնող չորացած մի տերևի ու անթարթ աչքերով նայում էր անձրևի շիթերին, որոնք սուրսայր նետերի պես խրվում էին հողի մեջ:

- Ես երբեք չէի կարող մտածել, որ այսպիսի ապաստարան կունենանք: Ի՞նչ պիտի անեի առանց Քեզ,- ասաց նա ու ժպտաց:

Ես նույնպես ժպտացի: Ես շատ եմ սիրում ժպտացող մարդկանց: Ոչ մի պահի մարդն այնքան գեղեցիկ չէ, որքան ժպտալիս:

- Ուզո՞ւմ եք Ձեզ համար երգեմ:

- Իհարկե, ուզում եմ,- ասացի ես:

- Ես կերգեմ քույրիկիս սովորեցրած երգերից մեկը. Կոմիտաս, «Անձրև եկավ շաղալեն»,- հայտարարեց տղան ու սկսեց երգել:

Անձրև եկավ շաղա՛լեն,
Ուռու տերև դողալեն,
Վայ լե՛, լե՛, լե՛, լե՛, լե՛ ջան...

Նրա դյութիչ ձայնը խառնվեց անձրևի խշշոցին, անտառի մրմունջին ու տարածվեց հեռու հեռուները: Ես ձայնակցեցի նրան:

Այո՛, այո՛, երբ հարազատ է երգը, որի հնչյունները քո էությունից են հյուսված, քո սրտի տրոփյունից, անսահման երանություն է իջնում վրադ, հոգիդ լցվում խնդությամբ ու երազանքով:

- Իսկ հիմա, խնդրում եմ, պատմի՛ր քո մասին,- երգը վերջացնելուց հետո ասացի ես:

- Ի՞նչ պատմեմ:

- Պատմի՛ր, ինչպե՞ս ես դու փոքրացել, ինչպե՞ս կատարվեց դա, ի՞նչ զգացիր...

- Երեկ, երբ պապիկի մեղվանոցից դուրս եկա, այսպես չէի... Հետո, երբ սկսեցի մրջնանոցը քանդել, դարձյալ այսպես չէի: Մրջնանոցը քանդելուց հետո, երբ ուզում էի անցնել առվակի վրայով, տեսա, առվակը շատ-շատ մեծացել է, ու ես չեմ կարողանում անցնել... Շոշափեցի ինձ ու զգացի՝ փոքրացել եմ: Վախից լաց եղա, չգիտեի ինչ անել, գոռում էի, ճչում, հետո մի թիթեռ եկավ, պտտվեց իմ շուրջը: Նա այնքան գեղեցիկ էր ու բարի, որ ամաչեցի նրա ներկայությամբ լաց լինել: Թիթեռն ինձ

հետ խաղաց, հետո ես կախվեցի նրա ոտքերից, ու նա ինձ թոցրեց-բերեց այստեղ: Ահա բոլորը:

- Չէ՛, դա բոլորը չէ,- ասացի ես,- դու ամենասկզբից պատմիր:

- Ձեր ինչի՞ն է պետք իմ պատմությունը:

- Քեզ մեծացնելու համար: Հիվանդին բուժելու համար բժիշկը պետք է իմանա հիվանդության ողջ պատմությունը:

- Ես հիվանդ չեմ, Դուք էլ բժիշկ չեք:

- Ես գրող եմ, իսկ գրողները կարողանում են ավելի բարդ հիվանդություններ բուժել:

- Այդ դեպքում ինչո՞ւ Ձեր գրքերը դեղատներում չեն վաճառում:

- Կան այնպիսի գրքեր, որոնք նաև դեղատներում պետք է վաճառեն,- ասացի ես ու հիշեցի բոլոր այն գրքերը, որոնք նեցուկ են եղել ինձ, մխիթարել ու մեղմել են հոգուս ցավը:

- Այո՛, փոքրիկս, կան գրքեր, որոնք, եթե հանկարծ չլինեին, կյանքն այսքան գեղեցիկ և իմաստալից չէր լինի... Բայց դա ուրիշ խոսակցություն է, մի ուրիշ անգամ դրա մասին կխոսեմ: Հիմա դու պատմի՛ր քո մասին:

- Ուզո՞ւմ եք Ծեկոյի մասին պատմեմ: Իմ ընկերն է: Մի անգամ Ծեկոն մի մեծ օդապարիկ էր պատրաստել և ուզում էր...

- Ավելի լավ է քո մասին պատմես,- նրան ընդհատեցի ես:

- Լավ, կպատմեմ,- համաձայնեց նա ու սկսեց պատմել:

Ես լսում էի նրա պատմությունները և ուզում գրի առնել, որ չմոռանամ: Գրպանիս անկյունում փոքրիկ մի մատիտ կար, բայց թուղթ չկար: Ես հավաքեցի չորացած կաղնու տերևները, որոնք դեղին էին ու նուրբ, նրանց վրա արագ-արագ սղագրեցի փոքրիկ տղայի բոլոր պատմածները: Այդ տերևների վրա նրա անունը ես Չիկարելի դրեցի, որն ինձ շատ դուր եկավ...

Օրեր անց Ծաղկաձորի ստեղծագործական տան աշխատողներին շնորհակալություն հայտնեցի հոգատարության համար, հավաքեցի թղթերս, իրերս, վերադարձա Երևան: Տարվեցի աշխատանքով: Ես ռեժիսոր եմ: Թատրոնում պետք է աշխատանքի գնալ և՛ առավոտյան, և՛ երեկոյան, բացի դրանից, ամբողջությամբ պետք է նվիրվել թատրոնին, այլապես ոչինչ չի ստացվի: Ահա այդ լարված աշխատանքի ժամանակ ես մոռացա Չիկարելիին, կարծես մենք չէինք հանդիպել, կարծես մենք իրար չէինք ճանաչում: Բայց մի կիրակի, երբ մեր տանեցիները հյուր էին գնացել, և ոչ ոք ինձ չէր խանգարում, ուզեցի կարգի բերել ձեռագրերս: Գրասեղանիս դարակում գտա մի տոպրակ, որը լցված էր տերևներով: Ես հիշեցի. դրանք Չիկարելիի պատմածներն էին, որ ես սղագրել էի տերևների վրա, ու սկսեցի կարդալ: Այնքան հետաքրքիր



էին, որ հափշտակվեցի դրանցով ու արտագրեցի մի ընդհանուր տետրի մեջ: Ափսո՜ս, որ տերևներից շատերը կոտրատվել էին, ու պատմության որոշ մասեր հնարավոր չէր վերականգնել: Մի քանի օր հետո մեր տուն եկան դստերս՝ Նինայի համադասարանցիները: Նրանք հինգերորդ դասարանում էին սովորում, նրանց համար կարդացի Չիկարելիի պատմությունը: Նրանք ուշադրությամբ մինչև վերջ լսեցին ու այնքան հարցեր տվեցին, որ ես հազիվ էի պատասխանում... Երբ երեխաները գնացին, ես մտածեցի, որ ուրիշ երեխաներ էլ գուցե կուզենան իմանալ Չիկարելիի պատմությունը, կուզենան իմանալ, թե ամեն վատ արարք կատարելիս մարդն ինչպես է փոքրանում ոչ միայն բարոյապես, այլև ֆիզիկապես: Եվ եթե նա շարունակի վատ արարքներ գործել՝ կարող է այնքան փոքրանալ, որ նրան այլևս ոչ ոք չի նկատի, ու ընդմիշտ կկորչի: Ինչքան էլ, ինչքան էլ փնտրեն, միևնույն է՝ չեն գտնի...

Եվ որպեսզի իմ ծանոթ և անծանոթ տղաներից ու աղջիկներից ոչ ոք, լսո՞ւմ եք, ոչ ոք երբևէ չփոքրանա ու չկորչի, դրա համար էլ պատմում եմ ՉԻԿԱՐԵԼԻԻ այս պատմությունը...

Թե ինչպես կիրակի օրվա ուրախությունը փոխվեց տխրությանն

-Ա՛րա՛գ, արա՜գ, ուշացանք,- կանչում է մայրիկս։

- Շուտ բա՛կ իջեք,- շտապեցնում է հայրիկս։

Ես ու քույրս հավաքում ենք կապոցները, վազքով իջնում բակ, իրերը տեղավորում ավտոմեքենայի մեջ։

- Այսօր շաբաթ է, այսօր և վաղը կմնանք լեռներում, երկուշաբթի առավոտյան շուտ կգանք տուն,- ասում է հայրիկը։

- Հրաշալի է,- ուրախանում է մայրիկը,- երեխանե՛ր, դուք ոչինչ չե՞ք մոռացել,- հարցնում է նա՝ կապոցներին նայելով։

- Վա՜յ,- բացականչում է քույրս,- մոռացել եմ։

- Ի՞նչը,- հարցնում է հայրիկը։

- Գիրքս,- ասում է քույրս ու նորից վազում տուն՝ գիրքը բերելու, որն ահա ուղիղ մեկ տարի է՝ կարդում է, կարդում ու չի կարողանում վերջացնել։

- Աշխարհում ամենալավ բանը ճամփորդելն է,- ասում է մայրիկն ու նստում ղեկի մոտ։

Վերջապես վերադառնում է քույրս՝ իր անբաժան գրքի հետ, նստում իմ կողքին։

- Խնդրում եմ, կապեք ամրագոտիները, մեր «ճայը» պատրաստվում է թռիչքի,- ասում է մայրիկն ու գործի գցում մեր հին «Զապորոժեցը», որին մենք «ճայ» ենք անվանում:

Մայրիկը հայրիկից ավելի լավ է վարում ավտոմեքենան, և ես ինձ շատ հանգիստ եմ զգում, երբ ղեկը մայրիկի ձեռքերում է:

Քաղաքի ժխորից ու ավտոմեքենաների հեղեղից ազատվելով՝ մենք դուրս ենք գալիս լայնահուն մի ճանապարհ, որը մեզ տանում է դեպի Արագածի բարձունքները:

- Եկեք ճանապարհը կարճացնենք,- ասում է հայրիկը:

- Կարճացնենք,- համաձայնում ենք մենք:

Դա նշանակում է, որ մենք պետք է միասին երգենք:

- Գարնանային փողոցի «Համերաշխ» համույթը սկսում է իր ելույթը,- հայտարարում է հայրիկը,- «Կարմիր խնձոր», խոսքը և երաժշտությունը «Համերաշխ» համույթի գլխավոր խմբավար Լուսիկ Արարատյանի (մայրս է), դաշնամուրի մոտ է Թամար Արարատյանը (քույրս է): Քանի որ այսօր նա մոռացել է դաշնամուրը հետը վերցնել, ստիպված պիտի երգենք առանց նվագակցության: Պատրա՛ստ, սկսեցինք...

Ու մենք երգում ենք մայրիկի հորինած երգը, որը շատ ծիծաղելի է: Ճիշտն ասած, երբ մենք միասին երգում ենք, ճանապարհն իրոք կարճանում է, ու չենք զգում, թե ոնց ենք այդքան շուտ տեղ հասնում: Մեր «ճայը» բարձրանում է Արագած սարն ի վեր: Առաջին անգամ ենք մենք Արագած գնում, դրա համար էլ համերգն ավարտելուց հետո հայրիկը մեզ պատմում է սարի մասին:

- Հայոց աշխարհի քառագագաթ գեղեցկուհին է Արագածը: Նա ծնվել ու հասակ է առել անհիշելի ժամանակներից: Այստեղ ամեն քարի տակից սառնորակ աղբյուր է բխում, և հազարագույն ծաղիկները պարում են հովերի հետ: Արագածն աշխարհի շատ ու շատ թռչունների ամառանոցն է: Այդ թռչունները այստեղ են գալիս թեժ անապատներից ու մինչև ուշ աշուն երգեր են հորինում Արագածի մասին... Արագածի գագաթին ջինջ մի լճակ կա, որի մեջ ամեն գիշեր բյուրավոր աստղեր են թափվում: Ասում են՝ աստղերի հետ ամեն գիշեր երկնքից լճափ է իջնում հրաշագեղ մի աղջիկ: Նա այնքան հրապուրիչ է, այնքան գեղեցիկ, որ աստղերը նրա կողքին կորցնում են իրենց փայլը: Գեղեցկուհին դարեր առաջ ապրել է լեռան լանջին գտնվող քարակերտ մի դղյակում, որի ավերակներն անգամ զարմանք են պատճառում: Միամորիկ էր աղջիկը, ծնողները աչքի լույսի պես պահում, գորգուրում էին նրան: Պատահեց այնպես, որ այդ աղջկան տեսավ ու սիրահարվեց լեռների ծոցից ծնված ու հասակ առած մի պատանի: Գառնարած էր նա ու անզուգական

սրնգահար: Նրա սրնգի ձայնը այնքա՜ն սրտահույզ էր, այնքա՜ն դյութիչ, որ ոչ ոք անտարբեր չէր կարողանում լսել:

- Սրնգահա՛ր տղա, հե՜յ, սրնգահա՜ր,- մի օր կանչեց աղջիկը,- խնդրում եմ, նվագի՛ր ինձ համար: Ես այնպես եմ ուզում քո սրնգի դայլայլը լսել...

Պատանին կանգնում է բարձրաբերձ քերծին, աչքերը հառած աղջկան, ու սկսում նվագել: Սարի շնկշնկան հովերը մեղեդին առնում են իրենց թևերին ու տանում հեռու-հեռուները... Աղջիկը, նվագով հմայված, սիրո խոսքեր է մրմնջում... Աշխարհն ափիբերան լցվում է սիրով...

Եվ այդպես ամեն օր սրնգահար տղան կանգնում է բարձրաբերձ ժայռի կատարին ու հրաշք մեղեդիներ հորինում ծով աչքերով աղջկա համար: Եվ երջանիկ էին նրանք, ինչպես երկնի հավքերը, ինչպես սարերի ծաղկունքը: Մաքուր ու զուլալ էր նրանց սերը, ինչպես քարերի տակից բխող սառնորակ աղբյուրներն էին... Երջանիկ էին նրանք, որովհետև սիրում էին իրար, և այդ երջանկությունը կհավերժանար, թե շեղաչ ու գարշահոտ մարմիններով մարդիկ անապատի խորշակի պես չխուժեին մեր երկիր: Նրանք սև հեղեղի պես լցվեցին Արարատյան դաշտն ու սկսեցին բարձրանալ Արագածի լանջերն ի վեր... Թալանում էին, սպանում, առևանգում, այրում տները, քանդում տաճարները... Սրնգահար տղան սրինգը ծոցը դրեց, երկսայր սուր առավ, իջավ դաշտ: Նա կռվում էր շեղաչ խուժանների դեմ, կռվում էր գիշեր-ցերեկ՝ սրտի մեջ ծով աչքերով աղջկա կարոտն անթեղած: Իսկ աղջիկն ամեն օր կանգնում էր դղյակի աշտարակին ու նայում այն ժայռին, որի կատարին կանգնում էր սրնգահար տղան ու նվագում իր համար: Այդ պահերին կարծես նա լսում էր սրնգի մեղեդին... Դա հովն էր, որ մութ քարայրներում ու ժայռերի ծերպերում թաքնված մեղեդին փախցնում ու բերում էր աղջկան: Աղջիկը, արցունքն աչքերին, պարզում էր ձեռքերն ու իր մոտ կանչում սրնգահար տղային, բայց նա չկա՞ր ու չկա՞ր... Նա դաշտում էր, նա կռվում էր արյունարբու թշնամու դեմ, որ նրանց ձիերի սմբակները Արագածի ծաղկունքը չտրորեն: Երկար, շա՞տ երկար սպասեց աղջիկն իր սրնգահարին, բայց նա տուն չեկավ... Գարունն անցավ՝ չեկա՞վ, ձմեռն անցավ՝ չեկա՞վ, ամառ, աշուն անցան՝ չեկա՞վ ու չեկա՞վ: Ու մի օր էլ խնամախոսները ծեծեցին աղջկա տան դուռը:

- Աղջիկ է, պետք է հարսնանա, պետք է զավակների մայր դառնա,- ասացին նրանք՝ սեղանին թանկարժեք արդուզարդեր ու մետաքսահյուս զգեստներ դնելով:

Աղջիկն ասաց.

- Սպասում եմ... Նա պիտի գա... Նա չի կարող չգալ...

- Չի գա...

- Կգա՛, կգա՛, կգա՞,- ճչաց աղջիկն ու տնից փախավ, բարձրացավ Արագածի գագաթը: Փնտրեցին, փնտրեցին նրան, բայց չգտան: Նա չկա՞ր ու չկա՞ր:

Մայրը, հանդերն ընկած, կանչում էր նրան.

- Տո՜ւն արի, տո՜ւն, իմ քաղցրիկ աղջիկ... Իմ սրտի՛ կտոր, իմ աչքի՛ լույս...

Նրա ձայնն արձագանքվում էր մթին ձորերում, անպատասխան լռում:

Ու մի օր էլ հուսալքված ու հոգնած աղջիկը պառկեց կանաչների մեջ, որ հանգստանա: Կանաչները գրկեցին նրան, ու նա քնեց... Չէ, չքնեց: Աչքերը բաց էին... Աչքերը կապույտ լճակներ դարձան...

...Ասում են՝ ամեն գիշեր արթնանում է չքնաղագեղ աղջիկը, կանգնում ջինջ լճակի ափին ու սպասում սրնգահարին... Լուսաբացին նորից կապուտաչ լճակ է դառնում, կոհակ առ կոհակ զարնվում ափին:

Հե՜յ, Արագա՛ծ, ալմա՛ւտ վահան,
Կայծակեղեն թրերի,
Գազաթներդ բյուրեղ վրան
Թափառական ամպերի...

Ոգեշնչված արտասանեց մայրիկը:

- Ավետիք Իսահակյանի բանաստեղծությունն է,- ասաց նա,- յուրաքանչյուր մարդ պարտավոր է իր հայրենիքի մասին գրված գոնե մի բանաստեղծություն անգիր իմանալ:

- Իսկ հիմա «Համերաշխ» համույթի կատարմամբ կհնչի Կոմիտասի «Ալագյազ» երգը...

Մենք ինքնամոռաց երգեցինք այդ սքանչելի երգը, որը կարոտից ու քնքշանքից է հյուսված:

Սարի ոլորաններն իր անիվներին փաթաթելով՝ վեր էր մագլցում մեր «ճայը»: Նա հոգնել էր, տնքում էր: Մայրիկը դուրս եկավ ճանապարհից, մտավ կանաչ մի հովիտ ու կանգնեցրեց ավտոմեքենան:

- Խնդրեմ, կարող եք իջնել:

Մեր «ճայը» վայրէջք կատարեց օդեղեն տաճարում: Մենք ավտոմեքենայից դուրս թափվեցինք և, իրոք, հայտնվեցինք օդեղեն մի տաճարում, որը լցված էր ծաղիկների ժպիտներով ու բույրերով: Մեզ թվաց՝ մենք ոչ թե քայլում, այլ թռչում ենք երկնքի ու երկրի միջև:

- Խնդրեմ, նստե՛ք այս կանաչագեղ գորգի վրա, բայց զգուշացնում եմ, ոչ մի ծաղիկ կամ թուփ չպոկեք: Հասկանալի՞ է,- խիստ ասաց մայրիկը:

- Իհարկե, հասկանալի է,- միաբերան ասացինք մենք:

- Օ՜, այստեղ աղբյուր էլ կա,- գանձ գտած մարդու ուրախությամբ բացականչեց հայրիկը:

Մենք վազեցինք դեպի աղբյուրն ու անսպասելիությունից պապանձվեցինք: Հազարագույն ավազահատիկները անգին քարերի պես զարդարել էին աղբյուրի ակը: Աղբյուրը երգելով վազում էր մանուշակների թույրերի միջով...

- Անմահական ջուր է,- երանությամբ ասաց հայրիկը,- խմե՛ք, եթե ուզում եք հարյուր տարի առանց հիվանդանալու ապրել:

Մենք կռացանք աղբյուրի վրա ու կուշտ խմեցինք անմահական ջրից:

- Մեր վրանը այստեղ կխփենք: Հոյակապ տեղ է: Շտա՛պ անցեք գործի,- ասաց մայրիկը և «ճայի» ապրանքաթափքից հանեց վրանն ու փռեց կանաչների վրա:

Բոլորս գործի անցանք. վրանը խփեցինք, նրա մեջ տեղավորեցինք իրերը: Ապա քույրիկս ու ես սկսեցինք փետրագնդակ խաղալ, մայրիկն ու հայրիկը գնացին մոտակա անտառակը՝ զբոսնելու:

- Հոգնեցի,- փետրագնդակին ծույլ-ծույլ հարվածելով՝ տրտնջաց քույրիկս: - Չեմ ուզում խաղալ,- ասաց նա ու մտավ վրան:

- Իսկ ես ի՞նչ անեմ:

- Ինչ ուզում ես՝ արա, իմ գործը չէ:

- Ես ուզում եմ դիմացի ժայռերը բարձրանանք,- ասացի ես:

Արագածում բարձրաբերձ ժայռեր շատ կան: Դրանք հոգնած ճամփորդների նման, իրար թիկնած, նայում են հեռուներին: Քարե մարդիկ են, քարե լռություն...

Այդ ժայռերի ծերպերում հազարավոր հավքեր են ապրում: Ես արդեն գիտեի, որ նրանք այդտեղ են գալիս գարնանը, բույն են հյուսում, ձագեր հանում, ձագերին երգել ու թռչել սովորեցնում ու աշնանը չվում տաք երկրներ: Ես մագլցեցի ժայռերն ի վեր և, ո՜վ զարմանք, հենց իմ քթի տակ շատ գեղեցիկ մի բույն տեսա, մեջը՝ հինգ ձու: Չալպտուրիկ ձվեր էին:

- Տեսնես ո՞ւմ բույնն է,- մտածեցի ես,- իսկ ի՞նչ կլինի, եթե այս ձվերը տանեմ տուն... Շեկոյի հետ ինկուբատոր կսարքենք, ձվերը կդնենք դրա մեջ ու թռչունի ձագեր կաճեցնենք: Պատկերացնո՞ւմ եք՝ ինչ հրաշք կարող է տեղի ունենալ... Մեր ողջ փողոցը ծայրից ծայր կլցվի երգող թռչուններով: Այո՛, այո՛, առանց վարանելու պետք է հավաքել ձվերն ու տանել տուն,- որոշեցի ես ու ձվերը լցրի գրպաններս...

Եվ դեռ չէի հասցրել մի քանի քայլ անել, երբ ահավոր ճռվողյուն լսեցի: Գլուխս բարձրացրի և ի՞նչ տեսնեմ: Սրընթաց դեպի ինձ էր գալիս թռչունների մի ողջ բանակ: Նրանք այնպես էին ճչում ու տագնապահար թափահարում թևերը, որ ես վախից կուչ եկա մի քարի մոտ ու չգիտեի ինչ անել: Սակայն թռչունները չհեռացան, պտտվեցին իմ գլխավերևում, իսկ մի քանիսը կտցահարեցին ու թևերով խփեցին գլխիս:

- Վա՜խ, վա՜խ,- բղավեցի,- այս ի՞նչ եք անում, ի՞նչ,- ձեռքերով դեմքս փակեցի, որ հանկարծ աչքերս չհանեն:

Թռչուններն ավելի շատացան: Նրանք, սև գունդ դարձած, հարձակվում էին ինձ վրա ու այնպես էին հարվածում, այնպես կտցահարում, որ ես ցավից սկսեցի գոռգոռալ.

- Օգնեցե՛ք, օգնեցե՛ք... սրանք աչքերս կհանեն... օգնեցե՛ք...

Բայց ոչ ոք իմ ձայնը չլսեց և օգնության չեկավ: Ես վեր կացա ու վազեցի դեպի մեր վրանը: Թռչունները ընկան իմ հետևից: Ես մտա ավտոմեքենայի մեջ, փակեցի դռներն ու լուսամուտները: Թռչունները թափվեցին ավտոմեքենայի վրա ու սկսեցին կտցահարել ապակիները:

- Չէ՛, սրանցից փրկություն չկա,- մտածեցի ես, ավտոմեքենայից դուրս ելա, որ մտնեմ վրանը: Թռչունների երամը շրջապատեց ինձ, ու ամեն կողմից սկսեցին հարվածներ տեղալ գլխիս, դեմքիս:

- Հայրի՛կ, մայրի՛կ,- բղավեցի ես,- հասե՛ք, փրկե՛ք...

Վրանից դուրս թռավ քույրիկս, անտառակից վազելով եկան հայրիկն ու մայրիկը, որոնք զարմացած ու ապշած նայում էին ինձ հալածող թռչուններին:

- Ի՞նչ ես արել, ի՞նչ,- բղավեց հայրիկը:

Թռչունները մի պահ դադարեցրին հարձակումը: Միայն սևաթույր մի սարյակ անվերջ պտտվում էր իմ գլխավերևում ու աղիողորմ ճչում: Նա իր թռչնային լեզվով ինչ-որ բան էր ուզում մեզ հասկացնել, բայց չէր կարողանում:

- Չլինի՞ բույն ես քանդել,- ինձ մոտենալով՝ հարցրեց հայրիկը:

- Չեմ քանդել, բայց...,- կմկմացի ես, գրպանիցս հանեցի թռչնի ձվերն ու մեկնեցի հայրիկին:

Ձվերը տեսնելով՝ թռչունները ճչացին ու սկսեցին ավելի կատաղի հարձակումներ գործել:

- Մի՞թե կարելի է այդպիսի բան անել,- զայրացավ հայրիկը, իմ ձեռքից առավ ձվերն ու հարցրեց,- որտեղի՞ց ես վերցրել:

- Այնտեղից,- քարաքոսերով պատած ժայռախորշերը ցույց տալով՝ ասացի ես:

- Անմիջապես պետք է տեղը դնել,- ասաց հայրիկը, բռնեց ձեռքս ու ինձ քարշ տվեց դեպի ժայռախորշերը:

Թռչունները պտտվում էին մեր գլխավերևում, կարծես սպասում էին, թե մենք ինչ ենք անելու: Ես հայրիկի հետ բարձրացա քարաժայռի կատարը, գտա այն բույնը, որտեղից վերցրել էի ձվերը: Հայրիկը զգուշությամբ ձվերը դրեց իր տեղը, բայց չգիտեմ՝ ինչպես պատահեց՝ ձվերից մեկն ընկավ ու կոտրվեց:

- Ա՜յ քեզ փորձանք,- ասաց հայրիկը,- մենք այս թռչունների հարձակումներից չենք ազատվի:

Եվ իրոք, ձուն կոտրվելու պահին թռչուններն այնպիսի աղմուկ բարձրացրին, որ մենք խլացանք: Նրանք պտտվում էին մեր գլխավերևում, թևերով հարվածում, սուր-սուր ճանկերով ճանկռոտում մեր երեսները: Մենք մի կերպ իջանք ժայռից, վազեցինք դեպի մեր վրանը, սակայն թռչունները չհեռացան: Նրանք ավելի կատաղի ու բորբոքված սկսեցին պտտվել մեր վրանի շուրջը, կարկուտի պես թափվեցին վրանի վրա, սկսեցին կտցահարել:

- Պետք է շտապ հեռանանք,- տխուր ասաց մայրիկը:

- Այո՛, նրանք վռնդում են մեզ: Պետք է հեռանալ,- խիստ ասաց հայրիկն ու սկսեց վրանը քանդել:

Թռչունների կռինչների տակ մենք հավաքեցինք մեր իրերը, լցրինք ավտոմեքենայի մեջ ու փախանք: Մինչև սարալանջի վերջին ոլորանը թռչունները գալիս էին մեր հետևից և հեռացան միայն այն ժամանակ, երբ համոզվեցին, որ մենք այլևս չենք վերադառնա:

Տունդարձի ճանապարհին շատ տխուր էինք: Ոչ ոք ոչ մի բառ չէր ուզում ասել: Ախր ի՞նչ ասեին. ամեն բան հասկանալի էր ու պարզ:

- Ես հազար անգամ քեզ ասել եմ, որ թռչնի բույն չի կարելի քանդել, որ դա հանցագործություն է,- զայրույթը զսպելով՝ ասաց մայրիկը:

- Տանը փակված կմնաս այնքան ժամանակ, մինչև խելքի գաս,- որոշեց հայրիկը,- վերջապես ե՞րբ պիտի հասկանաս՝ ինչ կարելի է անել և ինչ չի կարելի:

- Ինչքան կարելի է ասել՝ չի՛ կարելի, չի՛ կարելի,- թնկթնկաց քույրիկս:

- Ես, ե՜ս...

- Ի՞նչ՝ ես, ե՜ս...,- բղավեց քույրիկս:

- Լա՜վ, լա՜վ, ամեն բան պարզ է ու հասկանալի, բղավել պետք չէ,- հոգոց հանեց մայրիկը, ու բոլորը նորից լռեցին:

Տխուր էր, շա՜տ տխուր... Ես չգիտեի՝ ինչ ասել, ինչպես արդարանալ: Ախր ես հո հենց այնպես, հաճույքի համար չէի ուզում վերցնել թռչնի ձվերը: Ես ուզում էի ինկուբատոր ստեղծել, երգող թռչուններ բազմացնել ու բաց թողնել մեր բակում, բայց ի՜նչ ստացվեց...

Կիրակի օրվա մեր ուրախությունը փոխվեց տխրության, բայց դա դեռ ոչինչ, զարհուրելին պատահեց առավոտյան: Երբ հագնում էի զգեստներս ու կոշիկներս՝ տեսա, որ մեծացել են... Ես փոքրացել էի:

Այո՛, այո՛, թռչնաբներ քանդելու պատճառով պատժվել էի՝ փոքրացել... Բայց այդ մասին ոչ ոք չպետք է իմանա:

Սաղնաղնուշի խորհուրդները

Իզուր էին մայրիկն ու քույրիկը համոզում հայրիկին, որ շաբաթ օրը նորից քաղաքից դուրս գանք, անտառի փեշին վրան խփենք, խարույկ վառենք, գիշերը քնենք աստղերի տակ ու երանություն ապրեինք՝ բնության հրաշքը վայելելով:

- Ո՛չ, ո՛չ, մենք այլևս ոչ մի տեղ չենք գնա,- վճռական ասաց հայրիկը:

- Բայց մենք զղջացել ենք,- վրա տվեց մայրիկը:

- Միևնույն է: Հանցանքի համար պատիժ է նախատեսվում, և ես պատժում եմ ձեզ:

- Ես մեղավոր չեմ,- բողոքեց քույրիկս:

- Ճիշտ է, դու մեղավոր չես, բայց մեր ընտանիքի անդամն է քանդել թռչնի բույնը, այն թռչնի, որը, ով գիտե, քանի հազար կիլոմետր ճանապարհ է կտրել, հասել է Արագած, որ ձագեր ունենա, բազմացնի իր ընտանիքը, իսկ մենք քանդեցինք նրա տունը... Բոլորս միասին պիտի ապաշխարենք, որ հասկանանք, թե ինչ վատ բան ենք արել:

Հայրիկի ասածն օրենք է, և մեզնից ոչ ոք, նույնիսկ մայրիկը նրան չի առարկում:

- Լսի՛ր, ինչո՞ւ ես զգեստներիդ թևերն ու փողքերը ծալծլել...- ի միջի այլոց հարցրեց մայրիկն ու պատասխանի չսպասելով՝ գնաց իր գործին:

- Իսկապես, ինչո՞ւ ես ծալել,- հարցրեց քույրիկս:

- Հենց այնպես,- ասացի ես ու քաշվեցի մի անկյուն, որ ոչ ոք չնկատի իմ փոքրանալը:

Քույրիկս վերցրեց իր դեղնակազմ գիրքը, գնաց պատշգամբ, նստեց բազմոցին ու սկսեց նայել Սահակենց պատշգամբին:

Հայրիկը փակվեց իր սենյակում ու խորասուզվեց թվերի գաղտնիքների մեջ: Դա նրա ամենասիրելի զբաղմունքն է:

Ես ի՞նչ անեմ... Հո չի կարելի հենց այսպես, պարապ-սարապ նստել: Ավելի լավ է իջնեմ բակ, հանդիպեմ Շեկոյին, հետո մի բան կմտածենք... Ես աննկատ իջա բակ ու հանդիպեցի Շեկոյին:

Ամռանը Երևանում երկնքից կրակ է թափվում: Բացի շատրվաններից ու մեր փողոցի անկյունում գտնվող պաղպաղակավաճառ տիկին Սառնանուշից ու նրա «Սառուցյալ օվկիանոս» կոչվող պաղպաղականոցից, բոլորը շոգից նվաղում են: Տիկին Սառնանուշի իսկական անունը ոչ ոք չգիտե: Մենք ենք նրա անունը Սառնանուշ դրել, ու դա շատ համապատասխանում է նրա էությանը, որովհետև ամբողջ տարին նա միշտ նույն ձյունաթույր խալաթով է, նույն ձյունաթույր ժանյակահյուս գլխարկով, նույն անփոփոխ սառը ժպիտով պաղպաղակ է վաճառում ու ասում.

- «Պաղպաղակ» բառը չի արտահայտում այս ուտեստի էությունը: Ճիշտը սառնանուշն է: Սառնանո՜ւշ... Օ՜, ինչ սքանչելի բառ է,- ափսեի մեջ պաղպաղակ լցնելով՝ ասում է տիկին Սառնանուշը ու շարունակում,- չի կարելի բերանը լիքը լցնել սառնանուշով ու միանգամից կուլ տալ: Դա ոչ միայն անքաղաքավարություն է, այլև վնասակար է առողջության համար: Պետք է գդալով վերցնել սառնանուշի շատ փոքրիկ մի պատառ, դնել լեզվի ծայրին, հալեցնել, կուլ տալ՝ վայելելով սառնանուշի սառը հաճույքը: Հասկանալի՞ է,- համբերությամբ բացատրում է տիկին Սառնանուշը:

- Հասկանալի է, հասկանալի՜,- շրթունքները լիզելով՝ ասում են երեխաները, նրա ձեռքից ուղղակի խլում սառնանուշներն ու սկսում ագահությամբ անուշ անել:

Այդ օրը, երբ մեզ հետ պատահեց այս դեպքը, Երևանի բոլոր ջերմաչափների սնդիկի սյուները բարձրացել էին մինչև քառասունհինգ նիշը: Իսկ «Հայրենիք» կինոթատրոնի տանիքին տեղադրված էլեկտրոնային ջերմաչափի լուսատախտակի վրա գրված է եղել հիսուն աստիճան տաքություն:

- Սահարա անապատում այնքան շոգ չէ, որքան այստեղ,- տրտնջում էին տաքսու վարորդները:

- Հիսուն աստիճան է, եղբա՛յր, հիսուն, հանաք հո չէ՞...

- Էլեկտրոնային հաշվիչներին մի՛ հավատացեք, սուտ է: Անցած ողջ ձմեռ երեսունհինգ աստիճան տաքություն էին ցույց տալիս:

- Սուտ է, թե ճիշտ՝ նշանակություն չունի, կարևորն այն է, որ շոգ է՝ շնչել չի լինում:

- Միակ փրկությունը սառնանուշ անուշ անելն է,- սառը ժպտում է տիկին Սառնանուշը, պաղպաղակի ա-մանները լցնում տարբեր գույնի

պաղպաղակի գնդերով ու շարունակում,- այսպիսի շոգ Երևանում գրանցվել է ուղիղ հարյուր քսանհինգ տարի առաջ: Շոգից պաշտպանվելու համար իմ պապի հայրը այդ օրը կերել է երեք կիլոգրամ սառնանուշ... խնդրեմ, համեցե՛ք, սիրելի՛ քաղաքացիներ և մեր քաղաքի պատվարժա՛ն հյուրեր, համեցե՛ք՝ սառնանուշ վայելելու,- կանչում էր տիկին Սառնանուշը:



- Գնանք «Սառուցյալ օվկիանոս» մի քիչ զովանանք,- առաջարկեց Շեկոն: Մենք ծառերի ստվերների տակով վազեցինք «Սառուցյալ օվկիանոս» և սկսեցինք մեկը մյուսի հետևից տեսակ-տեսակ պաղպաղակներ ուտել:

- Երբեք այսքան զով օր չեմ տեսել: Ոնց որ ձմեռ լինի, և ինձ թվում է, որ մենք սահադաշտում ենք ու սահում ենք չմուշկներով,- ասաց Շեկոն՝ ձեռքը սառած փորին դնելով:

- Լեզուս ցրտից փայտացել է,- սրթսրթացի ես:

- Եթե ձեր թաղի խելոք երեխաները ձեզ պես օրական տասը-տասնհինգ սառնանուշ անուշ անեն, ես առևտրի աշխատողի գերազանցիկի կրծքանշան կստանամ: Խնդրեմ, այս նոր տեսակի սառնանուշից անուշ արեք: Արտակարգ համեղ է ու սննդարար, բացի դրանից, երկար ժամանակ զով է պահում,- մեր սեղանին նորից պաղպաղակ դնելով՝ սառը ժպտաց տիկին Սառնանուշը:

- Դու փող ունե՞ս,- ականջիս շշնջաց Շեկոն:
- Ոչ մի կոպեկ,- գրպաններս քրքրելով՝ ասացի ես:
- Սպասի՛ր, ես հիմա կբերեմ:
- Մայրիկի՞ցդ պիտի ուզես:
- Այո,- ասաց Շեկոն ու ծլկեց:

Պաղպաղակավաճառ Սառնանուշի «Սառուցյալ օվկիանոս» կոչվող տաղավարում նստած՝ ես կարեկցանքով նայում էի տապից խեղճացած անցորդներին, որոնք ասես լողում էին տաք ցնցուղների տակ ու չգիտեին զովանալու գաղտնիքը:

- Մենք կարող ենք անսահմանափակ քանակությամբ պաղպաղակ ուտել,- ճակատի քրտինքը սրբելով՝ ասաց Շեկոն և մի կարմիր տասանոց ցույց տվեց:

- Որտեղի՞ց:

- Քեռիս տվեց: Ասաց՝ տղամարդ ես, վերցրո՛ւ, ծախսի՛ր: Ես էլ վերցրի: Լսի՛ր, արի նորից հինգ հատ «Էսկիմո» ուտենք, հինգ հատ «Պլոմբիր», հինգ հատ էլ՝ «Սառնաժպիտ»,- առաջարկեց Շեկոն և առանց իմ համաձայնությունը ստանալու՝ վազեց տիկին Սառնանուշի մոտ ու պաղպաղակ խնդրեց:

- Ապրե՛ք,- ուրախացավ տիկին Սառնանուշը,- եթե այսպես շարունակեք, կարող եք ռեկորդ սահմանել:

Շեկոն, տասնհինգ փաթեթ սառնությունից քարի պես ամուր պաղպաղակ սկուտեղի վրա դրած, մոտեցավ ինձ:

- Խնդրեմ, կարող ես անուշ անել: Սառնանուշները քեզ են սպասում:

Մենք առանց բառ ասելու սկսեցինք իրար հետևից ուտել սառը պաղպաղակները: Հաճախորդներից շատերը նայում էին մեզ ու զարմացած փնթփնթում.

- Գժվել են:

- Մի՞թե կարելի է այդքան շատ պաղպաղակ ուտել:

- Սրանք ծնողներ չունե՞ն, ի՞նչ է:

- Ողջո՜ւյն բակի քաջերին,- մեզ մոտեցավ մեր բակի մոտոցիկլիստ Պարույրը, առանց աչքը թարթելու երկու պաղպաղակ կուլ տվեց, նստեց իր երկաթե ձին ու կայծակի արագությամբ հեռացավ:

- Որ մեծանամ, քեռուս ասելու եմ մոտոցիկլետ առնի,- սառած շրթունքները լպստելով՝ ասաց Շեկոն:

- Ես արդեն սառել եմ, գուցե չուտե՞նք...

- Ամոթ է, ի՞նչ կմտածեն մեր մասին,- պաղպաղակներից մեկը ձեռքիս մեջ խցկելով՝ ասաց Շեկոն,- տե՛ս, տե՛ս, սովորի՛ր, ես ոնց եմ ուտում, դու էլ ինձ պես կեր:

Ես ակամայից ենթարկվեցի նրան։

- Սրանք թող քեզ օրինակ չծառայեն, սիրելի՛ թոռնիկս։ Սրանք անկարգապահ, շատակեր ու բութ երեխաներ են,- մեզ մատնացույց անելով՝ ասաց սքանչելի մի տատիկ և իր տզզան թոռնիկին պաղպաղականոցից դուրս տարավ։

- Էլի՞ եմ ուզում, տա՛տ, էլի՞... պաղպաղակ եմ ուզո՞ւմ... պաղպաղակ եմ ուզո՞ւմ...

- Դու արդեն երկու հատ կերել ես,- բացատրում էր տատը,- գնանք, գնանք, ես քեզ համար կոնֆետ կգնեմ։

Թոռնիկն անմիջապես լացը կտրեց ու ասաց.

- Կոնֆետ եմ ուզու՞մ... կոնֆե՞տ... կոնֆե՞տ... կոնֆե՞տ...

Մենք ծիծաղեցինք ու շարունակեցինք պաղպաղակ վայելել։ Հանկարծ որտեղից որտեղ «Սառուցյալ օվկիանոս» խուժեց քույրս՝ դերասան Սահակ Բերբերյանի հետ։ Քրոջս ձեռքի ծաղկեփունջը ժպտում էր։ Սահակը արբանյակի պես պտտվում է ծաղկեփնջի ու քրոջս շուրջը։ Ես երբեք քրոջս այդքան հմայիչ ու գեղեցիկ չէի տեսել։ Քույրիկս ծիրանի ծաղկած ծառի էր նման։

Նրանք մեզ չնկատեցին։

- Ի՞նչ համի, ի՞նչ գույնի և որքա՞ն պաղպաղակ եք կամենում, տիրուհի՛,- շշնջաց Սահակը։

- Ինչ դուք կկամենաք, պարո՛ն,- արքայադստեր պես ժպտաց քույրս։

- Այդ դեպքում ես կդիմեմ տիկին Սառնանուշին, նա մեզ կօգնի ընտրություն անելու,- ասաց դերասան Սահակն ու գնաց տիկին Սառնանուշից սառնանուշ խնդրելու։

Երբ քույրս մենակ մնաց, մեզ նկատեց։ Նա խոժոռ նայեց ինձ ու շշուկով ասաց.

- Կորի՛ր այստեղից։

- Չե՛մ գնա։

- Կապտել ես։

- Դու էլ կարմրել ես։

- Անմիջապես տո՛ւն գնա,- գայրացավ նա։

- Մենք նորից պիտի սառնանուշ ուտենք,- բերանից գոլորշի հանելով՝ ինձ պաշտպանեց Շեկոն։

- Խելագարնե՞ր,- ձեռքը սեղանին խփեց քույրս ու ոտքի ելավ։ Այդ պահին դերասան Սահակը, սկուտեղի վրա երկու բաժին պաղպաղակ և երկու բաժակ բալի հյութ դրած, մոտեցավ քրոջս։

- Ի՞նչ է պատահել,- հարցրեց նա՝ սկուտեղը սեղանին դնելով։

- Առանձնապես ոչինչ,- սուտ ժպտաց քույրս։

- Ո՞վ է Ձեզ նեղացրել։
- Սրանք,- մեզ մատնացույց անելով՝ ասաց քույրս։
Դերասան Սահակը զարմացած նայեց ու զայրացած ասաց.
- Քանի ողջ եք, կորե՛ք այստեղից։
- Մե՜նք... մե՜նք...
- Կապտել եք, դողում եք... ձեր շնչուղիները սառել են,- անհանգստացած մեզ մոտեցավ Սահակը, ձեռքը դրեց Շեկոյի ճակատին, ապա իմ ու բացականչեց,- սրանց փրկել է պետք, սրանք կարող են մեռնել։ Շտապ բուժօգնություն է պետք...
- Ի՞նչ եք ասում,- տագնապահար բղավեց քույրս ու գրկեց ինձ,- ի՜նչ սառն է եղբայրս,- լացակումած մրմնջաց նա։
- Սրանց փրկության միակ միջոցը սառը լոգանք ընդունելն է,- վճռական ասաց Սահակը, բռնեց իմ ու Շեկոյի ձեռքից ու քարշ տվեց տուն։
Մեր տան բոլոր անդամները միաբերան սկսեցին բղավել.
- Բաներ կան, որ չի կարելի անել, հասկացի՛ր, չի կարելի շատ ուտել, դա որկրամոլություն է։
- Սրանց սառը ջրով շփել է պետք,- ասաց քույրս։
Ես ու Շեկոն չէինք կարողանում խոսել, սրթսրթում էինք։ Իրոք, շատ ցուրտ էր։
Լողասենյակում քույրս ու Սահակը հանեցին մեր վերնաշապիկներն ու սառը ջրով սկսեցին շփել մեզ։
- Լա՜վ է, լա՜վ... հիմա նրանք կսկսեն տաքանալ... Ես կարդացել եմ մի հին գրքում, թե ինչպես բևեռախույզներին ցրտահարությունից փրկելու համար շփում են սառցակտորով,- ասաց Սահակը։
- Ա՜խ, Սահա՛կ, եթե դու չլինեիր, մենք ի՞նչ էինք անելու,- հուզված ասաց քույրս։
- Ես ուզում եմ տուն գնալ,- դողդողալով ասաց Շեկոն, հագավ իր վերնաշապիկն ու գնաց։
- Իսկ դու մտի՛ր անկողին։ Շո՛ւտ,- զայրացավ քույրս։
Քույրս ու Սահակը արագ-արագ հանեցին զգեստներս, ինձ պառկեցրին անկողնում և ինչքան վերմակ ու ծածկոց կար՝ լցրին վրաս։
- Լուռ պետք է պառկես այնքան, մինչև ներսիդ ջերմաստիճանը հավասարվի դրսի ջերմաստիճանին,- պրոֆեսորի նման ասաց Սահակն ու բրդյա մեծ շալով փաթաթեց գլուխս։
Հայրիկս ու մայրիկս ներս մտան։
- Վառվո՜ւմ եմ, վառվո՜ւմ,- բղավեցի ես,- ջո՜ւր, ջո՜ւր, ջո՜ւր...
- Ջուր չի կարելի,- ասաց Սահակը։
- Պետք է բժիշկ կանչել,- ասաց հայրիկս։

- Պետք է բժիշկ կանչել,- ասաց Սահակը:

- Չեմ ուզում, չեմ ուզում,- թնկթնկացի ես,- բժիշկ չեմ ուզում... ջո՜ւր... ջո՜ւր...

- Լռի՛ր,- ասաց քույրս:

Ձայնս խզվեց, ու այդ պահից այլևս ոչինչ չեմ հիշում: Մայրիկն ասում է, որ ես զառանցել եմ, որ մի ամբողջ գիշեր նա իմ անկողնու մոտից չի հեռացել, որ որովայնի ցավից տնքացել եմ ու վա՜յ, վա՜յ կանչել...

- Ոչինչ, սա քեզ թող խրատ լինի, այլևս այդքան շատ պաղպաղակ չուտես,- ասաց հայրիկս մի երկու օր հետո, երբ արդեն ինձ լավ էի զգում:

- Չի՛ կարելի, հասկանո՞ւմ ես, չի՛ կարելի...: Շատակերությունն արատ է,- ասաց քույրիկս,- եթե Սահակն օգնության չհասներ, ես չգիտեմ, թե քեզ հետ ինչ կպատահեր:

- Շնորհակալություն Սահակին... Այլևս այդպիսի բան չեմ անի,- ասացի ես ու գլուխս դրեցի մայրիկի ծնկներին:

Մի քանի օր հետո բոլորովին առողջացել էի, հագա զգեստներս, որ բակ իջնեմ. վերնաշապիկս ու տաբատս նորից երկարել էին: Ես ծալ-ծլեցի վերնաշապիկիս թևքերն ու տաբատիս փողքերը և գնացի ֆուտբոլ խաղալու:

Ես նորից փոքրացել էի:

Կարոտից մորմոքող փիղը

Վաղուց կենդանաբանական այգում չենք եղել,- ասաց քույրիկս:

- Մո՛ւշ, ուզո՞ւմ ես կենդանաբանական այգի գնանք,- հարցրեց մայրիկը:

- Իհարկե, ուզում եմ,- ուրախացած պատասխանեցի ես:

- Ուրեմն որոշված է, գնում ենք կենդանաբանական այգի: Ես հայրիկին կհամոզեմ, որ մեզ հետ գա:

Կենդանաբանական այգում ես շատ եմ եղել և ամեն անգամ այնտեղից տուն վերադառնալիս տխրել եմ: Առաջ չէի հասկանում՝ ինչու եմ տխրում: Հետո հասկացա: Ես խղճում եմ երկաթե ճաղերի հետևում բանտարկված կենդանիներին: Մի անգամ մտածեցի կենդանաբանական նոր այգի ստեղծելու մասին, որտեղ ոչ թե կենդանիները պետք է վանդակներում լինեն, այլ մարդիկ: Վանդակապատ ճանապարհներ պետք է կառուցել այն տեղանքներում, ուր ազատության մեջ իրենց կյանքով ապրում ու կյանքը վայելում են ոսկեբաշ առյուծները ու հրաշագեղ վագրերը, ճարպիկ կապիկները ու խորամանկ աղվեսները, մի խոսքով՝ բոլոր կենդանիները... Պատկերացնո՞ւմ եք, ինչքան լավ կլինի: Դու քայլում ես առյուծների մոտով, իսկ նրանք իրենց պահում են այնպես, ինչպես վայել է առյուծներին... Իսկ հիմա ի՞նչ... Հիմա նրանք կատուների

պես կծկվել են իրենց անհրապույր վանդակների մեջ ու անգործությունից այն-պես են ծուլացել, որ չեն ուզում անգամ մարդկանց երեսներին նայել... Մինչդեռ իմ կենդանաբանական այգում բոլորի համար ես կստեղծեմ այնպիսի պայմաններ, որ նրանք իրենց ազատ ու երջանիկ զգան: Օրինակ՝ սապատավոր ուղտի համար, որին անապատի նավ են անվանում, ավազաթմբերով, օազիսներով, տատասկափշերով, ջրհորներով մի անապատ կստեղծեի ու կասեի. «Քայլի՛ր քո սիրած անապատով, իմ սապատավո՛ր բարեկամ: Քայլի՛ր և վայելի՛ր ազատությունը: Ազատությունից լավ բան աշխարհում չկա»:



Քանի դեռ չեմ կարող այդպիսի կենդանաբանական այգի ստեղծել ու ձեզ հրավիրել այնտեղ զբոսնելու, ուստի մերոնց հետ գնում եմ բանտարկվածների այգի: Կիրակի է: Սքանչելի օր: Ավանի կիրճում՝ ընկուզենիների ու թթենիների պուրակում, թեք սարալանջերին տեղադրված երկաթե վանդակների ու ցանցապատ լճակների մեջ տառապում են աշխարհի տարբեր մայրցամաքներից բերված կենդանիներ ու թռչուններ: Հայրիկը և մայրիկը շատ ուրախ են, որ մեզ հետ կենդանաբանական այգի է եկել նաև Սահակը, որը, առավոտից երեկո խնձոր ուտելով, նայում է մեր պատշգամբին և հառաչում:



- Ինչո՞ւ է Սահակը հառաչում,- մի օր հարցրեց մայրս:

- Ուզում է Շեքսպիրի «Համլետը» ողբերգությունում Համլետ խաղալ, չեն թողնում,- բացատրեց քույրս,- ասում են՝ դու Համլետ չես:

- Թող Օթելլո խաղա,- ժըպտաց հայրս:

- Չի ուզում:

- Ինչո՞ւ:

- Ասում է՝ Օթելլոն մոլորված մարդ է, սպանում է իր սիրած աղջկան՝ Դեզդեմոնային: Ասում է՝ մի՞թե կարելի է սիրած էակին սպանել...

- Սահակը նրբանկատ տղա է: Նրան մեծ ապագա է սպասվում,- ասաց մայրս ու երանությամբ նայեց քրոջս, որն օր օրի գեղեցկանում է:

Անցած շաբաթ նա գնացել էր Սահակենց տուն: Սահակի մայրը մայրիկիս ասել է.

- Սքանչելի աղջիկ է, դաստիարակված, խելացի, աշխատասեր...

- Շնորհակալություն,- պատասխանել է մայրիկս՝ երանություն ապրելով:

- Մենք ուզում ենք ձեզ բարեկամ դառնալ: Բարեկամ: Ի՜նչ սքանչելի բան է բարեկամությունը...

- Կմտածենք,- պատասխանել է մայրիկս:

- Մենք արդեն մտածել ենք: Մենք արդեն որոշել ենք,- մայրիկիս գրկելով՝ ասել է Սահակի մայրիկը,- մենք ուզում ենք մեր տունը ձեր տնից բերած լույսով լցվի...

- Ահա այդ օրից սկսած՝ մեր տան պատշգամբներն ուրիշ տեսակ նայեցին իրար: Սահակի մայրն ու իմ մայրը ժամերով կանգնում են պատշգամբներում ու զրուցում: Հայրիկն ու Սահակի հայրիկը ավելի բարյացակամ են դարձել: Նրանք առաջվա պես հենց այնպես իրար չեն բարևում, այլ ավելի ջերմ ու սրտալի: Ինչու է այդպես՝ չեմ հասկանում... Ինչևէ, ինչպես մայրիկն է ասում, դրանք բարդ ու դժվար ըմբռնելի հասկացողություններ են, կարևորն այն է, որ Սահակը հասկացել է քրոջս, քույրս էլ հասկացել է նրան...

- Մո՛ւշ, կենդանաբանական այգում քեզ կարգին կպահես,- զգուշացնում է քույրս:

- Ի՞նչ է նշանակում կարգին պահել: Չշնչել, չխոսել, չը...

- Չվազվզես, բարձրաձայն չխոսես, կենդանիներին ձեռք չտաս, հանկարծ չմտնես այն դռներից ներս, որոնց վրա գրված է. «Մուտքը խստիվ արգելվում է»: Մի խոսքով, գազանություն չանես:

- Ինչո՞ւ պետք է արգելված դռներից ներս մտնեմ կամ վազվզեմ:

- Ես էլ դա եմ ասում: Մո՛ւշ, սիրելի՜ս, ես այնպես հուզված եմ, չգիտեմ՝ ինչ է կատարվում ինձ հետ... Կենդանաբանական այգում դու իմ կողքից չհեռանաս: Լա՞վ:

- Ձեռքդ պինդ կբռնեմ, չվախենաս:

- Չեմ վախենում, բայց մի տեսակ... հուզվում եմ...

Կիրակի առավոտյան, ինչպես պայմանավորվել էինք, մայրիկը մեր

«ճայը» պատրաստեց թռիչքի: Ավտոմեքենայի հետևի նստարանին նստեցինք ես, քույրս և Սահակը: Իհարկե, ես նստեցի Սահակի ու քրոջս մեջտեղը և ամուր բռնեցի քրոջս ձեռքը:

- Գնացինք,- կարգադրեց հայրիկն ու ձեռքով հրաժեշտ տվեց Սահակի հորն ու մորը, որոնք, իրենց տան պատշգամբում կանգնած, երանությամբ ժպտում էին ու թափահարում իրենց ձեռքերը:

Մեր «ճայը» պոկվեց տեղից, բակից արագ դուրս սլացավ ու խառնվեց քաղաքի ժխորին:

... Կենդանաբանական այգին բերնեբերան լցված էր այցելուներով. ոմանք շրջում էին ծառուղիներով, ոմանք կանգնում երկաթե վանդակների առաջ, նայում վանդակներում վազվզող աղվեսներին, կզաքիսներին, գայլերին, վագրերին, առյուծներին ու արջերին: Նայում էին ու ծիծաղում:

- Ինչո՞ւ են ծիծաղում,- զարմացած հարցրի ես:

- Որովհետև կենդանիները շատ ծիծաղելի են... Մի անգամ թատրոնում ինձ հանձնարարել էին արջի դեր խաղալ... ես ամեն օր գալիս էի այստեղ, որ տեսնեմ, թե ինչպես են արջերը քայլում... Շատ ծիծաղելի է,- բացատրեց Սահակը:

- Լավ կլինի, որ մենք խմբերի բաժանվենք,- հանկարծ առաջարկեց մայրիկը, դուք ձեր հետաքրքրություններն ունեք, մենք՝ մերը, ինչո՞ւ իրար խանգարենք:

- Իսկապես, այդպես լավ կլինի,- մայրիկի միտքը պաշտպանեց հայրիկը:

- Լավ,- ուրախացավ Սահակը:

- Ուրեմն դուք երիտասարդներով միասին շրջեք, իսկ մենք՝ միասին,- գլուխս շոյեց մայրիկը:

- Մո՛ւշ, քեզ կարգին կպահես,- զգուշացրեց հայրիկը,- ուշադի՛ր եղեք, սա կարող է կորչել:

- Ինչո՞ւ պիտի կորչեմ:

- Մի՛ անհանգստացեք, ես կհետևեմ նրան,- ձեռքս բռնեց Սահակը,- Մուշը խելացի տղա է:

- Ես նրա ձեռքը բաց չեմ թողնի,- մյուս ձեռքս բռնեց քույրիկս:

- Ցտեսություն,- ասաց մայրիկը, թևանցուկ արեց հայրիկին, ու նրանք հեռացան:

- Գնացինք,- ուրախ-ուրախ ասաց Սահակը:

Մենք խառնվեցինք մարդկանց ծովին: Բոլորը ժպտում էին, ծիծաղում, կանչում իրար, մի վանդակից մյուսի մոտ գնում: Իսկ երկաթակոփ վանդակներում բանտարկված կենդանիները տխուր աչքերով նայում էին նրանց, և ով գիտե՝ ինչ էին մտածում...

- Մայրի՜կ,- հրճվալից ճչում էր ծաղկանկար շրջազգեստ հագած մի աղջիկ,- կապիկը իմ տված կոնֆետը կերավ: Կապիկը ծիծաղում է...

- Կենդանիներին չի կարելի կերակրել,- դիտողություն էր անում ոսկեհեր մի աղջիկ, որը կանգնած էր կապիկների վանդակի մոտ ու հսկում էր, որ մարդիկ նրանց վնաս չտան:

- Մո՛ւշ, արի՛, գնում ենք առյուծների մոտ,- ձեռքս քաշեց Սահակը:

- Իսկ կապիկնե՞րը:

- Հետո... Հետո կապիկների մոտ կգնանք: Լսի՛ր, մի հանելուկ ասեմ, կարո՞ղ ես գուշակել,- ճանապարհին ասաց Սահակը:

- Ասա՛:

- Թագավորի պալատի դարպասների աջ և ձախ կողմերում մի խոյ ու մի առյուծ են կապված: Առյուծի առաջ մի խուրձ առվույտ է դրված, իսկ խոյի առաջ՝ մի փութ միս: Հիմա դու ի՞նչ պիտի անես, որ առյուծն ու խոյը թույլ տան քեզ, որ մտնես պալատ:

- Դա այնքան պարզ, այնքան հասարակ հանելուկ է: Մուշն առանց մտածելու կարող է պատասխանել,- ժպտաց քույրիկս:

- Դե, թող պատասխանի:

- Սահա՛կ, հիմա քսանմեկերորդ դարն է, իսկ այդ հանելուկը տասներորդ դարի երեխաների համար է: Հասկացա՞ր,- ասաց քույրիկս:

- Եթե կարող է, թող պատասխանի,- հրամայեց Սահակը:

- Մո՛ւշ, ի՞նչ պիտի անես, որ առյուծն ու խոյը քեզ վրա ուշադրություն չդարձնեն, ու դու մտնես թագավորի պալատ,- հարցրեց քույրիկս:

- Խոտը՝ խոյին, միսը՝ առյուծին,- ասացի ես:

- Մո՛ւշ, դու կարող ես գնալ պաղպաղակ ուտել, ծառ բարձրանալ, վազել, թռչել, մի խոսքով, ինչ ուզում ես՝ կարող ես անել: Ես քեզ ազատություն եմ տալիս,- ասպետաբար ասաց Սահակն ու բացականչեց,- կեցցե՜ ազատությունը...

- Մո՛ւշ, պաղպաղակ չուտես,- վախեցած վրա տվեց քույրիկս:

- Պաղպաղակի փոխարեն թարխունի լիմոնադ խմիր,- ասաց Սահակը:

- Դա կարելի է,- համաձայնեց քույրիկս:

- Մո՛ւշ,- գլուխս շոյեց Սահակը,- ցայտաղբյուրի մոտ կհանդիպենք: Եթե մենք շուտ գանք, կսպասենք քեզ, եթե դու շուտ գաս, դու կսպասես մեզ: Ցտեսություն:

- Մո՛ւշ,- բղավեց քույրիկս,- զգո՛ւյշ եղիր...

- Մի՛ անհանգստացիր...

Աշխարհում, իրոք, ազատությունից լավ բան չկա... Խե՜ղճ, խե՜ղճ կենդանիներ, ո՞նց ձեր սրտերը չեն պայթում: Երևի դուք կարոտում եք

ձեր հայրենիքին ու հիշում, թե ինչպես էիք վարգում ազատ ու արձակ դաշտերում ու մարգագետիններում, ինչպես էիք լողանում փրփրաբաշ գետերում ու թռչում անհուն կապույտ երկնքում: Ինչպե՜ս էիք սիրում ազատության մեջ վայելել կյանքը... Իսկ հիմա... Հիմա բանտված եք, դրա համար էլ ձեր աչքերը տխուր են ու արցունքոտ:

- Բարև՛, փիղ՛,- սաղարթաշատ ընկուզենու տակ տխուր ու մենակ կանգնած փղին սիրալիր բարևեցի ես, որ նա գոնե մի քիչ ուրախանա:

Փիղը բանտարկված էր երկաթե վանդակի մեջ: Բավական չէր, որ բանտարկված էր, աջ ոտքն էլ շղթայով կապել էին երկաթե մի սյունից:

«Ի՜նչ դժբախտ է այս փիղը,- մտածեցի ես,- կրկնակի ազատությունից զրկված փիղ է: Եթե նույնիսկ երկաթե վանդակները չլինեին, միևնույն է, նա չէր կարող որևէ տեղ գնալ...»:

Բազմությունը, որ հավաքված էր նրա վանդակի մոտ, հացի կտորներ, տերևներ, կոնֆետի մնացորդներ էր նետում փղին: Ինչպիսի՜ վիրավորանք: Փիղը դրանցից ոչ մեկի վրա ուշադրություն չէր դարձնում: Մի երիտասարդ կարկանդակի կտորի մեջ քար խցկեց ու հրամցրեց փղին: Փիղը քաղաքավարությամբ վերցրեց կարկանդակը, բայց անմիջապես զգաց, որ մեջը քար է դրված: Թախծոտ աչքերով նայեց երիտասարդին ու կարկանդակը դրեց մի կողմ: Փղի յուրաքանչյուր շարժումից երևում էր, որ չափազանց քաղաքավարի ու դաստիարակված է: Նա ոչ մի բառ չասաց չարակամ երիտասարդին, կախեց գլուխն ու կանգնեց իր տեղում: Նետված քարերն ու ուտեստների մնացորդները կպչում էին նրան ու թափվում: Իսկ նա, այդ բոլորին անտարբեր, լուռ մորմոքում էր, իր երկրի կարոտից հառաչում տխուր: Ո՞վ գիտե՝ ինչ էր մտածում, ինչ էր երազում շղթայակապ փիղը: Գուցե քաղցա՞ծ էր կամ ծարավ, գուցե որևէ տե՞ղն էր ցավում...

Իմ հզոր, մեծ, գեղեցիկ, իմ խեղճ, իմ բարի՜ փիղ... Ես վազեցի դիմացի կրպակը, որտեղ քաղցրավենիք ու կարկանդակներ էին վաճառում:

- Խնդրում եմ, կարկանդա՛կ տվեք:

- Ինչքա՞ն,- հարցրեց վաճառողուհին՝ աչքերը ճպճպացնելով:

- Բոլորը, բոլորը, ինչքան կա:

- Տասը հատ է մնացել:

- Տասն էլ տվեք:

Վաճառողուհին կարկանդակները փաթաթեց թղթի մեջ ու տվեց ինձ: Ես վճարեցի, շնորհակալություն հայտնեցի, վերցրի կարկանդակներն ու վազեցի փղի մոտ: Չգիտեմ՝ ինչ պատահեց, ես հայտնվեցի մեծ ու փակ մի դռան առաջ, որի վրա փիղ էր նկարված ու խոշոր տառերով գրված էր՝ «Մուտքը խստիվ արգելվում է»: Այսինքն՝ այդ դռնից ներս

մտնել չի կարելի: «Իսկ հետաքրքիր է՝ ինչո՞ւ չի կարելի,- մտածեցի ես ու հրեցի դուռը: Զարմանալի բան, դուռն իրեն-իրեն բացվեց, ու ես հայտնվեցի վանդակում՝ փղի կողքին: Փիղը նայեց ինձ ու սիրալիր գլուխը թափահարեց, այսինքն՝ բարևեց: Ես էլ նրան բարևեցի: Փիղը մի ոտքն առաջ մեկնեց ու խոնարհվեց, երևի ուզեց ասել՝ խնդրեմ, համեցե՛ք: Ես համարձակորեն մոտեցա ու կարկանդակներից մեկը հրամցրի նրան: Փիղը կնճիթով վերցրեց կարկանդակը, քաղաքավարությամբ դրեց բերանը, գլուխը թափահարեց, այսինքն՝ շնորհակալություն հայտնեց հյուրասիրության համար: Ես նրան մեկնեցի երկրորդ կարկանդակը: Նա դա էլ կերավ: Վեցերորդը ուտելու պահին կարծես ռումբ պայթեց: Բոլորը, որ մինչ այդ լուռ նայում էին ինձ, հանկարծ սկսեցին ճչալ.

- Օգնեցե՜ք, օգնեցե՜ք, օգնեցե՜ք...

- Ի՞նչ է պատահել,- հարցնում էին այս ու այն կողմից:

- Փիղը երեխա է գողացել:

- Փիղը մարդ է ուտում, հասե՜ք:

- Փախե՜ք, փիղը գալիս է: Փի՜ղը, փի՜ղը, փի՜ղը... Փիղը մարդ է տրորում...

Կենդանաբանական այգին քանդված մեղվափեթակ դարձավ: Բոլորը վազում էին, բղավում, ճչում, կանչում...

Ես փղին մեկնեցի յոթերորդ կարկանդակը: Նա կնճիթով վերցրեց այն, դրեց քարի վրա, քաղաքավարությամբ շարժեց գլուխը, այսինքն՝ շնորհակալություն հայտնեց ու նայեց ինձ:

- Անո՛ւշ արեք, բոլորովին թարմ է,- ասացի ես:

- Շնորհակալություն, հետո կուտեմ,- կնճիթը վեր ցցելով՝ կարծես ասաց նա:

- Շատ լավ,- ասացի ես ու մնացած կարկանդակները դրեցի քարի վրա:

- Դո՛ւրս արի այդտեղից, քանի դեռ փիղը քեզ չի տրորել, անպե՛տք տղա, այլանդա՛կ,- այս ու այն կողմից բղավում էին վանդակի մոտ խմբվածներն ու թափահարում ձեռքերը: Սակայն ո՛չ փիղը, ո՛չ էլ ես նրանց վրա ուշադրություն չէինք դարձնում: Ես մոտեցա փղին, գրկեցի նրա կնճիթն ու շոյեցի: Փիղը շատ հուզվեց: Նա շոյանքի, քնքշանքի կարոտ էր: Նա ինչ-որ բան էր ուզում ինձ ասել, բայց չէր կարողանում, երևի բառեր չէր գտնում: Նա մի քանի անգամ թափահարեց գլուխն ու ծնկի իջավ: Ես անմիջապես հասկացա. փիղն ուզում էր, որ ես բարձրանամ ու նստեմ իր գլխին: Ես փաթաթվեցի կնճիթին: Փիղն ինձ բարձրացրեց, նստեցրեց իր գլխին ու սկսեց դանդաղ հետ ու առաջ քայլել: Վանդակը շրջապատած բազմությունը հանդարտվեց: Նրանք ապշած ու շվարած նայում էին ինձ ու փղին և չգիտեին ինչ անել... Մի քանիսը

բղավում էին. «Ես այդ տղային ճանաչում եմ. նա հնդիկ է, Հնդկաստանից է եկել»:

Բազմության մեջ ես նկատեցի հայրիկիս ու մայրիկիս, որոնք դեռ ինձ չէին տեսել:

- Հայրի՜կ, մայրի՜կ,- բղավեցի ու թափահարեցի ձեռքս:

Նրանք կարծես շանթահարվեցին: Բազմությունը ճեղքելով՝ մոտեցան վանդակին ու սկսեցին կանչել.

- Մո՛ւշ, այդ ի՞նչ ես անում: Այդ ո՞ւր ես բարձրացել...

- Ո՞վ է քեզ թույլ տվել փղի գլխին նստել...

- Իջի՛ր, իջի՛ր, Մո՜ւշ...

- Մի՛ անհանգստացեք, փիղն իմ բարեկամն է ու շատ բարի է,- բղավեցի ես:

Մայրիկը ճչաց: Հայրիկն ինչ-որ բան ասաց, բայց ես ոչինչ չհասկացա, որովհետև ժխոր էր: Ամբոխը գոռում էր:

Փիղը հանդարտ, հանդիսավոր ու արժանապատիվ կեցվածքով պտույտներ էր գործում ու թափահարում կնճիթը:

Բազմությունը մի պահ լռեց, հետո սկսեց ծափահարել, ինչպես կրկեսում:

- Կեցցե՜ս, տղա՛ս, կեցցե՜ս,- բղավեց մի ծերունի,- դու փիղ սանձահարող ես:

- Կրկեսի դերասան է,- ասաց գեղեցկատես մի տիկին ու թափահարեց թաշկինակը,- բռավո՜... սքանչելի՜ է... բռավո՜...

- Իհարկե, կրկեսի դերասան է,- ասաց երիտասարդ մի տղամարդ ու սկսեց լուսանկարել:

- Ի՞նչ եք ասում, ի՞նչ անհեթեթություններ եք դուրս տալիս,- նրան առարկեց ակնոցը թելով ականջներին կապած մի ծերուկ,- սա հո իսկական փիղ չէ: Սա բուտաֆորական փիղ է:

- Ի՞նչ եք ասում, ի՞նչ եք ասում,- ծերունուն առարկեց մի տիկին,- սա հնդկական փիղ է, այս տղայի հայրը հնդիկ է: Ես ճանաչում եմ նրան: Նրանք տարիներ առաջ Հնդկաստանից եկել են Երևան... Դարձել են հայ և կարողանում են փղերի հետ հայերեն խոսել... Այնպես որ, այդ փիղը հայ փիղ է...

- Բավական է, տիկի՛ն...

- Մո՜ւշ, Մո՜ւշ,- լեղապատառ բղավելով՝ դեպի վանդակը վազեցին քույրիկս ու Սահակը:

- Չվախենա՛ս, Մո՛ւշ,- բղավեց Սահակը,- դու իսկական փիղ վարժեցնող ես, ապրե՛ս: Քեզ մեծ ապագա է սպասվում: Ես հպարտանում եմ քեզանով...

Այդ պահին փիղը հանկարծ կանգնեց հետևի ոտքերի վրա: Ես պինդ բռնեցի նրա ականջներից, որ վայր չընկնեմ: Բոլորը սկսեցին ծափահարել ու բղավել: Աղմուկ բարձրացավ: Այդ պահին կենդանաբանական այգու տնօրենը, կենդանիների բժիշկը և փղին խնամողը գլխապատառ ներս ընկան ու ապշած նայեցին ինձ:

- Ո՞վ է քեզ թույլ տվել մտնել փղի վանդակը,- մատը թափ տալով՝ բղավեց կենդանաբանական այգու տնօրենը:

- Բարև՛ ձեզ... ե՜ս...

- Ո՞վ ես դու,- գոռաց կենդանիների բժիշկը:

- Ե՜ս... Ես Մուշեղ Արարատյանն եմ:

- Անմիջապես իջի՛ր,- գոռգոռաց տնօրենը,- սրա՛ն տեսեք: Մուշե՛ղ Արարատյան, իջի՛ր:

- Չեմ կարող, բարձր է,- ասացի ու շոյեցի փղի ականջները:

- Շուտ իջեցրո՛ւ դրան,- փղի խնամողին դառնալով՝ հրամայեց կենդանաբանական այգու տնօրենը:

- Հանգի՜ստ, հանգի՜ստ... Ընկե՛ր Կիրակոսյան, մի՛ բղավեք, մի՛ զայրացեք... Փիղը չի սիրում, որ բղավում են... Ես հիմա տղային կիջեցնեմ, փղին ջուր կտամ, կհանգստանա,- մեզ մոտենալով՝ ասաց փղին խնամողը, որը բարձրահասակ, կապույտ աչքերով բարի մի մարդ էր: Փիղը նրան ճանաչում էր, դրա համար էլ կնճիթը երկարեց դեպի նա ու բարևեց: Փղին խնամողը բռնեց կնճիթից, շոյեց ու քնքուշ խոսքեր ասաց.

- Հա՜, բարեկա՛մս, հա՜, սիրելիս, ես գիտեմ, դու կարոտել ես քո հայրենի անտառներին,

դաշտերին, գետերին... Բայց ի՞նչ կարող ես անել, պիտի համբերես։ Այստեղ վատ չէ, մարդիկ նայում են, ուրախանում, ուզում են ծանոթանալ քեզ հետ... Համբերի՛ր, շուտով քեզ համար ծաղիկ, խոտ կբերեմ, բանան...,-

փիղը հասկանում էր իրեն խնամողին ու նրա ասած ամեն բառի վրա շարժում գլուխը...

- Դե, հիմա նստի՛ր, նստի՛ր, սիրելի՛ս... Ես գիտեմ, դու բարի փիղ ես, դու հոգնել ես մենակությունից, դու ընկեր ես ուզում, որ քեզ հետ խաղա, զրուցի, ահա և գտել ես այս լավ տղային... Հիմա նստի՛ր, նստի՛ր, տղան ուզում է տուն գնալ... դե՛, նստի՛ր, նստի՛ր,- նա սկսեց քորել փղի կուրծքը։

Փիղը զգուշությամբ նստեց: Ես սահելով ցած իջա ու կանգնեցի փղի դիմաց: Փիղն իր թախծոտ աչքերով նայեց ինձ... Նրա աչքերը արցունքոտ էին... Նա երևի ճանձրացել էր կենդանաբանական այգու վանդակում երկար ու միապաղաղ կյանքով ապրելուց: Նրա սիրտը երևի լցված էր իր հայրենի երկրի կարոտով, ամեն վայրկյան տեսնում էր իր հայրենիքի կանաչագեղ դաշտերն ու մարգագետինները, լսում ջրվեժների շառաչը, ազատության մեջ ապրող առյուծների մռնչյունը...

- Մնաս բարո՜վ, սիրելի՛ փիղ,- նրա ճակատը շոյելով՝ մրմնջացի ես,- մի՛ տխրիր, բարեկա՜մս, չէ՞ որ այստեղ հավաքված բոլոր երեխաները քեզ սիրում են... Ես էլ եմ քեզ սիրում... Մնաս բարո՜վ:

Փիղը հազիվ շարժեց գլուխը, հրաժեշտ տվեց ինձ: Կենդանաբանական այգու տնօրենը բռնեց ձեռքս:

- Ըհը, բռնվեցի՞ր, հերո՜ս,- մռլտաց նա ու ինձ քարշ տվեց դեպի դուռը,- Իվա՛ն,- փղի խնամողի վրա բղավեց նա,- փակի՛ր բոլոր դռներն ու արի՛ գրասենյակ:

- Ներեցե՛ք, ես... ես... ե՜ս...

- Լռի՛ր: Ես, ես, ե՜ս... Ի՞նչ՝ դու, դու, դու... օրենքով կդատենք, օրենքով պատասխան կտաս... Առա՛ջ անցիր... Գափոյա՛ն,- դիմեց նա կենդանիների բժշկին,- միլիցիոներ կանչիր... Օրենքի բոլոր խստությամբ պետք է սրան պատասխանատվության ենթարկել...

- Լսում եմ... Բայց ի՞նչ կարիք կա, մենք կպարզենք... Մենք կվերլուծենք...

- Եկե՛ք, եկե՛ք գրասենյակ,- գոռգոռաց կենդանաբանական այգու տնօրենը:

Մենք դուրս եկանք փղի վանդակից: Բազմությունը շրջապատեց մեզ: Բոլորը ծափ էին տալիս, խրախուսական բառեր ասում, նույնիսկ մի աղջիկ ինձ ծաղիկներ տվեց...

- Ներեցե՜ք, ներեցե՜ք,- բազմությունն այս ու այն կողմ հրելով՝ մի կերպ ինձ մոտեցան մայրիկս, հայրիկս, Սահակն ու քույրիկս:

- Սա իմ որդին է: Նա պատահաբար է հայտնվել վանդակում... Ներեցե՛ք, խնդրում եմ... Շնորհակալություն: Թույլ տվեք,- ձեռքս բռնելով՝ տնօրենին ասաց հայրիկս:

- Դուք հա՞յրն եք:

- Այո՛: Սա իմ որդին է, անունը Մուշեղ է, ես նրա հայրն եմ...

- Գրասենյակում կխոսենք,- կտրուկ պատասխանեց տնօրենը:

Գրասենյակում երկար, շատ երկար հարցուփորձ սկսվեց: Տնօրենն ուզում էր իմանալ, թե ես ինչ նպատակով եմ մտել փղի վանդակը: Նախօրոք մտածել եմ այդ մասին, թե հանկարծակի եմ որոշել, արդյո՞ք

մեր փողոցի տղաների մատը խառը չէ այդ գործին, արդյո՞ք փիղը տանելու մտադրություն չեմ ունեցել, և այլն, և այլն...

Բոլոր հարցերը պարզելուց հետո կենդանաբանական այգու տնօրենը ձեռքը խփեց սեղանին ու ասաց.

- Գազանների փոխարեն սրանց պետք է դնել վանդակների մեջ... Սրանք գազաններից էլ գազան են... Սրանք մարդ չեն... Չեմ հասկանում, ի՞նչ եք ուզում այդ խեղճ կենդանիներից... Քաշում եք, խփում, պոկում... Ես մտածել եմ՝ նոր տիպի կենդանաբանական այգի եմ ստեղծելու: Մարդիկ՝ վանդակներում, գազանները՝ ազատության մեջ... Հարգարժա՛ն ծնողներ, զբաղվե՛ք ձեր երեխաների դաստիարակությամբ... Նրանց սովորեցրեք սիրել կենդանիներին... Չէ՞ որ նրանք մեր ցեղակիցներն են... Օ՜ֆ, չգիտեմ ինչ անել,- տնօրենը էլի ինչ-որ բան էր ուզում ասել, երբ դուռը բացվեց, ու աշխատողներից մեկը տագնապահար ճչաց.

- Կապիկների վանդակը աղջիկ է մտել... հասե՜ք... փրկե՜ք...

- Ո՞ւմ փրկենք:

- Կապիկներին, իհարկե, կապիկներին...

Գրասենյակում գտնվողները, մեզ մոռացած, գլխապատառ դուրս թռան: Կապիկները մեզ փրկեցին փոքի մարդասիրության, ազնվության ու բարության մասին երկար ու ձանձրալի դատողություններ լսելուց...

- Շատ բովանդակալից ու շատ հետաքրքիր ժամանակ անցկացրինք,- ասաց հայրիկն ու գրասենյակից դուրս եկավ: Մենք լուռ հետևեցինք նրան:

Տանը, ինչպես միշտ, այս անգամ էլ երկար խոսեցին իմ կատարած անտանելի արարքի մասին:

- Հազար անգամ ասել եմ՝ չի՛ կարելի, չի՛ կարելի, իսկ դու շարունակում ես նույնը: Վերջը մի փորձանք բերելու ես մեր գլխին,- ասաց հայրիկն ու գնաց քնելու:

Ես մայրիկիս ու քույրիկիս հետ երկար ժամանակ նստած մնացի մեծ սենյակում: Մայրիկը, իհարկե, մեղադրում էր Սահակին ու քույրիկիս, որ ինձ մենակ են թողել, որ չեն հետևել, թե ես ուր եմ գնում, ինչ եմ անում, ինչով եմ զբաղվում: Քույրիկս չէր արդարանում, մեղավոր նայում էր ու հառաչում:

- Գնա՛, գնա քնի՛ր,- ասաց մայրիկը,- այնպես եմ զայրացած, չգիտեմ ինչ խոսքեր ասեմ, որ դու խելքի գաս ու հասկանաս, որ չի կարելի այլանդակություններ անել:

- Մա՛, ազնիվ խոսք, ես դիտմամբ չեմ արել... ամեն ինչ պատահաբար ստացվեց,- ասացի ես, գնացի ննջարան, հանեցի զգեստներս ու չգիտեմ՝ քնեցի՞, թե՞ չքնեցի...

Երազիս մեջ հանդիպեցի կարոտից մորմոքող փղին: Նա քանդել էր իր վանդակը, փշրել երկաթե շղթան ու վազում էր կանաչ դաշտերի միջով: Ես գրկեցի նրա պարանոցը, որ վայր չընկնեմ, իսկ նա ստեպ-ստեպ կանգնում, նայում էր ինձ ու հարցնում.

- Հը՞, քեզ դո՞ւր են գալիս իմ հայրենիքի կանաչագեղ դաշտերը, անտառները, գետերը, սարերը, հովիտները... Իմ հայրենիքը աշխարհի ամենագեղեցիկ երկիրն է...

- Այո՛, շատ-շատ գեղեցիկ են,- պատասխանում էի ես:

... Ու փիղը թռչում էր, թռչում քամու պես թեթև ու սահուն, թռչում գետերի, անտառների, դաշտերի վրայով... Աշխարհը լցված էր խնդությամբ ու երգով, որովհետև փիղն իր հայրենիքում էր: Փիղը ազատ էր ու վայելում էր ազատությունը:

ԻՆՉԻ՞ ՄԱՍԻՆ ԷԻՆ ՀՐՈՒՅՈՒՄ ՄԱՅՐԻԿՍ ՈՒ ՔՈՒՅՐԻԿՍ

Արևն իմ ննջասենյակի պատերին նարնջագույն ծաղիկներ էր նկարել: Ես արթնացել, բայց չէի ուզում անկողնուց վեր կենալ, մտածում էի կենդանաբանական այգում ազատազրկված փղի մասին. սիրտս տխրությամբ էր լցվում: Ինչպե՞ս է նա իր կյանքը մաշելու այդ չոր ու ցամաք վանդակի մեջ, ինչո՞ւ են մեծահասակներն ու երեխաները հացի մնացորդներ ու տերևներ շպրտում նրա երեսին... Չէ՞ որ փիղը շատ զգայուն է, չէ՞ որ նա կարոտից մորմոքում է, չէ՞ որ նրա սիրտը իր հայրենի անտառներում ու դաշտերում է... Ես պինդ-պինդ փակեցի աչքերս, որ քնեմ ու նորից տեսնեմ երազս, նորից հանդիպեմ փղին ու նրա հետ նորից թռչեմ կանաչ դաշտերի, անտառների վրայով... Փիղը այն ժամանակ ինձ ցույց տվեց իր ծննդավայրը: Դա հորդառատ գետակի ափին գտնվող կանաչագեղ մի պուրակ էր, ուր հազարագույն ծաղիկներ ու սաղարթախիտ ծառեր կային... Ինչքան պինդ փակեցի

աչքերս, այնքան քունս փախավ ու հենց այդ պահին լսեցի մայրիկիս ու քույրիկիս քչփչոցը:

- Պետք է բժշկի դիմել,- ասաց քույրիկս:

- Կարիք չկա,- շշնջաց մայրիկս,- կանցնի, պատահում է: Երեխա է, հուզվում է, վազվզում, լավ չի սնվում: Կարիք չկա բժշկի դիմելու...

- Օր օրի նա նիհարում է, փոքրանում,- հոգոց հանեց քույրիկս:

- Չարաճճիությունից է:

- Սահակն ասում է՝ անպայման պետք է բժշկի դիմենք, որ դա...

- Սահակին ասա՝ բոլոր այն տղաները, ովքեր չարաճճի չեն, ովքեր հետաքրքրություններ չունեն, դանդալոշներ են: Մուշն ուզում է ամեն բան իմանալ: Դրանում վատ բան չկա,- ինձ պաշտպանեց մայրիկս:

- Սահակն ասում է՝ իսկ եթե նա հանկարծ մի օր մտնի առյուծի վանդակը. առյուծը հո փիղ չէ՞, որ նրան գուրգուրի: Ասում է՝ մի անգամ Ամերիկայում, թե Աֆրիկայում մի սպիտակամորթ տղա մտել է առյուծի վանդակը, առյուծը նրան հոշոտել է:

- Մենք այլևս ոչ մի անգամ կենդանաբանական այգի չենք գնա, չէ՛, չէ՛, չե՛նք գնա...

Այդ պահին Արևն այնպես խուտուտեց ռունգերս, որ ես փռշտացի ու վեր թռա:

- Մո՜ւշ, Մո՜ւշ,- կանչեց մայրիկս:

- Մա՜,- ձայն տվեցի ես:

- Արևը վաղուց արթնացել է, Մո՛ւշ, վե՛ր կաց, տիկնիկային թատրոն ես գնալու:

Ասում են՝ տարիներ առաջ մեր թաղում ծաղկել են ծիրանենիները, ու ողջ թաղը կարծես ճերմակ շորեր է հագել, ու բարությամբ է լցվել ողջ աշխարհը: Ասում են՝ մեղուների պարսերը երգեր են հորինել ծաղկած ծիրանենիների մասին, ու այդ երգերը խնդությամբ են լցրել մարդկանց սրտերը...

Իսկ հիմա մեր թաղում մի քանի ծիրանենիներ են մնացել, այն էլ Առաքել պապի տան բակում: Առաքել պապի տունը այնքան գեղեցիկ է, որ նայելիս ուրախանում ենք, հրճվում: Հին տան մեջ հավերժորեն ապրում են այս աշխարհից վաղուց հեռացած տան տերերի երազանքներն ու կարոտները, մտորումներն ու հուշերը:

- Այո, գեղեցկությունը հարստացնում է մարդու հոգեկան աշխարհը, հրճվանքի ու սիրո լույսով լցնում աչքերը,- ասում է մայրիկս ու ցույց տալիս Առաքել պապի տան պատերին քանդակված քարե նռներն ու խաղողի որթերը:

- Քարերը, որոնցով շարված է Առաքել պապի տունը, խոսում են: Դրանք հին-հին պատմություններ են պատմում մարդկանց մասին, որոնք կարողացել են անշունչ քարերին խոսեցնել: Առաջ մեր փողոցում այսպիսի տներ շատ կային, դրանց ճակատներին գրված էր, թե որ թվականին են կառուցել, ով է կառուցողը, և ում է պատկանում տունը... Առաքել պապի նախնիներն են կառուցել այս տունը: Նրանք հին երևանցիներ էին: Առաքել պապն ասում է, որ իր պապի պապի պապի պապը Էրեբունի ամրոցի պահապաններից մեկն է եղել, ու իրենց տունը նա է կառուցել Արգիշտի թագավորի օրոք...

Մեր թաղի հին տները քանդել են, ծիրանի ծառերը կտրել, փրկվել են միայն Առաքել պապի տունն ու ծիրանի ծառը: Դրա համար էլ Առաքել պապին բոլորը ճանաչում են ու սիրում: Առաքել պապը աշխարհի շատ երկրներում է եղել, տառապանք ու վիշտ է տեսել, բայց երբեք չի վհատվել: Ասում են՝ տան կարոտն է նրան այդպես ամուր ու առույգ պահել ու պահպանել:

- Ես մասնակցել եմ Սարդարապատի ճակատամարտին, մի ճակատամարտ, որտեղ յուրաքանչյուր զինվոր հերոս էր, յուրաքանչյուր նահատակ՝ սուրբ: Ես տեսել եմ զորավար Փիրումյանին ու Գարեգին Հովսեփյանին: Թշնամու գնդակները նրանց չէին խոցում, որովհետև նրանք մարտնչում էին հայրենիքի փրկության համար... Նրանք զինվորներին առաջնորդում էին դեպի մարտ... Էհ, զավակնե՛րս, որը պատմեմ, որը թողնեմ,- ասում է Առաքել պապն ու ավելացնում,- բոլոր պատմությունները դուք պիտի իմանաք ու պիտի ճանաչեք բոլոր նրանց, ովքեր իրենց կյանքը նվիրել են ժողովրդին: Ծառը, եթե արմատներ չունենա՝ չի ապրի: Մարդու արմատներն էլ նրա նախնիներն են, նրանց պատմությունն է...

Ամենից շատ երեխաներ Առաքել պապն ունի: Ամեն շաբաթ իրիկուն ու կիրակի առավոտ նա իր թոռներին, ծոռներին, իր բարեկամների թոռներին, ծոռներին, մեր թաղի խելոքներին հավաքում է իր շուրջն ու բոլորը միասին երգում են. նախ՝ «Վարդանանց պատերազմ», հետո՝ «Անվախ ընկեր», հետո՝ «Սոնա յար»:

Ամռան կեսերին, երբ ծիրանենիները ոսկի ծիրան են կախում թփերի տակ, Առաքել պապը թաղի բոլոր երեխաներին ու մեծահասակներին հրավիրում է ծիրան ուտելու: Դա մեր թաղի ամենանշանակալից օրերից մեկն է, ոչ միայն նրա համար, որ բոլորը արևահամ ծիրան են անուշ անում, այլև նրա համար, որ բոլորը հավաքվում են իրար գլխի, զրուցում, հուշեր պատմում, ծիծաղում, երգում: Այդ օրը մեր թաղը դառնում է մի ընտանիք, մի տուն, մի սիրտ, մի բռունցք, մի միտք՝ բարությամբ ու խնդությամբ օծված...

Եվ ահա մենք նորից հավաքվել էինք Առաքել պապի շուրջը, արդեն «Վարդանանց պատերազմը» երգել էինք, պատրաստվում էինք «Անվախ ընկերոջն» անցնել, երբ բակ մտավ նախկին մանկավարժ Երմոնյա Բաղալովնան: Նա մեր թաղի ամենահարգված ու սիրված մարդկանցից մեկն է, նրան ճանաչում են բոլորը: Նրանցից շատերին Երմոնյա Բաղալովնան է գրել-կարդալ սովորեցրել: Երբ Առաքել պապը տեսավ Երմոնյա Բաղալովնային, ոտքի կանգնեց: Մենք նույնպես ոտքի ելանք: Այդպես է կարգը մեր հին երկրում, երբ ուսուցիչ է ներս մտնում, բոլորը

պարտավոր են ոտքի ելնել, խոնարհվել նրա առաջ...

- Բարև՛ ձեզ, սիրելինե՛րս,- ժպտադեմ մեզ բարևեց Երմոնյա Բադալովնան,- ներեցե՛ք, որ ընդհատում եմ ձեր երգը, այսօր բոլորս մի մարդու պես պետք է գնանք տիկնիկային թատրոն, իսկ թատրոնում լինելը, ներկայացում դիտելը մարդու կյանքի երջանիկ պահերից մեկն է,- աչքերը խոնարհելով՝ ասաց նա ու ավելացրեց,- դե, երեխանե՛ր, վազե՛ք տուն, լվացվե՛ք, սանրվե՛ք, սպիտակ վերնաշապի՛կ հագեք ու եկե՛ք այստեղ: Հասկանալի՞ է:

- Այո՛,- բղավեցինք մենք ու վազեցինք տուն:

- Թատրոնում քեզ կարգին կպահես,- զգուշացրեց քույրիկս,- Երմոնյա Բադալովնային չզայրացնես:

- Լավ:

- Ներկայացման ժամանակ չխոսես, կոնֆետ չուտես, աջ ու ձախ չնայես, ձեռքի հեռախոսը կանջատես, ծամոն չծամես: Ուշադրությունդ կսևեռես միայն ու միայն բեմին: Հասկանալի՞ է:

- Իհարկե, չեմ խոսի, կոնֆետ չեմ ուտի, ձեռքի հեռախոսը կանջատեմ, ծամոն չեմ ծամի, աջ ու ձախ չեմ նայի, չեմ շնչի...

- Ո՞վ է ասում՝ մի շնչիր... Շնչի՛ր, բայց չափդ իմացիր: Ամեն ինչ գեղեցիկ է չափի մեջ: Իմացիր՝ ինչ կարելի է անել, ինչ չի՛ կարելի,- վրդովվեց քույրիկս,- տե՛ս, նորից մեր գլխին փորձանք չբերես...

- Ուշանում եմ,- ասացի ես, արագ-արագ լվացվեցի, սպիտակ վերնաշապիկ հագա, փայլեցրի կոշիկներս ու վազեցի դեպի Առաքել պապի բակը, որտեղից բոլորս միասին պետք է ուղևորվեինք տիկնիկային թատրոն: Երմոնյա Բադալովնան ժպտերես դիմավորեց մեզ:

- Ապրե՛ք, երեխանե՛ր,- ասաց նա,- հիմա մենք գնում ենք թատրոն, ես համոզված եմ, որ դուք այնտեղ ձեզ կարգին կպահեք: Դե, շարժվեցինք:

... Թատրոնի ճեմասրահում բոլոր երեխաները հանգիստ ճեմում էին ու ցածրաձայն զրուցում, բայց այդ հանգստության մեջ այնպիսի լարվածություն կար, որը եթե հանկարծ պայթեր՝ ողջ թատրոնը մեկ վայրկյանում կվերափոխվեր քանդված մեղվափեթակի: Բայց այդ բանը տեղի չէր կարող ունենալ, որովհետև թատրոնի մանկավարժներն ու հսկիչները աչալուրջ հետևում էին մեր յուրաքանչյուր քայլին և եթե աննշան անկարգություն էին նկատում, անմիջապես դիտողություն էին անում:

- Մինչև ներկայացումն սկսվելը դեռ ժամանակ կա, մենք կարող ենք այցելել տիկնիկների թանգարան: Այնտեղ շատ հետաքրքիր տիկնիկներ կան,- ասաց Երմոնյա Բադալովնան ու մեզ տարավ տիկնիկների թանգարան:

Տիկնիկների թանգարանում մեզ մոտեցավ թանգարանի տնօրենն ու ցուցափեղկերում տեղադրված տիկնիկները մեկ-մեկ ցույց տալով՝ սկսեց պատմել նրանց մասին։

- Այստեղ ցուցադրվող տիկնիկները մենք բերել ենք աշխարհի տարբեր երկրներից։ Այստեղ են անգլիացի Պանչն ու ֆրանսիացի Պոլիշինելը, գերմանացի Կաշպարն ու իտալացի Պուլչինելլան, լիոնցի Գինյոլն ու հունգարացի Վասիլյաշը... խնդրում եմ, այս կողմն անցեք... Ապրե՛ք։ Հիմա ուշադիր նայեք այս ցուցափեղկին։ Այստեղ դուք տեսնում եք բազմաթիվ թագավորների ու թագուհիների, արքայազների ու արքայադուստրերի, կախարդների ու բարի փերիների, սատանաների ու ավազակների, մի խոսքով՝ հազար ու մի տիկնիկների, որոնք ժամանակին հանդես են եկել մեր թատրոնի բեմում և մեծ հարգանք ու սեր վայելել,- երգեցիկ ձայնով իր պատմությունն ավարտեց ցուցահանդեսի տնօրենը։

- Ներեցե՛ք, իսկ սրանք ի՞նչ տիկնիկներ են,- թելերից կախված տիկնիկների ցուցափեղկին մոտենալով՝ հարցրեց մեր բակի երեխաներից մեկը։

- Այս թագավորը, որ կախված է թելերից, մարիոնետային տիկնիկ է։ Դերասանը բռնում է այս թելերից ու սրան ոնց ուզում՝ այնպես էլ խաղացնում է... Այսպիսի տիկնիկներ ունեցող թատրոնը կոչվում է մարիոնետային տիկնիկային թատրոն։ Դուք «մարիոնետային» բառը շատ եք լսել ռադիոյով, հեռուստատեսային հաղորդումների ժամանակ։ Օրինակ՝ «Մարիոնետային պետություն» կամ «Նա մարիոնետ է դարձել այսինչի ձեռքին»։ Դա նշանակում է, որ տվյալ պետությունը կամ տվյալ անձը գործիք է դարձել մեկ ուրիշի ձեռքին, որ նա մտածում ու գործում է նրա թելադրանքով, ինչպես ահա մեր ցուցափեղկում դրված այս թագավորը,- եռանդով բացատրեց թանգարանի տնօրենն ու անցավ հաջորդ ցուցափեղկին,- իսկ ահա այստեղ, սիրելի՛ երեխաներ, դուք տեսնում եք ձեռնոցային տիկնիկներ։ Ինչո՞ւ են դրանք կոչվում ձեռնոցային։ Հարցն ունի շատ պարզ պատասխան։ Ձեռնոցային են կոչվում, որովհետև դերասանը դրանք ձեռնոցի պես հագնում է ձեռքին ու խաղացնում։ Ձեռնոցային տիկնիկները,- այստեղ այնպես հուզվեց թանգարանի տնօրենը, որ ինքն իրեն մոռացավ։ Նա փակեց աչքերը, ընկավ երանության մեջ ու ձայնին մեղմ երանգներ հաղորդելով՝ շարունակեց իր պատմությունը,- օ՜, ինչպիսի՜ հմայք, ինչպիսի՜ գույներ, ինչպիսի՜ շարժումներ... Այս տիկնիկները...։

Ես այլևս չէի ուզում լսել թանգարանի տնօրենին։ Ճիշտ է, անքաղաքավարություն էր, բայց ի՞նչ կարող էի անել, չէի ուզում և վերջ...

- Եթե որևէ ցուցահանդես կամ թանգարան ես գնում, ուշադրությամբ պիտի զննես ամեն բան, որ հետո բոլորը հիշես,- բազմաթիվ անգամներ ասել է հայրիկս, և ես, հետևելով նրա խորհրդին, նայեցի չորսբոլորս, որ տեսնեմ՝ բացի տիկնիկներից, ուրիշ ի՞նչ կար այդ թանգարանում: Եվ ահա իմ դիմաց տեսա մի դուռ, որի վրա գրված էր՝ «Ներս մտնել չի կարելի»:

- Դարձյալ այդ զզվելի «Չի կարելին»: Իսկ ինչո՞ւ չի կարելի,- մտածեցի ես ու հրեցի դուռը: Իմ կարծիքով, այդ դուռը չպետք է բացվեր, բայց բացվեց, և ես հայտնվեցի տիկնիկանոցում: Ինչպիսի տիկնիկներ ասես, որ չկային այնտեղ: Բոլորը լուռ ու մունջ նայում էին ինձ: Պատի տակ կանգնած էր կախարդ մի պառավ ու ծիծաղում էր ինձ վրա: Կախարդ պառավն իմ հասակին էր: Մազերը ոնց որ ագռավի բույն լինեին, իսկ աչքերն այնքան խորամանկ ու չար արտահայտություն ունեին, որ նայելիս սարսռում էի: Ճիշտ է, ես մի քիչ վախեցա նրանից, բայց ինքս ինձ սիրտ տվի ու մոտեցա.

- Բարև՛ ձեզ, ինչպե՞ս եք, տիկին կախարդ,- նրա քիթը բռնելով՝ հարցրի ես։

- Քիթս բա՛ց թող, բա՛ց թող, քեզ ասում եմ,- զայրացավ կախարդ պառավը։

- Այդ դո՞ւ... դո՜ւ... դու ես խոսո՞ւմ...

- Հը՞, վախեցա՜ր... Դու ո՞վ ես և ինչո՞ւ ես հայտնվել իմ թագավորությունում,- քրքմնջաց տիկին կախարդը։

- Ե՜ս, ե՜ս... Ես արքայազն եմ,- հենց այնպես, կախարդ պառավին վախեցնելու համար ասացի ես։

- Ի՞նչ արքայազն... հի՜, հի՜, հի՜, հի՜... Իսկ ես ինչ ուզեմ, կարող եմ դառնալ։ Ուզում ես՝ ձի դառնամ, գորտ, փուչիկ... Չէ՛, չէ՛, ասա՛, ի՞նչ ես ուզում ես դառնամ, ընկե՛ր արքայազն։ Ներեցե՛ք, պարո՛ն արքայազն։

- Ես ոչինչ չեմ ուզում դառնալ։

- Ես ապրում եմ անտառի բացատում գտնվող տնակում, և բոլոր նրանք, ովքեր մոլորվում են անտառում, գալիս ընկնում են իմ ճանկը... Ես նրանց կախարդում եմ։

- Ի՞նչ եք անում...

- Կախարդում եմ... Այսինքն՝ դարձնում եմ ագռավ կամ նապաստակ... հի՜, հի՜, հի՜...

- Ներեցե՛ք, պառա՛վ, օ՜, ներեցե՛ք, կախարդ...

- Ինձ պառավ չասես... Չի էլ ամաչում, դեռ իրեն արքայազն է կոչում... Պառա՜վ... ի՞նչ պառավ։

- Լավ, տատիկ կասեմ։

- Ի՞նչ տատիկ, ես տատիկ չեմ։ Ես բոլորովին երիտասարդ եմ, հազար տարիս դեռ չի լրացել։ Իսկ այ, այն մեկը, որ ապրում է ճահճուտում՝ ուղղակի քավթառ է, չորս հազար տարեկան է... Ես այնպես եմ ուզում հետաքրքիր կյանքով ապրել... Լա՜-լա՜-լա՜... - իրեն թափահարելով՝ սկսեց երգել կախարդ պառավն ու նայել ինձ։

- Ներեցե՛ք, տիկի՛ն կախարդ, ես ուզում եմ գնալ...

- Ի՞նչ տիկին,- զայրացավ կախարդ պառավը,- դու իսկի էլ արքայազն չես... «Տիկին, տիկի՜ն, պառավ, պառա՜վ»... Ես անուն, հայրանուն ունեմ՝ օրիորդ Սմբուլ Բմբուլի... Մենք՝ կախարդներս, սիրում ենք, երբ մեզ անուն-հայրանունով են դիմում։

- Շատ բարի, օիրո՛րդ Սմբուլ Բմբուլի։

- Ապրես, հավատում եմ, որ արքայազն ես։

- Սմբուլ Բմբուլի, Ձեր ցախավելը նո՞ւյնպես կախարդական է։

- Ինչո՞ւ ես հարցնում, ի՞նչ ես ուզում անել,- վախեցած հարցրեց կախարդ պառավը։

- Ես մի ընկեր ունեմ, անունը Շեկո է...

- Գիտեմ, գիտեմ, այդ Շեկոն ուզում է թռչել տիեզերք:

- Այո: Խնդրում եմ, Ձեր ցախավելը մի քանի օրով տվեք, տանեմ տամ Շեկոյին, հետո կվերադարձնեմ:

- Ես ոչ մեկին ոչինչ չեմ տալիս... Կորի՛ր, թշվա՛ռ արքայազն... ես եմ հիմար, ինչո՞ւ քեզ գորտ չեմ դարձնում, որ վախից կռկռաս... Ալա՜, բիսո, մեկո, տոսո... գորտո, մորտո, պորտո, սորտո՜...,- կախարդ պառավը ձեռքերը տարածեց ու ուզում էր ինձ գորտ դարձնել, բայց այդ պահին տիկնիկանոցի դուռը բացվեց ու նորից շրխկոցով փակվեց: Կախարդ պառավը համրացավ:

- Օրիո՛րդ Սմբուլ Բմբուլի, ինչո՞ւ լռեցիք, խոսե՛ք,- շշնջացի ես:

Կախարդ պառավը հազիվ թափահարեց ձեռքերն ու անշարժացավ:

Ես մոտեցա նրան ու սկսեցի ուսումնասիրել: Ես շատ լավ գիտեմ, որ կախարդներ ընդհանրապես գոյություն չունեն, և պետք չէ կախարդներից վախենալ: «Գուցե սա ռոբոտ է,- մտածեցի ես,- փեշի տակ խոսելու հարմարանք է տեղադրված: Ինչ կա որ, այսպիսի կախարդ պառավ պատրաստելն այնքան էլ բարդ բան չէ»: Ես բարձրացրի կախարդ պառավի փեշը, որ տեսնեմ, թե այնտեղ ինչ մարտկոցներ են դրված: Բայց փեշի տակ ոչինչ չկար: «Գուցե գլխի մեջ է»,- մտածեցի ես ու մի կերպ խցկվեցի կախարդի ներսը... Ու մինչև հիմա էլ չեմ կարողանում հասկանալ, թե ինչպես գլուխս մտավ պառավի գլխի մեջ, ինչպես ձեռքերս մտան նրա ձեռքերի մեջ, և թե ինչպես ես դարձա կախարդ պառավ... Այ թե մեր թաղի երեխաները կապշեն, երբ ինձ տեսնեն այս կախարդ պառավի զգեստը հագած: Հը՞, ի՞նչ անեմ, դուրս գա՞մ այս տիկնիկանոցից...

Հենց ուզում էի շարժվել դեպի դուռը, երբ հանկարծ այն բացվեց, ու իմ դեմ հայտնվեց թանգարանի տնօրենը: Ես անշարժացա: Տնօրենը մոտեցավ պահարաններից մեկին, բացեց, վերցրեց պայուսակը և երբ ուզում էր դուրս գալ՝ նրան հարցրի.

- Ներեցե՛ք, կարելի՞ է, որ ես այստեղից դուրս գամ... Ես պատահաբար եմ հայտնվել այստեղ... Ե՜ս...

- Ո՞վ է, ի՞նչ եք ուզում... Մարգո՛, դո՞ւ ես...

- Ո՛չ, ես եմ, ե՜ս... Սմբուլ Բմբուլիի մեջ ես եմ մտել, չեմ կարողանում դուրս գալ... Ներեցե՛ք,-մի քանի քայլ անելով՝ ասացի ես,- իմ անունը Մուշ...

- Դո՜ւ... դո՜ւ... սա ի՞նչ բան է... աչքի՞ս է երևում, թե՜... Կախա՛րդ պառավ, ի՞նչ ես ուզում ինձանից...- հետ-հետ գնալով՝ ճչաց թանգարանի տնօրենը,- Հակո՛ւ, Հակո՛ւ, երևի դո՞ւ ես, հա՞, դո՞ւ ես մտել կախարդի մեջ... Չեմ վախենում, չէ՜... դո՛ւրս արի, դո՛ւրս արի... Հակո՜ւ... Չեմ վախենում...

- Ես Հակոբը չեմ... Ես պատահաբար եմ հայտնվել այստեղ... Սմբուլ Բմբուլին ինձ...

- Վա՜յ, վա՜յ, վա՜յ... սա իսկական կախարդ է,- դողահար շշնջաց թանգարանի տնօրենը, հետ-հետ գնաց մինչև դուռը, միանգամից դուռը բացեց ու ճչալով դուրս թռավ,- օգնեցե՜ք... օգնեցե՜ք... օգնեցե՜ք...

- Մի՛ վախեցեք, մի՛ վախեցեք,- նրա հետևից վազելով՝ բղավեցի,- ես կախարդ պառավ չեմ... ես պատահաբար եմ հայտնվել նրա մեջ... Ներեցե՜ք, խնդրում եմ..., ներեցե՜ք...

Թանգարանի տնօրենը ինձ չէր լսում, փախչում էր ու ճչում: Ես վազում էի նրա հետևից: Դուրս եկա ցուցասրահ, որտեղ բազմաթիվ երեխաներ, ծնողներ, տատիկներ ու պապիկներ կային:

- Օգնեցե՜ք, օգնեցե՜ք...,- բղավեց թանգարանի տնօրենը:

Երբ նրանք տեսան տնօրենի այլայլված դեմքն ու նրա հետևից վազող կախարդ պառավին, ասես կայծակնահար եղած, ճչացին ու սկսեցին լեղապատառ փախչել:

- Սպասե՛ք, սպասե՛ք, ո՞ւր, ո՞ւր եք գնում,- բղավում էի ես: Բայց ո՞վ էր ինձ ականջ դնողը: Բոլորը, իրենց երեխաներին գրկած, փախչում էին դեպի ճեմասրահ, որ դուրս պրծնեն թատրոնից ու գլուխները մի կերպ ազատեն չար կախարդի փորձանքներից:

Ես իջա ճեմասրահ, բարձրացա աթոռներից մեկի վրա ու բարձրաձայն ասացի.

- Մի՛ վախեցեք, ես կախարդ պառավ չեմ... Ես պատահաբար եմ հայտնվել այս կախարդի մեջ...

- Բոլոր կախարդներն էլ այդպես են ասում... Չհավատա՛ք, սա իսկական կախարդ է, սա ուզում է մեր երեխաներին փախցնել,- թոռնիկին կրծքին սեղմելով՝ ճղճղաց համակրելի մի տատիկ:

- Տատի՛կ, ազնիվ խոսք, ես կախարդ չեմ...

- Խփե՛ք դրան, խփե՛ք, թող ուշաթափվի,- գոռաց ինչ-որ մեկը:

- Չխփեք, կկատաղի ու բոլորիս կոչնչացնի,- ձեռնափայտը սրի պես

ճոճելով՝ գոչեց զինվորական զգեստով մի ծերուկ, թոռան ձեռքից բռնելով՝ նրան քարշ տվեց դեպի ելքի դուռը:

- Ճիշտ է ասում, պետք չէ խփել ... կկատաղի...- լսվեցին այս ու այն կողմից:- Կատաղած կախարդն ամեն ինչի ընդունակ է:

- Փախչե՛լ, փախչե՛լ,- ճչացին մի քանիսը ու թատրոնի շքամուտքից դուրս թռան:

Մի ակնթարթում թատրոնը բվվաց մեղվանոցի պես ու խառնվեց իրար: Բոլորը դուրս էին փախչում, ճչում էին, կանչում...

- Հասե՛ք, հե՛յ, հասե՛ք, կախարդ պառավը երեխա է ուզում գողանալ...

- Ընկերնե՛ր, բարեկամնե՛ր, պարոննե՛ր, ես կախարդ չեմ, ես պատահաբար եմ հայտնվել այստեղ,- բղավում էի ես, վազում այս ու այն կողմ, բայց իմ ձայնը ոչ ոք չէր լսում, բոլորը փախչում էին ու չէին ուզում երեսիս նայել...

Չգիտեի ինչ անել: Վազում էի հանդիսատեսի հետևից, կանգնեցնում թատրոնի աշխատողներին, մոտենում Երմոնյա Բաղալովնային, մեր թաղի երեխաներին, խնդրում, աղաչում, որ նրանք ինձ լսեն, բայց ոչ ոք չէր ուզում մի պահ կանգնել ու լսել ինձ: Բոլորը վախեցած բղավում էին ու փախչում... Ինչ-որ տեղից հայտնվեց բարձրահասակ ու գեր մի մարդ: Դա թատրոնի տնօրենն էր:

- Կորի՛ր, հիմա՛ր կախարդ,- բղավեց նա,- քեզ նման կախարդներ շատ եմ տեսել:

- Ես կախարդ չեմ, պարո՛ն տնօրեն...

- Քեզ կհեռացնեմ թատրոնից, հրաման կգրեմ, կհեռացնեմ... Սա ինչ բան է, երես են առել, չեն ենթարկվում տնօրենին... Կախարդ ես, ինչ ես՝ քեզ համար ես... Գուլոյա՜ն, Գուլոյա՜ն,- գոռգոռաց տնօրենը,- Վարշա՛մ Գուլոյան...

- Լսում եմ, պարո՛ն դիրեկտոր,- ձայն տվեց Գուլոյանը:

- Ոստիկա՛ն կանչիր, այս կախարդ պառավին դաս տանք... Հա՜, հա՜, հա՜, կախա՜րդ... Էս տեսակ պառավներ եմ ֆռռացրել...

- Զանգահարել եմ ոստիկանություն: Ասում եմ՝ մեզ մոտ կախարդ պառավ է հայտնվել, եկեք կարգի հրավիրեք, ասում են՝ ինչո՞ւ եք ոստիկանությանը ձեռ առնում, եկել ենք՝ ձեզ տեղնուտեղը կալանքի կվերցնենք: Մենք կախարդ բռնող չենք: Մենք գող բռնող ենք...

- Նորի՛ց զանգահարիր,- զայրացավ տնօրենը,- ասա՝ թատրոնի տնօրենն է կանչում: Ասա՝ Լև Գեորգիչն է կանչում...

- Լավ, նորից կզանգահարեմ,- հատակ մաքրելու խոզանակով գլխիս խփելով՝ ասաց տնօրենի տեղակալն ու գնաց:

Ի՞նչ անեի: Ոչ կարողանում էի այդ կախարդի միջից դուրս գալ, ոչ

կարողանում էի հասկացնել, որ ես կախարդ պառավ չեմ: Ես մի քանի քայլ արեցի դեպի տնօրենը, որ նրան ասեմ, թե ով եմ և խնդրեմ, որ ինձ ազատի այդ ծանր կացությունից: Բայց նա վախեցած նայեց ինձ, այսինքն՝ կախարդ պառավին, ու զայրացած բղավեց.

- Չհամարձակվե՛ս ինձ մոտենալ, քեզ նման կախարդների ես գրպանումս եմ պահում:

- Ես կախարդ չեմ... Ես...

- Բոլոր կախարդներն էլ ասում են, որ իրենք կախարդ չեն: Բայց ես լավ գիտեմ, որ դու կախարդ ես:

Հենց այդ պահին դրսից լսվեցին ոստիկանների սուլիչների ձայները: Բոլորը մի կողմ քաշվեցին, որ ճանապարհ տան ոստիկաններին:

- Ի՞նչ է պատահել, որտե՞ղ է հանցագործը,- հարցրեց երիտասարդ մի ոստիկան՝ ձեռքն ատրճանակի վրա դնելով:

- Ահա սա է... կախարդ պառավը...

Ոստիկանը, ձեռքն ատրճանակից չկտրելով, մոտեցավ ինձ, այսինքն՝ կախարդ պառավին, պատվի առավ ու ասաց.

- Քաղաքացի՛ կախարդ պառավ, ներեցե՛ք, ես չգիտեմ՝ ինչպես Ձեզ դիմեմ, սա Ձեզ համար ոչ անտառ է, ոչ էլ ճահճուտ, ոչ էլ քարանձավ: Սա հասարակական վայր է, և Դուք իրավունք չունեք այստեղ հայտնվելու: Ձեր անձնագիրը կամ Ձեր իսկությունը ապացուցող որևէ փաստաթուղթ ներկայացրեք:

- Ես կախարդ պառավ չեմ... ես պատահաբար եմ հայտնվել այստեղ, պարո՛ն ոստիկան:

- Ձեզ նմաններին շատ եմ հանդիպել: Անցած շաբաթ երեք Ֆանտոմաս եմ բանտարկել: Առա՛ջ անցեք, կախա՛րդ պառավ... սրիկա՛... օրինախա՛խտ...

- Ես կախարդ չեմ:

- Ոստիկանատանը կասեք, թե Դուք ով եք: Ոստիկանապետը կըպարզի՝ Դուք կախա՞րդ եք, թե՞ կախարդ չեք... Առա՛ջ, առա՛ջ, կախա՛րդ տատիկ, զզվելի՛ պառավ...

- Ես տատիկ չեմ... Մի՞թե իմ ձայնը չեք լսում:

- Իմ լսողությունը, տեսողությունը, հոտառությունը, զգոնությունը տեղն են... Սրան տեսեք: Կախա՛րդ Կախարդիչ... զզվելի՛ տատիկ...

- Ազնիվ խոսք, ես կախարդ չեմ,- լացակումած ասացի ես:

- Ապացուցե՛ք,- հանդարտ ասաց երիտասարդ ոստիկանը,- փաստաթուղթ ներկայացրեք, որ Դուք կախարդ չեք:

- Մոտեցե՛ք ինձ, բարձրացրեք հագուստիս փեշը և կտեսնեք, որ ես կախարդ չեմ,- ասացի ես:

- Չմոտենա՞ս, դրան չմոտենա՞ս,- ճչաց թատրոնի տնօրենը,- բոլոր կախարդները զարհուրելի ստախոսներ են ու չարագործներ: Ձեռք չտաս, քեզ կկործանի:

- Խեղդվում եմ, օգնեցե՞ք,- բղավեցի ես ու թափահարեցի ձեռքերս:

Երիտասարդ ոստիկանը ձեռքը տարավ ատրճանակին:

- Ես Ձեզ հավատում եմ... հանգիստ, հանգիստ... գնանք ոստիկանատուն... մեր պետը բարի մարդ է, նա Ձեզ անմիջապես կազատի...

- Ես բնագիտության պրոֆեսոր եմ և գիտեմ՝ բոլոր կախարդները սկզբից գութ են հայցում, հետո այնպես են հարձակվում, որ փրկվել հնարավոր չէ: Ճոպաններով, ճոպաններով կապկպեք դրան ու տարեք,- սյան հետևից ծիկրակելով՝ բղավեց բարետես մի ծերուկ:

- Մեր պետը լավ գիտե, թե ինչ պետք է անի, նա բազմաթիվ կախարդների դիմակներ է պատռել,- ասաց երիտասարդ ոստիկանն ու երկու քայլ մոտեցավ ինձ,- քաղաքացի՛ կախարդ, ես Ձեզ զգուշացնում եմ, եթե Ձեր կամքով չգաք ոստիկանատուն, ստիպված ոստիկանների ուժեղացված ջոկատ կկանչեմ:

- Երմոնյա Բադալովնա, Երմոնյա Բադալովնա՞,- ճչացի ես,- փրկե՞ք ինձ, խեղդվում եմ... Խեղդվում եմ,- բղավեցի ես և վազեցի դեպի մուտքի դուռը:

Բոլորը կպան պատերին, ոստիկանը հանեց ատրճանակը:

- Չշարժվե՛լ, կկրակեմ,- բղավում էր նա:

- Սպասե՛ք, սպասե՛ք... Պարոնա՛յք, սպասե՛ք,- երկրորդ հարկի աստիճաններից ցած իջավ Երմոնյա Բադալովնան,- քաղաքացիներ՛ը, նա իմ երեխաներից մեկն է: Ձայնից ես ճանաչեցի: Մուշե՞ղ, Մուշե՞ղ,- ուսս ցնցելով՝ կանչեց Երմոնյա Բադալովնան:

- Այո՛, ես, ես եմ, Երմոնյա՛ Բադալովնա...

- Ինչպե՞ս ես հայտնվել այդտեղ, Մուշե՛ղ: Շտապ դո՛ւրս արի:

- Չեմ կարող: Խնդրում եմ՝ օգնե՞ք...

- Պարո՛ն տնօրեն, պարոննե՛ր, սա կախարդ չէ,- բարձրաձայն ասաց Երմոնյա Բադալովնան,- խնդրում եմ, դերասաններից մեկին հրավիրեք այստեղ՝ թող երեխային դուրս բերի այս խրտվիլակի միջից:

- Հիմա, հիմա,- քրթմնջաց թատրոնի տնօրենն ու անմիջապես հեռացավ:

Չէր անցել մի քանի վայրկյան, երբ մոտեցավ գեղեցկատես մի դերասանուհի ու հեշտությամբ ինձ հանեց կախարդ պառավի խրտվիլակի միջից:

- Չարաճճի՞,- մազերս խառնելով ժպտաց դերասանուհին,- ես էլ փնտրում եմ այս կախարդին ու չեմ գտնում:

Նա կախարդ պառավին դրեց թևի տակ ու գնաց:

Բոլորը ապշած ու զարմացած նայում էին ինձ, իսկ ոստիկանն այնպես էր իրեն կորցրել, որ չգիտեր՝ գլուխն ուր թաքցնի:

- Ներեցե՞ք, ներեցե՞ք,- կմկմաց նա դասը չիմացող աշակերտի պես,- բայց և այնպես, պետք է պատժել այս տղային: Նա հասարակական կարգ է խանգարել:

- Պարո՛ն միլիցիոներ, նա միտումնավոր չի արել... Ես ներողություն եմ խնդրում,-ասաց Երմոնյա Բաղալովնան, բռնեց ձեռքս,- ես նրան այլևս մենակ չեմ թողնի, կհսկեմ ինչպես հարկն է:

- Այո՛, այո՛, հսկե՛ք, որ սա հանկարծ կախարդ չդառնա,- ասաց ոստիկանն ու գնաց:

Բոլորը հանդարտվեցին: Երեխաները, որ վախեցած նայում էին մեծահասակներին, սկսեցին ժպտալ ու նորից վազվզել: Մեր թաղեցիները շրջապատեցին ինձ, ու ամեն մեկը մի հարց էր տալիս:

- Հետո, հետո կխոսենք, հիմա անցեք դահլիճ, ներկայացումը սկսվում է,- ասաց Երմոնյա Բաղալովնան ու մեզ առաջնորդեց դեպի դահլիճ:

- Ո՞ւր, ո՞ւր եք գնում,- Երմոնյա Բաղալովնային ու ինձ կանգնեցրեց տիկնիկների մասին շատ բան իմացող կինը:

- Ներկայացում դիտելու,- պատասխանեց Երմոնյա Բաղալովնան:

- Այդ անկարգ երեխայի հետ անցեք թատրոնի տնօրենի մոտ:

- Թող երեխան ներկայացում նայի, ես մենակ կգնամ,- պատասխանեց Երմոնյա Բաղալովնան ու տիկնիկների մասին շատ բան իմացող տիկնոջ հետ գնաց թատրոնի տնօրենի մոտ...

Երբ ես դահլիճ մտա, լույսերն արդեն մարել էին, ու ինձ ոչ ոք չնկատեց: Մթան մեջ խարխափելով՝ ազատ բազկաթոռ գտա ու նստեցի:

Բեմում հայտնվեց կախարդ պառավը, որը երգում էր, պարում, ուզում էր մարդկանց վախեցնել, բայց ոչ ոք չէր վախենում, ընդհակառակը, ծիծաղում էին ու համերաշխ ծափահարում: Միայն ես էի տխուր: Ո՛չ ծիծաղում էի, ո՛չ ծափ տալիս... Վերնաշապիկիս թևքերը դարձյալ երկարել էին, իսկ կոշիկներս՝ մեծացել...

Ինչ ես ճկույթիցս փոքր տղայի պատմածները սղագրում էի կաղնու չորացած տերևների վրա, տեղատարափ անձրևը կտրվեց: Մաքրամաքուր երկնքում շողաց արեգակը:

- Անձրևը կտրվեց, անձրևը կտրվեց,- իր պատմությունը կիսատ թողնելով՝ վրանից դուրս թռավ Չիկարելին,- ես այլևս ոչինչ չեմ պատմելու,- հայտարարեց նա ու կորավ կանաչների մեջ:

- Հե՜յ, Չիկարելի՛, ո՞ւր կորար, կանչեցի ես՝ զգուշությամբ ոտքերիս առաջը նայելով:

- Մի՛ անհանգստացեք, ես այստեղ եմ,- ձայն տվեց Չիկարելին ու հարցրեց,- թեյ կամենո՞ւմ եք:

- Թե՞յ,- զարմացա ես:

- Այո՛: Ինչո՞ւ եք զարմանում,- ժպտաց Չիկարելին,- ահա իմ բաժակը,- ասաց նա ու իր փոքրիկ թաթիկով զանգակածաղիկներից մեկը պոկեց, շուռ տվեց, բաժակի պես պահեց ափի մեջ, մոտեցավ

ծաղիկներին ու նրանց նեկտարը կաթիլ-կաթիլ քամեց բաժակի մեջ: Հետո պռնկեպռունկ նեկտարով լցված ծաղկաբաժակը դրեց տերևի վրա ու մեկնեց ինձ:

- Խնդրեմ, թեյը պատրաստ է, անո՛ւշ արեք:

- Շնորհակալություն,- ժպտացի ես ու նրա ձեռքից վերցրի բաժակը:

Ազնիվ խոսք, այդքան համեղ ըմպելիք ոչ մի անգամ, ոչ մի տեղ ես չէի խմել:

- Խնդրում եմ, սիրելի՛ փոքրիկ, շարունակի՛ր քո պատմությունները պատմել ինձ, դրանք շատ հետաքրքիր են,- ասացի իմ փոքրիկ բարեկամին:

- Այլևս ոչինչ չեմ ուզում պատմել: Չե՛մ ուզում,- ասաց նա ու նստեց զանգակածաղկի տերևներից մեկի վրա,- ես այնպես եմ տխրել այդ բոլորը հիշելիս, քիչ է մնում լաց լինեմ... Դրանց պատճառով ես փոքրացա: Այո, երբ մարդ վատ արարք է գործում, փոքրանում է... Ի՞նչ անեմ...

- Լաց չլինես... Խնդրում եմ, լաց չլինես: Դու հո այդպես չե՞ս մնա,- հուսադրեցի նրան ու նայեցի նրա թախծոտ աչքերին:

- Տեսնես հիմա մերոնք ի՞նչ են անում... Երևի մայրիկս երազ է տեսել իմ մասին... Իսկ մեր ֆուտբոլի թիմն առանց ինձ կպարտվի... Օ՜ֆ, օ՜ֆ... Ի՞նչ անեմ, ի՜նչ... Ես այլևս չեմ ուզում այսպես մնալ... Օգնի՛ր ինձ, խնդրում եմ: Շատ եմ խնդրում, օգնի՛ր:

- Ես չգիտեմ՝ ի՞նչ անել, ինչպե՞ս օգնել...

- Եթե չգիտեք ինչպես օգնել, ինչ անել, ինչո՞ւ եք իզուր ինձ հետ տանջվում: Կարող եք գնալ:

- Ես չեմ կարող քեզ այստեղ մենակ թողնել ու գնալ: Դուցե միասի՞ն գնանք: Դու ինձ մոտ կապրես, մինչև տեսնեմ, ինչ կարող եմ անել, ինչով կարող եմ քեզ օգնել:

- Ո՛չ, ո՜չ... Այստեղից ոչ մի տեղ ես չեմ գնա: Քիչ հետո գետնամորի կուտեմ, ճաշին՝ սունկ: Սունկը խորովում եմ արևի շողերով, այնքան համեղ է... Բացի դրանից, այսօր ժամադրված եմ:

- Ժամադրվա՞ծ:

- Այո՛: Պայմանավորվել ենք հանդիպել:

- Նրանք քեզ պես փոքրիկ տղանե՞ր են:

- Ո՛չ, թիթեռներ են:

- Ա՜խ, թիթեռնե՜ր: Դու նրանց վաղո՞ւց ես ճանաչում:

- Այստեղ եմ ծանոթացել:

- Հետաքրքիր է: Ների՛ր, մի հարց եմ ուզում տալ, կարելի՞ է:

- Խնդրե՜մ, խնդրե՜մ:

- Ծնողներդ գիտե՞ն, որ դու այդպես փոքրացել ես ու կորել։

- Ո՛չ։ Նրանք ինձ ուղարկեցին պապիկի մոտ մեղվանոց, իսկ պապիկը ինձ ուղարկեց տատիկի մոտ՝ գյուղ, որ իր համար մածուն տանեմ։ Ծնողներս կարծում են՝ ես պապիկիս մոտ եմ, իսկ պապիկս կարծում է՝ ես տատիկիս մոտ եմ։ Այնքան ժամանակ նրանք այդպես կկարծեն, քանի դեռ բոլորը չեն հավաքվել իրար գլխի։ Իսկ դա կլինի կիրակի օրը։ Այսօր ի՞նչ օր է։

- Երկուշաբթի։

- Դեռ բավական ժամանակ կա... Բայց, ախր, ինչո՞ւ այսպես ստացվեց։ Ինչո՞ւ...

- Գուցե հիշես, թե վերջին անգամ, այսինքն՝ փոքրանալուց առաջ ի՞նչ վատ բան ես արել, ի՞նչ հանցանք ես գործել։

- Հանցա՞նք։ Ի՞նչ հանցանք։ Ես հանցանք չեմ գործել։ Մեղվանոցից տուն գնալիս մի մեծ մրջնանոց տեսա։ Այն շատ նման էր փոքրիկ բլրակի։ Մոտեցա մրջնանոցին, հազարավոր մրջյուններ իրենց կառուցած ճանապարհներով ցորեն էին կրում, վարսակ և ծղոտ։ Չգիտեմ ինչու՝ ուզեցի մրջնանոցը քանդել։ Մի փայտ վերցրի ու քանդեցի մրջնանոցի բոլոր ճանապարհները, հետո ամեն բան խառնեցի իրար... Մրջնատներից դուրս թափվեցին սպիտակ ձվիկներ։ Բոլոր մրջյունները դիվահար եղան ու սկսեցին այս ու այն կողմ վազել։ Մրջնանոցից դուրս եկավ նաև մի մեծ մրջյուն, որը թևեր ուներ ու խոշոր աչքեր։ Նա թափահարեց թևերը, մոտեցավ ինձ, ուզեց ինչ-որ բան անել, բայց ես նրան խփեցի։ Նա վայր ընկավ։ Մրջյունները անմիջապես շրջապատեցին նրան... Հանկարծ ինչ-որ տեղից զարմանալի մի ճիչ լսվեց, ես անմիջապես վեր թռա, որ գնամ այդ ձայնի ուղղությամբ, բայց չկարողացա առվակը անցնել։ Այն իմ աչքին մե՜ծ, շատ մեծ գետ երևաց... Ես շոշափեցի ինձ, բայց դարձյալ ոչինչ չհասկացա, նայեցի կոշիկներիս ու հանկարծ զգացի, որ փոքրացել եմ... Ուզում էի լաց լինել, բղավել, պապիկիս կանչել, բայց ինձ զսպեցի։ «Ավելի լավ է մի քիչ սպասեմ, գուցե նորից նույնը դառնամ»,- մտածեցի ես։ Հենց այդ պահին մի մեծ բզեզ դզդզաց գլխիս վերևում, ինձ ճանկեց ու բերեց այստեղ...

- Մայր մրջյունն է քեզ կախարդել։ Գուցե գտնե՞նք նրան, ներողություն խնդրես,- ասացի ես,- նա կների քեզ։ Գնանք։ Գնանք ավերված մրջնանոց։

- Ես մրջնանոց չեմ գնա։

- Ինչո՞ւ

- Ամաչում եմ։

- Ամաչելով արի... Կգնանք, կկանգնես մրջնանոցի դիմաց ու բարձ-



ռածայն ներողություն կխնդրես մրջյուններից,- խիստ ասացի ես:

- Լավ, գնանք,- համաձայնեց նա ու մոտեցավ ինձ: Ես նրան դրեցի ափիս մեջ, ու մենք ուղևորվեցինք դեպի մրջնանոց:

Մրջնանոցը մեզնից մի քանի հարյուր քայլ հեռավորության վրա էր: Ավերված մրջնանոցը դատարկ էր: Երևի մրջյունները գնացել էին ավելի ապահով ու հարմար մի տեղ, նրանց գտնելն այնքան էլ դյուրին գործ չէր:

- Ահա, տեսնո՞ւմ ես, քո ավերած մրջնանոցում ոչ մի մրջյուն չի մնացել,- ասացի ես:

Չիկարելին հուսահատվելու չափ տխրեց:

- Գուցե դաշտերում ու անտառներում փնտրենք մայր մրրջյունին: Ես համոզված եմ, մայր մրջյունն ինձ կների,- թախանձեց Չիկարելին:

- Ո՛չ: Նա քեզ չի ների, դու քանդել ես նրա տունը: Տուն քանդողներին չեն ներում:

- Ի՞նչ անենք... Ո՞ւր գնանք, ո՞ւմ դիմենք...

- Գուցե պապիկի՞դ ասենք... Պապիկդ....

- Ոչ մի դեպքում: Նա չպետք է իմանա,- տեղից վեր թռչելով՝ բղավեց Չիկարելին ու սկսեց հեկեկալ:

- Մի՛ լար: Երբ երեխաները լաց են լինում, ես հուսահատվում եմ: Երեխաների արցունք տեսնել չեմ կարող,- ասացի ես ու սրբեցի նրա արցունքները,- հանգստացի՛ր, առանց քեզ հետ խորհրդակցելու ես ոչինչ չեմ ձեռնարկի:

Չիկարելին հանգստացավ, լուռ նստեց մի թփի վրա ու ընկավ մտքերի մեջ: Ես նույնպես լռեցի, որովհետև չգիտեի ինչ անել, ինչպես օգնել նրան...

Մեղմիկ մի հովիկ շոյեց ծաղիկներն ու խոտերը, անցավ դաշտերի ու խանդակների վրայով, գնաց լցվեց ձորակները: Երանավետ հանգստություն իջավ աշխարհի վրա:

- Գուցե ուրի՞շ մի բան մտածենք... Այսպես անգործ նստել չի կարելի,- ասացի ես ու ոտքի ելա:

- Խնդրում եմ, իմ մասին ոչ մեկին չասեք: Ես չեմ ուզում՝ մեր թաղի տղաներն իմանան, որ ես այսպես փոքրացել եմ, դարձել չնչին մոծակ:

- Ոչ մեկին ոչինչ չեմ ասի: Խոստանում եմ՝ չեմ ասի՛:

- Լավ,- ուրախացավ Չիկարելին ու մոտեցավ ինձ:

Ես ձեռքս դրեցի գետնին: Նա բարձրացավ ափիս մեջ: Թեև իմ ճկույթից փոքր էր, բայց բավականին ծանր էր:

- Ծաղկաձորում շատ ծանոթներ ունեմ, գուցե նրանք որևէ դեղ առաջարկեն,- ասացի ես,- գնանք, դիմենք նրանց, միգուցե օգնեն:

- Համաձայն եմ... Բայց, խնդրում եմ, ինձ ոչ ոքի ցույց չտաք:

- Լավ,- համաձայնեցի, ու մենք ճանապարհ ընկանք:

Անտառի արահետը մարգահամալիրը կապում է Ծաղկաձորի հետ: Այն անցնում է Կեչառիսի հինավուրց վանքի մոտով:

- Ի՜նչ գեղեցիկ վանք է,- ափիս մեջ կանգնելով՝ բացականչեց Չիկարելին:

- Կեչառիսի վանքն է: Այն կառուցել են մեր նախնիները հարյուրավոր տարիներ առաջ:

- Ես ուզում եմ մոտիկից տեսնել, կարելի՞ է:

- Իհարկե,- ասացի ես ու մտա թավշյա կանաչով պատված վանքի բակը:

- Խնդրում եմ, պատմեք այս վանքի մասին,- վեհաշուք կամարներին նայելով՝ խնդրեց Չիկարելին:

- Գնանք, նստենք վանքի պատի տակ, և ես սիրով կպատմեմ:

Չիկարելիին նստեցրի սրբատաշ քարերից մեկի վրա և սկսեցի պատմել.

- Բոլոր երեխաները, ձեր դպրոցի բոլոր աշակերտները պետք է իմանան, որ այս վանքը կառուցել են իրենց պապերը, պետք է իմանան, որ իրենք այս հոյակերտ շինության ժառանգորդներն են: Իսկ ժառանգորդ լինելը ոչ միայն պատիվ է, այլև մեծ պատասխանատվություն: Պետք է պահել, պահպանել նրա յուրաքանչյուր քարը՝ իրենցից հետո եկողներին ժառանգելու համար: Ահա նայի՛ր, այնտեղ՝ այն պատի վրա, արևի ժամացույց է քանդակված, նրանով մեր պապերը կարողացել են որոշել օրվա ճիշտ ժամը, իսկ այս պատը ծածկված է հայոց այբուբենով: Այստեղ գրված են այն մարդկանց անունները, ովքեր կառուցել են վանքը, գրված է, թե ժամանակին ինչ իրադարձություններ են տեղի ունեցել հայոց աշխարհում: Նայի՛ր, նայի՛ր այս քանդակազարդ քարե զամբյուղին, կարծես ասեղնագործ ժանյակ լինի: Սա մի պատանի է քանդակել, անունը՝ Մակար: Մակարը հարուստ ծնողների զավակ է եղել: Կարող էր շվայտ ու անհոգ ապրել: Բայց նրան հարստությունն ու կյանքի վայելքները չեն հրապուրել: Նա քարագործ է դարձել: Կռվել է քարի հետ ու հաղթել քարին: Քարը դարձել է արվեստի ստեղծագործություն և արդեն քանի՜-քանի՜ դար հիացմունք է պատճառում մարդկանց: Եվ դեռ էլի քանի՜-քանի՜ դար հիացմունք է պատճառելու: Իսկ Մակարը, պատանի քարագործ Մակարը, շարունակելու է ապրել այս աշխարհում:...

Չիկարելին ակնապիշ նայում էր քարակերտ զարդանախշերին, Վեցիկ ճարտարապետի խաչքար-հուշարձանին, ու նրա աչքերը երախտագիտությամբ էին լցվում մեր նախնիների հանդեպ:

Սպիտակ ամպերի քուլաները, եկեղեցու գմբեթներից հանդարտ ու հանդիսավոր իջնում էին ձորերը՝ գետակներից ջուր խմելու:

- Հիմա ի՞նչ պիտի անենք,- ճկույթս պինդ բռնելով՝ հարցրեց Չիկարելին:

- Դու այստեղ սպասի՛ր ինձ, իսկ ես գնամ, հանդիպեմ մարդկանց, հարցուփորձ անեմ, գուցե նրանք մի բան ասեն,- պատասխանեցի ես:

- Շուտ կվերադառնա՞ք:

- Դու թաքնվի՛ր այս պատի ճեղքում և այստեղից ոչ մի տեղ չգնաս:

- Չուշանա՜ք, խնդրում եմ:

Ես դուրս եկա Կեչառիսի վանքի բակից ու վազեցի դեղատուն: Դեղատան վարիչն իմ հին ծանոթներից էր: Ինչ-որ ժամանակ մենք միասին դեղաբույսեր էինք հավաքում: Հետո ես ուրիշ մասնագիտություն

ընտրեցի, իսկ նա դարձավ դեղագործ: Նա ոչ միայն հազարավոր դեղաբույսեր է ճանաչում, այլև գիտե, թե որ դեղաբույսը ինչ հիվանդություն է բուժում: Առավոտից մինչև ուշ երեկո նրա մոտ հազարավոր մարդիկ են գնում-գալիս, և նա բոլորին օգնում է, խորհուրդներ տալիս: Մի անգամ իմ ծանոթներից մեկի երեխայի ատամը ցավում էր: Ես դիմեցի դեղատան վարիչին: Նա չորացած մի ծաղիկ տվեց ու ասաց՝ թող այս ծաղիկը դնի ատամի տակ ու սեղմի: Մենք այդպես էլ արեցինք՝ ծաղիկը դրեցինք ցավող ատամի տակ, ու ցավն անցավ: Ես համոզված էի, նա անպայման կօգնի Չիկարելիին:

- Բարև՛ Ձեզ,- դեղատուն մտնելով՝ շնչասպառ բարևեցի ես:

- Ինչո՞ւ եք այդպես այլայլված,- առանց բարևիս պատասխանելու՝ հարցրեց նա,- փորձանքի մե՞ջ եք ընկել:

- Ես ուզում եմ Ձեզ հետ առանձին խոսել:

- Համեցե՛ք, համեցե՛ք իմ առանձնասենյակը... Բայց, ներեցե՛ք, խնդրում եմ, մինչև առանձնասենյակ մտնելը հագեք այս խալաթը:

Ես անմիջապես հագա սպիտակ խալաթը, մտա սենյակ ու փակեցի դուռը:

- Լսում եմ Ձեզ,- ականջն ուղղելով՝ շշնջաց դեղագործը,- խնդրում եմ, հանգիստ բացատրեք՝ ինչ է պատահել:

- Գիտե՞ք, այսօր առավոտյան անտառում....

- Հանգի՛ստ, հանգի՛ստ, շտապել պետք չէ: Շտապելը միշտ էլ խանգարում է գործին: Ով շտապում է՝ նա սխալվում է: Ուրեմն խնդրում եմ հանգամանորեն բացատրեք՝ այսօր առավոտյան ժամը քանիսին Ձեր ո՞ր օրգանն է Ձեզ անհանգստացրել:

- Այսօր առավոտյան անտառում...

- Տեղը կարևոր չէ... Ձեր ո՞ր օրգանն է Ձեզ հիմա անհանգստացնում:

- Խոսքն իմ մասին չէ:

- Ավելի լավ, որ Ձեր մասին չէ: Ուրեմն, ի՞նչ է պատահել այսօր առավոտյան անտառում...

- Այսօր առավոտյան անտառում ես հանդիպեցի շատ փոքրիկ մի տղայի, որը...

- Կորե՞լ է:

- Ո՛չ:

- Հապա՞:

- Փոքրացել է, ճկույթիցս փոքր է... Իհարկե, առաջ այդպիսին չի եղել, հետո է փոքրացել... Հասկանո՞ւմ եք... Մի խոսքով, նա հիմա շատ փոքր է: Դուք որևէ դեղ չունե՞ք, որ նա խմի ու նորից նույնը դառնա... Մեծանա...

Դեղագործը երկար ժամանակ քարացած դեմքով նայեց ինձ։

- Ներեցեք, այս գիշեր ինչպե՞ս եք քնել՝ խոր, հանգիստ, խաղա՞ղ քնով, թե՞ անհանգիստ,- հարցրեց նա ու գրասեղանի դարակից հանեց բժշկական մուրճիկը։

- Շատ լավ... երազում, մեծ ու գեղեցիկ նավի տախտակամածի վրա կանգնած, նայում էի ծովին ու հրճվում... ճայեր էլ կային... ձկներ, կարապներ... Ծով շատ եմ սիրում...

- Հասկանալի է, հասկանալի՜... Ձեզ հանգիստ պահեք... մի լարվեք... Ինձ հետ էլ են այդպիսի բաներ պատահում, բայց ես երբեք երազումս ծով չեմ տեսնում։ Օրինակ՝ այս գիշեր ընկել էի մի խոր փոսի մեջ, որտեղ շատ առնետներ կային։ Նրանք հարձակվեցին ինձ վրա ու սկսեցին ոտքերս կրծոտել։ Ի՞նչ եք կարծում, ի՞նչ պատահեց ինձ հետ։

- Երևի վախեցած վեր եք թռել ու բղավել։

- Ո՛չ։ Ես առնետների թագուհուն թունավորեցի։ Պատկերացնո՞ւմ եք, թագուհուն թունավորել... Համարձակություն է պետք... Համարձակություն...

- Ի՞նչ եք ասում...

- Այո՛, այո՛, թագուհին սատկեց իր թագավոր ամուսնու ձեռքերի վրա... Թագուհու թաղման օրը ես օգտվեցի առիթից ու փախա, բայց առնետներից չազատվեցի, ողջ օրը նրանք ինձ հալածում են... Ահա, ահա նրանցից մեկը նորից գալիս է այստեղ... Նա հիմա կհարձակվի ինձ վրա,- աչքերը սենյակի հատակին հառած՝ բացականչեց դեղագործն ու բարձրացավ աթոռի վրա,- ի՞նչ եք նստել, հիմա նա Ձեզ կկծի, բարձրացե՛ք աթոռին... Շո՜ւտ... բարձրացե՛ք աթոռին...

- Այստեղ ոչ մի առնետ չկա,- նրա ձեռքը բռնելով՝ հանգստացրի ես։

- Չկա՞, հա՞, առնետ չկա՞... Ուրեմն փախավ...

- Այո՛, այո՛, փախավ։

- Լավ է, որ փախավ... Դուք ասում եք, որ անտառում հանդիպել եք ճկույթից փոքր մի տղայի... Պատահում է, ինչ կա որ, մարդ ես, ամեն ինչի էլ կարող ես հանդիպել։ Երևակայության բորբոքում... Վերցրե՛ք ահա այս դեղաբույսը։ Սա հազվագյուտ բույս է, աճում է միայն ու միայն քարերի տակ։ Երկու լիտր ջրի մեջ կեռացնեք, օրը երեք անգամ կխմեք... Երբեք ու երբեք չպետք է նյարդայնանալ։ Քայքայված նյարդերը չեն վերականգնվում։

- Ես չեմ նյարդայնանում... Այսօր առավոտյան գնացի անտառ, այնտեղ հանդիպեցի ճկույթիցս փոքր մի տղայի, որը զարմանալի...

- Հանգի՛ստ խոսեք, հանգի՛ստ, ինչո՞ւ եք հուզվում, կարիք չկա... Կարծում եք՝ Ձեզ չե՞մ հասկանում։ Ես գիտեմ, գրողները հաճախ իրենց

մտքերը ավելի դիպուկ արտահայտելու համար դիմում են այլաբանությունների, այսինքն՝ երևակայական կերպարներ են ստեղծում, որ ընթերցողներին զարմացնեն... Է՜, բարեկա՛մս, արդեն քսանմեկերորդ դարն է, և ամեն բան այնքան հասկանալի ու ըմբռնելի է, որ կարիք չկա այդպիսի հիմար բաներ մտածելու: Մատնաչափիկը, հասկանալի է, խավար ժամանակներում ստեղծված կերպար է: Հիմա այդպիսի կերպար ստեղծելը հիմարություն է... Համենայնդեպս, վերցրե՛ք այս դեղաբույսը: Նա Ձեզ կօգնի:

- Շնորհակալություն,- տխուր ասացի ես ու դեղագործին աթոռից իջեցրի:

- Խնդրում եմ, նորի՛ց նայեք, առնետներ չկա՞ն,- շշուկով հարցրեց նա:

- Մի՛ վախեցեք, չկան: Առնետները թռա՜ն, գնացի՜ն...

- Շատ բարի,- հանգստացած ասաց դեղագործը, մոտեցավ ապակեպատ պահարաններից մեկին, այնտեղից մի փունջ դեղաբույս հանեց, խցկեց ափիս մեջ ու շուտասելուկի նման վրա տվեց,- կեռացնեք մեկ լիտր ջրի մեջ, օրը երեք անգամ չորսական ճաշի գդալ կխմեք: Շատ օգտակար է: Անցած օրը ձեր գրողներից մեկը եկել ու ասում էր, որ Գրիգոր Մագիստրոսն ամեն գիշեր գալիս է իր մոտ ու իրենից պահանջում, որ ինքը գիրք գրի Կեչառիսի վանքի մասին: Զարմանալի մարդիկ են գրողները: Ախր Գրիգոր Մագիստրոսը յոթ հարյուր տարի առաջ է ապրել, նա ինչպե՞ս կարող է հանդիպել մեր հարգարժան գրողին... Ես նրան այս դեղաբույսից տվեցի: Նա տարավ, եռացրեց, խմեց և երեք օր ու գիշեր քնած մնաց... Ճկույթից փոքր տղա, հա՜, հա՜, հա՜... Այդպիսի տղա գոյություն չունի: Դա բորբոքված երևակայության ծնունդ է... Ցտեսություն: Աշխատեք հիմար բաներ չմտածել: Ձեր ինչի՞ն է պետք այդ տղան: Եվ ընդհանրապես, Ձեզ ոչինչ հարկավոր չէ: Պետք է զգույշ ապրել... զգո՜ւյշ,- դեղագործը, համարյա հրելով, ինձ դեղատնից դուրս արեց ու դուռը փակեց:

- Ի՞նչ անել, ո՞ւմ դիմել,- դեղատան դռան առաջ մոլոր կանգնած մտածում էի ես,- գուցե բժշկի՞ դիմեմ, Ծաղկաձորում շատ բժիշկներ կան: Իսկ եթե բժիշկը նույնկերպ վարվի, ինչպես դեղագործը... Հա, հիշեցի, երեկ ես հանդիպել եմ պրոֆեսոր Բայբուրդ Իսայիչին: Նա մարզահամալիրում է աշխատում: Նա շատ անվանի պրոֆեսոր է, կարող է օգնել...

Առանց երկար-բարակ մտածելու և ծանրութեթև անելու՝ ես անտառի արահետով վազեցի դեպի մարզահամալիր: Պրոֆեսորին գտնելն այնքան էլ դժվար չէր: Նա այն լողավազանում էր, որտեղ մարզվում էին

գեղարվեստական լողի մարզուհիները: Պրոֆեսորը մարզուհիներին անեկդոտ էր պատմում, ու նրանք անհոգ քրքջում էին:

Ես մոտեցա հարգարժան պրոֆեսորին:

- Ներեցե՛ք, Բայբո՛ւրդ Իսայիչ, որ անհանգստացնում եմ...

- Զբաղված եմ,- առանց երեսիս նայելու ասաց պրոֆեսորը:

- Գիտե՞ք...

- Չե՞ք տեսնում՝ զբաղված եմ,- չարացած ինձ նայեց պրոֆեսորը: Մարզուհիները ինչ-որ բան քչփչացին, միասին վեր կացան ու թափվեցին լողավազանը:

Պրոֆեսորը կատաղած նայեց ինձ:

- Դժբախտությո՞ւն է պատահել:

- Այո՛, պրոֆեսո՛ր, մեծ-մեծ դժբախտություն...

- Ինչո՞վ է տառապում Ձեր հիվանդը, տաքությունն ինչքա՞ն է, քանի՞ տարեկան է... Դե, խոսե՛ք, ի՞նչ եք պապանձվել: Խոսե՛ք, իսկ ես կհանվեմ:

- Այսօր առավոտյան, պրոֆեսո՛ր, անտառի բացատում հանդիպեցի մի տղայի, որը փոքրացել է, ճկույթիցս էլ փոքր է: Գիտե՞ք, նա առաջ այդպիսին չի եղել... նա...

- Ինչպե՞ս, ինչպե՜ս...- զայրույթը զսպելով՝ ինձ նայեց պրոֆեսորը,- այսօր առավոտյան ո՞ւմ եք հանդիպել...

- Ճկույթիցս փոքր մի տղայի, որն առաջ այդպես չի եղել, հետո է փոքրացել:

- Հա՜, հա՜, հա՜,- ծիծաղեց պրոֆեսորը,- ես Ձեզ միշտ լուրջ մարդ եմ համարել, իսկ Դուք ոնց որ մի քիչ մրսած եք... հազում եք, երևի տաքություն ունեք... Գիտե՞ք, Ձեզ հանգիստ է պետք... Ես պրոֆեսոր եմ... Պրոֆեսո՜ր: Մեծ կլինիկա եմ ղեկավարում... Դուք, ի՞նչ է, ուզում եք ինձ հիմարացնե՞լ,- հանվելն ընդհատելով՝ ասաց պրոֆեսորը:

- Ես ճիշտ եմ ասում, պրոֆեսո՛ր: Այդ տղան ընդամենը մի օր առաջ սովորական երեխա է եղել: Ինչ-ինչ պատճառներով մի ակնթարթում փոքրացել է: Խնդրում եմ, եթե կարող եք՝ օգնեք, որ նա նորից նույնը դառնա, որովհետև նրա ծնողները դեռ...

- Լսե՛ք, ես պրոֆեսոր եմ... Ես կլինիկա եմ ղեկավարում... Այդպիսի հիմար բաներով ինձ մի զբաղեցրեք... Ես...,- խեթ-խեթ ինձ նայելով՝ ասաց պրոֆեսորը, վազեց դեպի լողավազան և նետվեց ջուրը:

- Պրոֆեսո՜ր, պրոֆեսո՜ր,- բղավեցի ես, բայց նա ինձ չլսեց, սուզվեց ջրի մեջ:

- Ա՜խ, ա՜խ, ա՜խ...- հառաչեցի ես ու որոշեցի այլևս ոչ մեկին չդիմել:

Տխուր ու մտամոլոր վերադարձա Չիկարելիի մոտ, որն անհամբեր ինձ էր սպասում:

- Ինչո՞ւ այսքան ուշացաք,- պատի ճեղքից դուրս թռչելով՝ նեղացած հարցրեց նա։

- Ների՛ր, խնդրում եմ... Ես ուզում էի իմանալ, թե ինչ պիտի անենք, որ դու նորից նույնը դառնաս։

- Եվ ի՞նչ։

- Նրանք ինձ չհավատացին։ Կարծեցին՝ խելքս թռցրել եմ։

- Ես այլևս չեմ ուզում այստեղ մնալ։

- Գնանք,- ասացի ես, նրան առա ափիս մեջ, ու նույն ճանապարհով վերադարձանք մեր բացատը։

Ամբողջ ճանապարհին մենք ոչ մի բառ չփոխանակեցինք։ Ես մտածում էի Չիկարելիի ապագայի մասին։ Ինչպե՞ս է ապրելու, ի՞նչ է անելու, ո՞ւր է գնալու... Իսկ Չիկարելին չգիտեմ ինչ էր մտածում։ Նա երբեմն-երբեմն հառաչում էր, ու այդ հառաչանքի մեջ զղջանք կար ու ցավ...

- Ահա և մեր բացատը, մեր վրանը,- նրան կռատուկի մեծ թփի վրա դնելով՝ ասացի ես,- մի՛ հառաչիր և այդքան մի՛ տխրիր։ Քանի ես կամ, մի՛ հուսահատվիր, ամեն տեղ կգնամ, ամեն միջոցի կդիմեմ, որ դու նորից նույնը դառնաս... Բացի դրանից, ամենաանհուսալի վիճակից դուրս գալու ելք անպայման գտնվում է...

- Շնորհակալություն,- հուսադրված ժպտաց Չիկարելին,- քաղցած եմ, ուտել եմ ուզում։

- Գնանք մեր ճաշարանը, այնտեղ շատ համեղ կերակուրներ են պատրաստում։

- Ո՛չ։ Այստեղ էլ կերակուր կա։ Ավելի համեղ, քան Ձեր ճաշարանում։

- Իսկ ի՞նչ պիտի ուտենք։

- Գետնամորի, սունկ, հաղարջ։ Ես այսօր Ձեզ կհյուրասիրեմ խորոված սնկով։ Շատ համեղ է։ Սպասեք, ես գնամ սունկ հավաքելու։

Չիկարելին կորավ խոտերի մեջ։ Ես նրան չէի տեսնում, միայն ձայնն էի լսում։

- Օ՜, ի՜նչ մեծ, ի՜նչ գեղեցիկ սունկ է... Խնդրում եմ, շուտ, շուտ, այստեղ եկեք։

- Որտե՞ղ ես, քեզ չեմ տեսնում,- թփերն այսուայնկողմ անելով՝ կանչեցի ես։

- Այդպես ուղիղ եկեք, ես այստեղ եմ։ Ես զգուշությամբ մի քանի քայլ արեցի ձայնի կողմն ու թփերի տակ դեղնագույն գլխարկով մի սունկ տեսա, որի մոտ կանգնած էր Չիկարելին։

- Այս սունկը մեզ երկուսիս կբավականացնի։ Պոկե՛ք, խնդրում եմ, ու տարեք դրեք ահա այն սալաքարի վրա։ Մինչև մայրամուտ կեփի, ու

մենք հիանալի ճաշ կունենանք: Այնքա՜ն համեղ են այստեղի սնկերը, այնքա՜ն համեղ, որ ուտելով չես կշտանում...

- Շատ բարի,- ասացի ես, պոկեցի սունկը, դրեցի Չիկարելիի ցույց տված սալաքարի վրա, որը շատ տաք էր:

- Իսկ հիմա գետնամորի հավաքենք,- ասաց Չիկարելին ու, թփից թուփ անցնելով, սկսեց կարմրավառ գետնամորիներ հավաքել: Ես տերևներից ափսեներ պատրաստեցի: Եվ պատկերացնո՞ւմ եք, երկու ափսե՝ լիքը-լիքը գետնամորի հավաքեցինք:

- Բավական է, այսքանը ի՞նչ պիտի անենք,- ասացի ես:

- Գնանք մի քիչ էլ հաղարջ քաղենք,- ասաց Չիկարելին ու վազեց դեպի հաղարջի թփերը, որոնք գտնվում էին մեր վրանի աջ կողմում:

Ես գետնամորիները դրեցի վրանի առաջ ու գնացի նրա հետևից: Երբ արդեն բավականին հաղարջ էինք հավաքել և ուզում էինք վերադառնալ, հանկարծ մեր բացատը լցվեց ծիրանավառ գույների խաղով: Ինձ թվաց, թե քամին պոկել է դաշտերի ու դարավանդների բոլոր ծաղիկների ծաղկաթերթերն ու բերել լցրել մեր բացատը:

Երկնքի կապույտի մեջ վառվում էին ծիրանավառ բոցով բռնկված ծաղկաթերթիկները, հետո միանգամից թափվում կանաչ թփերի ու խոտերի վրա, մի ակնթարթ հետո նորից երկինք էին բարձրանում ու ծիծղուն ցոլքերով լցնում կապույտ երկինքը...

- Ես այստեղ եմ, թիթեռնե՜ր...- կռատուկի մի թփի վրա կանգնելով՝ բղավեց Չիկարելին,- բարև՛ ձեզ, թիթեռնե՜ր,- կանչեց նա:

Թիթեռները, որ մինչ այդ անհանգիստ պտտվում էին, ծաղկից ծաղիկ թռչում՝ հանգստացան, մեղմ թափահարեցին իրենց շքեղազարդ թևիկներն ու սահելով մոտեցան Չիկարելիին, նստեցին նրա գլխին, ուսերին, ձեռքերին:

- Ես այնպես ուրախ եմ, որ եկաք,- երջանկացած շշնջաց Չիկարելին ու դարձավ ինձ,- ես հիմա թիթեռների հետ պետք է գնամ: Նրանք ինձ հրավիրում են: Կարելի՞ է:

- Իհարկե՛, կարելի է... բայց զգո՛ւյշ եղիր:

- Մի՛ անհանգստացեք... Դուք չեք պատկերացնում, թե ինչ հաճույք է թռչելը,- խնդությունից շողացող աչքերով ասաց նա ու ձեռքերը թիթեռի թևերի պես բացեց: Հենց այդ պահին երկու մեծ թիթեռ, մեկը՝ վարդակակաչի թերթերի պես կաս-կարմիր, մյուսը՝ մանուշակագույն թևերով, բռնեցին նրա ձեռքերից ու բարձրացրին: Թիթեռները շրջան կատարեցին վրանի շուրջը: Բավականին մեծ թևերով մի թիթեռ Չիկարելիին նստեցրեց իր մեջքին ու բարձրացավ: Բոլոր թիթեռները հետևեցին նրան: Ես աչքերս չէի կարողանում կտրել թռչող թիթեռներից,



որոնք հազարան գույներով մերթ ձուլվում էին երկնի փիրուզին, մերթ վառվում արևի բոցի մեջ... Չիկարելիի խնդուն ծիծաղը արծաթե զանգի ղողանջի պես արձագանքվում էր աշխարհով մեկ: Ես գույների այդպիսի խաղ և այդպիսի խնդուն ծիծաղ ո՛չ տեսել էի, ո՛չ էլ լսել: Ասես երկնի անհունից ոսկե երազներ էին թափվում վեհաշուք սարերի, դաշտերի, ձորերի ու անտառների վրա...

- Մնացեք բարո՜վ... իմ մասին չմտածեք... ես շուտով կվերադառնա՜մ,- իմ գլխավերևով թռչելով՝ կանչեց Չիկարելին: Ես նստեցի կանաչների մեջ: Թիթեռները նորից մի շրջան կատարեցին իմ գլխավերևում, ու նորից Չիկարելին կանչեց:

- Դուք ինձ լսեցի՞ք... Չանհանգստանա՜ք... Ես քիչ հետո կգա՜մ...

- Այո՜, այո՜... հասկացա՜... Ցտեսություն,- ձեռքս թափահարեցի ես:

Թիթեռների պարսը ձուլվեց երկնքի անհունին: Անդորր ու խաղաղություն իջավ անտառի վրա: Թեղենիսից փախած մի քամի որտեղից եկավ, մտավ անտառի ծոցն ու սկսեց ինչ-որ բան պատմել անտառին: Անտառը ծիծաղում էր քամու վրա...

- Հիմար բաներ ես ասում, քամի՛, հիմա՜ր բաներ... ես քեզ չեմ հավատում, չե՜մ հավատում...

- Ինչո՞ւ, ինչո՞ւ,- հարցնում էր քամին,- ինչո՞ւ չես հավատում:

- Որովհետև դու կայուն չես, դու անվերջ գալիս-գնում ես,- պատասխանում էր անտառը,- ես քեզնից ոչ մի անգամ ճիշտ բան չեմ լսել: Դու քամի ես, քամի, քամի՜...

- Մի օր կլսես, մի օր կլսես,- քրքջաց քամին...

Երկար ժամանակ ես հետևում էի քամու և անտառի վեճին. չզգացի, թե ինչպես աչքերս փակվեցին ու քնեցի... Քնեցի ու երազ տեսա: Երազիս մեջ բարձրանում էի ծառերի ամենաբարձր ճյուղերին, թևերս տարածում թռչնի պես ու թռչում, բայց չէի կարողանում վեր բարձրանալ, ճախրել: Թրմփոցով ընկնում էի կանաչների մեջ, նորից էի բարձրանում ծառի ամենաբարձր ճյուղին ու նորից թրմփոցով ընկնում...

Երկնքում սավառնելու գայթակղությունն այնքան մեծ էր, որ ես ցավ չէի զգում և ոչ էլ հոգնում էի, անվերջ մագլցում էի ծառերն ի վեր, հասնում կատարին, բացում թևերս ու թրրմփ՝ տապալվում գետնին... Բայց ահա կատարվեց երանելին... Հաստաբուն մի ծառ բարձրանալուց հետո ես բացեցի թևերս, հենց այդ պահին հայտնվեց մանկության օրերիս թզուկը ու նրա հետ սավառնեցի ամպերի մեջ: Երանություն էր: Հրաշք է թռչելը... Թռչե՞լ, թռչե՞լ, թռչե՞լ... Թռչել դեպի աստղերը, դեպի անհունը, դեպի անհայտը... Եվ այն պահին, երբ ես հասել էի աստղերին, հանկարծ լսեցի Չիկարելիի ձայնը.

- Արթնացե՞ք, արթնացե՞ք,- բղավում էր նա ականջիս տակ,- ես վերադարձա... ես քաղցած եմ... ուտել եմ ուզում:

Դժվարությամբ բացեցի աչքերս: Իմ դիմաց՝ զանգակածաղկի տերևի վրա, նստած էր Չիկարելին: Նա պարուրված էր ամպի ծվեններով: Ես տեսել եմ երջանկությունից շողացող աչքեր, երջանկության ժպիտներով ողողված դեմքեր, լսել երջանկության ճիչեր ու շշուկներ, բայց երբեք, ոչ մի անգամ և ոչ մի տեղ Չիկարելիի նման համակ երջանկություն դարձած երեխա չեմ տեսել...

Երջանիկ մարդու տեսնելը երջանկություն է:

- Ներեցե՛ք, արքնացրի Ձեզ,- մեղավոր ժպիտով ասաց Չիկարելին։
- Դդու վաղո՞ւց ես եկել։
- Այո։ Չէի ուզում Ձեզ արքնացնել, Դուք քնած ժամանակ ծիծաղում էիք։
- Երազիս մեջ թռչում էի,- ասացի ես ու նստեցի։
- Գիտե՞ք, թիթեռներն ինչո՞ւ են ինձ սիրում։
- Որտեղի՞ց իմանամ։
- Ես նրանց լավություն եմ արել, և նրանք այն չեն մոռանում։
- Ի՞նչ լավություն։
- Մի քանի օր առաջ ուժեղ անձրև էր գալիս։ Պապիկիս մեղվանոցի մոտ ես մի գեղեցիկ թիթեռ գտա։ Նրա թևերը թրջվել էին, ու նա չէր կարողանում թռչել։ Նա կմեռներ, եթե ես չչորացնեի նրա թևերը... Գիշերը նա մնաց ինձ մոտ, իսկ առավոտյան ես նրան ճանապարհ դրեցի։ Այդ թիթեռը արքայազն է եղել, իսկ ես չեմ իմացել։
- Ինչպե՞ս։
- Այո՛, արքայա՛զն։ Թիթեռների թագավորի տղան։ Նրան ճանապարհ դնելուց հետո չէր անցել մի ժամ, երբ հազարավոր թիթեռներով լցվեց մեր մեղվանոցը։ Ճիշտն ասած, ես շատ վախեցա, կարծեցի էլի ինչ-որ վատ բան եմ արել, թիթեռները եկել են հաշվեհարդար տեսնելու։ Հենց այդ ժամանակ ինձ մոտեցավ իմ ծանոթ թիթեռը։ Ես հասկացա, նրանք եկել են շնորհակալություն հայտնելու։ Ահա այդ օրից ես ընկերացա թիթեռներին։ Իսկ երբ այսպես փոքրացա, առաջինը թիթեռները ինձ նկատեցին։ Նրանք այնքան ուրախացել էին, որ կարողանում էին ինձ հետ խաղալ...
- Բարությունը բարություն է ծնում, այդպես է կյանքի օրենքը։ Պատկերացնո՞ւմ ես ինչ կլինի, եթե աշխարհի բոլոր մարդիկ սկսեն իրար լավություն անել։ Աշխարհը բարությամբ կլցվի, ու մարդիկ երջանիկ կլինեն,- ասացի ես։
- Այո՛, այդպես պիտի լինի,- ժպտաց Չիկարելին ու լռեց։
Մենք երկար ժամանակ լռեցինք։ Հետո ես նկատեցի, թե ինչպես Չիկարելիի աչքերը թախիծով լցվեցին...
- Ինչո՞ւ տխրեցիր, հո որևէ տեղդ չի՞ ցավում,- հարցրի Չիկարելիին։
- Հիմա հայրիկը աշխատանքից տուն կգա ու կասի՝ տեսնես մեր տղան ի՞նչ է անում։
- Ուզո՞ւմ ես, գնանք ձեր տուն։
- Այս տեսքո՞վ,- տեղից վեր թռչելով՝ բացականչեց Չիկարելին,-ո՛չ, ո՛չ, այս տեսքով ես տուն չեմ գնա։ Բոլորը կասեն՝ ասում էինք, չէ՞, որ չի կարելի, չի կարելի, իսկ նա չէր լսում... Դե, թող հիմա տառապի...
- Ոչ ոք այդպիսի բան չի ասի... Դժբախտության մեջ ընկած մարդուն

պետք է օգնել, կարեկցել, ձեռք մեկնել, բարձրացնել և ոչ թե նախատել:

- Ո՛չ, ես այս տեսքով տուն չեմ գնա,- վճռական ասաց նա ու քաշվեց մի կողմ:

- Այդ դեպքում ես էլ քեզ հետ կմնամ այստեղ: Ես քեզ մենակ չեմ թողնի:

- Դուք երևի շատ գործեր ունեք, իսկ ես Ձեզ խանգարում եմ...

- Իմ մասին մի՛ անհանգստացիր: Բացի դրանից, վաղուց գիշերը անտառում չեմ քնել:

- Հետաքրքի՞ր է գիշերը անտառում:

- Շատ: Ոնց որ խորհրդավոր հեքիաթների աշխարհում լինես...

- Ինչ լա՜վ է:

- Լավը լավ է, բայց հարկավոր է քնելու տեղ պատրաստել: Ես գնամ տուն՝ բարձեր, վերմակ բերեմ...

- Շո՛ւտ վերադարձեք, ես առանց Ձեզ տխրում եմ, վախենում:

- Շատ շուտ կվերադառնամ: Ոչ մի բանից մի՛ վախեցիր: Լո՛ւռ նստիր: Այստեղից չհեռանա՛ս: Հասկացա՞ր:

- Չեմ հեռանա:

Անտառի արահետով ես շտապեցի իմ սենյակը, վերցրի բարձերն ու վերմակը, սենյակից դուրս եկա: Միջանցքում հանդիպեցի անվանի բանաստեղծներից մեկին, որը թախծոտ աչքերը հառեց վրաս ու հարցրեց.

- Այդ ո՞ւր:

- Բարձերս ու վերմակս ուզում եմ թափ տալ,- ավելորդ բացատրություններ չտալու համար ասացի ես:

- Լավ է, լավ, շատ լավ, բարձդ դարձավ փլավ ու քո ձեռքից թռավ...- հուզումնալից ձայնով արտասանեց նա ու հառաչեց:

- Ինչո՞ւ եք հառաչում, Ձեզ ի՞նչ է պատահել,- անհանգստացած հարցրի ես:

- Իմ նոր պոեմի հերոսը զոհվեց: Նա սքանչելի մարդ էր, ազնիվ, բարի, պայքարում էր մարդկանց երջանկության համար... Ես նրան օժտել եմ մարդկային ամենավեհ հատկություններով: Սիրտս ցավում է նրա համար,- անվանի բանաստեղծը նորից հառաչեց ու տարտամ քայլերով հեռացավ՝ բանաստեղծություն արտասանելով,- վատ է, վատ է, շա՜տ վատ, երբ ապրում ես վհատ...

Նա իրոք տառապում էր, ես հասկանում եմ նրան: Նա իր սիրտն էր դրել իր հերոսի սրտի մեջ, և նրա կորուստը տառապանք ու ցավ էր պատճառել նրան:

- Բարի գիշեր... առողջություն եմ ցանկանում Ձեզ,- ասացի և աստիճաններով արագ-արագ իջա ներքև, և այն է՝ պետք է շենքից դուրս գայի, երբ ինձ մոտեցավ գրաքննադատ Մելիքսեթ Թանգունին.

- Այս ո՞ւր, բարեկա՛մ,- հարցրեց նա,- այս ուշ ժամին ո՞ւր եք արդյոք շտապում:

- Ինձ սպասում են, ես գնում եմ այնտեղ, որտեղ պետք է գնամ:

- Ո՞վ է սպասում Ձեզ այնտեղ:

- Ճկույթիցս փոքր մի տղա սպասում է ինձ... Գնում եմ նրա մոտ:

- Սենտ Էքզյուպերիի Փոքրիկ Իշխանն է դա, որ ապրում է ուրիշ մոլորակի վրա: Ախր նա Ծաղկաձորի անտառներում ի՞նչ գործ ունի: Նրա մոլորակն ո՞ւր, մերն ո՞ւր...

- Նա Փոքրիկ Իշխանը չէ: Նա հայ է, անունը՝ Մուշեղ:

- Ինչպես թե հայ է, անունը՝ Մուշեղ... Դուք երևի տաքություն ունեք, երևի օղի կամ կոնյա՞կ...

- Ո՛չ, ո՛չ, ամեն բան կարգին է... Ներեցե՛ք, խնդրում եմ... շտապում եմ... Բարի գիշեր:

- Բարի գիշեր... Բայց ես ուզում եմ խոսել Ձեզ հետ:

- Հետո, հետո կխոսենք,- ասացի ես ու վազեցի:

- Սպասե՛ք, խնդրում եմ,- վազքով ինձ հասնելով՝ թախանձեց Մելիքսեթ Թանգունին:

- Լսում եմ:

- Գիտեք, բորբոքված երևակայությունը հաճախ մարդուն դնում է այնպիսի անելանելի վիճակում, որ նա սկսում է հավատալ ուրվականներին, չարքերին և...

- Բարեկա՛մս, ազնիվ խոսք, իմ երևակայությունը բորբոքված չէ: Իրոք, ինձ այնտեղ սպասում է ճկույթիցս փոքր մի տղա:

- Գիտե՞ք, ես հիշեցի լամանչեցի Դոն Կիխոտին... Նա էլ Ձեզ պես...

- Ներեցեք...

- Միևնույն է, ես չեմ հավատում, ճկույթից փոքր տղա գոյություն չի կարող ունենալ, բնության մեջ այդպիսի բան չկա...

- Ես շտապում եմ... Ներեցե՞ք...

- Գնացե՛ք, գնացե՛ք... ես տեսնում եմ, որ Դուք...

- Այո՛, այո՛, ես... Բարի գիշեր...

Գրաքննադատ Մելիքսեթ Թանգունին թոթվեց ուսերն ու հետ դարձավ, իսկ ես վազեցի դեպի անտառի բացատը:

Այնտեղ ինձ սպասում էր Չիկարելին:

... Մայր մտնող արևը լույսի ծվեններ էր թափել Թեղենիսի կատարին: Գետակը հին մի երգ էր հիշել, որ բարձրաձայն երգում էր բոլորի համար... Մթնշաղի մշուշի մեջ նիրհում էր անտառը, ականջը՝ հեռվից եկող ձայներին:

- Չիկարելի՜, Չիկարելի՜,- բացատ մտնելով՝ կանչեցի ես, սակայն իմ

կանչերին ոչ ոք չպատասխանեց: Սիրտս դող ընկավ: Ի՞նչ եղավ այդ երեխան, ո՞ւր գնաց: Կարող է՝ աղվեսը կամ ագռավը գողացել է նրան, կարող է՝ մոլորվել է անտառում կամ գետակն է ընկել... Մոտեցա այն ծառի բնին, որտեղ առավոտյան վրան էի խփել, բարձերն ու վերմակը դրեցի վրանում, զգուշությամբ սկսեցի թփերի տակը նայել: Գուցե քնե՞լ է, ինձ չի լսում... Բայց նա չկար ու չկար: Այնպիսի մի տխրություն, այնպիսի մի հուսահատություն իջավ վրաս, որ ես թևաթափ փլվեցի գետնին... Արցունքները խեղդում էին, բայց ես զսպում էի ինձ: Մտածեցի՝ ամոթ է, երեխա հո չեմ՝ նստեմ ու լաց լինեմ: Մեծահասակներն ընդհանրապես պետք է կարողանան զսպել իրենց: Նրանք հասկանում են, որ կյանքում դժվար պահեր շատ կան, և պետք է միշտ պատրաստ ու զգոն լինեն դիմակայելու ողբերգություններին և տառապանքներին...

Մութը թանձրանում էր: Չգիտեի՝ ուր գնալ, ինչ անել: Ես պատասխանատու էի այդ երեխայի բախտի ու ճակատագրի համար: Ինչպե՞ս կարող էի նրան մենակ թողնել անտառում... Եվ ընդհանրապես, յուրաքանչյուր մարդ պատասխանատու է այս աշխարհում կատարվող դժբախտությունների և ողբերգությունների համար: «Եթե նրան որևէ բան պատահի, ես ինձ չեմ ների: Պետք է փնտրել ու գտնել նրան, այսպես անգործ և հուսահատ նստել չի կարելի...»,- մտածեցի ես, վեր կացա և զգուշությամբ չորսբոլորս նայելով՝ խորացա անտառում: Հեռվում՝ մթան մեջ, նշմարեցի շարժվող լույսերի մի շղթա, որը դեպի ինձ էր գալիս: Ես գիտեի, որ Ծաղկաձորի անտառներում լուսատտիկներ շատ կան, բայց չգիտեի, որ նրանք կարող են այդպես հավասար շարքերով քայլել: Կանգնել, զարմացած նայում էի նրանց, իսկ նրանք գալիս ու գալիս էին դեպի ինձ: Երբ բավականին մոտեցան, նկատեցի Չիկարելիին: Իմ ուրախությանը սահման չկար: Պատվո պահակների նման լուսատտիկներն ուղեկցում էին նրան՝ լուսավորելով նրա ճանապարհը:

- Բարի երեկո,- ինձ տեսնելով՝ ուրախացած ընդառաջ վազեց նա:

- Մի՞թե կարելի է գիշերով անտառում թափառել, չէ՞ որ հազար փորձանք կարող է պատահել...

Ես գնացի լուսատտիկներին հրավիրելու,- արդարացավ Չիկարելին:

- Ինչո՞ւ:

- Մթան մեջ ինչպե՞ս պիտի նստեինք,- ասաց նա ու ժպտաց,-գնանք մեր վրանը:

- Գնանք, ուշ է,- ասացի ես ու ճանապարհ տվեցի լուսատտիկներին, որոնք գնում էին Չիկարելիի առջևից:

Երբ տեղ հասանք, անտառում արդեն մութ էր: Ես բարձերն ու վերմակը ուղղեցի:

- Կարող ես ներս մտնել, անկողինը պատրաստ է,- ասացի ես: Չիկարելին ներս մտավ, ուրախացած բացականչեց.

- Սա արքայական դղյակ է: Հե՜յ, ի՛մ բարեկամներ, նե՛րս համեցեք,- լուսատտիկներին կանչեց նա:

Մի ակնթարթում լուսատտիկները լցվեցին վրան: Այն լուսավորվեց հեքիաթային լույսով: Մենք այդ լույսի տակ կարող էինք և՛ կարդալ, և՛ գրել, և՛ իրար երեսի նայել...

Ես գրպանիցս հանեցի թաշկինակս ու սավանի նման փռեցի ներքնակի վրա: Կաղնու ծառից մի տերև պոկեցի, որի վրա թռչնաբարձ կար, դրեցի սավանի վրա:

- Խնդրեմ, սա քո անկողինն է:

- Շնորհակալություն,- ժպտաց Չիկարելին ու պառկեց իր անկողնում:

Թխկենուց մի տերև պոկեցի և զգուշությամբ ծածկեցի նրան:

- Քունս չի տանում,- թնկթնկաց Չիկարելին:

- Գուցե քաղցա՞ծ ես:

- Ո՛չ: Ես ուզում եմ, որ Դուք ինձ համար հեքիաթ պատմեք:

- Ինչպիսի՞ հեքիաթ,- հարցրի ես:

- Զարմանալի:

- Ուրեմն լինում է, չի լինում, մի թագավոր է լինում, այդ թագավորը մի գեղեցիկ աղջիկ է ունենում...

- Չէ՛, այդպիսի հեքիաթ չեմ ուզում, ուրիշը պատմեք:

- Ախր ինչպիսի՞ն...

- Նորը: Որտեղ թագավորներ, թագուհիներ, արքայադուստրեր, արքայազներ, իշխաններ չլինեն:

- Լավ,- ասացի ու փորձեցի հիշել բոլոր այն սքանչելի հեքիաթները, որոնք ինչ-որ ժամանակ պատմել են ինձ կամ ես եմ կարդացել:

- Ուրեմն այսպես, կար-չկար մի թութակ կար: Այդ թութակը ապրում էր թագավորի պալատում,- իմ նոր հեքիաթը այսպես սկսեցի ես:

- Իսկ այդ թութակը խոսել գիտե՞ր,- ընդհատեց Չիկարելին:

- Իհարկե: Նա թագավորից լավ էր խոսում:

- Եվ ի՞նչ էր խոսում...

- Առաջ թագավորն էր խոսում: Կանգնում էր նախարարների դիմաց ու բարձրաձայն ասում, որ ինքն աշխարհի ամենաիմաստուն թագավորն է, որ ինքն է երկրի ամենագեղեցիկ տղամարդը, որ ինքը բոլորից բարձրահասակ է, որ ինքը հավերժ ապրելու է այս աշխարհում... Բոլոր նախարարները ծափ էին տալիս, բղավում՝ կեցցե՜ մեր իմաստուն թագավորը: Երբ թագավորը մենակ էր մնում, դիմում էր իր թութակին՝ դու ի՞նչ կարծիքի ես իմ մասին, թութա՛կ:

- Թագավորը հիմար է, թագավորը հիմար է, թագավորը հիմար է, թագավորը հիմար է,- իրար հետևից անվերջ կրկնում էր թութակը:

- Իսկ թագավորն ի՞նչ էր անում:

- Ծիծաղում էր:

- Հետո՞:

- Թագավորն ամեն օր նույն բաներն էր ասում, և միշտ նախարարները ծափ էին տալիս ու ցրվում իրենց տները, իսկ թութակը ամեն օր ասում էր՝ թագավորը հիմար է, թագավորը հիմար է, թագավորը հիմար է...

- Հետո՞:

- Հետո թագավորը մի օր պառկեց ու մեռավ:

- Իսկ թութա՞կը:

- Թութակը ուրիշ թագավորի սկսեց ասել նույն բառերը: Բայց այդ թագավորը չէր ծիծաղում՝ լալիս էր: Նրա փոխարեն ծիծաղում էին նախարարները:

- Հետո՞:

- Հետո այդ թագավորն էլ պառկեց ու մեռավ:

- Իսկ թութա՞կը:

- Թութակը նոր թագավորին ասաց նույն բառերը:

- Հետո՞:

- Թագավորը կտրել տվեց թութակի լեզուն:

- Հետո՞:

- Թութակի փոխարեն ժողովուրդն սկսեց ասել՝ թագավորը հիմար է, թագավորը հիմար է, թագավորը հիմա՜ր է...

- Հետո՞:

- Մինչև հիմա էլ ասում են՝ թագավորը հիմար է, ու ծիծաղում են:

- Հիմա մի այնպիսի հեքիաթ պատմեք, որ թագավորներ չլինեն: Ընդհանրապես, ո՞ւմ են պետք թագավորները,- հոգոց հանեց Չիկարելին ու իր խելացի, թախծալի աչքերով նայեց ինձ:

- Հին ժամանակ մի աղքատ մարդ կար, որը մի իմաստուն ավանակ ուներ: Էդ ավանակը էս մարդուն մի օր ասում է...

- Ես այդպիսի հեքիաթ չեմ ուզում... Աղքատ մարդ, ավանակ, թութակ, թագավոր... Ես զարմանալի հեքիաթ եմ ուզում...

- Լա՜վ, լա՜վ... կփորձեմ...- մտքերի մեջ ընկած՝ ասացի ես... Բայց ի՞նչ փորձեմ, որտեղի՞ց զարմանալի հեքիաթ գտնեմ: Ես մի հեքիաթ գիտեմ միայն... Մի կարոտալի, մի անբացատրելի, մի հրաշք հեքիաթ, որ ամեն օր պատմում եմ ինքս ինձ, պատմում սարերին, քարերին, ջրերին... Դա իմ աչքի առաջ փռված իմ հայրենի երկրի հեքիաթն է, իմ Վանա ծովակի հեքիաթը, որ պատմում էր հայրս՝ ձեռքը կրծքին դրած. «Թե

ոտքով ճամփա ընկնես՝ երկու օր, երկու գիշեր կգնաս: Թե ձիով՝ մեկ օր, մեկ գիշեր, կհասնես մի ծովակի, որի անունը Վան է: Էդ ծովակը երկրի աչքն է: Ծովակի մեջ մի կղզի կա՝ կղզում հրաշք մի տաճար...»: Այստեղ հայրս երգում էր թախծոտ մի երգ՝ կորած երազների ու կարոտների մասին, ու շարունակում. «Ծովակի ափին դրախտային մի պարտեզ կար, ուր տարին բոլոր ծաղկում էին վարդի տունկերը: Այգում ապրում էր այգեպանի հրաշք աղջիկը, որ արևածագից մինչև մայրամուտ խնամում էր վարդի տունկերն ու թփերը:

Ծաղիկները համբուրում էին նրա ձեռքերը, վարդերը ծաղկաթերթեր էին շաղ տալիս նրա ճանապարհին... Թամար էր այգեպանի աղջկա անունը: Այդ դրախտային պարտեզի դիմաց՝ Վանա ծովակի մյուս ափին, փռված էր Շատախ լեռնոտ երկիրը, որի բարձրաբերձ ժայռերի ծոցում ապրում էր ազատատենչ ու քաջասիրտ մի պատանի: Նա արծիվներից սովորել էր ժայռից ժայռ թռչել, աղբյուրներից սովորել էր քնքուշ երգեր մրմնջալ... Եվ երջանիկ էր այդ պատանին, որովհետև ո՛չ սրտին տիրակալ ուներ, ո՛չ երկրին... Ինքն էր իր գլխի տերը: Եվ այդպես կապրեր՝ ազատ ու երջանիկ, եթե մի օր չհանդիպեր այգեպանի չքնաղ աղջկան:

- Դու ո՞վ ես,- սրտի դողը թաքցնելով՝ հարցրեց պատանին:

- Իսկ դո՞ւ ով ես,- հարցին հարցով պատասխանեց աղջիկը:

- Ե՜ս... ես...

Աղջիկը ծիծաղեց միամիտ ու բարի պատանու վրա: Նա ամոթից չէր կարողանում խոսել:

- Որտե՞ղ ես ապրում,- հարցրեց աղջիկը մոլորված պատանուն:

- Այնտե՜ղ... - ավելի շփոթվեց պատանին՝ բարձրաբերձ սարը ցույց տալով:

Աղջիկը նորից ծիծաղեց ու կորավ վարդատունկերի մեջ:

Պատանին արձանի պես կանգնած մնաց... Ի՞նչ եղավ իր հետ, ինչո՞ւ այդպես շփոթվեց, ինչո՞ւ է սիրտը թևավոր թռչուն դարձել, ինչո՞ւ չի կարողանում հեռանալ...

Նա ձեռքը դրեց սրտին: Սիրտը տեղում էր: Ուզում էր գնալ, բայց սիրտն ասում էր՝ մի՛ գնա:

Հպարտ տղան չգիտեր՝ ինչ աներ...

Նետվեց ծովակը, լողաց մինչև ափ, մագլցեց ժայռերը, կանգնեց սեգ կատարներից մեկի վրա ու նայեց ծովակին: Երբեք ծովակն այդքան գեղեցիկ չէր եղել... Նորից նետվեց ջուրը, լողաց մինչև ափ, կանգնեց դրախտային պարտեզի դռնակի առաջ ու սպասեց այնքան, մինչև աղջիկը պարտեզ եկավ:

- Ես անվերջ քո մասին եմ մտածում,- ասաց պատանին: Աղջիկը շիկնեց բարկ թոնրի պես:

- Դե, էլ ի՞նչ ես կանգնել, ձեռքդ տուր՝ գնանք մեր տուն,- սրտահույզ շշնջաց պատանին:

- Հորիցս պետք է իմ ձեռքը խնդրես,- ասաց աղջիկը:

- Գնանք, խնդրեմ,- ասաց երջանկությունից խենթացած պատանին:

- Դու մայր, հայր ունե՞ս,- հարցրեց աղջիկը:

- Հայրս մի օր գնաց որսի ու տուն չեկավ, իսկ մայրս տանն է: Ես նրա միանուճարն եմ, մեր տան ճրագը:

- Մորդ հետ կգաս իմ ձեռքը խնդրելու, այդպես է կարգը: Անունս Թամար է,- ասաց աղջիկն ու կորավ վարդատունկերի մեջ:

- Լուսաբացին կգամ... լուսաբացի՜ն...- կանչեց պատանին ու արծվի պես սուրաց դեպի տուն:

- Մա՛յր, ծովակի ափին մի աղջիկ է ապրում, անունը՝ Թամար: Ուզում եմ նրան մեր տուն բերել,- գլուխը մոր կրծքին դրած՝ թախանձեց պատանին:

Մայրը համբուրեց որդու ճակատն ու ասաց.

- Լույսը բացվի՝ բարին հետը:

Լուսաբացին մայր ու որդի, թանկագին նվերներ առած, լեռներից իջան այգեստան:

... Գլխին վարդերից հյուսած պսակ դրած, վարդաթերթերով գոգնոցը լցրած՝ նրանց ընդառաջ ելավ այգեպանի աղջիկը՝ Թամարը:

Մայր ու որդի զարմացան: Հրաշք՝ ծաղկած վարդենի էր Թամարը:

- Ահա... ահա Թամարը, մա՜յր,- շշնջաց պատանին:

Մայրը համբուրեց աղջկա ճակատը:

- Համեցե՛ք,- ասաց աղջիկն ու նրանց տարավ ծեր այգեպանի մոտ:

Այգեպանը լսեց տղայի մորն ու ծանր-ծանր ասաց.

- Այս աշխարհում մի տղային մի աղջիկ է հասնում, բայց ես իմ աղջկան ձեր տղային կտամ մի պայմանով միայն:

- Ի՞նչ պայմանով,- հարցրեց մայրը:

- Քո որդին ծովակում թող մի կղզի ստեղծի: Կղզում վարդի տունկեր ու խաղողի որթեր թող տնկի... Եվ երբ նրա պարտեզը դառնա իմ պարտեզի նման կանաչագեղ ու դալար, նոր միայն իմ աղջկան կտամ նրան:

Մայրը խոժոռվեց:

- Ինչպե՞ս պիտի ծովակում կղզի ստեղծի իմ որդին, ինչպե՞ս պիտի...

- Մա՛յր,- մորն ընդհատեց պատանին,- ինչ կա որ, կղզին մի քանի օրում կստեղծեմ, իսկ այգին մի տարում կտնկեմ... Մի տարի թող սպասի

նա... Մի տարի,- հայացքը երազ աղջկան հառած՝ ասաց պատանին։

Մայրը տխրեց։

- Ախր, ծով է, որդի՛, ծովը ո՞նց պիտի լցնես...- ձեռքը ծնկներին խփելով՝ հառաչեց մայրը։

- Պայմանը դա է,- ոտքի ելավ ծեր այգեպանը,- կստեղծի՝ կտամ, չի ստեղծի՝ չեմ տա,- ասաց ու գնաց։

Աղջիկն ու պատանին նայեցին իրար ու գարնան ամպի պես տխրեցին։

- Ես կսպասեմ... հազար տարի կսպասեմ... - մրմնջաց աղջիկը։

- Ես կստեղծեմ այդ կղզին ու պարտեզը...

... Եվ բաժանվեցին նրանք՝ հանդիպման կարոտն ու սպասումը սրտներում։

- Քեզ համար ուրիշ սարից ծաղիկ կքաղեմ, տղա՛ս,- որդուն կրծքին սեղմած՝ ասաց մայրը։

- Ես ուրիշ ծաղիկ չեմ ուզում, մա՛յր,- հառաչեց որդին,- կա՝ այգեպանի աղջիկն է, չկա՝ էլի այգեպանի աղջիկն է։ Գիշերը ցերեկ կդարձնեմ, ցերեկը՝ գիշեր, ծովակը քարով կլցնեմ, քարերի վրա հող կփռեմ ու կստեղծեմ իմ սիրո կղզին...

- Դու գիտես,- ասաց մայրը, համբուրեց որդու աչքերն ու գնաց։

Պատանին ձեռքն առավ երկաթե մի մեծ մուրճ ու սկսեց Շատախ լեռնոտ երկրի ծովահայաց ժայռերը փշրել ու ծովը նետել։ Ամեն նետած քարի հետ նրա սրտից բոց էր ելնում ու հասնում երկնքին...

Տարին անցավ մի օրվա պես, ծովակը կուլ տվեց նրա նետած բոլոր քարերը։

- Անհատակ է անաստվածը,- արյունոտված ձեռքերն ու քերծված ծնկները ծովակի աղի ջրով լվանալով՝ մրմնջաց պատանին։

Եվ երբ հուսահատված ուզում էր թողնել, հեռանալ, ծովակի ալիքների վրա երևաց այգեպանի աղջիկը՝ կրծքին վարդի փնջեր սեղմած։

- Սպասո՜ւմ եմ, սպասո՜ւմ, սարի՛ արծիվ,- կանչեց նա, ու ալիքները նրա ձայնը խառնեցին իրենց շառաչին։

- Քի՜չ մնաց, քի՜չ, համբերի՛ր, ուր որ է՝ կղզին կերևա,- ձայնեց պատանին ու սրտում ավելի բորբոքվեց սիրո կրակը։ Նա մեծ-մեծ ժայռերը պոկեց ու իրար հետևից ջուրը նետեց։

Տարիները, թևեր առած, թռչում էին ու թռչում, բայց կղզին չկար ու չկար։ Մի անգամ որդու մոտ եկավ մայրը, որ համոզի ու տուն տանի։

Մայրը հոգնած ու ծերացած մի մարդ տեսավ ծովակի ափին, որ հսկայական ժայռաբեկորներ էր գլորում։

- Քիչ մնաց, քիչ, հիմա կղզին կերևա,- ասաց հոգնած ու ծերացած որդին՝ գլուխը մոր ցամաքած կրծքին դնելով։

Մայրն այս անգամ էլ չկարողացավ որդուն համոզել: Դողդոջ քայլերով գնաց ու չիմացավ, թե ինչ եղավ իր որդու հետ... Իսկ որդին ջարդում էր ժայռերն ու լցնում ծովակը, ջարդում ու լցնում: Մի օր էլ, երջանկության օր էր դա, նրա գցած քարը չսուզվեց:

- Կղզի՜ն, կղզի՜ն, կղզի՜ն,- խենթացած բղավեց նա ու ծովակի ալիքների վրայով վազեց, հող բերեց, փռեց քարերի վրա, վարդի տունկեր ու ոսկեհատ խաղողի մատեր շարեց, անմահական խնձորի ծառեր տնկեց:

- Թող գա այգեպանն ու տեսնի, որ ես հանուն սիրո կարող եմ ողջ աշխարհը պարտեզ դարձնել:

Ու հեքիաթի պարտեզի պես մի գիշերում ծաղկեցին բոլոր ծառերն ու թփերը: Պատանին ծովակի աղի ջրով լվաց ձեռքերը, թափ տվեց փոշոտ զգեստներն ու գնաց ծեր այգեպանի մոտ: Գնաց ու ապշած կանգնեց այգու խարխլված դռան առաջ:

- Հե՜յ, հե՜յ, ո՞ւր եք,- ձայն տվեց նա, ու պատասխան չստացավ: Ներս մտավ: Այգին՝ անտեր, տնակը՝ ավեր, ո՛չ այգեպանը կար, ո՛չ աղջիկը: Ի՞նչ եղան, ո՞ւր գնացին, խելագարի պես այսուայնկողմ վազելով՝ ինքն իրեն հարցնում էր նա: Սիրտը տնքում էր, բերանը՝ չորանում... Կռացավ աղբյուրի վրա, որ ջուր խմի: Ջարմացած ոտքի ելավ՝ առանց ջուր խմելու: Ջրի հայելում տեսավ ճերմակ մորուքով, ծերացած մի մարդու ու... մտածեց, որ աղջկա հայրը կարող է լինել: Նորից կռացավ աղբյուրի ակին ու ջրի հայելու մեջ նորից տեսավ ճերմակ մորուքով, ծերացած մարդուն...

- Ուշացա՜ր, ուշացա՜ր, ուշացա՜ր...- շշնջաց աղբյուրն ու աղավաղեց նրա դեմքը:

Նորից նա շրջեց երբեմնի դրախտ այգում, նորից կանչեց իր երազ աղջկան, բայց աղջիկը չկա՜ր ու չկա՜ր: Վերադարձավ իր կղզին: Վարդի թփերն ու ծառերը ավելի էին փարթամացել... Դրախտ էր իր այգին: Հոգնած գլուխը դրեց վարդի տունկի տակ ու քնեց: Ինչքան էր քնել, ինչքան չէր քնել՝ չգիտեր: Արթնացավ:

- Ինչ էլ լինի, պիտի փնտրեմ, գտնեմ նրան,- կրակված սրտով մրմնջաց նա, վեր կացավ ու սկսեց վազե՜լ, վազե՜լ, վազե՜լ...

Ու չիմացավ, թե իր հետ ինչ կատարվեց, քամի մտավ թևերի տակ, սկսեց թռչե՜լ, թռչե՜լ, թռչե՜լ..

... Թե հիմա Վանա ծով գնաս, ամառ լինի, ձմեռ, աշուն թե գարուն, այնտեղ մի ճայ է սավառնում՝ հայացքը ծովակի ջրերին հառած: Դա նա է, այն քաջակորով պատանին, որ փնտրում է իր երազ աղջկան ու չի գտնում: Երբեմն-երբեմն կարոտակեզ կռնչում է.

- Թամա՛ր, Թամա՛ր, Թամա՛ր...»:

Հայրս ձեռքը դնում էր կրծքին և երգում թախծալի մի երգ հայոց Շատախ երկրում ապրող պատանու, Վանա ծովակում գտնվող Աղթամար կղզու մասին:

- Ես ուզում եմ տեսնել այդ ծովակն ու կղզին,- աչքերը զարմանքով լցված՝ ասաց Չիկարելին:

- Կգնանք, կտեսնես,- ասացի ես:

- Ե՞րբ:

- Օրերից մի օր... Իսկ հիմա քնենք: Լույսը կբացվի՝ բարին հետը: Վանը մեր ծովակն է: Կգնանք, անպայման կգնանք: Վասպուրականը մեր հայրենիքն է:

- Բարի գիշեր,- գլուխը ճնճղուկի բարձիկին դնելով՝ ասաց Չիկարելին ու փակեց աչքերը:

Լուսատտիկները վրանից դուրս ելան: Մթնեց: Ես գլուխս դրեցի Չիկարելիի կողքին, բայց չկարողացա քնել...

Վանա ծովակը հառաչում ու կանչում է ինձ:



ԼՈՒՍԱԲԱՑ

Պատենադարանում մի գիրք կա, որը գրել է իմաստուն մի մարդ շատ դարեր առաջ: Այդ գրքում ամեն բառ այնպես է տողի մեջ տեղադրված, ինչպես սրբատաշ քարը վանքի պատի շարվածքում: Իմաստության լույս է հորդում այդ գրքի ամեն էջից: Այնտեղ գրված է հայոց աշխարհում բացվող հրաշագեղ արշալույսների ու այն աշխատավորի մասին, ով արթնացել է առավոտ վաղ ու բարիք ստեղծել մարդկանց համար:

Ես ձեզ պատմել եմ. հայրս նույնպես արթնանում էր արևածագից առաջ, գնում իր դարբնոցը, կանգնում զնդանի առաջ ու երկաթ կռում: Նա ինձ էլ էր իր հետ տանում դարբնոց ու սովորեցնում աշխատել...

Ըստ սովորության՝ այդ օրն էլ ես վաղ արթնացա: Չիկարելին մուշ-մուշ քնած էր: Զգուշությամբ նրան ծածկեցի ու վրանից դուրս եկա:

Աղջամուղջի մեջ բարուրված անտառը դեռ չէր արթնացել:

Ես գնացի Կաթնաղբյուր:

Թռչուններն սկսեցին իրար ձայն տալ:

- Արթնացե՞ք, արթնացե՞ք, լույսը բացվո՞ւմ է:

Մեծագլուխ մի բզեզ, որ կարծես քնով էր ընկել և ուշացել էր դպրոց գնալուց, ոսկե թևերը բզզացնելով՝ եկավ ու անցավ ականջիս տակով: Նա այնքան էր շտապում, որ մոռացավ նույնիսկ բարի լույս ասել:

Ես հայացքով ուղեկցեցի նրան այնքան, մինչև նա ձուլվեց աղջամուղջին: Ո՞ւր էր շտապում, ինչո՞ւ էր այդպես շփոթված...

- Լույսը բացվում է, լույսը բացվում է... արթնացե՛ք, արթնացե՛ք...

Կապտակապույտ մի ծաղիկ, ցողի ծանրությունից հազիվ մեջքն ուղղելով, բարձրացրեց գլուխը, որ տեսնի, թե ինչու է արևը ուշանում, քնած հո չի՞ մնացել...

Ես նայեցի ծաղիկին ու ժպտացի:

Ծաղիկը շատ քաղաքավարի էր, բարի լույս ասաց ու խոնարհեց գլուխը:

Հոգնած մի լուսատտիկ վերադառնում էր տուն: Նա ամբողջ գիշեր չէր քնել, լուսավորել էր անտառի արահետները, որ հանկարծ ոչ ոք չմոլորվի:

Կաթնաղբյուրի սառը ջրով լվացվեցի ու զգացի, թե ինչպես միանգամից առույգացա: Կաթնաղբյուրը հրաշք է, միայն պետք է վաղ առավոտյան նրա զանգակ ջրով լվացվել, որ ուժերդ վերականգնվեն...

Ես մի քիչ շրջեցի ցողաթաթախ բացատում, բարի լույս մաղթեցի իմ ծանոթ ծառերին ու վերադարձա մեր վրանը, որ արթնացնեմ Չիկարելիին և միասին մտածենք մեր անելիքների մասին:

Ներս մտա վրան ու զարմացա: Նա չկար:

- Երևի դուրս է գնացել,- մտածեցի ես,- սպասեմ՝ կգա: Սպասեցի մեկ րոպե, երկու րոպե, երեք, չորս, հինգ... չկար ու չկար:

Դուրս ելա վրանից ու սկսեցի բղավել.

- Չիկարելի՜, հե՜յ, Չիկարելի՛, որտե՞ղ ես...,- ոչ մի պատասխան:

Անտառի արահետով վազեցի դեպի աղբյուրը:

- Գուցե լվացվելո՞ւ է գնացել,- մտածեցի ես:

Հասա աղբյուրի բացատը, նայեցի թփերի տակ: Չկար:

- Ո՞ւր գնաց այդ տղան, ի՞նչ եղավ,- նեղսրտած հարցրի ինքս ինձ ու չգիտեի ինչ անել, ուր գնալ:

Մոլոր քայլերով վերադարձա վրանի մոտ ու ձայն տվեցի.

- Չիկարելի՜, հե՜յ, Չիկարելի՜...

- Մի՛ անհանգստացեք, ես այստեղ եմ,- հեռվից ձայն տվեց նա:

- Շտապ արի՛ այստեղ,- զայրացած ասացի ես:

- Հիմա,- պատասխանեց նա, ու չէր անցել մի րոպե, երբ կանգնեց իմ դիմաց:

- Որտե՞ղ էիր,- խիստ հարցրի ես:

- Գնացել էի մեղր բերելու:

- Պապիկիդ մոտի՞ց:

- Ո՛չ:

- Հապա որտեղի՞ց:

- Այստեղ մի փչակ կա, այդ փչակի մեջ մեղուները բույն են դրել ու մեղրահացեր պատրաստել: Ես գնացի մեղուների մոտ, խնդրեցի, որ նրանք ինձ մեղր տան: Չմերժեցին:

- Իսկ ո՞ւր է մեղրը, լսածիս չհավատալով՝ հարցրի ես, կռացա ու նայեցի կանաչների մեջ: Այնտեղ շատ գեղեցիկ մի սայլակ էր կանգնած: Սայլակին չորս զույգ բոռեր էին լծված, իսկ սայլակի վրա տարբեր գույների ու մեծության ծաղկաբաժակների մեջ մեղր էր լցված:

- Ես հիմա ազատ կարձակեմ այս անբաններին, ու մենք միասին կնախաճաշենք,-ասաց Չիկարելին ու արձակեց բոռերին:

Բոռերը դզզալով օդ բարձրացան:

- Հիմա գնանք ու բերենք այն սունկերը, որ մենք փռել էինք սալերի վրա,- ասաց Չիկարելին ու վազեց դեպի սալերը: Ես գնացի նրա հետևից: Սունկերը եփվել էին: Հավաքեցինք, լցրեցինք կռատուկի մի մեծ տերևի վրա ու վերադարձանք վրան:

- Հիմա գետնամորի էլ կհավաքեմ, ու նոր կնախաճաշենք: Դուք նստեք այս կոճղին, ես ամեն ինչ կանեմ,- ասաց Չիկարելին ու նորից կորավ թփերի մեջ:

Ես նստեցի կոճղին, ուշադրությամբ սկսեցի զննել սայլակը, որ բոռերը քաշել-բերել էին մեր վրանի մոտ:

Սայլակի անիվները փիփերթի սերմերից էին, իսկ սռնիները՝ չորացած ծղոտից, որոնց վրա ամրացված էր եզան լեզվի մի մեծ տերև: Դա էր ամբողջը: Սայլակը տեղից շարժելու համար առաջին սռնիից ճիլոպներ էին կապված, որոնց և լծված էին բոռերը:

- Ահա և գետնամորին,- շունչը տեղը բերելով՝ ասաց Չիկարելին:

- Կարծես թե ոչ մի բանի կարիք այլևս չունենք,- ասացի ես:

- Կարող ենք նախաճաշել,- ուրախ-ուրախ ասաց Չիկարելին ու զանգակածաղկի բաժակները լցրեց նեկտարով,- ահա և թեյը:

- Շնորհակալություն,- ասացի ես:

- Բարի ախորժակ,- ժպտաց Չիկարելին՝ նստելով զանգակածաղկի տերևի վրա:

Մենք լուռ նախաճաշեցինք ու վեր կացանք:

- Հիմա ո՞ւր ենք գնալու,- հարցրեց Չիկարելին:

- Ես ուզում եմ տեսնել անտառապահին:

- Ինչո՞ւ,- տարակուսած հարցրեց նա:

- Երևի մի խորհուրդ կտա:

- Իսկ Դուք նրան ճանաչո՞ւմ եք:

- Անցած ամառ երկու օր ապրել եմ նրա տնակում: Շատ հետաքրքիր

մարդ է: Նա ինձ այնպիսի բան է պատմել, որ ոչ մի գրքում գրված չէ: Գնանք: Ես համոզված եմ, որ նա մեզ կօգնի:

- Գնանք,- համաձայնեց Չիկարելին:

Ես ձեռքս դրեցի գետնին: Չիկարելին նստեց ափիս մեջ: Մենք ճանապարհ ընկանք դեպի անտառապահի տնակը:

Անտառապահի խորհուրդը

Անամոթնե՜ր, անդաստիարակնե՜ր, անհոգի՛, անխիղճ մարդիկ, ինչո՞ւ եք ծաղիկները պոկոտել, խոտերը տրորել, ծառերը կոտրատել... չե՞ք ամաչում,- զայրացած բղավում էր նորատունկ ծառերի մոտ կանգնած բարձրահասակ մի մարդ:

Նա կանաչ համազգեստով էր, գլխարկին՝ զինանշանի փոխարեն կաղնու տերև էր ամրացված: Քիչ հեռու՝ ծաղկաշատ մարգագետնում, մի ձի էր արածում, որի թամբից երկփողանի հրացան էր կախված: Ես Չիկարելիին դրեցի բաճկոնիս գրպանը, մոտեցա անտառապահին, հարգալից բարևեցի:

- Ի՞նչ բարև... սի՞րտ են թողնում, որ բարևեմ: Տրորել են խոտ ու ծաղիկ, կտրատել ծառերը, մատղաշ շիվերը... Բա դաստիարակված, խելացի մարդն իրեն այսպիսի բաներ թույլ կտա՞: Խե՜ղճ, խե՜ղճ իմ մատղաշներ, ինչ լավ էիք աճել,- կոտրատված ծառի շիվը կապելով՝ մորմոքում էր անտառապահն ու անիծում բնության դեմ չարիք գործողներին:

- Ովքե՞ր են այդ անամոթները,- տրորված խոտերին, պոկոտված

ծաղիկներին, կտրատված շիվերին նայելով՝ բացականչեցի ես։

- Ա՜խ, թե ձեռքս կընկնեն, այնպես կտանջեմ, այնպես կծեծեմ, որ մրմուռից շաբաթներով չկարողանան քնել... Նայի՛ր այս զանգակածաղկի խրձերին, պոկոտել, թափել են... Ախր ո՞նց դրանց ձեռքերը չեն թուլացել։ Այս ծառը անցյալ տարի վնասվել էր կարկուտից, հազիվ կարողացա փրկել։ Ահագին մեծացել էր, գեղեցկացել... Մեջքը կոտրել են... Իմ սիրուն ծառ, իմ գեղեցկուհի...

Անտառապահը ծնկի իջավ խոշտանգված մի տունկի առաջ, կապկպեց ճյուղերը, շոյեց տերևներն ու քնքշորեն մրմնջաց.

- Ոչինչ, կանցնի... Գիտեմ, ցավում է, պետք է դիմանաս... Այնքան լավ օրեր են սպասում քեզ... Այ, մի քիչ կմեծանաս, հասակ կառնես, արմատներդ կզորանան, ու այլևս քեզ ոչ ոք չի կարողանա ձեռք տալ... Դե, հանգստացի՛ր, ամոթ է լաց լինելը...

- Այդպիսի մարդկանց խիստ, շատ խիոտ պետք է պատժել,- վրդովված ասացի ես։

Անտառի բացատում, որտեղ կանգնած էինք մենք, կոտրատված շշեր, պատառոտված թղթեր, կերակրի մնացորդներ էին թափված։ Ես ամաչեցի այդ մարդ կոչվածների փոխարեն, ովքեր աղտոտել էին անտառը, տրորել խոտերն ու ծաղիկները, ջարդոտել մատղաշ շիվերն ու տնկիները...

- Անիծվեն, հազա՛ր անգամ անիծվեն նրանք, ովքեր պղծում են բնությունը, ովքեր ծառ ու ծաղիկ են ոչնչացնում,- ասացի ես։

- Դրանք վտանգավոր մարդիկ են, ամեն ինչի ընդունակ։ Այն մարդը, որն առանց խղճի խայթի կարող է ծառ կտրել, նա կարող է նաև մարդ սպանել։ Ի՞նչ տարբերություն, ծառն էլ մարդ է,- ասաց անտառապահն ու խուզարկող հայացքով նայեց ինձ,- Դուք այս ժամին ի՞նչ գործ ունեք այստեղ,- խիստ հարցրեց նա։

- Ես լսել եմ, որ այստեղի աղբյուրի ջուրը բուժիչ հատկություն ունի։

- Ուներ...

- Իսկ հիմա ջուր չկա՞... Ի՞նչ է եղել աղբյուրին...

- Աղբյուրը խռովել է մարդկանցից։

- Ինչպե՞ս թե խռովել է։

- Ցամաքել է,- հառաչեց անտառապահն ու գնաց դեպի ձին։

- Ներեցե՛ք, կարելի՞ է Ձեզ անհանգստացնել,- բաճկոնիս գրպանից գլուխը դուրս հանելով՝ կանչեց Չիկարելին։

Անտառապահը զարմացած կանգնեց։

- Դո՜ւք... բայց Դուք քիչ առաջ ուրիշ ձայնով էիք խոսում...

- Այո՛... ձայնս փոխվեց,- Չիկարելիին գրպանս խցկելով՝ պատաս-

խանեցի ես:

- Մոտեցե՛ք, երիտասա՛րդ, մոտեցե՛ք, տեսնեմ ի՞նչ հարց է Ձեզ տանջում:

- Գիտե՞ք, իմ ծանոթ տղաներից մեկը փոքրացել է, ճկույթիցս էլ փոքր է: Ես ուզում եմ, որ նա նորից մեծանա... Նույն երեխան դառնա... Բայց չգիտեմ՝ ո՞նց անեմ, ո՞ւմ դիմեմ:

- Դա այն տղա՞ն է, որ քանդել է Կլոր դարի մրջնանոցը:

- Կարծեմ այդպիսի բան արել է,- կմկմացի ես:

- Թող գրողի ծոցը կորչի... Ես նրան չեմ օգնի,- զայրացավ անտառապահը,- նա այդպես փոքր էլ պիտի մնա: Իսկ եթե հանկարծ նորից մեծանա, գիտե՞ք ինչեր կանի: Ես շտապում եմ: Ես ժամանակ չունեմ այդպիսի երեխաներով զբաղվելու,- ասաց անտառապահն ու քաշեց ձիու սանձը:

- Ազնիվ խոսք, ես այլևս այդպիսի բաներ չեմ անի,- բաճկոնիս գրպանից գլուխը դուրս հանելով՝ լեղապատառ բղավեց Չիկարելին,- երդվում եմ, այլևս ոչ մի անգամ ոչ մի վատ արարք չեմ կատարի:

- Ո՞վ է... Այդ ո՞վ է խոսում ինձ հետ:

- Դա հենց ինքն է, այն տղան, ահա, ծանոթացե՛ք,- Չիկարելիին ափիս մեջ դնելով՝ ասացի ես:

- Բարև՛, պապի՛կ,- ակնածանքով բարևեց Չիկարելին:

- Բարև՛,- չկամորեն պատասխանեց անտառապահը:

- Խնդրում եմ, օգնի՛ր ինձ... Ես այլևս չեմ ուզում այսպես մնալ:

- Չէ՛, չէ՛, չէ՛... հեռո՛ւ, հեռո՛ւ ինձնից... Օ՛, այդ ինչքան չարություններ կան քո աչքերի մեջ թաքնված... Ես քեզ չեմ օգնի, չե՛մ օգնի, չէ՛, չէ՛, չէ՛,- ասաց անտառապահը, մի քանի քայլ հեռացավ ու ձայն տվեց իր ձիուն,- Ասլա՛ն, Ասլա՛ն... արի՛, գնում ենք:- Ասլանը, գլուխը թափահարելով, մոտեցավ նրան,- լսի՛ր, Ասլա՛ն, դու ի՞նչ կարծիքի ես, օգնե՞նք այս տղային, թե՞ ոչ:

Չին խրխնջաց, թափահարեց գլուխը: Անտառապահը շոյեց ձիու աչքերն ու առաջ անցավ: Չին գնաց նրա հետևից:

- Պապի՛կ,- լացակումած կանչեց Չիկարելին:

- Ինչո՞ւ թռչունի բույնը քանդեցիր, ինչո՞ւ կոտրեցիր ծաղկած ծառի ճյուղը, ինչո՞ւ գնդակով փշրեցիր առաջին հարկում ապրող ծերուկի տան պատուհանի ապակիները, ինչո՞ւ պարսատիկով սպանեցիր բարի ծիտիկին, ինչո՞ւ...

- Ներեցե՛ք, խնդրո՛ւմ եմ... բայց Դուք որտեղի՞ց գիտեք այդ բոլորը, ո՞վ է Ձեզ ասել,- զարմացած հարցրեց Չիկարելին:

- Բոլոր լավ, վատ արարքները, որ կատարում է մարդը, աննկատ չեն մնում: Ինձ լուրեր են բերում իմ կաչաղակները, որոնք ապրում են քաղաքի զբոսայգիներում ու հաճախ են լինում ձեր բակերում: Ես քեզ

լավ եմ ճանաչում: Մի անգամ դու պոկել ես ձեր հարևանի աճեցրած արևածաղիկը ու մի կողմ գցել: Ճի՞շտ է:

- Ճիշտ է:

- Մի անգամ էլ գրպաններդ ու ծոցդ լցրել ես խակ դեղձերով, կոտրատել ծաղկած ծիրանենու ճյուղերը ու...

- Ես այդ օրը մենակ չէի... Ես...

- Գիտեմ, գիտեմ... Մի անգամ էլ քեռի Թովմասի այգում դու...

- Ներեցե՛ք, խնդրում եմ... Ես երդվում եմ, այլևս այդպիսի բաներ չեմ անի,- հեկեկաց Չիկարելին:

- Ես տանել չեմ կարող, երբ երեխաները լաց են լինում, Ասլա՛ն, սիրելի՛ս, գնացինք,- ոտքը ասպանդակին դնելով՝ ասաց անտառապահը: Ես բռնեցի ձիու սանձը:

- Բարեկա՛մս, օգնի՛ր տղային... Շատ եմ խնդրում,- թախանձեցի ես: Անտառապահը ոտքն իջեցրեց ասպանդակից, լուռ կանգնեց մեր դիմաց ու մտքերի մեջ ընկավ:

- Օգնե՞մ, թե՞ չօգնեմ... Ասլա՛ն, դո՛ւ ասա, օգնե՞նք սրան, թե՞ ոչ,- Ասլանը թափահարեց գլուխը,- դու համաձա՞յն ես, Ասլա՛ն,- ձին նորից թափահարեց գլուխը,- շատ լավ, կօգնենք: Եթե Ասլանը չհամաձայներ, ես ձեզ չէի օգնի,- ասաց անտառապահը:

- Ինքներդ լսեցիք, նա զղջում է իր արարքների համար,- ասացի ես:

- Լավ, լավ,- ձեռքը թափահարեց անտառապահն ու գրկեց ձիու պարանոցը,- Ասլա՛ն, ինչի՞ց սկսենք:

Չին թափահարեց գլուխն ու խրխնջաց:

- Հասկանալի է, հասկանալի՜,- անտառապահը ձիու պարանոցին երեք անգամ թփթփացրեց ու դարձավ մեզ,- եկեք իմ հետևից, ճանապարհին ոչ մի հարց չտաք ո՛չ ինձ, ո՛չ Ասլանին: Հասկացա՞ք:

- Այո,- միաբերան պատասխանեցինք մենք:

- Դե, գնացինք, Ասլա՛ն: Ասլանը իմաստուն ձի է, երկար տարիներ միասին ենք անտառը հսկում:

Չին առջևի ոտքը երկու անգամ խփեց գետնին ու անտառի արահետով գնաց դեպի Կարմիր քարերի կողմը:

Մենք լուռ հետևեցինք նրան:

Երբ բավականին խորացել էինք անտառում, հանկարծ անտառը մթնեց. կարծես ընկանք խավարի թագավորություն:

- Ինչո՞ւ մթնեց,- անտառապահի գոտուց պինդ բռնելով՝ շշնջացի ես:

- Սա ծմակուտ է: Այստեղ արև չկա,- շշուկով պատասխանեց անտառապահը:

- Ինչ հետաքրքիր է,- ծիծաղեց Չիկարելին:

- Լռի՛ր,- զգուշացրեց անտառապահը։

- Ինչո՞ւ,- հարցրեց Չիկարելին։

- Այստեղ է ապրում գորշ արջի ընտանիքը։ Նրանք հիմա քնած են...

- Ես այնպես կուզեի այդ արջերից մեկն ու մեկին տեսնել։

- Ասլա՛ն, արագացրո՛ւ քայլերդ,- ձիու պարանոցը շոյեց անտառապահը։

Չին գլուխը շարժեց ու սկսեց ավելի արագ քայլել։ Մութ արահետը վերջացավ։ Մենք ելանք ծաղկաշատ մի բացատ, որը մեղրահոտով էր լցված։

- Խնդրում եմ, հանկարծ ծաղիկ չտրորեք,- զգուշացրեց անտառապահը,- սրանք հազվագյուտ ծաղիկներ են, սրանք միայն ու միայն այստեղ են աճում։

- Հասկանալի է,- ասացի ես ու նայեցի հրաշագեղ ծաղիկներին։

... Լայնատարած դաշտի կենտրոնում փայտից կառուցված գեղեցիկ մի տնակ տեսանք, որի տանիքին բարձրաբերձ մի աշտարակ կար։

- Ահա իմ տունը,- ասաց անտառապահը,- այստեղ կարող ենք հանգստանալ։

Անտառապահը բացեց տնակի դուռն ու մեզ ներս հրավիրեց։

Աշխարհում շքեղազարդ պալատներ ու արքայական դղյակներ շատ կան, որոնք կառուցված են մարդկային վառ երևակայությամբ ու հանճարով։ Այդ պալատներն ու դղյակները զարմացնում են մարդկանց։ Բայց դրանցից և ոչ մեկը այնքան ճաշակով ու գեղեցիկ չէր, որքան անտառապահի տնակը... Տնակի ներսում... Բայց ոչ, ես չեմ նկարագրի տնակի ներսը, ձեզանից յուրաքանչյուրը թող իր երևակայությամբ ստեղծի թե՛ տնակը, թե՛ տնակի ներսը։ Միայն կասեմ, որ այնտեղ ամեն բան հիացնում էր իր գեղեցկությամբ, զարմացնում իր պարզությամբ ու մաքրությամբ...

- Խնդրեմ, նստե՛ք,- ասաց անտառապահը։

Ես նստեցի մամռագույն մի բազմոցի, որը շատ հարմար էր ու շատ փափուկ։ Չիկարելին նստեց բազմոցի թիկնակին։

- Ոնց որ հեքիաթի տնակ լինի- չորսբոլորը նայելով՝ շշնջաց Չիկարելին,- ներեցե՛ք, Ձեր տնակում ջուր կա՞։

- Ասլանին կասեմ՝ ջուր կբերի,- ասաց անտառապահը, բացեց սենյակի դուռն ու կանչեց,- Ասլա՜ն, Ասլա՜ն։

Չին խրխնջաց։

- Ջո՛ւր բեր,- խնդրեց անտառապահը։ Չին նորից խրխնջաց։

Անտառապահը ծածկեց դուռն ու նստեց իր տեղը։ Մենք զարմացած նայեցինք նրան։

- Ինչո՞ւ եք այդպես ինձ նայում,- հարցրեց անտառապահը՝ մորուքը շոյելով։

- Գուցե Ձեր ձին նաև խոսե՞լ գիտե,- հարցրի ես։

- Աշխարհում բոլոր կենդանի արարածները խոսել գիտեն, միայն պետք է հասկանալ նրանց լեզուն։ Ասլանը իմ գրկի մեջ է մեծացել։ Նրա մայրը քերծից վայր ընկավ ու... Ասլանը փոքր էր։ Ես նրան տուն բերեցի ու ծծակով սկսեցի կերակրել։ Նա իմ ասած բոլոր բառերը հասկանում է... Բացի այդ, նա շատ խելոք է, դրա համար էլ նրա կարծիքը միշտ հաշվի եմ առնում,- անտառապահը երեք անգամ ծափ տվեց ու նայեց դիմացի փոքրիկ դռնակին։ Դռնակը անմիջապես բացվեց, ներս եկավ արծաթապոչ մի աղվես։ Աղվեսը առջևի թաթերով շատ գեղեցիկ ու նրբահյուս մի կողով էր բռնել, որը բերնեբերան լցված էր գետնամորիով ու հաղարջով։ Աղվեսը կողովիկը դրեց սեղանին, խոնարհվեց ու գնաց։

- Աղվեսը... աղվե՜սը,- ուրախությունից ամեն բան մոռացած՝ բացականչեց Չիկարելին։

- Նա հաղարջ ու մորի է բերել ձեզ համար,- հանգիստ ասաց անտառապահն ու նորից երեք անգամ ծափ տվեց։ Նորից բացվեց փոքրիկ դռնակը, նորից ներս եկավ աղվեսը, այս անգամ նրբահյուս մի սկուտեղ բռնած, որի վրա դրված էին ծղոտից հյուսած ափսեներ։

Աղվեսը նայեց Չիկարելիին, աննկատ աչքով արեց ու հեռացավ։

- Խնդրեմ, հյուրասիրվե՛ք,- անտառապահն ափսեների մեջ հաղարջ ու գետնամորի լցրեց։

- Շնորհակալություն,- զարմանքից բաց մնացած բերաններս փակելով՝ ասացինք մենք։

- Գուցե դուք ուզո՞ւմ եք խնձոր կամ տանձ ուտել,- հարցրեց անտառապահն ու առանց պատասխանի սպասելու՝ չորս անգամ ծափ տվեց։

Փոքրիկ դռնակը նորից բացվեց. այս անգամ ներս եկավ շատ գեղեցիկ մի ոզնի, որի փշերի վրա տանձեր ու խնձորներ էին շարված։ Մենք դեռ չէինք հասցրել զարմանալ, երբ ոզնին բարձրացավ սեղանին, մի ակնթարթում տանձերը և խնձորները լցրեց սկուտեղի մեջ։

- Շնորհակալություն,- ոզնու գլուխը շոյեց անտառապահը։

- Ես էլ եմ ուզում ոզնու գլուխը շոյել,- բազմոցի թիկնակից ուսիս թռչելով՝ թախանձեց Չիկարելին։

- Չի կարելի,- շշուկով ասացի ես, որ անտառապահը հանկարծ չլսի ու չզայրանա։

- Ինչո՞ւ չի կարելի... Թող շոյի,- ասաց անտառապահը։ Ես Չիկարելիին դրեցի ափիս մեջ, մոտեցա ոզնուն։

- Ի՜նչ լավ ոգնի ես դու,- ասաց Չիկարելին ու շոյեց ոգնու գլուխը: Ոգնին կարծես ժպտաց, գլուխը խոնարհեց ու գնաց: Անտառապահը մեզ հյուրասիրեց ոգնու բերած խնձորով ու տանձով: Դրսում Ասլանը խրխնջաց: Անտառապահը բացեց դուռը:

- Ասլանը ջուրը բերել է,- ձիու թամբից փոքրիկ տակառը վերցնելով՝ ասաց անտառապահը,- շնորհակալություն, Ասլա՛ն,- շոյեց ձիու ճակատը:

Ձին մի քանի անգամ թափահարեց գլուխն ու հեռացավ: Անտառապահը փայտյա բաժակների մեջ ջուր լցրեց: Մենք խմեցինք: Շատ համեղ ջուր էր:

- Հիմա պետք է մտածենք, թե ինչ կարող ենք անել այս փոքրիկի համար,- ասաց անտառապահն ու շոյեց երկար մորուքը,- հա, հիշեցի, հիշեցի... հիմա, հիմա,- նա չորս անգամ ծափ տվեց: Դռնակը բացվեց, այս անգամ ներս եկավ պսպղուն աչքերով արագաշարժ մի խլուրդ:

- Բեր անտառապահների հիշողությունների գիրքը,- խլուրդի դեմքին նայելով՝ բառերը հատ-հատ արտաբերեց անտառապահը:

Խլուրդը փռշտաց ու չքվեց: Չէր անցել մի վայրկյան, երբ նորից հայտնվեց խլուրդը՝ առջևի թաթերով մի մեծ գիրք բռնած:

Անտառապահը վերցրեց գիրքն ու սկսեց թերթել:

Գրքի էջերին անսովոր նշանագրեր ու բույսեր էին նկարված:

- Ահա, այս է, գտա... գտա,- մրմնջաց անտառապահը: Ապա բարձրաձայն սկսեց կարդալ.- «Բոլոր նրանք, ովքեր խախտել են բնության օրինաչափությունները կամ արատավորել են բնությունը՝ պատժվել են այդ նույն բնության կողմից... Ծառ մի՛ կտրիր, ծաղիկներ մի՛ տրորիր, աղբյուրներ մի՛ քանդիր...»:

- Դա մեզ չի վերաբերում,- բողոքեցի ես,- մենք...

- Համբերե՛ք, համբերե՛ք,- մտքերի մեջ խորասուզված՝ ասաց անտառապահն ու շարունակեց թերթել գիրքը:

- Ներեցեք, Դուք քանի՞ տարեկան եք,- հարցրի ես:

- Քանի՞ տարեկան եմ... Ես վաղուց, շա՜տ վաղուց եմ ապրում այս աշխարհում,- հեգնախառը ժպիտով ասաց անտառապահը,- պատուհանի տակ կանգնած այս հզոր կաղնին տեսնո՞ւմ եք:

- Այո,- ես նայեցի հաստաբուն ու սաղարթախիտ կաղնուն:

- Այդ կաղնին մատղաշ մի շիվ էր, երբ առաջին անգամ եկա այստեղ: Նոր էի ավարտել համալսարանի իմաստասիրության բաժինը: Ես տեսա այս անտառն ու սիրահարվեցի: Աշխարհի ոչ մի գրադարանում այնպիսի իմաստուն գիրք չեք գտնի, ինչպիսին բնության գիրքն է... Ահա, գտա, գտա... Այս էջին հազար տարի առաջ ապրած մի անտառապահ գրել է

այսպիսի մի դեպքի մասին... Լռություն... խնդրում եմ, մի՛ խոսեք,- ուրախացած ասաց անտառապահն ու խորասուզվեց գրքի մեջ:

Մենք լուռ նստել ու սպասում էինք նրա խորհրդին:

Անտառապահի տնակը այնպիսի երանելի խաղաղությամբ ու անդորրով էր լցված, ու մենք չէինք զգում, թե ինչպես է ժամանակն անցնում: Չիկարելին աչքերը անտառապահից չէր կտրում, նա լարված նայում էր իմաստուն ու բարի ծերունուն, որը խորասուզված կարդում էր հազարամյա գիրքն ու մատների վրա հաշվումներ կատարում: Վերջապես նա գիրքը զգուշությամբ դրեց մի կողմ:

- Այդ հիվանդությունը դեղերով չի բուժվում,- հանդարտ ու հանդիսավոր ասաց նա:

- Մենք մեծ հույսեր ենք կապել Ձեզ հետ,- ասացի ես,- գոնե ասեք, ո՞ւմ կարող ենք դիմել:

- Դժվար է, շատ դժվա՜ր է... Յուրաքանչյուր մարդ, անկախ տարիքից, պետք է չափի ու կշռի իր կատարած ամեն քայլը, որ հետո չզղջա իր արածների համար... Բայց հուսահատվել պետք չէ: Ձեզ համար փրկության մի ճանապարհ կա: Եվ երբ դուք պատվով անցնեք այդ ճանապարհը, գուցեև ամեն ինչ բարեհաջող վախճան ունենա,- ասաց անտառապահն ու վեր կացավ:

- Մենք պատրաստ ենք այդ ճանապարհն անցնելու,- ես ու Չիկարելին համարյա միասին արտասանեցինք ու ոտքի ելանք:

- Նստե՛ք, նստե՛ք, դեռ ժամանակը չէ,- ասաց անտառապահը:

Մենք նստեցինք: Անտառապահը մի քանի անգամ ծափ տվեց: Բացվեցին փոքրիկ դռնակները, ներս եկան մեզ ծանոթ ոգնին, աղվեսը, խլուրդը, երեք նապաստակ ու սեղանը լցրին բնության բարիքներով:

- Խնդրեմ, համեցե՛ք, ճանապարհ ընկնելուց առաջ կուշտ կերեք,- ասաց անտառապահն ու նստեց սեղանի մոտ: Մենք նույնպես նստեցինք, կերանք շատ համեղ ուտեստներ, որոնք հնարավոր չէ նկարագրել:

- Հիմա կարող եք ճանապարհ ընկնել,- ասաց անտառապահը:

Մենք շնորհակալություն հայտնեցինք տանտիրոջը և դուրս եկանք:

- Դուք պետք է քայլեք իմ հետևից,- խորհրդավոր ձայնով ասաց անտառապահը,- աշխատեք չխոսել, ավելորդ հարցեր չտալ: Հասկանալի՞ է:

- Այո,- պատասխանեցինք մենք:

- Դե՛, գնացինք,- առանց մեզ նայելու՝ հրամայեց անտառապահն ու առաջ ընկավ:

Մենք լուռ հետևեցինք նրան:

Բարկ արևը ուղեկցում էր մեզ ու մութ արահետներով անցնելիս լուսավորում մեր ճանապարհը...

Կեսօրին մոտ էր, երբ մենք դուրս եկանք անտառից ու սարի լերկ լանջով անցանք նրա արևմտյան կողմը:

Զարմանալի գեղեցիկ մի դարավանդ փռվեց մեր դեմ, որի վրա ասես ծաղկանկար գորգ էր փռված: Այդ գորգի համատարած կանաչի վրա տեղ-տեղ վառվում էին կարմիր կակաչների խարույկները... Ու այդ կարմիր-կարմիր բոցերը հանգցնում էին կապույտ անթառամների սառը ժպիտները, որոնք անփութորեն թափված էին կարմիր կակաչների կողքին...

- Այ, այնտեղ է աղբյուրը,- ասաց անտառապահը,- այսպես կգնաք, կհասնեք լեռան գոգում գտնվող աղբյուրին:

- Շնորհակալություն,- անհամբերությամբ ասացինք մենք ու վազեցինք դեպի աղբյո՜ւրը:

- Սպասե՛ք,- մեզ կանգնեցրեց անտառապահը:

- Ներեցե՛ք, խնդրում եմ,- ասացի ես,- մենք անհամբերությունից մեզ կորցրինք... Գիտեք, երեխա է, հուզվում է, ուզում է շուտ տուն գնալ...

- Հասկանալի է,- ժպտաց անտառապահն ու մոտեցավ մեզ,- երբ հասնեք աղբյուրին ու տեսնեք՝ ջուր չկա, չհուսահատվեք: Կնստեք աղբյուրի մոտ ու կսպասեք: Այնտեղ մի ծաղիկ է ապրում, այսօր այդ ծաղկի ծննդյան օրն է: Ծաղիկը դուրս կգա քարերի միջից: Ամեն ակնթարթ նա կփոխի իր գույնը: Համբերությամբ կնայեք նրան, չեք խոսի... Նրա ծննդյան տարեդարձին շատ հյուրեր են լինում... Բզեզներ, թռչուններ, մեղուներ, պարող թիթեռներ: Հանկարծ որևէ բզեզի կամ թռչունի չդիպչեք... Հետո մի սև ամպ կգա, ու տաք անձրև կմաղի: Ահա այդ պահին կմոտենաս ծաղկին ու նրան կասես հետևյալ բառերը... Մո՛տ եկ, ես այդ բառերը պետք է ականջիդ ասեմ, որ, քեզնից բացի, ոչ ոք չիմանա:

Ես ականջս մոտեցրի նրան: Նա երեք սքանչելի բառ ասաց ու խնդրեց, որ ես ոչ մեկի չասեմ: Ես խոստացա սրբորեն կատարել նրա խնդրանքը: Ներեցե՛ք, որ ձեզ նույնպես չեմ կարող ասել այդ բառերը: Ես խոստացել եմ գաղտնիքը պահել, իսկ խոստումը դրժելն ամոթ բան է...

- Ահա այդ բառերն ասելուց հետո ծաղիկը քեզ կհյուրասիրի իր սրտի մեջ պահած նեկտարով,- շարունակեց անտառապահը,- դու ճկույթով կվերցնես նեկտարն ու կդնես լեզվիդ ծայրին, այդ պահին աղբյուրի ակից աղերսագին հառաչանքներ կլսվեն: Կմոտենաս աղբյուրին: Աղբյուրի ակի մեջ կլոր ու ողորկ մի քար կսկսի երկանքի պես պտտվել: Ձեռքդ կդնես այդ քարին ու կասես՝ քա՛ր, ճամփաս մի՛ փակիր: Քարը աղբյուրի ակից դուրս կգա: Ձեր դեմ կբացվի մութ մի խոռոչ, որտեղից ահավոր աղմուկ ու դղրդյուն կլսվեն: Չվախենաք, նե՛րս կմտնեք...

- Հետո՞:

- Հետո ինքներդ կհասկանաք, թե ինչ պիտի անեք... Միայն ասեմ, որ երբ հանդիպեք աղբյուրին, չփորձեք զոռով ջուր վերցնել: Հասկացա՞ք:

- Այո՜, այո՜...

- Դե, բարի ճանապարհ... Ես գնամ իմ գործին: Ցտեսություն,- քարից իջնելով՝ ասաց անտառապահը:

- Ցտեսություն:

Մենք մնացինք մենակ:

Դաշտերն ու անտառները, դարավանդներն ու ձորերը թռչունների երգերով ու կանչերով էին լցված:

Ես և Չիկարելին նայեցինք իրար ու քայլեցինք դեպի փրկարար աղբյուրը:

Փրկություն չկա

Անտառապատ սարի փեշին՝ հազարավոր ծաղիկների ու թփերի մեջ, սքանչելի մի ծաղիկ բացեց իր աչքերն ու նայեց երկնքին: Երկինքը կապույտ-կապույտ էր: Նա առաջին անգամ էր այդքան կապույտ երկինք տեսնում: Հետո նա նայեց կանաչ-կանաչ դաշտերին, ու սիրտը խնդությամբ լցվեց: «Ի՜նչ գեղեցիկ է աշխարհը»,- ինքն իրեն շշնջաց ծաղիկն ու քնքշությամբ օրորեց գլուխը: Հանկարծ բյուրավոր թիթեռներ եկան, շրջապատեցին ծաղկին ու սկսեցին պարել նրա շուրջը: Թիթեռներն իրենց թևիկներով ծափ էին տալիս, բարձրանում վեր, իջնում, նստում ծաղկաթերթիկներին: Շնչասպառ ու հևիհև իրեն ներս գցեց ոսկեթև մի բզեզ ու բարձրաձայն ասաց.

- Շնորհավո՜ր, շնորհավո՜ր, շնորհավո՜ր... դրզ-դրզ-դրզզզ՜զզզ...

- Այդ ո՞ւմ ես շնորհավորում,- հարցրեց ծաղիկը:

- Քեզ, քեզ... չէ՞ որ այսօր քո ծննդյան օրն է: Դրզ-դրզ-դրզզզ՜զզզ...

- Շնորհակալություն,- զգացված շշնջաց ծաղիկն ու շիկնեց:

Հենց այդ պահին թռավ եկավ դեղնակտուցը, նստեց ծառի ճյուղին ու այնպիսի մի երգ հորինեց ծաղկի մասին, որ բոլորն անմիջապես անգիր սովորեցին ու սկսեցին միասին երգել...

Դեռ չէր ավարտվել խմբերգը, երբ ծաղկին այցելության եկան կարմրաթև թիթեռնիկները: Նրանք համբուրվեցին ծաղկի հետ, պարեցին նրա համար ու նստեցին խոտերի վրա, որ մի քիչ շունչ առնեն:

Ամեն տեղ գույների խաղ էր ու խնդություն: Բոլորը ուրախ էին ու երջանիկ, իսկ ամենից շատ ուրախ ու երջանիկ էր ծաղիկը. նրա ծննդյան օրն էր: Ծաղիկը ոչ կապույտ էր, ոչ ճերմակ, ոչ դեղին, ոչ կարմիր, ոչ էլ վարդագույն: Ավելի ճիշտ այդ բոլոր գույները կային նրա թերթիկներին...

Ծաղկի ծննդյան օրվան նվիրված տոնախմբությունը կշարունակվեր, եթե Թեղենիս սարի կատարից սևակնած մի ամպ դանդաղ չսահեր դեպի ծաղիկը: Բոլոր թիթեռներն ու բզեզները, որոնք այդ օրը հագել էին իրենց տոնական զգեստներն ու եկել ծաղկի ծննդյան օրը շնորհավորելու, սև ամպը տեսնելուն պես թաքնվեցին թփերի տակ ու լռեցին:

- Ահա այն ծաղիկը, որի մասին մեզ ասել է անտառապահը,- շշնջացի ես:

- Դե, ի՞նչ եք կանգնել, խմե՛ք նեկտարը,- անհամբերությամբ ասաց Չիկարելին:

- Համբերի՛ր, դեռ ժամանակը չէ,- Չիկարելիին հանգստացրի ես ու նայեցի չորսբոլորս:

Ծաղկից մի քանի քայլ հեռավորության վրա գտնվում էր ցամաքած աղբյուրը: Աշխարհում ցավալի բաներ շատ կան, որ տխրեցնում են մարդկանց, և այդ ցավալի բաներից մեկն էլ երևի այն է, երբ մարդը ցամաքած աղբյուր է տեսնում... Չէ՞ որ մի ժամանակ երկրի ընդերքից բխած այդ հրաշքը կարկաչելով վազել է դաշտերով, զովացրել պապակ հնձվորին, բարություն բաժանել բոլորին: Իսկ հիմա ցամաքել է: Ընդմիշտ լռել...

- Նայի՛ր, նայի՛ր, ամպը մոտենում է մեզ,- ասած Չիկարելին ու ամուր բռնեց ճկույթս:

- Մի՛ վախենա, դա անձրևաբեր ամպ է... Նա բարի է, նրան սպասում են բոլոր ծաղիկներն ու խոտերը,- ասացի ես ու Չիկարելիին դրեցի բաճկոնիս գրպանը:

Ծաղիկը ժպտաց: Ու հենց այդ պահին, ինչպես ասել էր անտառապահը, տաք անձրև սկսվեց: Ես մոտեցա ծաղկին ու նրա ականջին շշնջացի անտառապահի ասած երեք բառերը: Ծաղիկն օրորեց գլուխը, բացեց իր սիրտն ու մի կաթիլ նեկտար կաթեցրեց իր թերթիկներից մեկի վրա: Ես նեկտարը դրեցի լեզվիս ծայրին...

Աղերսագին հառաչանքներ լսվեցին:

Ես վազեցի դեպի աղբյուրի ակը: Եվ ահա այդտեղ էր, որ փոքրացա, հավասարվեցի Չիկարելիին: Նա կանգնած էր իմ կողքին, ինչպես հավասարը հավասարի մոտ: Աղբյուրի ակի մեջ մի կլոր ու ողորկ քար սկսեց երկանքի պես պտտվել: Ես ձեռքս դրեցի այդ քարին ու բարձրաձայն ասացի.

- Քա՛ր, ճամփաս մի՛ փակիր:

Քարը վնգոցով դուրս թռավ աղբյուրի ակից, ու մեր դեմ բացվեց մութ մի խոռոչ:

- Ներս մտնենք,- Չիկարելիի ձեռքից բռնելով՝ նրան ներս քաշեցի ես:

Առաջին վայրկյաններին ոչինչ չէինք տեսնում, գնում էինք՝ մթան մեջ խարխափելով, երբեմն-երբեմն վայր ընկնելով ու վեր կենալով: Հետո մեր դեմ բացվեց նեղ ու քարքարոտ մի ճանապարհ, որը լուսավորված էր կապտաշաղախ լույսով: Մենք մի պահ կանգնեցինք, շունչ առանք:

- Իմ պատճառով Դուք էլ փորձանքի մեջ ընկաք... Ի՞նչ է լինելու, ի՞նչ,- լացը զսպելով՝ մրմնջաց Չիկարելին:

- Հիմա այդպիսի բաներ խոսելու ու մտածելու ժամանակը չէ,- խիստ ասացի ես,- ամենավատ բանը վախկոտ լինելն է: Մարդը նրանով է մեծ, որ հաղթել գիտե... Գնացինք...

Հիմա դժվարանում եմ ասել, թե ինչքան քայլեցինք, երբ հասանք ատամնավոր պարիսպներով շրջապատված մի քաղաքի: Քաղաքի դարպասների մոտ պահապաններ չկային: Մենք անարգել ներս մտանք: Բոլոր տները կաթնագույն քարից էին: Փողոցներում շատրվաններ ու աղբյուրներ կային, բոլորն էլ՝ ցամաք: Բնակիչներն ինձնից ու Չիկարելիից կարճահասակ էին ու արագաշարժ: Մենք դժվարությամբ էինք կարողանում որոշել նրանց տարիքը, որովհետև բոլորը՝ երեխաները, մեծահասակները, կանայք և աղջիկները, միանման էին հագնված: Նրանք խոսում էին զարմանալի մի լեզվով, որի բառերից ոչ մեկը մեր իմացած լեզուներից ոչ մեկին նման չէր, բայց մենք հասկանում էինք նրանց:

- Գուցե մեկնումեկին հարցնե՞նք, ովքե՞ր են սրանք և ի՞նչ են անում այստեղ,- շշնջաց Չիկարելին:

- Սպասի՛ր, դեռ ժամանակը չէ,- ասացի ես ու պինդ բռնեցի Չիկարելիի ձեռքը, որ հանկարծ նա չհեռանա ու չկորչի:

Մենք թեքվեցինք ու հայտնվեցինք լայնահուն մի փողոցում, որի երկու կողմերում արհեստանոցներ ու խանութներ էին: Այդտեղ ոչ միայն աշխույժ առևտուր էր գնում, այլև մեծ գործարքներ էին կատարվում: Դա երևում էր մարդկանց դեմքերից, որոնք ծայրաստիճան լարված էին ու գործնական:

Մենք մտանք մի դարբնոց: Ճիշտն ասած, ես անտարբեր չէի կարող անցնել դարբնոցի մոտով: Խորհրդավոր ինչ-որ բան կա դարբնոցում, որ մարդկանց ստիպում է ժամերով նայել զնդանի վրա շուռումուռ եկող

շիկացած երկաթին: Դարբնոցը ողողված էր ծիրանագույն լույսով: Զնդանի առաջ կանգնած էր պիրկ մկաններով, խոշոր, սև աչքերով մի մարդ ու երկաթ էր կռում:

- Բա՛րև, վարպե՛տ,- ասացի ես:

Դարբինը, առանց գործից կտրվելու, պատասխանեց իմ բարևին ու շարունակեց շիկացած երկաթը ծեծել:

- Ներեցե՛ք, կարելի՞ է մի հարց տալ,- մեջ ընկավ Չիկարելին:

- Ես ձեր հարցերին պատասխանելու ժամանակ չունեմ,- փնթփնթաց դարբինը՝ աշխատանքը չընդհատելով:

- Մենք ծանոթ չենք ձեր քաղաքին, չգիտենք՝ ինչ քաղաք է, ովքե՞ր են այստեղ ապրում,- ասացի ես:

- Ձեր հարցերից և ոչ մեկին ես չեմ կարող պատասխանել: Մեզ արգելված է մտածել: Մեր փոխարեն մտածում է մեր թագավորը: Դուք կարող եք նրան դիմել,- պատասխանեց դարբինն ու երկաթը գցեց քուրայի մեջ:

- Իսկ որտե՞ղ է ձեր թագավորը:

- Նրան կարող եք տեսնել միայն շուկայի հրապարակում:

- Մենք ուզում ենք իմանալ...

- Ցտեսություն,- ժպտաց դարբինը,- ես ոչինչ չգիտեմ...

- Բայց մենք...

- Բարի ճանապարհ,- ասաց դարբինը, շիկացած երկաթը քուրայից հանեց ու սկսեց ծեծել:

Մենք դարբնոցից դուրս եկանք և քայլեցինք դեպի քաղաքային շուկա: Օ՜, ինչ շուկա էր: Ինչե՜ր ասես, որ չէին վաճառում... Ես մոտեցա մեղր ծախողին:

- Ներեցե՛ք, Դուք մեղվապա՞հ եք:

- Ոչ, մեղվապահ չեմ, բայց մեղրն իմն է:

- Իսկ...

- Մենք թագավոր ունենք, որ բոլորիս փոխարեն մտածում է,- նա միայն կարող է Ձեր հարցերին սպառիչ պատասխաններ տալ... Իսկ ես մեղր եմ ծախում... Խնդրեմ, մեղր գնեք, սա աշխարհի ամենահամեղ մեղրն է: Ես ազնիվ մարդ եմ: Խարդախություն չեմ անում, շաքարավազից մեղր չեմ եփում... խնդրեմ, կարող եք համը տեսնել...

- Շնորհակալություն... Բայց ես ուզում եմ մեղրի գինն իմանալ...

- Օ՜, ի՜նչ մեղր է, ի՜նչ մեղր... սրանով կարող եք հազարավոր հիվանդություններ բուժել: Սա օգտակար է լյարդի, աղիների, սրտի, երիկամների, ուղեղի, թոքերի և ուրիշ շատ օրգանների համար... Ինչքա՞ն քաշեմ:

- Շնորհակալություն խորհրդի համար, ես պարզապես ուզում եմ իմանալ, թե ինչ արժե մեկ կիլոգրամ մեղրը,- նորից հարցրի ես:

- Այս մեղրը վերադարձնում է աչքերի լույսը... Առավոտյան սոված փորին պետք է կուլ տալ երեք ճաշի գդալ...

- Ես ուզում եմ գինն իմանալ...

- Մեր թագավորը շատ իմաստուն է, նա...

- Ի՞նչ արժե մեկ կիլոգրամը,- զայրացած հարցրի ես:



- Մեկ կոպեկ,- սթափվելով պատասխանեց մեղր ծախողը:

- Ինչպե՞ս, ինչ արժե՞,- ականջներիս չհավատալով՝ նորից հարցրի ես:

- Մի՛ ափսոսացեք Ձեր մեկ կոպեկը, տվե՛ք և առե՛ք: Սա հոյակապ մեղր է: Կիլոգրամը՝ մեկ կոպեկ...

- Ես հետո կգամ՝ կգնեմ,- կմկմացի ու Չիկարելիի ձեռքը բռնելով՝ հեռացա մեղր ծախողի մոտից: Եվ դեռ մի քայլ չէինք արել, երբ լսեցինք կարագ ծախողի կանչերը.

- Կարա՜գ, կարա՜գ, կարմիր կովի համով կարագ...

Մոտեցանք կարագ ծախողին:

- Այդ կարագը Ձե՞րն է,- հարցրի ես:

- Ո՛չ... Ո՛չ կարագն է իմը, ո՛չ խանութը... ո՛չ կովը... Ես վաճառող եմ... Ի՜նչ կարագ է, ի՜նչ կարագ, համից չեք կշտանա,- դանակի ծայրին մի կտոր կարագ դնելով՝ ուրախ-ուրախ բացականչեց կարագ վաճառողը:

- Իսկ ի՞նչ արժե մեկ կիլոգրամ կարագը:

- Սա աշխարհի ամենահամեղ կարագն է: Սա ոչ միայն սնունդ է, այլև դեղ... Այս կարագը կարող է մեռած մարդուն կենդանացնել...

- Հասկանալի է,- կարագ վաճառողին ընդհատեցի ես,- ուզում եմ իմանալ՝ ի՞նչ արժե մեկ կիլոգրամ կարագը:

- Օ՜, իմ կարագը... Իմ կարագն անգին է: Ճիշտ եմ ասում, ողջ աշխարհում այսպիսի համեղ կարագ չես գտնի... Այսպիսի կարա՜գ...

- Ի՞նչ արժե,- չհամբերեցի ես:

- Կիլոգրամը՝ կես կոպեկ:

- Ինչպե՞ս,- լսածիս չհավատալով՝ նորից հարցրի ես:

- Կես կոպեկ: Ինչքա՞ն կշռեմ: Մե՞կ փութ, երկո՞ւ փութ...

- Շնորհակալ եմ: Հիմա մոտս ման չկա, հետո կգամ՝ կգնեմ:

- Ինչպես ուզում եք,- ժպտաց կարագ վաճառողն ու շարունակեց գովել իր կարագը:

Մենք հեռացանք նրա մոտից:

- Զարմանալի շուկա է,- շշնջաց Չիկարելին,- ամեն բան էժան, առատ: Նայեցեք, այս ի՞նչ խանութ է,- նա ինձ ցույց տվեց մի խանութ, որի ցուցափեղկերին խայտաբղետ պիտակներ էին փակցված: Մենք ներս մտանք: Խանութում պատառոտված ու անպետք զգեստներ էին կախված: Վաճառողուհին անվերջ ժպտում էր:

- Ներեցե՛ք...

- Համեցե՛ք,- ավելի լայն ժպտալով՝ տեղից վեր թռավ վաճառողուհին:

- Ի՞նչ խանութ է սա,- հարցրի ես:

- Հազվագյուտ զգեստների ու կոշիկների ֆիրմային խանութ: Այստեղ գտնվող ապրանքները արտադրվել են արտասահմանյան աշխարհահռչակ ֆաբրիկաներում ու գործարաններում... Օրինակ, այս շրջազգեստը «Մարի Դևիս» ֆիրման է արտադրել:

- Բայց դա անպետք է, հնոտի...

- Կարևորն անունն է: Խնդրեմ, գնեք ահա այս գլխարկները, այս տաբատները, այս փողկապները, այս հրաշալի կոշիկները,- վաճառասեղանին անպետք զգեստներ, գլխարկներ, կոշիկներ լցնելով՝ ասաց վաճառողուհին:

- Օրինակ՝ այս ծակ, կեղտոտ գլխարկն ի՞նչ արժե:

- Այս գլխա՞րկը... Գիտե՞ք սա ինչ գլխարկ է:

- Ի՞նչ գլխարկ է:

- Հրաշք է... Այսպիսի գլխարկ...

- Ես ուզում եմ գինն իմանալ,- զայրացած ասացի ես:

- Զայրույթը սկսվում է հիմարությունից, վերջանում՝ զղջումով... Ես Ձեզ խորհուրդ կտայի երբեք չզայրանալ... Այս գլխարկը աներևակայելի գեղեցիկ գլխարկ է, իմաստուն մարդու գլխին դրվելիք գլխարկ է...

- Ինձ գինն է հետաքրքրում:

- Սա արժե մեկ միլիոն հարյուր քսանհինգ հազար ռուբլի:

- Ինչքա՞ն:

- Մեկ միլիոն հարյուր քսանհինգ հազար...

- Վա՜յ, մայրի՜կ ջան,- գոչեց Չիկարելին ու ձեռքերը խփեց իրար:

- Իսկ այս յուղոտված բաճկոնն ի՞նչ արժե:

- Խնդրում եմ իմ ապրանքը չթերագնահատել: Այս բաճկոնը...

- Ինձ արժեքն է հետաքրքրում:

- Այս բաճկոնը մի ժամանակ հագել է մի արքայազն, որը կարողացել է մեր քաղաքի համար շատ լավ բաներ անել... Ի՜նչ երջանիկ ժամանակներ էին: Ի՜նչ մարդիկ են ապրել մեր քաղաքում: Դե, գնե՛ք, գնե՛ք այս բաճկոնը:

- Գի՛նն ասեք:

- Երկու միլիոն:

- Ի՞նչ,- զարմացա ես:

- Երկու միլիոն:

- Շնորհակալություն... Մենք հետո կանցնենք և կգնենք,- ասացի ես ու Չիկարելիի ձեռքը բռնած՝ խանութից դուրս եկա:

Մի քանի քայլ չէինք արել, երբ ընդառաջ վազեց մի մարդ ու սկսեց ծորուն ձայնով կանչել.

- Համեցե՜ք, համեցե՜ք իմ խանութը, համեցե՜ք, թանկագի՛ն բարեկամներ...

- Շնորհակալություն, մենք շտապում ենք,- ասացի ես և ուզում էի արագ հեռանալ, բայց քաղցրախոս մարդը կանգնեցրեց մեզ:

- Ինչ կլինի, որ իմ խանութն էլ մտնեք: Այնպիսի ապրանքներ ունեմ, որ կհիանաք: Խնդրում եմ, համեցե՜ք իմ խանութը:

- Գուցե մտնե՞նք,- ասաց Չիկարելին:

- Իհարկե, իհարկե, պետք է այցելել... Խնդրեմ, համեցե՛ք, իմ թանկագի՛ն հյուրեր,- մինչև գետին խոնարհվելով՝ ասաց քաղցրախոս վաճառողն ու մեզ առաջնորդեց իր խանութը:

Խանութում ամեն տեսակ աղբ կար. էլ կոտրած աթոռներ, էլ մաշված բազմոցներ, էլ քրքրված ավելներ, ջարդուխուրդ եղած ջահեր, հին լամպեր, պատեֆոններ, մի խոսքով՝ ամեն, ամեն բան...

Մենք ծիծաղեցինք:

- Ընտրեք՝ ինչ ուզում եք,- ասաց վաճառողը:

- Ի՞նչ արժե այս աթոռը,- երեք ոտքերը ջարդած մի աթոռ ցույց տալով՝ հարցրի ես:

- Սա գիտե՞ք ինչ աթոռ է: Սա պատրաստված է այնպիսի փայտից, որի ծառը աշխարհում մեկ-երկու տեղ է աճում: Այս աթոռի վրա ժամանակին նստել է զորավար...

- Հասկանալի է, Դուք ինձ ասեք գինը:

- Մարդկության պատմությունը ոչ այլ ինչ է, եթե ոչ պատերազմների պատմություն: Իսկ ինչի՞ համար են այդ պատերազմները: Ինչի՞: Չգիտե՞ք: Այդ պատերազմները աթոռի համար են: Տիրանալ աթոռի, այսինքն՝ տիրանալ գահի, փառքի, հարստության... Այս աթոռի փայտը բերվել է...

- Ես այդ բոլորը չեմ ուզում իմանալ,- բողոքեցի ես,- ինձ հետաքրքրում է, թե ի՞նչ արժե այս աթոռը:

- Աթոռը, որի գի՞նն ուզում եք իմանալ: Սա աթոռ չէ, գահ է: Նրա վրա բազմողը դառնում է նենգամիտ, ինքնահավան, ագահ, դաժան, ատում է իր ենթականերին, մոռանում է իր հորն ու մորը. մարդատյաց հրամաններ է արձակում, պատերազմներ է հրահրում... Գնեցե՛ք, գնեցե՛ք այս գահը, նստեք նրա վրա ու...

- Բավական է,- համբերությունը հատած՝ բղավեց Չիկարելին,- վերջապես ասե՛ք, ի՞նչ արժե այդ անպետքությունը:

- Հինգ միլիոն վեց հարյուր քառասունութ հատ հնչյուն ոսկի, վաթսունմեկ եվրո... Խնդրեմ,- ժպտաց վաճառողը:

- Շնորհակալություն,- այս անգամ առանց զարմանալու ասացի ես ու որպեսզի աթոռի մասին այլևս որևէ խոսակցություն չլսեմ, ցույց տվեցի հատակին ընկած պղնձյա ծռմռված մի թաս ու հարցրի.

- Իսկ այս թասը ի՞նչ արժե:

- Այս թասին շատ նշանավոր մարդկանց ձեռք է հպվել: Սրանով ջուր է խմել նույն ինքը՝ արքայազն.....

- Մի՛ շարունակեք:

- Ո՛չ, պետք է ասեմ:

- Չենք ուզում լսել:

- Ապրանքի արժեքը պայմանավորված է նրանով, թե այն ինչ-որ ժամանակ ում է պատկանել...

- Ինձ հետաքրքրում է դրա գինը:

- Խնդրեմ, տվե՛ք տասնյոթ հազար եվրո ու տարե՛ք,- առանց ամոթ զգալու ասաց վաճառողն ու սեղանի վրա դրեց ծռմռված թասը:

- Շնորհակալություն... Ճիշտն ասած՝ մենք հիմա ոչինչ չենք ուզում գնել, հետո կգանք և անպայման Ձեր խանութից մեր ցանկացած իրը կգնենք: Ցտեսություն:

- Ցտեսություն,- մինչև գետին խոնարհվելով՝ ասաց վաճառողը: Մենք խանութից դուրս եկանք: Ճանապարհին Չիկարելին ինձ ասաց.

- Այստեղ կարելի է շատ լավ ապրել: Պետքական ապրանքները համարյա ձրի են, իսկ անպետքները՝ թանկ: Դուք ի՞նչ կարծիքի եք:

- Ես... ճիշտն ասած, չեմ ուզում միանգամից կարծիք հայտնել: Ո՞վ գիտե՝ ինչո՞ւ է այդպես, պետք է մի քիչ էլ ապրենք այստեղ, որ հասկանանք ինչն ինչոց է... նստենք այս զբոսայգում,- առաջարկեցի ես:

- Նստենք,- համաձայնեց Չիկարելին:- Այն է՝ ուզում էինք մտնել զբոսայգի, երբ աշտարակի զանգերը տագնապահար ղողանջեցին: Զանգերից հետո լսվեցին շեփորահարություն ու թմբուկների համաչափ զարկեր: Փողոցները լցվեցին մարդկանցով, ովքեր գլուխները կախ վազում էին դեպի հրապարակ: Մենք էլ խառնվեցինք նրանց ու սկսեցինք վազել:

Հրապարակ տանող փողոցով քայլում էր հոծ մի թափոր, որի առջևից գնում էին շեփորահարներն ու թմբկահարները, նրանցից հետո գալիս էին սրերով ու նիզակներով զինված զինվորները: Զինվորներից հետո ձեռքերն ու ոտքերը շղթաներով կապված մի մարդ էր քայլում, որը նայում էր չորս կողմն ու բարձրաձայն խոսում ծանոթների հետ: Այդ մարդու դեմքից երևում էր, որ շատ հանցանքներ է գործել... Հանցագործի հետևից քայլում էր ոտքից գլուխ կարմիր հագած դահիճը՝ ուսին լայնշեղը կացին: Դահճից հետո գալիս էին սվինավոր զինվորները, որոնք աչալուրջ հետևում էին ոչ միայն հանցագործին, այլև իրենցից հետո եկող թագավորին ու թագուհուն, նախարարներին ու դատավորներին: Նրանց մեծ մասը տոզած փորերով, հաստ վզերով մարդիկ էին, կրծքները՝ բազում-բազում մեդալներով ու շքանշաններով զարդարված:

- Նայի՛ր, նայի՛ր թագուհուն, ծիծաղում է ու անվերջ նայում թագավորին,- Չիկարելիին ուսերիս դնելով՝ ասացի ես:

Չիկարելին սկսեց ծափ տալ, բղավել: Ես նրան անմիջապես իջեցրի ու ասացի.

- Քեզ հանգի՛ստ պահիր, որ մեզ չնկատեն: Դա երևի լավ չի լինի մեզ համար:

- Ներեցե՞ք,- աչքերը խոնարհելով՝ ասաց Չիկարելին ու լռեց:

Ես նայեցի թագավորական թափորին ու տեսա, թե ինչպես էր թագուհին կսմթում թագավորի գլխին հովանոց պահողներից մեկին, որը հանդգնել էր հովանոցը մի քիչ թեք պահել, և արևի մի շող պատահաբար ընկել էր թագավորի ճակատին: Թագավորական թափորից հետո քայլում էին կշեռք ու սուր բռնած մի խումբ մարդիկ, որոնց աչքերը կապված էին սև շորերով: Դրանք արդարադատության նախարարության ներկայացուցիչներն էին՝ դատավորներն ու դատախազները, պետական մեղադրողներն ու դատապաշտպանները, իրավագետներն ու մարդու իրավունքի պաշտպանները: Նրանց շքերթը գլխավորում էր արդարադատության նախարարը, որը շատ նման էր շղթայակապ հանցագործին: Արդարադատության ներկայացուցիչներից հետո գալիս էին գրողները, դերասանները, գիտնականները, նկարիչները: Նրանք քայլում էին գլուխները բարձր, հայացքները՝ թագավորին հառած... Բոլորը, բոլորը զարմանալիորեն լուռ էին ու տխուր, բացի թագուհուց, որն անվերջ ինչ-որ բան էր փսփսում թագավորի ականջին ու ծղրտում: Թագավորը տմբտմբացնում էր գլուխը, արմունկով թեթևակի խփում թագուհու կողին: Թագուհին վեր-վեր էր թռչում ու քրքջում: Ինչ-որ մեկը շարքերի միջից բղավեց.

- Կեցցե՞ն մեր պայծառափայլ թագավորն ու թագուհին, ուռռա՞...

Քայլողներից ոչ ոք ո՛չ գլուխը բարձրացրեց, ո՛չ բերանը բացեց, բայց ողջ հրապարակը լցվեց խելացնոր ուռաներով ու խնդության բացականչություններով:

Մենք ապշած ու մոլորված նայեցինք չորս կողմը:

- Այս ովքե՞ր են բղավում,- շշուկով հարցրեց Չիկարելին:

- Այնտեղ՝ պատերի տակ, մի ամբողջ բանակ է կանգնած, նրանք են ուռա բղավողները,- ասացի ես ու Չիկարելիին բարձրացրի, որ նա տեսնի բղավողներին:

Խառնամբոխը, գետի պես հանդարտ հոսելով, վերջապես լցվեց քաղաքի հրապարակը: Արտաքուստ հանդարտ ու հնազանդ ժողովուրդը հազիվ էր զսպում իր զայրույթը: Դա երևում էր նրանց հայացքներից ու կապտած շրթունքներից:

- Կեցցե՞ մեր թագավորը,- գոչեց նախարարներից մեկն ու սկսեց ծափահարել:

Այնպիսի աղմուկ ու աղաղակ բարձրացավ, թվաց, թե երկինքը փուլ եկավ: Թագավորը բարձրացրեց ձեռքը: Բոլորը լռեցին:

Արդարադատության նախարարն իր ներկայացուցիչների հետ բարձրացավ հրապարակում կառուցված հարթակի վրա: Դահիճը կարծես դրան էր սպասում: Անմիջապես արձակեց հանցագործի ձեռքերն ու նրան տարավ կախաղանի սյան մոտ:

- Հարգարժա՛ն քաղաքացիներ,- կոկորդը պատռելով՝ բղավեց արդարադատության նախարարը,- մենք մահապատժի ենք ենթարկում մի մարդու, որը համարձակվել է ավել-պակաս խոսել մեր թագավորի ու

թագուհու մասին: Նա մեր իմաստուն թագավորին ապուշ է անվանել, իսկ բյուրեղի պես մաքուր թագուհուն՝ անբարոյական: Մենք թույլ չենք տա, որ այդպիսի մարդը ապրի մեր շարքերում: Արդարադատության նախարարությունը, հետամուտ լինելով այս մարդու վնասակար գործունեությանը, կարծում է, որ նրան պետք է կախել... Կեցցե՜ արդարադատությունը, կեցցե՜ն մեր իմաստուն թագավորն ու վսեմափայլ թագուհին...

Այստեղ արդարադատության նախարարի ձայնը կտրվեց: Նա իրար հետևից մի քանի բաժակ ջուր խմեց, բայց ձայնը այդպես էլ չբացվեց: Նա թափահարեց ձեռքն ու խոժոռ նայեց հանցագործին:

Հենց այդ պահին հնչեցին շեփորները, թնդացին թմբուկները: Դահիճը հանցագործին բարձրացրեց աթոռի վրա, ուզում էր օղակը պարանոցին անցկացնել, երբ լսվեց նախարարի ձայնը.

- Սպասե՛ք,- բղավեց նա:

Դահիճը հանցագործին իջեցրեց աթոռից:

- Բոլոր նրանք, ովքեր կհանդգնեն թեկուզ չնչին դժգոհություն հայտնել մեր պետությունից, մեր պետական ապարատից, մեր կարգերից, մեր օրենքներից՝ կարժանանան այս բախտին... Կեցցե՜ արդարությունը, կեցցե՜ մեր թագավորը... Ուռռա՜...

- Ուռռա՜, ուռռա՜, ուռռա՜...- ահեղաձայն գոչեցին պատերի տակ կանգնած զինվորները:

Նորից հնչեցին շեփորները, թնդացին թմբուկները, նորից դահիճը հանցագործին բարձրացրեց աթոռի վրա, կախաղանի պարանի օղակը գցեց վիզը...

Արդարադատության նախարարը բարձրացրեց ձեռքը:

Քար լռություն տիրեց:

- Հանցագո՛րծ, ասա՛ քո վերջին խոսքը, սրիկա՛:

Հանցագործը ծիծաղեց ու բարձրաձայն ասաց.

- Ես ոչինչ չեմ ուզում ասել:

- Ապրե՛ս,- ասաց արդարադատության նախարարը,- երբեմն-երբեմն հիմարներ են հանդիպում, ովքեր մեռնելուց առաջ՝ կախաղանի սյունին գամված, երկար ճառեր են ասում ազատության, արդարության, ճշմարտության մասին: Դու խելոք հանցագործ ես: Դու իրո՞ք ոչինչ չունես ասելու: Գոնե մի բառ, մի ցանկություն...

- Ունեմ, բայց չեմ ասի,- հայտարարեց հանցագործը:

- Ինչո՞ւ:

- Արհամարհում եմ ձեր թագավորին, թագուհուն, ձեզ, ձեր պետությունը...

- Վճիռն ի կատար ածել,- ճչաց արդարադատության նախարարը։

Դահիճը ոտքով խփեց աթոռին։ Հանցագործը՝ մեկ ակնթարթ պարանից կախված ճոճվեց, հետո թրմփոցով փռվեց տախտակամածին։

Ամբոխը հռհռաց։

- Ինչո՞ւ չկախվեց,- կատաղած բղավեց արդարադատության նախարարը։

- Կախե՛լ , կախե՛լ, կախե՛լ,- ճչաց թագավորը։

- Ավազակնե՞ր... դավաճաննե՞ր... Կախե՞լ,- արդարադատության նախարարին ապտակելով՝ բղավում էր թագուհին։

- Հիմա, հիմա կկախենք,- վախից դողդողալով՝ ասաց նախարարն ու հարձակվեց դահճի վրա։

- Ապո՛ւշ։ Նորի՛ց կախիր,- հրամայեց նա։

- Հիմա, հիմա,- թուքը կուլ տալով՝ ասաց դահիճը, բռնեց հանցագործին, բարձրացրեց աթոռի վրա, կախաղանի օղակը նորից գցեց վիզն ու սպասեց հրամանի։

Ամբոխը, որ ամբողջ ժամանակ հռհռում էր, նորից պապանձվեց։ Արդարադատության նախարարը մոտեցավ թագավորին։

- Լուսաշո՛ղ մեր հանճար, նորի՞ց կարդամ մեղադրական ճառը, թե՞...

- Հարկավոր չէ,- մրթմրթաց թագավորը։

- Կախե՛լ,- գոչեց արդարադատության նախարարը։

Հնչեցին շեփորները, թնդացին թմբուկները, դահիճը ոտքով խփեց աթոռին, որի վրա կանգնած էր հանցագործը։ Հանցագործը նորից պարանից կախված մի ակնթարթ ճոճվեց ու նորից թրմփոցով փռվեց տախտակամածին։

Ամբոխը սկսեց քահ-քահ հռհռալ։

- Այս ի՞նչ անամոթություն է,- կատաղած բղավեց թագավորը,- արդարադատության նախարարին կախել։

Ասես գետնի տակից հայտնվեցին պիրկ մկաններով մի քանի մարդիկ ու հարձակվեցին արդարադատության նախարարի վրա, ոլորեցին նրա ձեռքերը, ուզում էին քարշ տալ կախաղանի սյան մոտ, երբ հանկարծ լսվեց թագուհու ձայնը.

- Ապուշնե՛ր, բա՛ց թողեք այդ կաշառակեր ու քծնող մարդուն... Բոլորովին հիմարացել եք,- թագավորին դառնալով՝ գոչեց նա։- Մեր նախարարը ազնիվ կաշառակեր է։

- Բա՛ց թողեք,- հրամայեց թագավորը։

Պիրկ մկաններով մարդիկ անմիջապես բաց թողեցին արդարադատության նախարարին, որն ուղղեց զգեստները, նայեց թագուհուն, ժպտաց ու իր մոտ կանչեց դահճին։

- Ինչո՞ւ է այդ մարդը կախաղանի պարանից ցած ընկնում,- հարցրեց նախարարը։

- Գլուխը փոքր է, պարոն նախարար, պլստալով օղակից դուրս է գալիս,- տերևի պես դողդողալով՝ զեկուցեց դահիճը։

- Իսկ ի՞նչ է, մեր քաղաքում մեծ գլխով մարդ չկա՞ որ կախենք,- հարցրեց արդարադատության նախարարը։

- Բայց նրանցից ոչ ոք հանցանք չի գործել,- ասաց դահիճը։

- Այսօր չի գործել, վաղը կգործի։ Բերել դրանցից մեկին ու կախել,- ոտքը գետնին խփելով՝ հրամայեց նախարարը։

- Իսկ սրան ի՞նչ անենք,- հանցագործին մատնացույց անելով՝ հարցրեց դահիճը։

- Պարգևատրեք արիության մեդալով...

- Լա՜վ... լա՜վ, լա՜վ...- մինչև գետին խոնարհվելով՝ ասաց դահիճը, մոտեցավ հանցագործին, արձակեց նրա ձեռքերն ու թաց թողեց։

Արդարադատության ու ոստիկանության ներկայացուցիչները կայծակի արագությամբ գործի անցան, և չէր անցել մի քանի վայրկյան, երբ քաշքշելով, ծեծելով կառափնարան հանեցին մեզ ծանոթ դարբնին։

- Սրանից մեծ գլխով մարդ չգտանք,- զեկուցեցին թագավորի անձը պաշտպանողներից երկուսը։

- Լավ է, շատ լավ է,- երջանիկ ժպտաց արդարադատության նախարարը։

- Ես մեղք չեմ գործել, ինչո՞ւ եք ինձ կախում,- աղեկտուր բղավում էր դարբինը։

- Դրա ձայնը կտրի՛ր,- արդարադատության նախարարի կոճերին խփելով՝ ասաց թագավորը։

Արդարադատության նախարարը վազեց դեպի կառափնարան, կանգնեց իր տեղն ու սկսեց կարդալ մեղադրանքը։

- Հարգարժա՛ն քաղաքացիներ, մենք մահապատժի ենք ենթարկում մի մարդու, որը համարձակվել է ավել-պակաս խոսել մեր թագավորի ու թագուհու մասին,- թագավորին ցույց տալով՝ ասաց նախարարը,- նա մեր անբան թագավորին քչակեր ու քչախոս է անվանել, լկտի ու մեծամիտ թագուհուն առաքինության ու համեստության տիպար է համարել։ Արդարադատության նախարարությունը, հետամուտ լինելով այս մարդու վնասակար գործունեությանը, որոշեց նրան մահապատժի ենթարկել։ Կեցցե՜ արդարությունը, կեցցե՜ մեր տխմար թագավորը, կեցցե՜ մեր մեծամիտ թագուհին... Ուռռա՜...

Ահեղագոչ ուռան խլացրեց բոլորին, նորից հնչեցին շեփորները, թնդացին թմբուկները։

Դահիճը դարբնին կանգնեցրեց աթոռին, կախաղանի օղակը անցկացրեց պարանոցին և այն է՝ ուզում էր ոտքով խփել աթոռին, երբ Չիկարելին ձեռքիցս պոկվեց ու վազեց դեպի կառափնարան:

- Հիմարնե՜ր,- բղավեց նա,- ինչո՞ւ եք այս ազնիվ մարդուն կախում: Քաղաքացինե՛ր,- ժողովրդին դառնալով՝ բղավեց Չիկարելին,- հարկավոր է պայքարել այս կարգերի դեմ... հարկավոր է...

- Սա ո՞վ է,- իր անձնապահպանին դիմելով՝ գունատվեց թագավորը:

- Մենք չենք ճանաչում,- պատասխանեց անձնապահպանը:

- Բռնե՜լ,- ճչաց թագուհին:

Ոստիկաններն ու արդարադատության ներկայացուցիչները խառնվեցին իրար: Չիկարելին ճարպկորեն ծլկեց: Ես գլխապատառ հասա նրան, բռնեցի ձեռքն ու մտա ամբոխի մեջ: Ամբոխը կուլ տվեց մեզ:

- Բռնե՜լ, կախե՜լ, սպանե՜լ,- գոչում էին ոստիկաններն ու հարվածներ տեղում ամբոխի վրա, որ ամեն կերպ աշխատում էր մեզ թաքցնել...

- Պետք է փախչել,- Չիկարելիի ականջին շշնջացի ես,- այլապես ընդմիշտ կմնանք այստեղ:

- Բայց ինչպե՞ս կարող ենք փախչել, երբ խեղճ դարբինը փորձանքի մեջ է,- ասաց Չիկարելին,- պետք է մի կերպ ազատել նրան:

- Դու ճիշտ ես,- Չիկարելիին հանգստացրի ես,- բայց մենք անկարող ենք այդ անել:

- Իսկ ինչո՞ւ է այստեղ ամեն բան այսպես կեղծ ու սուտ,- հարցրեց Չիկարելին:

- Այն երկրում, որտեղ արժեքները խախտված են, այնտեղ արդարություն և ճշմարտություն լինել չի կարող,- ես դեռ խոսքս չէի վերջացրել, երբ մի խումբ մարդիկ մոտեցան մեզ ու արցունքոտ աչքերով ասացին.

- Շա՛տ, շա՛տ շնորհակալ ենք:

- Ինչի՞ համար,- հարցրեց Չիկարելին:

- Դարբնին չկախեցին... Նրա փոխարեն հիմա կախում են մեկ ուրիշի...

- Ահա չարախոսները, ահա՛ մեր թշնամիները,- մեզ նկատելով՝ բղավեց մի ոստիկան և գնաց ուրիշ ոստիկանների կանչելու:

- Փախե՜ք, շո՛ւտ փախեք,- ասացին այս ու այն կողմից ու մեզ ցույց տվեցին քաղաքից դուրս գալու ամենակարճ ճանապարհը:

Մենք ծուռտիկ-մուռտիկ փողոցներով հասանք քաղաքի դարպասներին ու քաղաքից դուրս եկանք...

- Բռնե՜լ, բռնե՜լ, բռնե՜լ,- հեռվից մեզ էին հասնում ոստիկանների ու արդարադատության ներկայացուցիչների ձայները...

Բայց նրանք մեզ բռնել այլևս չէին կարող: Մենք հեռացել էինք ու գնում էինք դեպի աղբյուրը:

Անգին քարերի ագրաբան

Այստեղ՝ աղբյուրի այս հունում, ո՛չ արևածագ կա, ո՛չ մայրամուտ, ո՛չ աստղազարդ երկինք, ո՛չ յոթնագույն ծիածան, ո՛չ ցերեկ, ո՛չ գիշեր... Լույսն էլ լույս չէ, այլ կապտաշաղախ մշուշ, որի ցոլքերում ամեն ինչ դառնում է անստվեր ու միագույն...

Մենք լուռ քայլում էինք անդնդախոր վիհերի եզրերով, մտնում մութ անձավներ, դուրս գալիս, անցնում մեծ ու փոքր ճահճուտների մոտով, խարխափում անվերջ թվացող քարե անապատներում...

Վերջապես հեռվում անսովոր լույսի մի շեղբ ցոլաց, որն ադամանդե թրի պես պատռեց մշուշը: Մենք գնացինք դեպի այդ լույսը, ու մեր դեմ բացվեց կաթնագույն քարից կառուցված հոյակերտ մի դղյակ:

- Ի՜նչ գեղեցիկ է,- հիացած բացականչեց Չիկարելին,- գուցե մտնե՞նք,- անհամբերությամբ ասաց նա ու վազեց դեպի մուտքը:

- Սպասի՛ր, ո՞ւր ես վազում, նրա ձեռքը բռնելով՝ ասացի ես,- մենք անծանոթ երկրում ենք գտնվում և չգիտենք՝ ում կարող ենք հանդիպել: Առաջին հերթին պետք է իմանանք, թե ինչ է սա:

- Ուրեմն հե՞տ դառնանք,- թախծոտ աչքերը վրաս հառեց Չիկարելին:

- Մենք այլևս չենք կարող հետ դառնալ, բայց մինչև ներս մտնելը հարկավոր է իմանալ, թե ովքեր են ապրում այնտեղ:

- Ինչպե՞ս կարող ենք իմանալ,- հարցրեց Չիկարելին։

- Կմոտենանք դարպասին ու կծեծենք, գուցե որևէ մեկը կհայտնվի,- պատասխանեցի ես ու մոտեցա դարպասին։

Դղյակի գմբեթը, որ մենք տեսել էինք հեռվից, ոսկուց էր, իսկ նրա վրա դրված ծայրաձողը՝ աղամանդից, որի վրա հայելիների օգնությամբ արևի շողեր էին ընկնում։

- Սա երևի այս երկրի արքայի պալատն է,- ասաց Չիկարելին։

- Չեմ կարծում,- ասացի ես։

- Ինչո՞ւ,- հարցրեց Չիկարելին։

- Եթե արքան ապրեր այստեղ, ապա դարպասի մոտ զինված պահապաններ կլինեին։

- Իսկապես... Հե՜յ, հե՜յ, հե՜յ, ո՞վ կա այդտեղ,- կանչեց Չիկարելին։ Նրա ձայնը արձագանքվեց ամայության մեջ ու մարեց։

Ես նորից ծեծեցի դարպասը։ Դարձյալ ոչ ոք չպատասխանեց։

- Երևի լքված պալատ է,- եզրակացրեց Չիկարելին։

Ես գետնից ողորկ մի քար վերցրի ու սկսեցի դարպասը նորից ծեծել։ Ինչ-որ անհայտ տեղից հանկարծ լսվեց սոխակի դայլայլ հիշեցնող մի ձայն։

- Ո՞վ է։

- Մենք ենք,- ուրախացած բղավեցինք մենք։

- Դուք ովքե՞ր եք։

- Հյուրեր ենք,- ասացի ես։

- Ես հյուրերի չեմ սպասում... Որտեղից եկել եք, այնտեղ էլ գնացեք,- անտարբեր ասաց ձայնն ու լռեց։

Մենք շվարած նայեցինք իրար։ Ի՜նչ անել, թողնել ու հեռանա՞լ։ «Ո՛չ, պետք է նորից ծեծել դարպասը»,- որոշեցի ես ու սկսեցի դարպասը ծեծել։

- Ի՞նչ եք ուզում,- զայրացած հարցրեց նույն ձայնը։

- Մենք ուզում ենք հանդիպել Ձեզ,- ասաք Չիկարելին,- խնդրում ենք մի քանի րոպեով ընդունել մեզ։

- Տե՜ր Աստված, այս ի՞նչ աշխարհ է, տանդ մեջ էլ չես կարող հանգիստ ապրել։ Սպասե՛ք, հիմա դուռը կբացեմ,- դժգոհ ասաց ձայնն ու լռեց։

Քիչ հետո երկաթե դարպասը ճռնչոցով բացվեց։

- Նե՛րս մտեք։ Բայց հիշե՛ք, ոչինչ չխնդրեք, ոչ մի բանի ձեռք չտաք, այլապես ձեզ կվռնդեմ։ Հասկանալի՞ է։

- Այո՛,- ասացինք մենք ու սկսեցինք աստիճաններով բարձրանալ։

Ճիշտն ասած, ես կասկածանքով ու վախով էի ոտք դնում յուրա-

քանչյուր աստիճանի: Մտածում էի, որ հանդիպելու ենք կախարդի կամ որևէ չար արարածի, որը մեզ նեղություն է պատճառելու: Երևի կախարդական ոչ մի դղյակ կամ արքայական ոչ մի պալատ այնքան շքեղ ու հրաշակերտ չէր, որքան այդ պալատը: Հիացմունքից մենք պապանձվեցինք ու կանգնած մնացինք մեր տեղերում: Ադամանդե ու զմրուխտե ջահերից առկայծող լույսերը ծիածանագույն ցոլքեր էին սփռում հակինթապատ հատակի վրա:

- Ինչո՞ւ եք կանգնել, գնանք,- ձեռքիցս քաշեց Չիկարելին: Ես սթափվեցի:

- Իսկապես... Գնանք... Բայց ո՞ւր,- հարցրի ես:

- Առա՛ջ եկեք, ի՞նչ եք կանգնել,- ասաց մեր դեմ հայտնված բարետես մի մարդ, որ բարուրված էր թանկագին քարերով զարդարված թիկնոցի մեջ: Նրա գլխին դրված փաթթոցի ճակատին շողշողում էր սքանչելի մի զմրուխտ:

- Բարի՛ ողջույն,- ասացինք մենք:

- Բարև՛ ձեզ, եղբայրնե՛ր,- սոխակի դայլայլի նմանվող ձայնով մեզ ողջունեց բարետես մարդը:

- Ի՞նչ եք կամենում:

- Ոչինչ...,- զարմանքից մեզ կորցրած՝ կմկմացինք մենք:

- Ի՞նչ է նշանակում «ոչինչ»,- հարցրեց բարետես մարդը,- եթե ասելու բան ունեք՝ ասեք, իսկ եթե չունեք՝ ինչո՞ւ եք եկել:

- Մենք ուրախ ենք Ձեզ հետ ծանոթանալու համար,- ձեռքս նրան մեկնելով՝ ասացի ես:

- Ես նույնպես ուրախ եմ,- դժկամորեն ձեռքն ինձ մեկնեց նա,- բայց դրանից ի՞նչ օգուտ:

- Դուք նման եք թագավորի... Ես Ձեզ տեսել եմ... Անցյալ տարի հեռուստացույցով մի կինոնկար էին ցույց տալիս, Դուք, գահին նստած, երգում էիք... Ազնիվ խոսք, ես առաջին անգամ եմ իսկական թագավոր տեսնում,- աչքը բարետես մարդուց չկտրելով՝ ասաց Չիկարելին:

- Թագավո՞ր... հիմարությո՜ւն: Հեռուստացույց... Դա ի՞նչ դատարկ բան է: Ես դրանցից ոչ մեկի հետ գործ չունեմ: Բացի դրանից, ձեր այդ քնձռոտ թագավորներին ես կարող եմ մի քարով առնել ու ծախել: Դուք ո՞ւմ հետ եք ինձ համեմատում,- զայրացավ բարետես մարդը:

- Ներեցե՛ք, մենք չէինք ուզում Ձեզ վշտացնել,- մեջ ընկա ես,- մենք եկել ենք այստեղ, որ...

- Ա՜խ, դուք երևի առևտրականնե՞ր եք...

- Մենք եկել ենք...

- Առևտո՞ւր անելու... այսինքն՝ խաբելու... Բայց ես ձեզ զգուշացրել

եմ. ոչինչ չպետք է ուզեք և ոչ մի բանի չպետք է ձեռք տաք,- խիստ ասաց բարետես մարդը,- հետևե՛ք ինձ, բոլոր դեպքերում ձեզ ցույց կտամ իմ քարերը... Ես նորից եմ զգուշացնում. որևէ բանի ձեռք չտաք և հանկարծ որևէ բան չխնդրեք:

- Մենք դաստիարակված մարդիկ ենք,- ասացի ես:

- Մեզ ոչինչ հարկավոր չէ,- ժպտաց Չիկարելին:

- Բոլորն այդպես են ասում, բայց երբ անսովոր բան են տեսնում, անմիջապես ուզում են ձեռք տալ... Խնդրեմ, հետևե՛ք ինձ,- բարետես մարդը քայլեց դեպի ապարանքի խորքերը:

Մենք հետևեցինք նրան:

Նա բացեց երկաթակոփ մի դուռ. մտանք ճերմակ, մարմարե սյունազարդ մի դահլիճ: Դահլիճում տարբեր մեծության ու բարձրության պատվանդանների վրա անգին քարեր էին դրված, որոնք շողշողում էին հեքիաթային գույներով:

- Այս զմրուխտը իր գեղեցկությամբ ու մեծությամբ աշխարհի հազվագյուտ քարերից է: Կարծեմ ինձնից բացի, ուրիշ ոչ ոք այսպիսի գանձ չունի: Օրվա տարբեր ժամերին այն տարբեր երանգներ ու ցոլքեր է արձակում,- իր հասակից հինգ-վեց անգամ մեծ զմրուխտի մի զանգվածի մոտենալով՝ ասաց բարետես մարդն ու շարունակեց.

- Այս զմրուխտը իր մեջ թաքցնում է ընդերքի բոլոր գաղտնիքները: Բավական է մատով հպվեմ, անմիջապես ուրիշ երանգ է ստանում: Եվ այդ հրաշքը, այդ գանձն ինձ է պատկանում: Միայն ինձ...

Նա մատով թեթևակի հպվեց քարին, ու քարից կանաչավառ շողեր ժայթքեցին, որոնք խելացնոր խաղերով պարեցին պատերի, հատակի ու առաստաղի վրա:

Մենք զարմանքից շնչահեղձ էինք լինում:

- Այստեղ ուրիշ քարեր էլ կան, որոնց մասին ոչ ոք դեռ չգիտե, որոնց նմանը ոչ ոք դեռ չի տեսել: Դրանք ես եմ հայտնագործել... Ահա այդ քարերը,- խնդությունից շողացող աչքերով ասաց նա, մոտեցավ սքանչելի երանգներ ունեցող քարերի մի կույտի,- ի՛մ սիրելիներ, ի՛մ թանկագին քարեր,- մրմնջաց նա ու սկսեց մեկ-մեկ համբուրել քարերը,- դուք իմ կյանքն եք, իմ ուրախությունը, իմ երջանկությունը: Լսե՛ք,- դիմեց մեզ,- ի՞նչ եք կանգնել, ծնկի՛ իջեք իմ քարերի առաջ: Ծնկի՛ իջեք ու աղոթե՛ք:

- Քարերի առաջ ինչո՞ւ պիտի ծնկի իջնենք ու աղոթենք,- ուսերը թոթվեց Չիկարելին:

- Այո՛, քարեր են, դու ճիշտ ես, բայց ինչպիսի՜ քարեր... Անգին քարե՜ր: Սրանք ադամանդից էլ, զմրուխտից էլ, նռնաքարից էլ, ալմաստից էլ, հակինթից էլ, մարգարիտից էլ, մեղեսիկից էլ, մարջանից էլ թանկ

են: Սրանցով կարելի է ողջ աշխարհը գնել... Ես, ես եմ այս քարերի տերը... Ես եմ այս քարերի արքան... Դե շուտ, ծնկի՛ իջեք նրանց առաջ ու երկրպագե՛ք...,- գոչեց բարետես մարդն ու քարերը սեղմեց կրծքին:

- Ի՞նչ կարիք կա այդպես հուզվելու: Այդ քարերը միշտ Ձերն են, և ոչ ոք Ձեր ձեռքից այն չի խլում...

- Խլե՞լ: Իմ ձեռքի՞ց... Ավելի շուտ կյանքս կտամ, քան քարերս,- տեղից վեր թռավ նա ու դիմեց մեզ,- եկե՛ք իմ հետևից, ես ուզում եմ ձեզ մի ուրիշ սրահ տանել:

- Բայց մենք այստեղ ենք եկել, որ...

- Կարևոր չէ, թե ինչի համար եք եկել: Կարևորն այն է, որ դուք տեսնում եք իմ գանձերը: Գոնե ձեր աչքերը կհագենան...

- Բայց մենք...

- Լռե՛ք:

- Մենք ուզում ենք Ձեզ ասել, որ այլևս չենք...

- Հետևե՛ք ինձ,- հրամայաբար ասաց նա ու մանր քայլերով մոտեցավ մի մեծ դռան:

Դուռն ինքնիրեն բացվեց:

- Համեցե՞ք, համեցե՞ք, չտեսնե՛ր,- կանչեց նա:

Մենք, առանց խոսք ասելու, ներս մտանք:

Ո՜վ զարմանք... Այստեղ բոլորովին ուրիշ թագավորություն էր, ուրիշ աշխարհ: Սրահում հեքիաթային մեծության շողշողուն քարեր կային: Այդ քարերից լույս էր ճառագում:

- Այս անգին քարերի և ոչ մի տեսակը դեռ այնտեղ՝ վերևում, հայտնի չէ,- մատը վեր տնկելով՝ ասաց բարետես մարդը,- ես այս քարերի արքան եմ, անգին քարերի արքան... Կգա ժամանակ, երբ աշխարհի բոլոր մարդիկ կխոնարհվեն իմ առաջ... Ես նրանց կարհամարհեմ, կատեմ, կստորացնեմ... Ես հարուստ եմ, հարո՜ւստ...

- Բայց ի՞նչ եք անելու այս քարերը,- հարցրեց Չիկարելին:

- Ինչպե՞ս թե ինչ եմ անելու,- ծիծաղեց բարետես մարդը: - Լսե՛ք, դուք ի՞նչ է, այս աշխարհից չե՞ք: Մի չնչին զմրուխտի համար մարդիկ իրար կոկորդ են կրծում... Իսկ դուք հարցնում եք, թե ինչ եմ անելու... Ես դառնալու եմ բոլոր ժամանակների ու բոլոր տերությունների թագավորը... Իմ առաջ խոնարհվելու են բոլոր մեծերն ու փոքրերը... Ես պիտի նստեմ աշխարհի գահին:

- Ներեցե՛ք, կարելի՞ է Ձեզ մի հարց տալ,- նրան մոտենալով՝ հարցրեց Չիկարելին:

- Խնդրեմ, խնդրեմ, ես պատրաստ եմ ձեր բոլոր հարցերին պատասխանել:

- Դուք ինչպե՞ս եք ձեռք բերել այս քարերը։

- Ուզում եք իմանալ ազնի՞վ, թե՞ անազնիվ միջոցներով եմ կուտակել։ Այնպես չէ՞։

- Այո՛։

- Օ՜, իմ կյանքը... Իմ կյանքը խաբեությունների ու անազնիվ գործարքների մի շղթա է։ Կերել եմ, խմել, հագնվել։ Առավոտից երեկո թալանել եմ։ Թալանել եմ ու կուտակել... Առել ու ծախել եմ... Խաբել ու գողացել եմ։ Աշխարհում այնքան միամիտ մարդիկ կան, որ ոչ մի բանի արժեքը չգիտեն։ Ահա և ես օգտվել եմ նրանց տգիտությունից... Ինչ-որ մարդիկ ուզում էին, որ ես իմ անգին քարերը նվիրեմ ժողովրդին... Հիմա՞ր եմ, ինչ է։ Ես մի գիշերվա մեջ բոլորը տեղափոխեցի։ Ներեցե՛ք, դուք ինչի՞ համար եք եկել, ի՞նչ եք ուզում։

- Մենք ուզում ենք ջուր խմել,- ասացի ես։

- Ջո՞ւր։

- Այո։

- Աղբյուրը ձեզ ջուր չի տա... Իզուր եք տանջվում։

- Ինչպե՞ս թե ջուր չի տա,- վախեցած հարցրեց Չիկարելին։

- Չի՛ տա։ Ես մի անգամ գնացի նրա մոտ, հենց ուզում էի ջուր խմել՝ ջուրը կտրվեց։

- Իսկ աղբյուրը շա՞տ հեռու է,- հարցրի ես։

- Հեռու է, հեռո՜ւ... Բայց ի՞նչ կարիք կա գնալ աղբյուրի մոտ, ջուր խնդրել։ Մնացեք ինձ մոտ։ Ես ծառաների կարիք ունեմ։ Դուք օրը երկու անգամ կմաքրեք իմ քարերը, իսկ ես օրը մեկ անգամ ձեզ ջուր կտամ։ Համաձա՞յն եք։ Սովորական աղբյուրի ջուր։

- Ո՛չ, ի՞նչ եք ասում։ Մենք նպատակներ ունենք, մեզ սպասողներ կան,- ասացի ես։

- Մարդը հարստություն կուտակելուց բացի, ուրիշ ի՞նչ նպատակ պետք է ունենա,- ասաց բարետես մարդը։

- Թույլ տվեք շնորհակալություն հայտնել Ձեզ ու հեռանալ։ Մենք շատ ուրախ ենք, որ հանդիպեցինք Ձեզ և տեսանք Ձեր գանձերն ու հասկացանք, թե ինչպես պետք է ապրենք,- ասացի ես։

- Սպասե՛ք...

- Լսում եմ։

- Ձեր գրպաններում հաց, կոնֆետ կամ նման մի բան չի՞ գտնվի... Ես քաղցած եմ,- մեզ մոտենալով՝ ասաց բարետես մարդը,- երեք օր բան չեմ կերել։

- Այնտեղ իրար վրա դարսած ահագին լավաշ կա, ինչո՞ւ չեք ուտում,- լավաշները ցույց տալով՝ ասաց Չիկարելին։

- Դո՛ւրս, դո՛ւրս կորեք... Աչքդ իմ լավաշը տեսավ... Չի կարելի ուտել: Կպակասի: Դո՛ւրս, դո՛ւրս, դո՜ւրս,- բղավեց բարետես մարդը:

- Հանգստացե՛ք... Հանգստացե՛ք: Մենք չենք ուզում, որ Դուք աղքատանաք,- ասացի ես:

- Շնորհակալություն,- հանգստացած ասաց նա,- խնդրում եմ, շրջեք ձեր գրպանները: Գուցե այնտեղ ինչ-որ բա՞ն կա...

- Մեր գրպաններում ոչինչ չկա: Եթե կասկածում եք՝ կարող եք ստուգել:

- Չեմ կասկածում, բայց ո՞նց կարելի է ձեզնից բաժանվել առանց որևէ բան պոկելու: Դա իմ գաղափարներին դեմ է: Դատարկե՛ք, դատարկե՛ք ձեր գրպանները:

- Ազնիվ խոսք, բացի այս մատիտի կտորից, ինձ մոտ ոչինչ չկա,- գրպանիցս մատիտը հանելով՝ ասացի ես:

- Տվե՛ք, տվե՛ք, պետք կգա,- նա իմ ձեռքից խլեց մատիտն ու դրեց գրպանը,- իսկ հիմա կորե՛ք այստեղից,- բղավեց նա:

- Կգնանք, իհարկե, կգնանք,- ասացի ես ու բռնեցի Չիկարելիի ձեռքը:

- Ուզում եմ Ձեզ մի հարց էլ տալ, կարելի՞ է,- ասաց Չիկարելին:

- Ի՞նչ հարց:

- Դուք երջանի՞կ եք, որ այսքան շատ անգին քարեր ունեք ու հարուստ եք:

- Հիմա՛ր, անխե՛լք, ապո՜ւշ... դո՛ւրս, դո՛ւրս կորի՛ր... այդ ի՞նչ անիմաստ հարց եք տալիս... Ես պարտավոր չեմ ձեզ պատասխանել... Երջանի՜կ: Ո՞վ է հնարել այդ հիմարությունը: Մարդը երջանիկ չի կարող լինել, որովհետև ագահ է... Օ՜ֆ, ես այլևս ձեզ տեսնել չեմ ուզում: Հեռացե՛ք...

- Կգնանք, մի՛ զայրացեք,- ասացի ես,- եթե կարելի է, ուղեկցեք մեզ:

- Առա՛ջ անցեք,- ասաց բարետես մարդը,- իհարկե, պետք է ուղեկցեմ ձեզ, որ հանկարծ բան չգողանաք:

- Ինչո՞ւ եք մեզ վիրավորում: Մենք գողություն չենք կարող անել:

- Ի՞նչ է, դուք մարդ չե՞ք:

- Մարդ ենք:

- Եթե մարդ եք, ուրեմն կարող եք նաև գողություն անել: Շտա՛պ, շտա՛պ, ահա այդպես, այդ դռնից դո՛ւրս եկեք,- առանց մեր երեսին նայելու՝ արհամարհանքով ասաց բարետես մարդն ու մեզ վռնդեց:

Մենք վրդովված ու ստորացած կանգնել էինք վեհաշուք դղյակի առաջ ու չգիտեինք՝ ինչ անել:

- Ի՜նչ ստոր մարդ էր... Ես ինձ այնպես վիրավորված եմ զգում, այնպես վիրավորված, որ լացս գալիս է,- հեկեկոցը զսպելով՝ ասաց Չիկարելին:

- Ագահությունն է նրան այդպես ստորացրել,- ասացի ես ու սրբեցի Չիկարելիի արցունքները,- գնանք այստեղից, մեր ժամանակը թանկ է: Մեզ սպասողներ կան...

- Այո՛, այո՛, պետք է շուտ հասնել աղբյուրին,- ասաց Չիկարելին ու առաջ անցավ:

Մենք շարունակեցինք մեր ճանապարհը... Մենք գնում էինք դեպի մեր նպատակը:

Ծխի գերության մեջ

–Նայի՛ր, նայի՛ր, ծխի քուլաներ են բարձրանում, գուցե հրդե՞հ է, պետք է օգնության հասնել,- մի քարի կանգնելով՝ ասաց Չիկարելին: Ես նայեցի նրա ցույց տված ուղղությամբ: Իրոք, բլրալանջից ծուխ էր բարձրանում:

- Դա հրդեհի ծուխ չէ,- ասացի ես:

- Հապա ի՞նչ է,- հարցրեց Չիկարելին:

- Չգիտեմ... գուցե գոլորշի է կամ երկրի ընդերքից ժայթքող գազ: Բոլոր դեպքերում պետք է շրջանցել,- առաջարկեցի ես:

- Ո՛չ: Ես ուզում եմ տեսնել, ի՞նչ է դա,- համառեց Չիկարելին:

- Լավ, եթե ուզում ես՝ գնանք: Գուցե իրո՞ք հրդեհ է,- համաձայնվեցի ես, ու մենք ճանապարհը շեղեցինք:

Մեզանից ոչ այնքան հեռու՝ ցից-ցից քարերի մեջ, փռված էր մեկ-երկուհարկանի տներով մի քաղաք: Տների բոլոր պատերը սևացած էին: Քաղաքը ծածկված էր թանձր ծխի քուլաներով: Մենք մոտեցանք քաղաքին ու մոլորված կանգնեցինք: Ծուխն այնքան կծու էր ու դառը, որ մեր աչքերը մրմռացին ու արցունքներով լցվեցին:

- Պետք է հետ դառնալ,- ասացի ես,- այստեղ մենք կկուրանանք ու կխեղդվենք:

- Գուցե որևէ մեկին պետք է օգնել,- առարկեց Չիկարելին ու հրեց քաղաքի դարպասը:

Դարպասը բացվեց:

- Հե՜յ, հե՜յ, հե՜յ, ովքե՞ր եք, ի՞նչ եք ուզում,- խռպոտ ձայնով կանչեց մեկը:

Մենք շրջվեցինք ձայնի կողմն ու տեսանք քաղաքի աշտարակներից մեկի վրա կանգնած մի մարդու, որի ծխամորճից, ինչպես գործարանի ծխնելույզից, ծուխ էր ելնում:

- Մենք ուզում ենք Ձեզ օգնել,- կանչեց Չիկարելին:

- Սպասեք, ոչինչ չեմ լսում,- բղավեց աշտարակի վրա կանգնած մարդն ու աստիճաններով ցած իջավ:

- Բարով եք եկել,- մեզ մոտենալով՝ ասաց նա և բերանից ու քթածակերից մեծ քանակությամբ ծուխ արտամղեց,- ինչո՞վ կարող եմ ձեզ օգտակար լինել,- հարցրեց նա՝ ոտքից գլուխ մեզ չափելով:

- Մենք ենք ուզում Ձեզ օգնել, բարեկա՛մ,- ասացի ես:

- Իսկ ի՞նչ է պատահել:

- Ձեր քաղաքը ծխով է լցված, գուցե հրդե՞հ է, և Դուք չեք կարողանում հանգցնել:

- Հրդե՞հ... Որտեղի՞ց հնարեցիք: Մենք մեզ համար հանգիստ ու խաղաղ ապրում ենք... հրդե՜հ, այդ էր պակաս,- նեղացած քրթմնջաց նա ու նորից քթածակերից ու բերանից ծուխ արտամղեց:

- Եթե հրդեհ չէ, ապա որտեղի՞ց է ծուխը,- հարցրեց Չիկարելին՝ աչքերը տրորելով, որովհետև այդ մարդու արտամղած ծուխը դառն էր ու տհաճ:

- Մենք արթնանում ենք վաղ առավոտյան, մեր ծխամորճերը լցնում ենք ծխախոտով ու սկսում ծխել: Այն քաղաքացին, որի ծխամորճը հանգչում է, նրան համարում ենք հանցագործ և դատապարտում: Այո՛, ինչքան կարելի է՝ շատ ծուխ: Այս է մեր նշանաբանը,- ոգեշնչված բացատրեց ծխամորճով մարդն ու նորից մեծ քանակությամբ ծուխ արտամղեց:

Մենք, ծխից խեղդվելով, սկսեցինք հազալ: Երբ ծխի քուլաները ցրվեցին, վերջապես տեսանք ծխամորճով մարդու դեմքը: Այն գունատ էր, ինչպես աշնան տերևը, աչքերն անփայլ էին ու անարտահայտիչ: Մատներն այնքան բարակ էին ու դեղնած, որ սարսափելի էր նայելը: Խոսելիս շունչը կտրվում էր, և թոքերից այնպիսի խռխռոց էր լսվում, կարծես փուքս էին փչում:

- Սիրելի՛ եղբայրներ, հարազա՛տ մարդիկ, մեր երջանկությունը ծխելն է, և ես խորհուրդ կտայի, որ դուք նույնպես ծխեք: Այստեղ ապահով է,

ինչքան ուզում եք՝ կարող եք ծխել, ոչ ոք ձեզ դիտողություն չի անի: Ես հիմա ձեզ համար բոլորովին նոր ծխամորճեր կբերեմ, հրաշալի ծխախոտ, և ձեզ կընդունենք մեր շարքերը: Ծխելը օգտակար է բոլորին: Օգտակար և առողջարար:

- Մենք ծխող չենք և չենք էլ ուզում ծխող դառնալ,- ասացի ես:

- Հապա ինչո՞ւ եք եկել այստեղ,- խիստ հարցրեց նա՝ ահռելի մեծության ծխի մի քուլա մեզ վրա փչելով:

- Անցնում էինք ձեր քաղաքի մոտով, կամեցանք Ձեր որպիսությունը իմանալ,- նրանից ազատվելու համար ասացի ես:

- Միայն այդքա՞նը,- կասկածամտորեն հարցրեց նա՝ ծխամորճի կրակը թեժացնելով:

- Այո՛... մենք...

- Ախ, դուք ուզում եք ասել, որ ծխելը վա՞տ բան է, որ բոլոր ծխողները ինչ-որ ժամանակ հիվանդանում են ու մեռնո՞ւմ,- հարցրեց նա:

- Մենք այդպիսի բան չենք ուզում ասել... Մենք պարզապես ուզում ենք Ձեզ հրաժեշտ տալ ու հեռանալ,- ասացի ես:

- Իսկ որտեղի՞ց են այդքան ծխողներ հավաքվել այստեղ,- հարցրեց Չիկարելին՝ հազից խեղդվելով:

- Որտեղի՞ց... Այնտեղից,- մատը վերև տնկելով՝ ասաց ծխամորճով մարդը,- մենք առաջ ապրում էինք այնտեղ: Մեր ծնողները մեզ ասում էին՝ մի՛ ծխեք, ծխելը վնասակար է, ձեր բոլոր օրգանները կվնասվեն ու դուք կհիվանդանաք: Մենք, իհարկե, նրանց չէինք լսում... Պատկերացնո՞ւմ եք, մեր դասարանի բոլոր տղաները մի օրում ծխող դարձան...

- Այդ ինչպե՞ս պատահեց,- զարմացած հարցրեց Չիկարելին:

- Եթե դուք մնաք մեր քաղաքում, միասին կծխենք, և ես բոլոր պատմությունները մեկ-մեկ կպատմեմ ձեզ: Շատ հետաքրքիր պատմություններ են: Խնդրեմ, համեցեք, մոլի ծխողների քաղաքի դարպասները բաց են ձեր առջև, և մենք շատ երջանիկ կզգանք, եթե մեր շարքերը համալրվեն ձեզ պես ազնիվ ու բարի ծխողներով:

- Ո՛չ, ո՛չ, ի՞նչ եք ասում, մենք շտապում ենք: Բացի այդ, իմ գլուխը Ձեր ծխից սկսեց պտտվել,- ասաց Չիկարելին ու քաշեց ձեռքս:

- Իհարկե, մենք շտապում ենք, բայց ես շատ եմ ուզում լսել մեր բարեկամի պատմությունները,- Չիկարելիին ասացի ես,- գուցե մի քանի րոպեով ներս մտնենք:

- Հասկանալի է,- դժկամորեն ասաց Չիկարելին,- Դուք գրող եք, ուզում եք մանրամասներ իմանալ:

- Այո՛: Գրողի համար ամեն բան հետաքրքիր է:

- Ես խեղդվում եմ,- հազը մի կերպ զսպելով՝ ասաց Չիկարելին ու մի քանի քայլ ինձնից հեռացավ:

- Եթե դուք ինձ լսեք և հենց հիմա սկսեք ծխել, այլևս չեք հազա: Գնամ, ծխամորճ բերեմ ձեզ համար,- սիրալիր ասաց ծխամորճով մարդը:

- Ո՛չ, ո՛չ... շնորհակալություն,- ակամայից ժպտացի ես,- իսկ եթե խնդրեմ, որ Ձեր պատմությունն այստեղ անեք: Վա՞տ կլինի որ: Ահա նստենք ու պատմեք:

- Վատ չի լինի, բայց ես ուզում էի ձեզ ծանոթացնել մեր քաղաքի բնակիչների հետ: Այնտեղ այնպիսի ծխողներ կան, որ տեսնեք, կապշեք: Սևացած, դեղնած: Շոգեքարշի պես են շնչում, արտաշնչում: Խզում են, խզխզում... Ինչևէ, չեք ուզում՝ մի՛ ուզեք, ես հենց այստեղ էլ կսկսեմ պատմել մեր դասարանի այն տղաների մասին, ովքեր, հաղթահարելով մեծ դժվարություններ, ամբողջ դասարանը ծխող դարձրին: Օ՜, ինչ սքանչելի օրեր էին,- երանությամբ ասաց ծխամորճով մարդը և դարձյալ ծխախոտ լցրեց ծխամորճը: Քիչ անց ես կորա ծխի քուլաների մեջ: Շունչս կտրվում էր, սիրտս հազար անգամ արագ էր աշխատում, աչքերս այնպես էին մրմռում, որ չէի կարողանում նայել ծխամորճով մարդուն, որի քթածակերից, բերանից, աչքերից, մազերի ծայրից նույնիսկ ծուխ էր դուրս ժայթքում:

- Խեղդվո՜ւմ եմ,- բղավեցի ես:

- Կընտելանաս... Ես էլ այդպես էի, առաջին օրերը չէի դիմանում, հետո սովորեցի ու հիմա առանց ծխի չեմ կարող ապրել:

- Այո՛, մարդի՛կ, գարշելիությանն ու տգեղությանն ընտելանում են այնպես, ինչպես գեղեցկությանը...

- Ծխելը վատ բան չէ: Չծխելն է վատ,- երկար ու տանջալից հազալուց հետո ասաց ծխամորճով մարդն ու շարունակեց,- մեր դասարանում քառասունմեկ աշակերտ կար: Տասնմեկը աղջիկներ էին, մնացածը՝ տղաներ: Մեզ հետ էր սովորում նաև Պողոս Ծիտիկյանը, տասը տարում նա հազիվ հասել էր հինգերորդ դասարան: Նրա դեմքը բողկի նման էր, քիթը՝ ծտի կտուցի, դրա համար էլ Ծիտիկյան էինք ասում: Ահա այդ Ծիտիկյանի գլխում մի օր իմաստուն մի միտք ծագեց: Նա դպրոց բերեց իր հայրիկի ծխախոտատուփը, որի մեջ երեսուն սիգարետ կար: Մենք հավաքվեցինք նրա շուրջը, աննկատ դպրոցից դուրս եկանք, մտանք դիմացի զբոսայգին, վառեցինք սիգարետները և սկսեցինք ծխել... Օ՜, երանություն էր, ի՜նչ գեղեցիկ օր էր... Մեր տղաներից շատերի գլուխները այդ օրը պտտվեցին, մի քանիսը նույնիսկ հիվանդացան, բայց հոգ չէր, մենք համառ էինք ու հաստատակամ: Մյուս օրը կրկնեցինք ծխելու

արարողությունը: Այս անգամ արդեն առանց չափազանցության բոլորը, նաև աղջիկները կարողանում էին ոչ միայն ծուխը ներս քաշել, այլև քթածակերից դուրս հանել: Դա այնքան էլ դժվար բան չէ: Խնդրեմ, ես կարող եմ ձեզ սովորեցնել: Բերե՞մ ծխամորճերը:

- Ո՛չ, ո՛չ,- ասացի ես ու ոտքի ելա,- շնորհակալություն պատմության համար... Այնքան էլ հետաքրքիր պատմություն չէր, սովորական հիմա-

րություն... Ներեցե՛ք անկեղծությանս համար, ինչ-որ տեղ նաև տափակ ու զզվելի պատմություն էր...

- Դուք շտապում եք, դուք մինչև վերջ չեք ուզում ինձ լսել,- ծխի քուլաները կուլ տալով՝ թնկթնկաց ծխամորճով մարդը:

- Դուք ինչպե՞ս եք ընկել այստեղ,- հարցրեց Չիկարելին:

- Այս քաղաքում ինձ հետ միասին բնակվում են բոլոր այն երեխաները, ովքեր իրենց ծնողներից թաքուն սկսում են ծխել: Նրանք մի քանի սիգարետ ծխելուց հետո փոքրանում են, ու մի գիշերում մենք նրանց գողանում, բերում ենք այստեղ... Մեր երազանքն է աշխարհի բոլոր երեխաներին ծխող դարձնել, որ մենակ չմնանք, հա՜, հա՜, հա՜...,- խզխզացնելով ծիծաղեց նա ու եռանդով շարունակեց,- մենք մեր զինանշանն ունենք: Մեր զինանշանը սքանչելի մի ծխամորճ է, դրոշը՝ ծխախոտի տերև: Խնդրեմ, համեցե՛ք մեր քաղաքը, երբ մեր քաղաքի բնակիչները ձեզ տեսնեն, իրենց երջանիկ կզգան: Համեցե՛ք:

- Զգացված ենք... Շատ շնորհակալ ենք... Ճիշտն ասած՝ ես զարմանում եմ բոլոր ծխողների վրա: Ինչպե՞ս կարելի է առավոտից երեկո ծուխ կուլ տալ ու բաց թողնել: Մարդը մազութով կամ քարածուխով աշխատող շոգեքա՞ղշ է, ի՞նչ է...

- Դուք դեռ համարձակվում եք մեզ վիրավորե՞լ,- զայրացավ ծխամորճով մարդը,- ես ձեզ հիմա ծխախեղդ կանեմ,- կատաղած բղավեց նա:

Մի ակնթարթում քաղաքի դարպասների մոտ՝ պարիսպների վրա, հայտնվեցին հազարավոր ծխողներ: Նրանց բերաններից ժայթքող ծխի քուլաները մեզ առան իրենց օղակի մեջ:

- Սրանք մեր թշնամիներն են,- բղավում էր ծխամորճով մարդը,- սրանք չեն ուզում ծխող դառնալ... Խեղդե՛լ սրանց:

Ծուխը թանձրացավ:

Մենք ոչինչ չէինք տեսնում, որովհետև կծու ծխի քուլաները սև վարագույրների նման ծածկել էին բոլոր ճանապարհները: Մենք խեղդվում էինք տհաճ ծխից ու խարխափելով փախչում...

- Պառկի՛ր, պառկի՛ր գետնին,- Չիկարելիի ձեռքից բռնելով՝ ասացի ես:

- Ինչո՞ւ,- շնչահեղձ լինելով՝ հարցրեց Չիկարելին:

- Ծուխը օդից թեթև է, վեր է բարձրանում:

- Հասկանալի է,- շշնջաց Չիկարելին ու պառկեց կողքիս: Մենք սկսեցինք փորսող առաջ գնալ:

Չգիտեմ, ինչքան տևեց մեր տառապանքը, որովհետև ես երկար ժամանակ չէի կարողանում մտածել ու խոսել: Ծխախոտի ծուխը ինձ զրկել էր հստակ մտածելու ու պարզ խոսելու կարողություններից:

Երբ արդեն զգացինք, որ հեռացել ենք աներես ծխողների քաղաքից, ու այլևս մեզ վտանգ չի սպառնում, նստեցինք մամռապատ մի քարի մոտ, որ շունչ առնենք: Չիկարելին նայում էր ինձ, ուզում էր մի բան ասել, բայց չէր կարողանում: Այդպես երբեմն ինձ հետ էլ է պատահում: Ուզում եմ որևէ բան ասել, բայց համապատասխան բառը չեմ գտնում:

- Ներեցե՛ք,- խզված ձայնով շշնջաց Չիկարելին:

- Ես քեզ լսում եմ:

- Իմ պատճառով Դուք տհաճ բաների հանդիպեցիք: Ես մեղավոր եմ: Ես... ,- կմկմաց նա ու լռեց:

- Գիտե՞ս, ես ուրախ եմ, որ քեզ հետ եմ ու գտնվում եմ այստեղ... Եթե քեզ չհանդիպեի, այս բոլորը չէի տեսնի:

- Բայց դրանից Ձեզ ի՞նչ օգուտ,- ժպտաց Չիկարելին:

- Շատ, շատ մեծ օգուտ է, առավոտյան ես մի մեծ նամակ կգրեմ աշխարհի չորս ծագերում ապրող երեխաներին: «Լսե՛ք իմ խորհուրդը, սիրելի՛ աղջիկներ, տղանե՛ր, թանկագի՛ն մարդիկ, երբեք, ոչ մի պարագայում չծխեք: Եթե ձեզնից որևէ մեկը ծխի՝ աննկատ կփոքրանա, այս զզվելի ծխողները գիշերը կգողանան ձեզ ու կբերեն իրենց գարշահոտ քաղաքը, և ձեզ ոչ ոք չի սիրի»: Սա առաջին: Երկրորդ՝ ես կդիմեմ նաև մեծահասակներին. «Ի՛մ բարեկամներ,- կասեմ նրանց,- եթե դուք ինչ-որ ժամանակ ընտելացել եք այդ վատ սովորությանը, ապա խնդրում եմ, կամքի ուժ ունեցեք, թողե՛ք ծխելը: Եթե նույնիսկ չեք կարող, խնդրում եմ, երեխաների ու աղջիկների ներկայությամբ չծխել...»: Եվ երրորդ՝ ես կարգելեմ ծխախոտը գեղեցիկ տուփերով արտադրել: Ես դրանք լցնել

կտամ այնպիսի տուփերի մեջ, որ զզվանք հարուցեն ու վրան կգրեմ՝ թույն...:

Չիկարելին, համակ ուշադրություն դարձած, լսում էր ինձ ու գլխով հավանություն տալիս յուրաքանչյուր բառին:

- Շատ հետաքրքիր է... Մեր տանը ոչ ոք չի ծխում: Իսկ ահա դերասան Սահակը անընդհատ ծխում է,- ասաց Չիկարելին,- ես նրան կասեմ, որ այլևս չծխի:

- Ապրե՛ս,- ասացի ես ու շոյեցի Չիկարելիի գլուխը:

- Ես այլևս չեմ ուզում այստեղ մնալ,- թնկթնկաց Չիկարելին:

- Ես էլ: Այստեղ ես կորցրել եմ ժամանակի զգացողությունը: Ինձ թվում է, որ մի դարից ավել է, ինչ այստեղ եմ:

- Գնանք,- ձեռքս բռնելով՝ ասաց Չիկարելին, ու մենք շարունակեցինք ճանապարհը:

Հեռվում երևում էր համատարած ծխողների քաղաքը, որը պատված էր թանձր ծխով... Մենք փախչում էինք այդ քաղաքից: Մենք փախչում էինք նողկալի ծխից...

Կարոտ

Գեղեցիկ են մայրամուտները...

Ես կարոտել եմ մայրամուտներին, կարոտել օրվա այն պահին, երբ հոգնած արևը գլուխը դնում է սարի ուսին ու նիրհում: Նրա մարմրող ժպիտը փշուր-փշուր է լինում սարերի կատարների վրա...

Իրիկո՜ւն... Հովը հեռվից երգ է բերում ու խառնում գետի մրմունջին:

Գեղեցիկ են մայրամուտի շշուկներն ու շրշույները...

Չալ մի կով, կուրծքը մարգագետնի կանաչներին քսելով, գալիս է տուն: Տան շեմին, անդուլ աշխատանքից խորշոմած ձեռքերը կրծքին ծալած, իրիկնամուտի տխրության մեջ կանգնել է տատս ու սպասում է նրանց, ովքեր մի օր գնացել են տնից ու չեն վերադարձել... Նա սպասում է: Նա գիտե, որ չեն վերադառնալու, բայց սպասում է... սպասո՜ւմ... սպասո՜ւմ...

Ես կարոտել եմ իրիկնամուտի տխրություններին...

Ես չեմ կարող ուրիշ տեղ ապրել, ուրիշ երազ տեսնել, ուրիշ օդ շնչել: Ես կարոտից կմեռնեմ, եթե հանկարծ կանաչ, կարմիր, իմ քարաշատ Հայրենիքում, իմ Հայաստանում չապրեմ:

- Գնանք տուն,- քայլերս արագացրի ու բարձրացա քարքարոտ զառիթափն ի վեր:

- Սպասե՛ք, չեմ կարողանում Ձեզ հասնել,- շունչը հազիվ տեղը բերելով՝ ասաց Չիկարելին ու նստեց մի քարի:

- Ների՛ր, խնդրում եմ, մտքերի մեջ էի ընկել ու մի պահ մոռացել ամեն բան:

Ես վերադարձա Չիկարելիի մոտ, նստեցի նրա կողքին ու հառաչեցի:

- Ինչո՞ւ եք հառաչում:

- Կարոտել եմ:

- Ինչի՞ն:

- Իրիկնամուտին, արևին, քարին, հողին...

- Իսկ ամենից շատ ո՞ւմ եք կարոտել,- աչքերը կլորացնելով՝ խորամանկորեն հարցրեց Չիկարելին:

- Ամենաթանկագինին:

- Իսկ դա ի՞նչ է:

- Դա մեր տունն է: Ծնողներս են, հարազատներս, մեր փողոցը, մեր քաղաքը, մեր պատմությունը, մեր ծիրանի ծառը... Ես կարոտել եմ նաև իմ գրամեքենային և այն ճերմակ թղթերին, որոնք տեղադրում եմ գրամեքենայի գլանի վրա ու պատմվածք գրում: Կարոտել եմ հայոց սքանչելի տառերին, որ ստեղծվել են հեռու-հեռու ժամանակներում, անցել դարերի թոհուբոհի միջով, անաղարտ ու մաքուր հասել են մեզ: Այդ տառերը դաջված են մեր երկրի տաճարների ու վանքերի քարակոփ պատերին, բարձրաբերձ ժայռերի ճակատներին ու լուռ խոսում են հավերժության հետ:

Ես կարոտել եմ նաև աշխատանքին: Մարդու ամենամեծ երջանկությունը աշխատելն է: Ինչքա՜ն հոյաշեն տաճարներ, ինչքա՜ն շքեղազարդ պալատներ, ինչքա՜ն հրաշք մեքենաներ է ստեղծել մարդն իր աշխատանքով...

- Իսկ ես ամենից շատ կարոտել եմ մայրիկիս, նա մեր տունը լցնում է ուրախությունով... Հետո կարոտել եմ քույրիկիս: Երբ նա նվագում է, ես մոռանում եմ ամեն, ամեն բան... Ճիշտ է, հայրիկիս էլ եմ կարոտել, բայց դա ուրիշ կարոտ է... Հետո կարոտել եմ Շեկոյին... Մեր փողոցում շատ տղաներ կան, որոնց հետ ֆուտբոլ ենք խաղում, բայց ոչ ոք Շեկոյի նման չէ,- մտքերի մեջ ընկած՝ ասաց Չիկարելին ու հարցրեց,- իսկ ինչո՞ւ է մարդը կարոտում:

- Որովհետև մարդ է, հայր, մայր ունի, տուն ունի, հայրենիք ունի... Մի խոսքով, այդ բոլորն այնքան նվիրական բաներ են, համապատասխան բառեր չկան նրանց արժեքը գնահատելու համար,- ասացի ես:

Չիկարելին այլևս ոչինչ չհարցրեց: Մենք շարունակեցինք ճանապարհը՝ անհուն կարոտը մեր սրտում պահած...

Ստերի տոպրակներ

-Դայե՛ք, նայե՛ք,- առաջ վազելով՝ ասաց Չիկարելին,- այնտեղ ինչ-որ տներ են երևում, և ինչ-որ մարդիկ, տանիքներին կանգնած, մեզ են կանչում, լսո՞ւմ եք...

Ես նայեցի Չիկարելիի ցույց տված կողմն ու տեսա ծուռտիկ-մուռտիկ տներ, որոնց տանիքներին խմբված մարդիկ ծեծում էին ծնկները, փետում մազերը, ողբերգորեն թափահարում ձեռքերն ու օգնություն կանչում...

- Ես ոչ մի ձայն չեմ լսում,- լսողությունս լարելով՝ ասացի ես:

- Ես էլ չեմ լսում,- պատասխանեց Չիկարելին,- բայց նրանք բղավում են:

- Գուցե մնջախաղի թատրոնի դերասաններ են: Խաղում են...

- Ո՛չ: Պետք է օգնել նրանց, նրանք դժբախտության մեջ են,- հուզված ասաց Չիկարելին ու վազեց դեպի օգնություն կանչող մարդիկ:

Ես գնացի նրա հետևից:

Խանդակներ, բլրակներ, առուներ անցանք, մի քանի անգամ վայր ընկանք ու վեր ելանք: Վերջապես հասանք այն քաղաքի մատույցներին, որի ծուռտիկ-մուռտիկ տների տանիքներին կանգնած մարդիկ օգնություն էին կանչում:

- Բարի՛ մարդիկ, մեռնում ենք, մեռնո՜ւմ,- մեզ տեսնելով՝ աղեկեզ

կանչեցին նրանք:

- Ի՞նչ է պատահել,- շունչս հազիվ տեղը բերելով՝ հարցրի ես:

- Ահռելի մի գազան մտել է մեր քաղաքն ու հոշոտում է մեզ... Հասե՞ք, շո՛ւտ հասեք, բարի՛ մարդիկ...

- Ի՞նչ գազան է: Ո՞ւր է:

- Սուր-սուր ատամներով, մեծ-մեծ ճանկերով... վա՜յ, վա՜յ, վա՜յ... Հասե՞ք, փրկե՞ք, նա ուզում է մեզ ուտել... փրկեք...

- Ի՞նչ անենք, ինչպե՞ս օգնենք այս մարդկանց... Ո՛չ հրացան ունենք, ո՛չ սուր, որ կարողանանք կռվել գազանի դեմ,- ասացի ես ու շվարած կանգնեցի:

- Իսկապես, ի՞նչ կարող ենք անել,- ասաց Չիկարելին:

- Չգիտեմ:

- Խնդրում եմ, մի բան մտածեք, չէ՞ որ Դուք գրող եք:

- Գազանների դեմ ամեն կերպ պետք է պայքարել,- մի քանի քայլ հեռու երկար փայտեր տեսնելով՝ ասացի ես ու վերցրի փայտերից մեկը:

Չիկարելին վերցրեց մյուս փայտը:

Այդ պահին նորից լսեցինք տանիքների վրա կանգնածների աղի-ողորմ կանչերը:

- Հասե՛ք, հե՜յ, հասե՞ք... կերա՞ն, կերա՞ն մեզ...

- Գալի՞ս ենք, գալի՞ս,- գոչեցինք մենք ու վազեցինք դեպի խուղերի տանիքներին կանգնած մարդիկ:

Չիկարելին թռչում էր կայծակի արագությամբ՝ փայտը սուրսայր նիզակի պես առաջ պարզած: Ես հազիվ էի հասնում նրան: Վազում էի ու մտածում, որ իմ բարեկամը ազնիվ է ու քաջ, որ նրա հետ պատահածը թյուրիմացություն է: Իսկական մարդը կարող է այդպես անձնազոհ օգնության նետվել, մարդասեր մարդը, իր կյանքը վտանգի ենթարկելով, կարող է փրկել բոլորովին անծանոթ մարդկանց: Մենք վազում էինք դեպի վտանգն ու չէինք վախենում ահեղ գազանից: Մեզ թվում էր, դատարկ ձեռքերով կհաղթենք նրան ու կփրկենք մարդկանց. հավատը հաղթանակի գրավականն է...

- Ի՞նչ եք մեռած-մեռած վազում, չե՞ք կարող ավելի արագ վազել,- ճչաց քաղաքի դարպասի մոտ կանգնած մի մարդ ու բացեց դարպասը:

Մենք թափով մտանք քաղաք ու զարմացած կանգնեցինք: Բոլորը նայեցին մեզ ու սկսեցին հռհռալ...

- Խաբեցի՞նք, խաբեցի՞նք, մենք սրանց էլ խաբեցի՞նք... Սուտը ճշտի տեղ ծախեցինք... Կեցցե՛ խաբեությունը՝ մեր բոլոր հաջողությունների ու հաղթանակների միակ փառահեղ գործոնը,- խանդավառված ճչում էին տանիքներին կանգնածները, ծափ տալիս ու պարում:

- Անամոթնե՛ր,- զայրացած բղավեցի ես,- զզվելի խաբեբաներ, ստախոսնե՛ր...

- Շնորհակալություն,- միաբերան բղավեցին նրանք,- վերջին հինգ տարում մեզ ոչ ոք այդպես չէր փառաբանել... Կեցցե՜ն մեր ճշմարտախոս հյուրերը, ուռռա՜...

Թնդաց միահամուռ ուռռան:

Ես ձեռքերս բարձրացրի ու ինչքան ուժ ունեի՝ բղավեցի:

- Լռե՛ք, ստո՛ր ստախոսներ:

- Այդպես բղավել չի կարելի, կպայթեք,- դիտողություն արեց դիմավորողներից մեկը, որի վզից քաթանե մեծ տոպրակ էր կախված: Հետո ես նկատեցի, որ այդպիսի տոպրակներ կախված են բոլորի վզներից, վրաները գրված՝ ստի տոպրակներ:

- Ո՞ւր է գազանը, որ ուզում էր հոշոտել ձեզ,- հարցրեց Չիկարելին

- Ի՞նչ գազան, ի՞նչ բան, գժվե՞լ եք, ինչ է, չէ մի չէ, աքլոր:

- Դուք չէի՞ք օգնություն կանչողները:

- Մե՞նք էինք... Մե՞նք...

- Դուք, դուք,- հուզմունքը հազիվ զսպելով՝ վրա տվեց Չիկարելին:

- Ի՞նչ դո՜ւք, դո՜ւք... ասեք, ասեք՝ իմանանք,- հանգիստ ասաց մեզ դիմավորող մարդը, որը, ըստ երևույթին, քաղաքագլուխն էր:

- Դուք ստախոսներ եք... զզվելի, անտանելի ստախոսներ,- գոչեց Չիկարելին ու նայեց ինձ:

Ես գլխով հավանություն տվեցի նրա ասածներին:

- Շնորհակալ եմ, շա՜տ շնորհակալ... Վերջապես գտնվեց մի ճշմարտախոս, որը կարողացավ գնահատել մեր առաքելությունը: Մեր վերջնական նպատակն է՝ ողջ աշխարհը դարձնել ստախոսների, խաբեբաների տիրույթ: Մեր քաղաքի բոլոր բնակիչները ողջունում են ձեզ և հրավիրում խնջույքի,- մեր առաջ խոնարհվելով՝ ասաց վզից մեծ տոպրակ կախած մի մարդ:

- Խնդրեմ, ծանոթանանք, ես այս քաղաքի քաղաքագլուխն եմ,- կլորիկ փորը ինքնագոհ շոյելով՝ ներկայացավ նա:

- Բայց Դուք մոլի ստախոս եք, ես Ձեզ ատում եմ,- զայրույթից կարկամեց Չիկարելին:

- Միանգամայն ճիշտ է, ես ստախոս եմ, և դա իմ երջանկությունն է: Ես կարող եմ այնպիսի ստեր հորինել, այնպիսի ստեր, որ ողջ աշխարհը զարմանա... Սուտը կյանքի իմաստն է: Եթե չլինի սուտը, ճշմարտություն չի լինի երբեք:

- Ես այլևս չեմ ուզում Ձեզ լսել,- Չիկարելին հեռացավ քաղաքագլխից ու դիմեց ինձ,- գնանք այստեղից:

- Մի քանի րոպե մնանք, խնդրում եմ,- Չիկարելիի ականջին շշնջացի ես,- շատ եմ ուզում ծանոթանալ այս ստախոսների հետ: Ուզում եմ իմանալ՝ ովքե՞ր են, ինչո՞ւ են սուտ խոսում:

- Դարձյալ մեզ խանգարում է Ձեր՝ գրող լինելու հանգամանքը: Ստիպված պետք է սպասեմ,- դժկամորեն ասաց Չիկարելին ու մի կողմ քաշվեց:

- Հարգարժա՛ն ստախոս, ես ուրախ եմ, որ ինձ բախտ վիճակվեց ծանոթանալ Ձեզ հետ,- ձեռքս ստախոսների քաղաքագլխին մեկնելով՝ ասացի ես:

- Ես նույնպես ուրախ եմ ձեզ նման ամեն բանի հավատացող մարդկանց հանդիպելու համար,- ժպտաց քաղաքագլուխն ու մեզ առաջնորդեց ընդարձակ մի սրահ, որն իրենք ընդունելությունների տուն էին անվանում:

Ճանապարհին մի ստախոս քաղաքացի մոտեցավ մեզ ու սկսեց խոսել.

- Անցյալ տարի իմ պարտեզում տասներեք փթանոց մի մեխակ էր աճել: Մենք հավաքվում էինք նրա շուրջն ու բոլորս միասին շնչում նրա բույրը:

- Դա ինչ աննշան մեխակ է,- մեխակի մասին խոսողին մի կողմ հրելով՝ ասաց մի ուրիշ ստախոս,- իմ պարտեզում մի վարդ էր աճել, որի բարձրությունը քառասուն մետր էր: Եվ որպեսզի մենք կարողանայինք այդ վարդից հոտ քաշել, որոշեցինք աշտարակ կառուցել: Ողջ քաղաքը շաբաթ և կիրակի օրերին բարձրանում է այդ աշտարակի վրա, նստում վարդի շուրջն ու շնչում նրա անմահական բույրը: Այդպիսի վարդ միայն մեր երկրում կարող է աճել...

- Դա ի՞նչ հիմարություն է... Քառասուն մետր բարձրության վարդ: Ես ավելի փարթամ ու մեծ վարդեր եմ տեսել: Մի անգամ, կարծեմ Աֆրիկայում էր, մի ծաղիկ տեսա, որը փակել էր արևի երեսը: Այ, դա ծաղիկ էր, անունը կարծես Չամո-Թամո էր... Օ՜, ի՜նչ ծաղիկ էր, ի՜նչ անուշ էր բուրում: Նրա շուրջը շաբաթ և կիրակի օրերին հավաքվում էին աշխարհի բոլոր մարդիկ ու միասին շնչում էին, արտաշնչում, շնչում էին, արտաշնչում... Այդ ծաղիկը խոսել գիտեր... Է՜, Չամո-Թամո, իմ սիրելի՛ ծաղիկ, որտե՞ղ ես...

- Ձայնդ կտրի՛ր, հիմա՛ր,- իր համաքաղաքացու վրա բարկացավ ակնոցավոր մի ստախոս,- բավական է այս մարդկանց ապակողմնորոշեք... Մենք կմտնենք ընդունելությունների տուն և կսկսենք մեր հերթական գիտաշրջանը, թե կարող եք, այնտեղ ելույթ ունեցեք... Խնդրեմ, ընկերնե՛ր, համեցե՛ք,- ասաց նա և ընդունելությունների տան դռները բացեց մեր առաջ:

Մենք մտանք ընդարձակ մի սրահ, որտեղ բազկաթոռներ ու սեղաններ էին շարված:

- Նստե՛ք, նստե՛ք,- կարգադրեց քաղաքագլուխը:

Բոլորը նստեցին: Մենք բեմ բարձրացանք:

- Ձայնը տրվում է Ստախոսների ակադեմիայի պրեզիդենտ, համաշխարհային ճանաչում և համբավ ունեցող ստախոս, Ռուսաստանի, Կալիֆորնիայի, Զիմբաբվեի, Միացյալ Նահանգների, Կենտրոնական Աֆրիկայի, Թունիսի, Հայաստանի ստախոսների ակադեմիայի պատվավոր անդամ, ակադեմիկոս Դմբլո Դմբլոնիչին: Խնդրեմ,- հայտարարեց քաղաքագլուխը:

Ստախոսների ակադեմիայի պրեզիդենտ Դմբլո Դմբլոնիչը, գլուխը տմբտմբացնելով, մոտեցավ ամբիոնին, վզից կախված տոպրակը մի քանի անգամ շոշափեց, հետո աջ ձեռքը մտցրեց մեջը ու ժպտալով ասաց.

- Գտա՜, գտա՜, շատ լավ սուտ գտա:

- Սկսե՛ք,- խոնարհվելով ասաց քաղաքագլուխը:

- Մի անգամ ես բարձրացա վերև, հասա աստղաբույլերին ու այնտեղ հանդիպեցի մի մեծ աստղի, որը մինչ այդ հայտնի չէր աշխարհի ոչ մի աստղագետի ու աստղանավորդի...

- Լռի՛ր, հիմա՛ր, այդ դեպքը հազար տարի առաջ ես պատմել եմ և ընդհանրապես ձեր ակադեմիան հիմարություններով է զբաղվում: Ձեր ակադեմիկոսները կորցրել են իրենց աշխատունակությունը, և արդեն քանի տարի է՝ անիմաստ հուշեր են պատմում: Կորի՛ր,- զայրացավ ստախոսների քաղաքագլուխը,- ես Ձեզ պիտի վտարեմ ակադեմիայից: Դուք կորցրել եք ձեր մտքի փայլն ու տրամաբանելու կարողությունը...

- Ես ծառայություններ ունեմ, ես աշակերտներ ունեմ, ես... բազմահատոր գրքերի հեղինակ եմ, ե...

- Բավական է, կորե՛ք,- բղավեց քաղաքագլուխը: Ակադեմիկոսը լաց լինելով հեռացավ ամբիոնից:

- Կեցցե՜ ճշմարիտ ստախոս, բոլոր ժամանակների ամենահիմաստուն, ամենապայծառ քաղաքագլուխը... Ուռռա՜, պարոննե՜ր,- այս ու այն կողմից բղավեցին ստախոսներն ու այնպիսի օվացիա սարքեցին, քիչ էր մնում ականջներիս թմբկաթաղանթները պատռվեին:

Մենք մոլորված ու շվարած նայում էինք մարդկային խիղճն ու նկարագիրը կորցրած ստախոսներին ու չգիտեինք՝ ինչ անել:

- Գնանք, ինչքան այստեղ մնացինք՝ բավական է, շշնջաց Չիկարելին:

- Համբերի՛ր... շատ հետաքրքիր է,- խնդրեցի ես:

- Լավ,- հոգոց հանեց Չիկարելին ու թաղվեց իր բազկաթոռի մեջ:

- Չեղա՜վ, չեղա՜վ, ընկերնե՛ր, այդպես չի կարելի, մեր հյուրերը մեզ չեն լսում, ինչ-որ բաներ են քչփչում իրար ականջի: Ինչպե՞ս կարելի է: Չէ՞ որ մեր յուրաքանչյուր բառ իմաստավորված է,- Չիկարելիին դիտողություն արեց շատ կարճահասակ մի մարդ, որը բարձրակրունկ կոշիկներ էր հագել, որ բարձրահասակ երևա և վերևից նայի մարդկանց:

- Մեր լուսապայծառ քաղաքագլուխ, թույլ կտա՞ք, ես եմ ուզում խոսել:

- Խնդրեմ,- գլուխը տմբտմբացրեց քաղաքագլուխը:

- Այն բոլոր իմաստությունները, որ այստեղ հորինում ենք մենք, արժանի են ավելի մեծ ուշադրության: Այո՛, ընկերնե՛ր, մենք մեր մոլորակը պետք է ստեղծենք, որտեղ պետք է ապրեն միայն ու միայն մեզ պես իմաստուն ստախոսներ և առավոտից երեկո մեզ պես իմաստուն ստեր հորինեն... Օրինակ, սրանից մի քանի ժամ առաջ, երբ մեր պատվարժան հյուրերը դեռ չէին բարեհաճել ժամանել, ես ձեռքս աղբյուրի ակից դուրս հանեցի ու մի բուռ արև վերցրի: Արևը բերի լցրի մեր կաթսայատան հնոցի մեջ: Այդ մի բուռ արևը մեզ կտաքացնի քսան, երեսուն, քառասուն տարի: Այո՛, հարգարժա՛ն բարեկամներ, թանկագի՛ն հյուրեր, մենք պետք է կարողանանք հորինել մեր մորուքին ու տարիքին համապատասխան ստեր: Ահա մեր խնդիրը, մեր երազանքը: Ո՞վ կարող է ասել, որ մենք սխալ ենք: Ոչ ոք: Սխալներ են թույլ տալիս նրանք, ովքեր ճշմարտություն են փնտրում: Ճշմարտություն չկա... Ամեն ինչ սուտ է և սուտ...

- Այո՛, չկա... Ճշմարտություն չկա... Թող կորչեն ամեն տեսակի ճշմարտությունները, որոնք խանգարում են մեզ ապրել: Մեր իմաստուն ստախոսներից մեկն ասել է. «Սուտ կա, որ ճշմարտությունից զորեղ է». հանճարեղ է ասված: Այո, մենք սիրում ենք այդպիսի ստերը, այդպիսի հանճարեղ ստերը մեզ ապրեցնում են երազանքով,- վրա տվեց քաղաքագլուխը:

- Մեր քաղաքագլուխը աշխարհի ամենաբարձրահասակ, ամենախելացի, ամենագեղեցիկ, ամենահեռատես քաղաքագլուխն է... Ուռռա՜... Հավե՜րժ փառք հանճարեղ քաղաքագլխին...

Եվ այսպես, ժամեր շարունակ, իրար բերանից խոսքեր փախցնելով՝ ճառեր էին ասում ստախոսները, և ողբալին այն էր, որ իրենք հավատում էին իրենց ստեղծած ստերին ու ոգեշնչված ծափահարում...

- Լռե՛ք,- տեղից վեր կենալով՝ գոչեց քաղաքագլուխը,- մենք այսքան ժամանակ ասում էինք այնպիսի ստեր, որոնք մեր լեզվի ծայրին էին և առանձնապես ջանք չէինք թափում սուտ հորինելու համար: Իսկ հիմա

մենք բաց կանենք մեր ստերի տոպրակները, որոնք լցված են հանճարեղ ստերով, և որոնք հորինել են մեր նախնիները: Օրինակ, այս մեկը,- հայտարարեց նա, ձեռքը մտցրեց վզից կախված տոպրակի մեջ ու անմիջապես դուրս հանեց,- ահա սա է... հանճարեղ, իմաստուն, հավերժական սուտ...

- Օ՜, իրոք հանճարեղ է ու հավերժական,- հիացած բացականչեցին ստախոսներն ու ծափահարեցին:

- Շնորհակալ եմ, շնորհակալ եմ,- ձեռքը բարձրացրեց քաղաքագլուխը: Բոլորը լռեցին:

- Ես ուզում եմ այս սուտը տեղավորել մեր ժամանակների հոլովույթում...

- Այնպես եմ հոգնել, այնպես եմ ձանձրացել, որ այլևս ոչ մի սուտ չեմ ուզում լսել,- տեղից վեր թռչելով՝ բղավեց Չիկարելին:

- Մի՞թե հաճելի չէ,- քրթմնջաց քաղաքագլուխը:

- Զզվելի՜ է,- բղավեց Չիկարելին:

- Քաղաքացինե՛ր, լսո՞ւմ եք՝ ինչ է ասում... Սա չի հավատում մեր ստերին: Սրան պետք է կախել,- հանգիստ ասաց քաղաքագլուխը,- սրանց նմաններն են մեզ խանգարում ապրել...

- Չենք կարող,- հառաչեց զզվելի դեմքով մի տարեց ստախոս:

- Ինչո՞ւ:

- Որովհետև նա իրավունք ունի հավատալու մեր ստերին կամ չհավատալու: Կա անձի ազատություն, որը հաստատված է Համաշխարհային ստախոսների կոնվենցիայով: Դա անհատական զգացողություն է:

- Ա՜խ, ա՜խ,- հառաչեց քաղաքագլուխը,- ահա թե ինչու մենք մեր ստերը չենք կարողանում տարածել աշխարհով մեկ, որովհետև կան, դեռ կան մեզ չհավատացողներ: Կան դժբախտներ, որոնք ստով չեն ուզում ապրել:

- Մենք հավատում ենք մեր ստերին... Մենք երջանիկ ենք, որ ապրում ենք մեր գաղափարներով, մեր երազներով... Կեցցե՜ ստախոսությունը,- գոչեցին ստախոսները, ոտքի ելան ու սկսեցին երգել իրենց օրհներգը:

- Սուտ է, սուտ է կյանքը ճիշտ,
Կորիր թախիծ, կորիր վիշտ,
Սուտը ապրում է ընդմիշտ:
Այդ է, այդ է միայն ճիշտ...

- Սիրելինե՛րս,- օրհներգն ավարտվելուց հետո սկսեց քաղաքագլուխը,- ես հենց նոր իմ ստի տոպրակից հանեցի աշխարհի սքանչելի ստերից մեկը, որով և ուզում եմ շարունակել մեր այսօրվա արտահերթ ստագիտական նստաշրջանը: Հարգարժա՛ն ստախոսներ, թանկագի՛ն

հյուրեր, մեր հրաշալի՛ ժամանակակիցներ, ոչ այնքան հեռու ժամանակներում իմ նախնիներից մեկը բանջարանոցում դդում ցանեց: Դդումը աներևակայելի արագությամբ աճե՜ց, աճե՜ց, թաղարը բանջարանոցից դուրս եկավ, անցավ դաշտերով, սարերով, անտառներով, մեծ գետի վրա կամուրջ դարձավ: Մարդիկ, սայլեր, ձիեր, անասուններ այդ թաղարի վրայով սկսեցին անցուդարձ անել: Աշնանը պապիս բանջարանոցում այդ դդումը ժառանգ ունեցավ: Դա շատ գեղեցիկ դդմի գլուխ էր: Կարճ ժամանակում նա այնքա՜ն մեծացավ, մեծացավ, որ տուն բերելու համար պապս քառասունսռնիանոց սայլ պատրաստել տվեց: Այդ դդումը երկար տարիներ կերակրեց մեր բազմանդամ ընտանիքը...

- Սքանչելի է,- ուրախացած բացականչեցի ես,- ազնիվ խոսք, Ձեր դդումները ինձ շատ դուր եկան: Ես նրանց մասին անպայման մի հեքիաթ կգրեմ:

- Շոյված եմ,- ասաց քաղաքագլուխը,- մեր դդումի անունից շնորհակալություն եմ հայտնում Ձեզ:

- Իսկ ես ուզում եմ իմ ստի տոպրակից այսօր դուրս հանել գեղեցիկ մի հուշ, մի հանճարեղ պատմություն, որը կապված է իմ մանկության հետ,- տեղից վեր թռչելով՝ ասաց գանգուր մազերով մի ստախոս ակադեմիկոս ու եռանդով սկսեց պատմել,- հայրս մի անգամ գնում է Կարին քաղաք, որտեղ հրաշագործ արհեստավորներ կային, հանդիպում է մի պղնձագործի ու ասում. «Վարպե՛տ, մեր գերդաստանի համար մի մեծ պղնձե կաթսա սարքիր»: «Աչքիս վրա,- պատասխանում է պղնձագործը,- մի քանի օր հետո եկ տար»: Մի քանի օր հետո հայրս գնում է պղնձագործի մոտ ու տեսնում՝ արհեստանոցի դռան առաջ մի մեծ պղնձե կաթսա է դրված: Այնքան մեծ, այնքան մեծ, որ քառասուն վարպետ իրենց քառասուն աշակերտների հետ կաթսայի մեջ աշխատում են, ու նրանց մուրճերի ձայներն իրար չեն հասնում...

- Բռավո՜, բռավո՜... Հանճարեղ է, հանճարեղ է, հանճարեղ է՜... - ոտքի կանգնելով՝ ծափահարում ու բղավում էին ստախոսները:

Ես նույնպես ուրախ էի: Դդումի և պղնձե կաթսայի մասին պատմված ստերը ինձ դուր եկան, դրա համար էլ ես նույնպես ծափահարում էի ու բղավում...

- Ես շատ ուրախ եմ, որ դուք հավանեցիք մեր ստերը,- ասաց քաղաքագլուխը,- հիմա ասացե՛ք խնդրեմ, դուք դառնո՞ւմ եք ստախոսներ, թե՞ ոչ:

- Ո՛չ,- դառնացած բղավեց Չիկարելին ու բռնեց ձեռքս,- գնանք, խնդրում եմ: Ես ատում եմ ստախոսությունը:

- Իսկ Դո՞ւք,- աչքերը վրաս ոլորելով՝ հարցրեց քաղաքագլուխը:

- Ե՞ս... Մարդը ընդհանրապես չպետք է սուտ խոսի:

- Մա՛հ ճշմարտախոսներին... մա՜հ, մա՜հ,- կատաղած գոչեցին ստախոսները:

- Համբերե՛ք,- նրանց հանգստացրեց քաղաքագլուխն ու դարձավ մեզ,- բոլոր նրանք, ովքեր մեզ հետ չեն, մեր թշնամիներն են: Զինվորնե՛ր,- կանչեց նա:

Անմիջապես ներս թափվեցին սուր-սուր նիզակներով զինված զինվորներն ու միաձայն բղավեցին.

- Լսում ենք, մե՛ծն ստախոս:

- Այս ճշմարտախոսներին գցեք մեր զնդաններից մեկը, որտեղ առավոտից երեկո ցրտաշունչ քամիներ են փչում: Այնտեղ սրանք կհասկանան մեր հզոր ստերի ուժը: Կհասկանան, որ ստախոսներին չպետք է առարկել:

- Կեցցե՜ն բոլոր ստախոսները,- միաձայն բղավեցին զինվորներն ու նիզակները ճոճելով՝ շրջապատեցին մեզ:

- Ինչպե՜ս կարելի է, ինչպե՜ս կարելի է,- անօգնական կանչեցի ես:

- Չհամարձակվեք մեզ բանտարկել, մենք ոչ մի վատ բան չենք արել,- բղավեց Չիկարելին,- ձեզ չհավատալը հանցագործություն չէ...

- Որպեսզի դուք հավատաք մեր ստերին ու ինքներդ ստախոսներ դառնաք, պետք է մի քանի տարի ապրեք այդ քարանձավում:

- Չենք կարող, ազնիվ խոսք... Մեզ սպասողներ կան... Մենք...- լացակումած ասաց Չիկարելին:

- Բայց ձեզ ո՞վ է իրավունք տվել մեզ զնդան նետելու: Ովքե՞ր եք դուք, անամո՛թ ստախոսներ,- բղավեցի ես:

- Եղբայրնե՛ր, մեզ վիրավորում են, արատավորում մեր գաղափարները: Սրանց պետք է կախել:

- Այո՛, մենք կկախվենք, բայց ստախոս չենք դառնա,- ասացի ես,- բայց, խնդրում եմ, կախելուց առաջ թույլ տվեք մի քանի ժամ մտածել ձեր հանճարեղ ստերի մասին, և, ո՞վ գիտե, գուցե այդ մի քանի ժամվա ընթացքում մենք նույնպես ստախոսներ դառնանք:

- Թույլ ենք տալիս: Տարեք կերակրե՛ք, պահե՛ք մութ զնդանում,- հրամայեց քաղաքագլուխը:

- Լսում ենք,- գոչեցին զինվորներն ու մեզ տարան այն քարանձավը, որտեղ առավոտից երեկո ցրտաշունչ քամիներ են փչում:

- Այստեղ կմնաք այնքան ժամանակ, քանի դեռ խելքներդ գլուխներդ չեք հավաքել,- մեզ ներս հրեց հաստագլուխ զինվորներից մեկն ու հրամայեց փակել ցրտաշունչ քարայրի մուտքը:

Գարշահոտ քարայրում ոչինչ չկար: Մենք դողում էինք ու սարսափով մտածում մեր ճակատագրի մասին:

- Պետք է փախչել,- ասացի ես և նայեցի Չիկարելիին, որը հուսահատված ու մոլորված նստել էր խոնավ գետնին ու հառաչում էր:

- Փախչե՞լ... մենք երևի այստեղ էլ կկնքենք մեր մահկանացուն,- հառաչեց Չիկարելին,- ո՞ւր փախչել, ինչպե՞ս փախչել...

- Բարեկա՛մս, ինչպիսի ծանր կացության մեջ էլ գտնվելիս լինես, երբեք չհուսալքվես ու հավատդ չկորցնես հաղթանակի հանդեպ... Արդարությունը կարող են խոշտանգել, կարող են բանտարկել, բայց ոչնչացնել չեն կարող: Դե, վե՛ր, վե՛ր, պետք է մի հնար գտնենք: Ամեն մարդ ինքն է պատասխանատու իր ճակատագրի համար,- Չիկարելիի ձեռքը բռնելով՝ ասացի ես:

Չիկարելին հուսադրվեց իմ ասածներից:

- Այո՛, այո՛, պետք է մի հնար գտնենք,- ասաց նա ու վեր կացավ: Մենք արեցինք անհավատալին: Քարանձավի մուտքը փակող հսկայական քարերը այս ու այն կողմ հրեցինք, մի կերպ դուրս ելանք գարշահոտ քարանձավից ու ճանապարհ ընկանք...

Ազատությո՜ւն... Ազատությունն ի վերուստ է շնորհված մարդուն՝ որպես պարգև: Ազատությունից լավ բան աշխարհում չկա:

Մեր շուրջը լռության թագավորություն էր:

Երբ բավական հեռացել էինք ստախոսների քաղաքից, մի պահ կանգնեցինք, որ շունչ առնենք: Հենց այդ պահին հեռու-հեռվում ինչ-որ լույս առկայծեց, անհրապույր, սառը մի լույս, որը սակայն փրկության կանչ եղավ մեզ համար... Մենք շարժվեցինք դեպի այդ լույսը:



ՇԱ՛Տ ԿԵՐ, Բ՛ԻՀ ԽՈՍԻՐ

Յամաքած աղբյուրի հունը մեզ տանում էր երկրի ընդերքը, որն ամեն քայլափոխի ավելի խոնավ ու խորհրդավոր էր դառնում:

Ճանապարհներին մենք հանդիպում էինք խորախոռոչ անձավների, որոնք հառաչանքներով ու տնքոցներով էին լցված:

- Այս ի՞նչ հառաչանքներ ու տնքոցներ են,- հարցրեց Չիկարելին:

- Երկիր մոլորակի տնքոցներն ու հառաչանքներն են: Մարդիկ նրան ցավ են պատճառել, խեղել են, հորանցքներ փորել, պայթեցրել, քանդել, կեղտոտել:

- Մի՞թե Երկիր մոլորակը ցավ է զգում,- զարմացած հարցրեց Չիկարելին:

- Իհարկե, զգում է: Երկիր մոլորակը կենդանի արարած է, մեզ պես սիրտ ունի, հոգի: Նրանից գեղեցիկ ու հզոր, նրանից քնքուշ ու անպաշտպան ոչինչ չկա, և ոչ թե մենք նրան պետք է ենթարկենք մեզ, այլ մենք պետք է թափանցենք նրա գաղտնիքների խորքերը, առանց

խեղելու ըմբռնենք նրա էությունը... Մինչդեռ ի՞նչ ենք անում մենք: Մտածելն անգամ զարհուրելի է... Թունավորում ենք, խեղում, այլանդակում, պայթեցնում...

- Իսկ ի՞նչ պետք է անենք, որ այլևս ցավ չպատճառենք Երկիր մոլորակին,- հարցրեց Չիկարելին:

- Պետք է պայքարենք բոլոր նրանց դեմ, ովքեր ձեռք են բարձրացնում մեր մոլորակի վրա: Պետք է չթողնենք պայթեցումներ կատարեն, անտառները հրդեհեն, լճակները, ծովերը, օվկիանոսներն աղտոտեն,- ասացի ես,- իսկ երբ ես փող ունենամ, մի մեծ, շատ մեծ ռադիոկայան կկառուցեմ: Իմ ռադիոկայանից աշխարհի ժողովուրդների բոլոր լեզուներով կճչամ ու կասեմ հետևյալ նախադասությունները՝

ԾԱՂԻԿ ՊՈԿԵԼ ՉԻ՛ ԿԱՐԵԼԻ:

ԾԱՌ ԿՏՐԵԼ ՉԻ՛ ԿԱՐԵԼԻ:

ԳԵՏԵՐԻ ՀՈՒՆԸ ՓՈԽԵԼ ՉԻ՛ ԿԱՐԵԼԻ:

ՊԱՅԹԵՑՈՒՄ ԱՆԵԼ ՉԻ՛ ԿԱՐԵԼԻ:

ՄԹՆՈԼՈՐՏՆ ԱՂՏՈՏԵԼ ՉԻ՛ ԿԱՐԵԼԻ:

- Չի կարելի, այլևս չի կարելի, որովհետև Երկիր մոլորակի սիրտը լցված է հառաչանքներով: Նա այլևս չի դիմանում մեր պատճառած ցավերին ու ավերումներին... Նա մեր կանաչ-կանաչ տունն է... Նա մեր միակ օթևանն է...

- Ես երբե՞ք, երբե՞ք չեմ մոռանա այն, ինչ տեսա այստեղ,- ասաց Չիկարելին, մոտեցավ բնության ստեղծած քարեղեն մի ծառի ու մատով հպվեց նրա ճյուղերից մեկին:

Ծառը երգեց:

Երգն այնքան հուզիչ ու սրտալի էր, այնքան քնքուշ ու նուրբ, որ մեր հոգիները լցվեցին երազներով:

Մենք նստեցինք ծառի տակ ու մինչև վերջ լսեցինք նրա երգը:

- Գնանք, մեր ժամանակը սուղ է,- ասացի ես ու ոտքի ելա: Չիկարելին հետևեց ինձ:

Երկու թե երեք կեռման անցնելուց հետո մեր դեմ փռվեց ճահճագույն մի դաշտ, որը պատած էր բարձր պարիսպներով:

- Երևի էլի ինչ-որ քաղաք է,-ասաց Չիկարելին:

- Այո՛, քաղաք է,- կանաչների մեջ տներ տեսնելով՝ ասացի ես:

- Ես այլևս ոչ մեկին չեմ ուզում հանդիպել, նրանք խանգարում են մեզ,- դժգոհեց Չիկարելին:

- Մենք ուրիշ ճանապարհ չունենք: Ուզած-չուզած պետք է մտնենք այդ քաղաքը,- ասացի ես ու Չիկարելիի ձեռքից բռնած՝ ուղևորվեցի դեպի պարսպապատ քաղաքը:

Այն լցված էր գարշահոտով: Կենտրոնական փողոցի հրապարակում վեր էր խոյացել գդալի ու պատառաքաղի հսկայական մի արձան... Ընդհանրապես, բոլոր տների կտուրներին դրոշների փոխարեն գդալներ ու պատառաքաղներ էին տնկված:

- Այս ի՜նչ հիմարություն է,- քրքջաց Չիկարելին,- ամեն տեղ գդալներ ու պատառաքաղներ են: Ինչո՞ւ է այդպես,- ինձ դառնալով՝ հարցրեց նա:

- Չգիտեմ,- պատասխանեցի ես,- նայի՛ր, տների դռներին նույնպես գդալներ ու պատառաքաղներ են նկարված:

- Բայց ինչո՞ւ ոչ ոք մեզ չի դիմավորում:

- Երևի քնած են:

- Կարելի՞ է բղավել:

- Խնդրեմ, բղավի՛ր, ինչքան ուզում ես,- ասացի ես:

- Հե՜յ, հե՜յ, ո՞վ է ապրում այստեղ,- զնգուն ձայնով կանչեց Չիկարելին:

Չէր անցել մեկ վայրկյան, երբ բոլոր տների պատուհանները միանգամից բացվեցին, ու գլուխները պատուհաններից դուրս հանեցին գեր ու մեծաբերան մարդիկ:

- Ինչո՞ւ եք խանգարում մեր հանգիստը,- զայրացած խռխռացին նրանք:

- Մենք պարզապես ուզում ենք ձեզ ողջունել,- ասացի ես:

- Մենք խիստ զբաղված ենք,- գոչեցին գեր և մեծաբերան մարդիկ ու պինդ փակեցին իրենց տների դռներն ու լուսամուտները:

Մենք զարմացած նայեցինք իրար և, ճիշտն ասած, վիրավորվեցինք: Ուզում էինք թողնել ու հեռանալ, բայց այդ պահին հնչեցին կոչնակները, ու քաղաքային աշտարակից ինչ-որ մեկը ձայն տվեց.

- Ճաշի ժամն է, արթնացե՜ք, արթնացե՜ք, սիրելի՜ շատակերներ...

- Հետաքրքիր է,- բացականչեց Չիկարելին ու վազեց դեպի հրապարակ:

Ես նույնպես վազեցի:

Հրապարակում վեր խոյացած հսկայական գդալի ու պատառաքաղի արձանի պատվանդանին խոշոր տառերով գրված էր՝ «Շա՛տ կեր, քի՛չ խոսիր»: Պատվանդանի վրա գտնվող դուռը ճռռոցով բացվեց, ու այնտեղից դուրս եկավ գեր, ծանրամարմին մի խոհարար՝ ուսին մետաղե, պսպղուն շերեփ: Նա շերեփն իջեցրեց ուսից, ինչպես զինվորականները հրացանն են իջեցնում, պահեց կողքին ու սկսեց բարձրաձայն գոչել.

- Հարգարժա՛ն շատակերներ, մեր գլխավորի համար խոհարարները

եփել են հարյուր հիսուն սագ, տապակել չորս խոզ: Խոզի ճարպով տապակել են երեք փութ կարտոֆիլ, մեկ փութ սոխ... Ա՜խ, սո՜խ, սո՜խ, սո՜խ, այնպես է բուրում, այնպես է բուրում, որ խենթանում ենք: Ներեցե՛ք լիրիկական շեղման համար... Սագի արգանակով եփած բորշչը մատուցելուց հետո մենք կմատուցենք տապակած խոզեր, տապակած կարտոֆիլ ու սոխ, որից հետո կմատուցենք խաշած սագեր, դա հենց այնպես, զբաղվելու համար... Մենք այսօր որոշել ենք նորամուծություն մտցնել մեր աշխատանքի մեջ: Առաջ մեր մեծափայլ գլխավորը այս բոլորը ճաշակելուց հետո լվանում էր ձեռքերը, նոր միայն քաղցրավենիք ու մրգեր անուշ անում: Բայց հիմա այդպիսի բան տեղի չի ունենա: Ինչո՞ւ իզուր ժամանակ վատնել լվացվելու և նման հիմար բաների վրա, չէ՞ որ ժամանակը թանկ է, չէ՞ որ այն մեր կյանքից է գնում, չէ՞ որ այդ պահերին մենք ոչինչ չենք ուտում, զրկում ենք մեզ: Չի կարելի, դա մեզ հարկավոր չէ, դա ժամանակի շռայլություն է: Պետք է խնայել ժամանակը, պետք է ամեն վայրկյանը օգտագործել միայն ու միայն ուտելու համար: Ուտե՜լ, ուտե՜լ, միայն ուտե՜լ... Այո՛, թանկագի՛ն պարոններ, չքնա՛ղ տիկիններ և հաստլի՛կ մանուկներ, մեր կյանքում նոր ժամանակներ են սկսվում... Իսկ հիմա թույլ տվեք շարունակել մեր ճաշացուցակի ընթերցումը: Վերը նշված ճաշատեսակները մատուցելուց անմիջապես հետո հերթի կդրվի չորս հարյուր քառասուներկու կտոր խորիզով թխված գաթա: Օ՜, ի՜նչ գաթաներ են... Դա հրուշակագործության արվեստի վերջին խոսքն է, որ կիրառում են մեր հրուշակագործները հրուշակագործության արվեստի ասպարեզում: Գաթան հազարաթերթ է, դեռ բերանդ չդրած՝ հալվում է ու ինքնիրեն կուլ գնում: Գաթայի հետ կմատուցենք մանր-մունր տորթեր, բիսկվիթներ... Հա, չմոռանամ ասել, որ այսօր առաջին անգամ մեր գլխավորին կմատուցենք «Նեգրի ժպիտ» կոչվող տորթը, որը երկգույն է: Սև և սպիտակ: Միայն տաղանդավոր բանաստեղծները կարող են նկարագրել այդ տորթի ժպիտը... Ի՜նչ ժպիտ, ի՜նչ հրաշք ժպիտ... խմորեղենից հետո կմատուցենք մրգեղենը: Այգեգործները արդեն հավաքել են յոթ քթոց ոսկեհատիկ խաղող, հինգ քթոց մեղրածոր թուզ, քառասուն ձմերուկ, հազար հատ նուռ... Ահա բոլորը: Ճաշը սկսված է: Բարի ախորժակ: Ա՜խ, ներեցե՜ք, մոռացա հունական ձիթապտուղը...

Նորից հնչեցին կոչնակները, խոհարարը շերեփը դրեց ուսին ու հանդիսավոր քայլերով ներս գնաց:

- Զվարճալի՜ է,- ծափահարեց Չիկարելին,- այնպես եմ ուզում տեսնել այդ շատակերներին:

- Ես ոչ միայն ուզում եմ տեսնել, այլև խոսել նրանց հետ:

- Ուրեմն գնանք նրանց մոտ,- ուրախ ասաց Չիկարելին ու բացեց պատվանդանի տակ գտնվող դուռը:

Մենք ներս մտանք: Տարբեր ուտեստներից ու ճաշերից բարձրացող տաք գոլորշին խփեց մեր երեսներին:

- Ֆո՜ւ... - քիթը բռնելով՝ ասաց Չիկարելին,- սոխի հոտից կարելի է գժվել:

- Ովքե՞ր եք, ո՞ւր եք գնում,- տապակած մի սագ խժռելով՝ գոռաց դռան հետևում նստած գեր խոհարարը, որի փորը քսվում էր գետնին:

- Մենք ուզում ենք հանդիպել գլխավոր շատակերին,- ասացի ես:

- Ճաշի ժամ է, չի կարելի,- կտրուկ պատասխանեց նա:- Հա, մոռացա հարցնել, ովքե՞ր եք:

- Մենք եկել ենք...

- Վա՜յ, վա՜յ, վա՜յ... զզվելինե՜ր, անտանելինե՜ր... մա՞րդն էլ այդքան նիհար լինի... Հա, մոռացա հարցնել, ի՞նչ եք ուզում գլխավորից:

- Ուզում ենք հանդիպել ու մի քանի հարց տալ:

- Կորե՛ք այստեղից: Ակաս-մակաս՝ դուք էիք պակաս:

- Բայց մենք Ձեզ չենք խանգարում:

- Դուք փչացնում եք իմ ախորժակը... Գնացե՜ք, գնացե՜ք, ուր ուզում եք՝ գնացեք, ինչ ուզում եք՝ արեք: Ձղայնությունից ծնոտս սկսեց դողալ: Կարող է հանկարծ ախորժակս փակվել...«Չենք խանգարում»: Խանգարեցիք, պրծաք...

- Մի՛ զայրացեք, խնդրում եմ, միայն ասեք, որտե՞ղ է ապրում ձեր գլխավորը: Այսինքն գլխավոր շատակերը:

- Ուղի՛ղ գնացեք... վա՜յ, վա՜յ, վա՜յ, զզվելինե՛ր, մարդու շնորհք չկա վրաները, գլուխն ափսեի մեջ թաղելով՝ դարձյալ մրթմրթաց դռան հետևում նստած շատակերը:

- Շնորհակալություն,- ասացինք մենք ու գնացինք նրա ցույց տված ուղղությամբ: Չորս, թե հինգ դուռ բացել-փակելուց հետո հայտնվեցինք մի մեծ սենյակում, որի կենտրոնում դրված սեղանին ձյունաթույր սփռոց էր փռված: Սեղանի գլխավերևում նստած էր անչափ գեր մի մարդ, որը երանությամբ տորթ էր ուտում:

- Բարև՛ Ձեզ,- նրան մոտենալով, հարգալից ասացի ես:

- Բարև՛, զզվելինե՛ր,- ուտելն առանց ընդհատելու՝ մեր բարևին պատասխանեց նա:

- Ներեցե՛ք, կարելի՞ է մի հարց տալ,- երկու քայլ նրան մոտեցավ Չիկարելին:

- Տվե՛ք,- առանց նրան նայելու ասաց տորթ ուտողը:

- Դուք այստեղի ամենագլխավո՞րն եք:

- Այո՛,- մատները լպստեց նա:

- Դուք երջանի՞կ եք, որ գլխավոր եք ու այդքան բան ունեք ուտելու,- զարմանքից չռած աչքերով հարցրեց Չիկարելին՝ գլխավոր շատակերի փորը տեսնելով:

- Երջանի՞կ... Ախր երջանիկ լինելու համար այնքան քիչ բան է պետք, այնքան քիչ բան...

- Օրինակ ի՞նչ:

- Օրինակ, որ ճաշերը ժամանակին մատուցեն: Երբեմն ուշացնում են: Քաղցից սիրտս տրորվում է:

- Ինձ հետաքրքրում է ևս մի հարց,- ասացի ես:

- Լսում եմ,- նա արագ-արագ թարթեց աչքերը:

- Դուք ինչպե՞ս դարձաք շատակեր:

- Լսի՛ր, զզվելի՛ նիհար, այդ ի՞նչ հարց ես տալիս... «Ինչպե՞ս դարձար շատակեր»: Նախ ես շատակեր չեմ, ինձանից ավելի մեծ շատակերներ կան, և երկրորդը՝ ես այդպես ծնվել եմ, դաստիարակվել: Հիմարներն են ինչ-որ բան ուզում դառնալ, իսկ ինձ նմանները ծնվում են:

- Մի հարց ևս կարելի՞ է:

- Օ՜ֆ, գլուխս ուռեց... «Հարց կարելի՜ է, հարց կարելի՜ է»: Մենք մի նպատակ, մի կարոտ, մի երազանք, մի ցանկություն ունենք՝ բոլորին դարձնել շատակեր: Երբ բոլորը կուշտ լինեն ու գեր, աշխարհի բոլոր հարցերը կլուծվեն... Այս միտքը տարածե՛ք, հանճարեղ միտք է,- ծիծաղեց շատակերների գլխավորը:

Սեղանն ու աթոռը, հատակն ու առաստաղը նրա ծանրությունից դողացին:

- Ես ուզում եմ Ձեզ էլի մի հարց տալ:

- Վա՜յ, վա՜յ, վա՜յ, ի՜նչ անտանելի, ի՜նչ զզվելի մարդիկ են այս նիհարները, անընդհատ հարցեր են տալիս, տանջում են ինձ... Ասե՛ք, ի՞նչ հարց է:

- Բայց Դուք ո՞ւմ վաստակն եք ուտում,- զայրացած հարցրեց Չիկարելին:

- «Բայց դուք ո՞ւմ վաստակն եք ուտում»... հիմար հարց: Քե՞զ ինչ, թե ում վաստակն ենք ուտում... եթե մենք չուտենք, ուրիշները կուտեն, դրա համար մենք ենք ուտում, որ ուրիշները չուտեն,- փիլիսոփայեց գլխավոր շատակերն ու կանչեց,- հե՜յ, «Նեգրի ժպիտը» բերեք:

- Հիմա,- դրսից գոչեցին մի խումբ մարդիկ:

- Բայց մարդը միայն ուտելու համար չի ստեղծված:

- Զզվելի՛ նիհարներ... Ինչքան ապուշ մտքեր կան, ձեզնից են դուրս գալիս: «Մարդը ստեղծված է վեհ գործեր կատարելու համար: Կառուցելու, ստեղծելու, իրենից հետո սերունդներին հիշատակ թողնելու...», հի՜, հի՜, հի՜...,- ծիծաղեց նա՝ դղրդացնելով սեղանը, աթոռը, հատակն ու առաստաղը,- մինչև հիմա մարդկությունը սխալ է ապրել: Մարդը ստեղծվել է ուտելու համար: Միայն ու միայն ուտելու համար: Կեցցե՜ն ուտողները, կեցցե՜ն բոլոր նրանք, ում համար ուտելը ամենավեհ նպատակն է: Թող կորչե՛ն նիհարները, քաղցածները, կուշտ

ու շատ ուտողներին ամբաստանողները: Դրանք մեր գաղափարական թշնամիներն են,- շունչը տեղը բերելով՝ ասաց գլխավոր շատակերն ու միանգամից մի դույլ թեյ խմեց:

- Օխա՜յ, էս թեյը որ չլիներ, ի՞նչ պիտի անեինք...

- «Նեգրի ժպիտ» տորթը մատուցում ենք,- դիմացի դռներից ներս մտավ ոտքից գլուխ ճերմակ հագած մի հրուշակագործ ու գնաց:

Երկփեղկանի դռան երկու փեղկերը լայն բացվեցին, չորս հրուշակագործ հատուկ պատրաստված պատգարակով ներս բերեցին «Նեգրի ժպիտ» տորթը:

- Հրա՜շք,- ծափ տվեց գլխավոր շատակերը,- այս հրուշակագործներին պարգևատրել տորթամեդալով: Նրանք հերոսներ են:

- Ձեր ախորժակը երբեք թող չփակվի,- զինվորականների պես գոչեցին հրուշակագործներն ու ինչպես եկել էին, այնպես էլ գնացին:

- Հը՜, զզվելի՛ նիհարներ, ի՞նչ կասեք,- մեզ դառնալով՝ երջանկացած ժպտաց գլխավոր շատակերը:

- Ներեցե՛ք, ո՞րն է Ձեր կյանքի նպատակը,- հարցրեց Չիկարելին:

- Մեր նպատակը բարի է՝ որքան կարելի է շատ ուտել:

- Ի՜նչ հիմարություն,- անկախ իրենից՝ բացականչեց Չիկարելին:

- Ինչ ասացի՞ր՝ «հիմարություն»: Վա՜յ, անպե՛տք նիհար,- կատաղությունից բղավեց շատակերը,- դուք մեր գաղափարական թշնամիներն եք: Հե՜յ, շատակերների գաղափարների պաշտպանն՝ե՛ր,- կանչեց նա ու ձեռքը խփեց սեղանին:

Անմիջապես ներս խուժեցին մի խումբ շատակերներ՝ մետաղե գդալները ուսներին դրած:

- Այս զզվելի նիհարները մեր գաղափարները ծաղրում են,- հանգիստ ասաց նա:

- Մահ նիհարներին, կեցցե՜ շատակերությունը,- գդալները գլխներիս պահած՝ միաբերան գոչեցին շատակերները:

- Սպասե՛ք, սպասե՛ք, բարի՛ մարդիկ... հո չի՞ կարելի միանգամից հաշվեհարդար տեսնել... Մենք ձեզ չէինք ուզում վիրավորել... Մենք...,- մի գդալի տակից փախչելով՝ ասացի ես:

- Սպասե՛ք, թողեք տեսնենք՝ ինչ են ասում, հետո կսպանենք,- փնթփնթաց գլխավոր շատակերը:

Շատակերները գդալները դրեցին ուսներին:

- Մենք ձեզ լսում ենք:

- Իմ բարեկամը և հատկապես ես շատ ենք խնդրում, որ դուք մեզ արտաքսեք: Այո՛, այո՛, արտաքսեք ձեր քաղաքից, դրանից մեծ վիրավորանք չկա: Դա ավելի լավ է, քան սպանելը,- վճռական ասացի ես ու լռեցի:

- Ճիշտ է ասում այս զզվելի նիհարը... Արտաքսեք, որ աչքներս այլևս դրանց չտեսնի,- գոռաց նա:

- Արտաքսե՞լ,- ձայնակցեցին շատակերները՝ մետաղե գդալները ճոճելով:

- Դուք այսօր խախտեցիք մեր կարգը... Ընդհանրապես մենք չենք խոսում: Մեր դրոշին գրված է. «Շա՛տ կեր, քի՛չ խոսիր»: Ինչո՞ւ այսքան խոսեցի, ինքս էլ չգիտեմ... Կորե՛ք, կորե՛ք, կորե՛ք, զզվելի՛ նիհարներ,- գոռգոռաց գլխավոր շատակերը:

Շատակերները բացեցին դռներն ու մեզ վռնդեցին:

- Գնացե՛ք և այլևս չհամարձակվե՛ք այս կողմերը գալ,- բղավում էին նրանք ու մետաղե գդալներով հարվածում մեր կողերին, գլխին, մեջքին...

Մենք հոգնած ու ծեծված դուրս եկանք շատակերների քաղաքի դարպասներից և մեր քայլերն ուղղեցինք դեպի Երկիր մոլորակի ընդերքը՝ դեպի աղբյուրը:

Ճանապարհին Չիկարելին երբեմն-երբեմն նայում էր ինձ, ուզում էր հարցեր տալ, հետո միտքը փոխում էր ու զարմանքից խոշորացած աչքերով նայում ոսկեգույն ժայռերին, քարերին, անձավներին... Ես հասկանում էի նրան: Նա ուզում էր ըմբռնել այն մարդկանց էությունը, որոնց մենք հանդիպում էինք, զրուցում հետները, ուզում էր իմանալ, թե ովքե՞ր են դրանք և ինչո՞ւ են այստեղ ապրում...

- Իսկապես, ինչո՞ւ են դրանք այստեղ ապրում,- հարցրեց նա:

- Դրանք այն երեխաներն են, որոնք փախել են իրենց տներից, իրենց ծնողների մոտից, հարազատներից, թաքնվել են այստեղ, ինչպես ուզում՝ այնպես էլ ապրում են,- պատասխանեցի ես,- նրանց մեջ մեռել է պատասխանատվության ու արժանապատվության զգացումը:

- Օ՜, ի՜նչ զարհուրելի է... Ես դրանց մասին կասեմ պարոն Վաչիկին:

- Պարոն Վաչիկը ո՞վ է:

- Մեր դպրոցի դիրեկտորը: Նա շատ խիստ է և այդպիսի բաներ չի սիրում: Գիտե՞ք նա սրանց ինչ կաներ... Մի րոպեում մարդ կդարձներ...

- Սիրելի՛ս, եթե հնարավոր լիներ մի րոպեում այսպիսիներին դաստիարակել, մարդ դարձնել, աշխարհում շատ բան կփոխվեր: Ամենադժվար բանը մարդուն վերադաստիարակելն է,- հառաչեցի ես ու հիշեցրի բոլոր նրանց, ովքեր վաղուց կորցրել են իրենց մարդկային նկարագիրը և իրենց թույլ են տալիս այնպիսի արարքներ, որ արատավորում են մարդու վեհ անունը:

Չիկարելին լռեց: Նա մտքերի մեջ ընկավ: Ես նույնպես չէի ուզում խոսել:

Մենք լուռ քայլում էինք կողք կողքի ու խորհում գեղեցիկ, առաքինի, բարի ու գթասիրտ մարդ մնալու մասին: Մարդը բնության զարդն է, Աստծո ստեղծած ամենակատարյալ արարածը ողջ տիեզերքում, և նա իրավունք չունի մարդու գեղեցկությունը, իմաստությունը, մարդու աստվածային էությունը արատավորելու...

Կապտաշղարշ լույսը տեղ-տեղ խամրում էր, հետո նորից նույն միապաղաղությամբ շարունակում լուսավորել մեր ճանապարհը...

Մենք ո՛չ կողմնացույց ունեինք, ո՛չ էլ քարտեզ: Մենք գնում էինք անհայտ ու անորոշ ուղղությամբ և չգիտեինք՝ դեռ ում էինք հանդիպելու...



ԵՐԿԱՐԱՍԱՏՆԵՐԸ

Կանաչադեղնավուն ժայռերից մեկի ստորոտում մեր դեմ ցցվեց նիհար ու դեղին դեմքով մի մարդ՝ ձեռքերը գրպանները խցկած։

- Բարև՛, եղբայրնե՛ր,- երգեցիկ ձայնով բարևեց նա։

- Բարև՛։

- Այդ ո՞ւր,- քաղցր ժպտալով՝ հարցրեց նա։

- Աղբյուրի մոտ,- պատասխանեցի ես։

- Ա՜խ, աղբյուրի մոտ... հի՜, հի՜, հի՜...,- անդուր ծիծաղեց նա,- զուր եք ձեզ տանջում, եղբայրներ, աղբյուրն այնքան հեռու է, որ չեք հասնի... հի՜, հի՜, հի՜...,- նորից ծիծաղեց նա։

- Ինչո՞ւ եք ծիծաղում,- հարցրեց Չիկարելին։

- Ծիծաղում եմ, էլի՜... Արգելվո՞ւմ է ծիծաղելը։

- Չէ, չի արգելվում, բայց ինչո՞ւ եք ծիծաղում։

- Ձեզ տեսա՝ ուրախացա... Ուզում եմ ձեզ հրավիրել մեզ մոտ։ Աղբյուրը չի փախչի, երբ էլ ուզեք՝ կարող եք գնալ,- ձեռքերն ավելի խոր խցկելով գրպանները՝ ասաց նիհար ու դեղին դեմքով մարդը։

- Մենք շտապում ենք,- ասաց Չիկարելին ու քաշեց ձեռքս։

- Ո՞ւր եք շտապում... կամ ինչո՞ւ եք շտապում... Սրանից լավ տեղ չեք գտնի։ Բացի այդ, ձեր ճանապարհն անցնում է մեր քաղաքի միջով։ Ուզած-չուզած պետք է մեր հյուրը լինեք։

- Հետ դառնանք,- ոտքը գետնին խփելով՝ ասաց Չիկարելին,- ես չեմ ուզում սրա երեսը տեսնել...

- Մենք չենք կարող հետ դառնալ,- ասացի ես։

- Ճիշտ է ասում, չեք կարող հետ դառնալ։ Ուզած-չուզած պետք է գաք իմ հետևից,- ծիծաղելով ասաց նիհար ու դեղին դեմքով մարդը։

Չիկարելին նայեց ինձ, նայեց նիհար ու դեղին դեմքով մարդուն, ապա լուռ քայլեց նրա ցույց տված ուղղությամբ։ Մի քանի քայլ դեռ չէինք արել, երբ մեր դեմ բացվեց կլոր քարե մի դուռ։ Քարե դռնից գլուխը դուրս հանեց պսպղուն աչքերով մի մարդ ու արագ-արագ ասաց.

- Թանկագի՛ն եղբայրներ, մեր քաղաքի դարպասները վաղուց ձեզ նման պատվավոր հյուրերի առաջ չէին բացվել։ Համեցե՛ք,- ժպտաց նա ու գլուխը ներս քաշեց։

Մենք տարակուսած կանգնեցինք նեղ ու կլոր դռան առաջ։

- Նե՛րս մտեք, ինչո՞ւ եք կանգնել,- ասաց նիհար ու դեղին դեմքով մարդը։

- Ինչպե՞ս,- հարցրի ես։

- Սողալով։

- Ինչպե՞ս թե սողալով,- հարցրեց Չիկարելին։

- Այսպես,- ասաց նիհար ու դեղին դեմքով մարդը, քարե անցքից սողալով ներս խցկվեց ու ներսից ձայն տվեց մեզ,- եկե՛ք։

Ես գլուխս խցկեցի քարե անցքի մեջ ու սողեսող ներս մտա։ Ինձանից հետո ներս մտավ նաև Չիկարելին։

Քաղաքի տները գետնափոր էին։ Մի քանի ծուռտիկ-մուռտիկ փոքրոցներ երևացին, որոնք լցված էին խնձորներով։ Խնձորներ էին նկարված նաև տների դռներին, պատուհաններին, տանիքներին։ Մի խոսքով, ամեն տեղ խնձորներ էին՝ մեծ, փոքր, դեղին, կանաչ, կարմիր...

- Սա ի՞նչ է, խնձորանո՞ց է, թե՞ քաղաք,- հարցրեց Չիկարելին։

- Հի՜, հի՜, հի՜,- մեզ նայելով՝ ծիծաղեցին մեր նոր ծանոթները։

Ես գետնից մի խնձոր վերցրի։

- Կարելի՞ է ուտել։

- Եթե կարող եք ծամել, կերեք,- ասաց պսպղուն աչքերով մարդը։

- Հի՜, հի՜, հի՜,- ծիծաղեց նիհար ու դեղին դեմքովը,- կերե՜ք, կերե՜ք...

- Իմ ատամները շատ ամուր են ու սուր,- ասացի ես ու խնձորը տարա բերանս։



Հենց այդ վայրկյանին զգացի, որ այն շատ ծանր է ու ամուր:

- Այս խնձորը քարից է,- բացականչեցի ես:

- Ինչպե՞ս թե քարից է,- զարմացավ Չիկարելին ու խնձորը ձեռքիցս վերցրեց:

- Այո՛, մեր խնձորները քարից են,- ուրախացած ասաց դեղին դեմքով նիհար մարդը:

- Ինչո՞ւ,- հարցրինք մենք:

- Դա այնքան երկար պատմություն է, որ եթե երեք օր ու գիշեր պատմեմ՝ չի վերջանա,- ասաց պսպղուն աչքերով մարդը՝ ձեռքերը մեզնից թաքցնելով: Իսկ նիհար ու դեղին դեմքով մարդը սուլեց: Ահա հենց այդ սուլոցի վրա, ասես գետնի տակից, հայտնվեցին մի խումբ տղաներ, որոնք, իրենց երկար մատները թափահարելով, սկսեցին երգել ու պարել...

Մեր մատնե՜րը, մեր մատնե՜րը,
Օ՜, հրաշք են մեր մատները,
Երկարում են, կարճանում են,
Արագ մտնում ու «մաքրում են»
Գրպանները ուրիշների...

Մեր մատնե՜րը, մեր մատնե՜րը,
Օ՜, հրաշք են մեր մատնե՜րը:
Ինչ չեն տեսնում մեր աչքերը,
Թռցնում են մեր մատները,

Մեկ վայրկյանում դատարկում են
Գրպանները ուրիշների...
Ա՜խ, մատնե՜րը, մեր մատնե՜րը,
Օ՜, հրաշք են մեր մատները...
Արագ մտնում, դուրս են գալիս
Գրպանները ուրիշների...

Նրանք այնպես ինքնամոռաց էին երգում ու պարում, որ մենք զարմացած նայում էինք նրանց երկար մատներին ու ժպտում:

- Ձեզ դո՞ւր եկավ մեր երգը,- վերջացնելուց հետո հարցրին նրանք:

- Իսկ դա ի՞նչ երգ է,- հարցրեց Չիկարելին:

- Գրպանահատների օրհներգը,- հիացած գոռգոռացին նրանք:

- Ինչպե՞ս թե գրպանահատների օրհներգ,- հարցրի ես,- մի՞թե գողերը օրհներգ ունեն:

- Այո՛: Այս քաղաքում են ապրում հասարակության մեջ մեծ անուն ու համարում ունեցող գրպանահատներ՝ Մուկ կրծողը, Չամոն, Փոլոն, Հարիֆ Ալոն, Ճանճ Ճլոն, Մրջյունը, Մրոտը ... Մենք ենք քաղաքի լավ տղերքը... Մենք... Բա ի՞նչ անենք, էնդեղ վառում են... ըստեղ լավ ա, մեզ համար ապրում ենք... Հա՜, կարող ա ուզեք մեր գործով զբաղվել... վատ գործ չի... Թե բախտներդ բերեց, կարող ա մի վայրկյանում միլիոնատեր դառնաք...

- Ի՞նչ,- հարցրի ես ու ավելի մոտեցա նիհար ու դեղին դեմքով մարդուն:

- Մեր գործով զբաղվեք... Մի քանի շաբաթում ձեր մատներն էլ մեր մատների պես կերկարեն:

- Մենք ավելի հետաքրքիր գործ ունենք,- ասացի ես:

- Լավ,- անվրդով ասաց դեղին դեմքով մարդն ու ինչ-որ բառեր շշնջաց իր մոտ կանգնած մի երկարամատի ականջին, որն անմիջապես չքվեց:

- Ցանվե՛ք,- հանգիստ ասաց նա երկարամատների խմբին: Բոլորը միանգամից անհետացան: Ասես գետնի տակ մտան: Չիկարելին զարմանքից ծափ տվեց:

- Մարդկանց գրպանները մաքրելու համար երկար մատներ են պետք, իսկ անմիջապես ցանվելու համար՝ արագավազ ոտքեր: Հի՜, հի՜, հի՜...

- Իսկ դուք չե՞ք կարող ուրիշի գրպանները չմտնել:

- Ո՛չ, չենք կարող:

- Ինչո՞ւ:

- Դե, ո՞նց բացատրեմ, ախպե՛ր... Մենք մասնագետներ ենք... մենք...- կմկմաց դեղին դեմքով մարդը,- դա հիվանդության նման մի բան է:

- Բուժվե՛ք,- խիստ ասաց Չիկարելին:

- Մեր հիվանդությամբ տառապողների հիվանդանոցը բանտերն են: Մեր քաղաքում ապրող անվանի գրպանահատների մեծ մասը հինգ-վեց անգամ եղել է այդ «բուժարաններում» և, ճիշտն ասած, այնտեղից դուրս են եկել ավելի հիվանդացած: Այնպես որ, ախպերնե՛ր, դուք գտնվում եք մարդկության լավագույն ներկայացուցիչների մոտ... Ես ինձ շատ երջանիկ կզգամ, որ դուք համալրեք մեր շարքերը, դառնաք մեր քաղաքի պատվավոր քաղաքացիներ... Ճիշտ է, հիմա այնքան էլ լավ չեն մեր գործերը, բայց և այնպես մենք կանք... Տեխնիկայի զարգացումը մեզ շատ վնասեց: Առաջ, երբ տրամվայները լիքն էին լինում, լավ գործ էինք անում: Օր էր լինում՝ քսան-երեսուն գրպան էի դատարկում,- դեղին դեմքով մարդը այդ բոլորը պատմելու ժամանակ անվերջ պտտվում էր մեր շուրջն ու մի քանի անգամ աննկատ մտավ մեր գրպանները և ոչինչ

չգտնելով՝ զայրացած բացականչեց.

- Անխի՛ղճ մարդիկ, դատարկ գրպաններո՞վ եք ման գալիս: Դատարկ գրպաններ... Զզվելի՛ դատարկներ...

- Մենք...

- Լռի՛ր, լռիր,- երկար մատները շոյելով՝ ասաց դեղին դեմքով մարդը,- ահա գալիս է մեր շեֆը: Սքանչելի մարդ է: Մեծ մասնագետ: Նա կարող է ձեր աչքերին նայել ու ասել, թե ինչեր կան ձեր գրպաններում: Այդպիսի մասնագետներ հիմա չկան: Ծանոթացե՛ք: Ժնջիլ Բուլո:

- Բարև՛, եղբայրնե՛ր,- շրթունքներն առանց շարժելու՝ շշնջաց բարձրահասակ մի մարդ, որի կապույտ աչքերը սկսեցին թափառել մեր գրպանների մոտ: Ես զարմացած նայում էի նրա անչափ գեղեցիկ ու նուրբ մատներին: Ինձ թվում էր՝ այդ մատները քանդակել է աշխարհի ամենահանճարեղ քանդակագործը: Ինչպե՞ս կնախանձեին այդ մատներին բոլոր ջութակահարներն ու դաշնակահարները:

- Ես գիտեմ՝ դուք ինչ եք մտածում,- մեր գրպաններից հիասթափված՝ ասաց բարձրահասակ մարդը:

- Ի՞նչ,- հարցրի ես:

- Դուք մտածեցիք իմ մատների մասին:

- Այո՛,- զարմացած ասացի ես:

- Ծնողներս ասում էին՝ միայն մեծ Պագանինին է այսպիսի մատներ ունեցել: Նրանք երազում էին, որ ես երաժիշտ դառնամ, ջութակահար կամ դաշնակահար: Ես չէի սիրում պարապել: Փախչում էի դասերից: Եվ մի գեղեցիկ օր ջութակս և-ևս արեցի, այսինքն՝ գցեցի մի կողմ ու անցա իսկական գործի... Մի անգամ ձախ ձեռքիս մատների թեթև մի հպումով լույս աշխարհ հանեցի հինգ հազար ռուբլի:.. Եղել է, որ ավելի շատ եմ աշխատել: Ահա այս ձեռքիս մատները կարողանում են աննկատ մտնել ամենաանեղ գրպանն ու դուրս գալ... Վարպետություն, ճարպկություն և համարձակություն: Ահա այն երեք հատկությունները, որով օժտված պիտի լինի մեր մասնագիտությամբ զբաղվողը:

- Իսկ ինչո՞ւ ձեր քաղաքի փողոցներում, տների պատերին, դռներին, լուսամուտներին, տանիքներին խնձորներ են նկարված,- հարցրեց Չիկարելին:

- Խնձորնե՞ր... ա՜խ, խնձորնե՞ր,- հառաչեց բարձրահասակ մարդը,- դրանք իմ մանկության և պատանեկության տարիների հիշողություններն են: Այս խնձորները բախտորոշ նշանակություն են ունեցել իմ կյանքում:

- Խնձորնե՞րը,- ծիծաղեց Չիկարելին:

- Այո՛, խնձորները,- դառնացավ բարձրահասակ մարդը,- խորհուրդ կտայի ոչ մեկի բախտի ու ճակատագրի վրա չծիծաղել:

- Ներեցե՛ք, ես չէի ուզում ձեզ վիրավորել, պարզապես ինձ զարմացրեց այն, որ խնձորները կարող են մարդու ճակատագրում դեր խաղալ:

- Այո՛, կարող են: Մենք ապրում էինք այգիներով շրջապատված մի տան մեջ: Ամեն գարուն ծաղկում էին մրգատու ծառերը, բայց ամենից շատ՝ խնձորենիները: Ծեր այգեպանի խնձորենիների նման խնձորենիներ ոչ մի տեղ չկար: Նրա այգու խնձորները, բացի նրանից, որ արտակարգ համեղ էին, նաև բուժիչ հատկություն ունեին... Մի անգամ գարնանը, երբ ծառերն արդեն պտղակալել էին, ես անցնում էի այգու մոտով: Այգեպանը այնտեղ չէր: Ես մտա այգին ու սկսեցի խակ խնձորները պոկել, լցնել գրպաններս, ծոցս... Երբ ուզեցի այգուց դուրս գալ, հանկարծ տեսա մի փոքրիկ խնձորենի, որն արմատները հողից հանեց ու ընկավ իմ հետևից: Ես փախա, որ ազատվեմ նրանից, բայց հնար չկար: Ուր գնում էի՝ գալիս էր: Մտա այգեպանի տնակն ու պինդ փակեցի դուռը: Խնձորենին արմատները խրեց հողի մեջ ու կանգնեց դռնակի առաջ:

«Ի՞նչ անեմ, ո՞նց ազատվեմ այդ ծառից,- մտածում էի ես,- հիմա ուր որ է այգեպանը կգա»: Ուզում էի դուռը բացել, բայց հնար չկար: Ծառը ճյուղերով աչքերս հանում էր:

- Ա՜յ ծառ, խնդրում եմ, մի կո՛ղմ քաշվիր, ես ուզում եմ տուն գնալ... Մերոնք ինձ են սպասում,- ծառը ճյուղերը շարժեց, կարծես ուզում էր խոսել, բայց այդ պահին եկավ այգեպանը: Ծառը հառաչեց ու սկսեց լաց լինել: Նրա տերևների վրայից անձրևի նման ցած էին թափվում արցունքները:

- Ի՞նչ է պատահել,- ծառի բունը գրկելով՝ հարցրեց ծեր այգեպանը:

Տերևները խշշացին:

- Ահա թե ի՜նչ,- տեղից վեր կացավ այգեպանը,- վա՜յ, անամո՛թ, վա՜յ, անխե՛լք տղա: Ոչինչ, ոչինչ, դու գնա քո տեղը, ես նրան ինչպես հարկն է, կպատժեմ: Գնա՛, գնա՛, սիրելի՛ս, գնա՛, հիմա քեզ համար ջուր կբերեմ,- ծառին փաղաքշելով՝ ասաց այգեպանը, կողպեքով փակեց տնակի դռնակն ու ծառի հետ գնաց այգու խորքերը: Ես մինչև մութն ընկնելը լուռ ու մունջ նստեցի այգեպանի տնակում: Իսկ երբ մութն ընկավ, քաղցածությունից ու վախից սկսեցի լալ, օգնություն կանչել:

- Ո՞վ է,- դռան հետևից ձայն տվեց այգեպանը:

- Խնդրում եմ, դուռը բացե՜ք:

- Դու ո՞վ ես,- հանգիստ հարցրեց նա:

- Դուռը բացե՛ք... Մայրիկս ու հայրիկս ինձ են սպասում...

- Ո՞վ ես:

- Դուռը բացե՛ք,- ճչացի ես։

Այգեպանը բացեց դուռը։

Ես բոլոր խնձորները լցրել էի թախտի տակ։

- Ո՞ւր են խնձորները,- առանց երեսիս նայելու՝ հարցրեց այգեպանը։

- Ի՞նչ խնձորներ,- կմկմացի ես։

- Այն, որ խակ-խակ պոկոտել, լցրել ես ծոցդ ու գրպաններդ։

- Ես չեմ պոկոտել... Ես չգիտեմ... Ի՞նչ խնձորներ...

- Ինչպե՞ս չես ամաչում,- զայրույթը զսպելով՝ ասաց այգեպանը,- դու հենց հիմա գործեցիր քո երկրորդ, գուցեև ամենավատ հանցանքը՝ սուտ խոսեցիր։ Խնձորները թախտի տակ են...

- Ես բոլորովին պատահաբար եմ պոկել... ես չգիտեի... չէի ուզում... բայց... Թույլ տվեք տուն գնալ... Մայրիկս ու հայրիկս սպասում են ինձ...

- Ոչինչ, թող սպասեն։ Նրանք պետք է իմանան, որ դու գողություն ես արել։

- Մի՞թե խնձոր քաղելը գողություն է։

- Իհարկե, գողություն է։ Առանց թույլտվության այգի մտնելն ու խակ խնձորներ պոկոտելը հանցագործություն է,- ասաց այգեպանն ու նստեց թախտին,- դո՛ւ էլ նստիր,- առաջարկեց այգեպանը։

Ես նստեցի նրա կողքին։

- Գողությունը՝ մի հանցանք, սուտ խոսելը՝ երկու,- ասաց նա։

- Թույլ տվեք տուն գնալ։

- Կգնաս,- հանգիստ ասաց նա,- մի բան պատմեմ, լսի՛ր, նոր գնա։

- Բայց ես...

- Հանգի՛ստ նստիր... Մի՛ շտապիր... Լսի՛ր այս պատմությունը, գուցե քեզ պետք կգա... Ցրտաշունչ ձմռան մի օր դողդողալով դարմանանոց մտավ մի ճնճղուկ։ Ողջ դարմանը դեսուդեն տվեց, քուջուջ արեց, հազիվ մի հատիկ ցորեն գտավ խեղճ ճնճղուկը։ «Ի՜նչ լավ է,- սրթսրթալով մտածեց,- կտանեմ տուն հիվանդ ճուտիկիս»։ Ցորենի հատիկը դրեց գրպանը, էլի դարմանը դեսուդեն տվեց, բան չգտավ։ Թևերը թափ տվեց ու թռավ։ Շուտով նրան հանդիպեց սևաթև մի ճնճղուկ։ Մայր ճնճղուկը նրան չէր ճանաչում և չէր էլ ուզում նրա հետ խոսքի բռնվել։ Սևաթևը անընդհատ հետևում էր նրան, կպչո՜ւմ էր թևին, ծիծաղում։

- Ի՞նչ ես ուզում,- զայրացած ասաց ճնճղուկը։

- Էստեղ մի մառան կա, մեջը՝ լիքը գարի։ Գնանք փեշներս ու ծոցներս լցնենք, տանենք տուն,- փսփսաց նա։

- Չէ՛, ես չեմ կարող գողություն անել,- ասաց մայր ճնճղուկը։

- Հիմա՛ր,- արհամարհական ասաց սևաթևն ու արագ հեռացավ։

Ճնճղուկը ուրախ էր, որ չգայթակղվեց սևաթևի ասածով ու չգնաց գողության, որովհետև հայրն ու մայրը նրան պատվիրել էին, որ երբեք ուրիշի ունեցվածքին ձեռք չտա:

Նա տուն էր շտապում, որ կերակրի իր հիվանդ ճուտիկին: Ճանապարհին մի քանի անգամ շոշափեց հատիկը: Տեղում էր: Հետո տեսավ մի խումբ ճնճղուկներ, որոնք խմբվել էին կիսաքանդ մի տանիքի և արագ-արագ ներսուդուրս էին անում: Մոտեցավ նրանց:

- Այնտեղ ի՞նչ կա, որ այսպես ներսուդուրս եք անում,- հարցրեց նա:

- Քեզ հետ գլուխ դնելու ժամանակ չունենք,- նրան այս ու այն կողմ հրմշտեցին ճնճղուկները:

Հետո նա միացավ մի մեծ խմբի, որ վերջապես իմանա, թե ինչու են բոլորը արագ-արագ ներսուդուրս անում: Բայց դարձյալ նրան ոչ ոք ոչինչ չասաց:

Ճնճղուկը վրդովված հեռացավ խառնիճաղանջ խմբից ու մի կերպ տուն հասավ: Նրա հիվանդ ճուտիկը թնկթնկաց.

- Քաղցած եմ: Մայրի՛կ, քաղցած եմ...

- Հիմա, հիմա, փոքրի՛կս,- ասաց ճնճղուկը,- հիմա հատիկը կեփեմ, կուտես:

- Իմ բարի՛, իմ լա՛վ մայրիկ,- հուզմունքից դողացող ձայնով մրմնջաց հիվանդ ճուտիկն ու համբուրեց մոր թևերը:

Մայր ճնճղուկն ուզեց գրպանից հանել ցորենի հատիկը, որ աղա, ապուր եփի, բայց տեսավ՝ հատիկը չկա: «Ի՞նչ եղավ»,- տագնապով գրպանները քրքրելով՝ ինքն իրեն հարցնում էր ճնճղուկը, բայց հատիկը չկար ու չկար: Գուցե գրպանից վայր է ընկել ու կորել... Ո՛չ, ո՛չ, չէր կարող: Պարզապես մի գող ճնճղուկ նրա գրպանից հանել էր ցորենի հատիկը... Քաղցից մեռավ հիվանդ ճուտիկը: Մայր ճնճղուկը վշտից տոչորվեց: Իսկ գողը, կարծում ես, հանգիստ կերավ հատիկն ու մարսե՞ց: Ո՛չ: Գողը եթե նույնիսկ չի բռնվում, չի դատվում, ապա անպայման բնության կողմից պատժվում է: Երեք օր հետո սևաթև ճնճղուկը, որ գողացել էր հատիկը, կուրացավ: Թռչելիս ուժով զարնվեց պատին, թևերը կոտրեց ու ահավոր տառապանքներով սատկեց... Այդպես են բոլոր գողերը. պատժեն, չպատժեն՝ միևնույն է, վերջում բնությունը նրանց պատժում է...

Բարձրահասակ մարդը լռեց:

Մենք նույնպես լռել էինք: Ի՞նչ ասեինք՝ չգիտեինք:

- Իսկ Դուք ինչո՞ւ պատմեցիք այդ պատմությունը,- հարցրի ես:

- Չգիտեմ,- հառաչեց բարձրահասակ մարդը,- ես այն ժամանակ չհասկացա այգեպանի պատմածի իմաստը: Նա ինձ ներեց, ճիշտ է,

առանց պատժելու բաց թողեց, բայց ես խելքի չեկա... Ես շարունակեցի գողություն անել, և ահա օր-օրի մատներս այսպես երկարեցին: Մենք այստեղ՝ գետնի տակ, մի թանգարան ունենք, ուզո՞ւմ եք տեսնել,- խոսքը կտրուկ փոխեց բարձրահասակ մարդը:

- Հետաքրքի՞ր է,- հարցրեց Չիկարելին:

- Ինչե՜ր ասես՝ չկան այդ թանգարանում: Գնանք, խնդրեմ:

Մենք մտանք մի ընդարձակ գետնափոր սրահ. պատերի տակ՝ ցուցադարակներում, շարված էին հազարավոր ժամացույցներ, շղթաներ, դատարկ դրամապանակներ, գրիչներ, գրոտած ծոցատետրեր...

- Սրանք իմ մատների մեղեդիներն են,- ասաց բարձրահասակ մարդը,- մի ակնթարթում ես կարող եմ մտնել ու դուրս գալ ցանկացած մարդու գրպան և այնտեղից հանել գրպանի ողջ պարունակությունը: Ահա իմ մատները,- նա հպարտությամբ ցույց տվեց իր մատները,- սրանք մատներ չեն, այլ գրպաններ դատարկող գործիքներ: Ամենազզվելի գրպանները ուսանողների գրպաններն են: Կոտրատված գրիչներից ու գրոտված թղթերից բացի, ուրիշ բան չես գտնի: Իսկ ամենահետաքրքիր գրպանները տատիկների ու պապիկների գրպաններն են: Օ՜, ինչպիսի՜ պապիկներ կան, ինչպիսի՜ տատիկներ, որոնք սքանչելի գրպաններ ունեն: Այնտեղ ոչ միայն դրամ է լինում, այլև քաղցրավենիք: Մի անգամ մի պապիկի գրպանից ոսկյա շղթայով մի ժամացույց եմ պեղել: Պապիկը, ըստ երևույթին, շատ փնթի էր, ժամացույցը փաթաթել էր կեղտոտ թաշկինակի մեջ: Ես երեք անգամ մուտք գործեցի գրպանը, բայց չկարողացա հանել: Չորրորդ անգամ ռիսկի դիմեցի, ի՞նչ եք կարծում, ինչպե՞ս հանեցի ժամացույցը: Ուշադրությո՛ւն դարձրեք այս մատներիս,- նա մեզ ցույց տվեց աջ ձեռքի ցուցամատն ու միջնամատը,- սրանք երկարեցին ու դուրս հանեցին թանկագին ավարը...

- Ինչպե՞ս չեք ամաչում,- զզվանքով ասաց Չիկարելին:

- Ինչո՞ւ ամաչեմ,- կտրուկ ասաց բարձրահասակ մարդը,- չէ՞ որ դա իմ մասնագիտությունն է:

- Գոնե զղջո՞ւմ եք, որ գրպանահատ եք, արհամարհված մարդ,- ասացի ես:

- Ձեր գրպանները բոլորովին դատարկ են... Ձեզ հետ չարժե խոսել: Դուք ամաչեք, որ ոչինչ չունեք,- արհամարհանքով ասաց նա ու անդուր ժպտաց:

Ես այդտեղ հասկացա, որ աշխարհում ամենավատ բանն այն է, երբ մարդը կորցնում է իր արժանապատվությունն ու չի ամաչում իր կատարած վատ արարքի համար:

- Գնանք, գնանք այստեղից,- Չիկարելիի ձեռքը բռնելով՝ ասացի ես:

- Սպասե՛ք, առանց հրաժեշտի ո՞ւր եք գնում,- վրա տվեց բարձրահասակ մարդն ու սուլեց:

Նորից, ասես գետնի տակից, հայտնվեցին մի խումբ երկարամատներ ու սկսեցին, մեր շուրջը պտտվելով, երգել ու պարել:

- Մեր մայրնե՜րը, մեր մայրնե՜րը,
Օ՜, հրաշք են մեր մայրները,
Երկարում են, կարճանում են,
Արագ մտնում ու «մաքրում» են
Գրպանները ուրիշների...
Մեր մայրնե՜րը, մեր մայրնե՜րը,
Օ՜, հրաշք են մեր մայրները:
Ինչ չեն տեսնում մեր աչքերը,
Թռցնում են մեր մայրները...
Մեկ վայրկյանում դատարկում են
Գրպանները ուրիշների....
Ահ, մայրնե՜րը, մեր մայրնե՜րը,
Օ՜, հրաշք են մեր մայրները...
Արագ մտնում, դուրս են գալիս
Գրպանները ուրիշների...

- Մի՞թե այստեղ լավ չէ,- երգն ու պարը ավարտելուց հետո մեզ դիմեց բարձրահասակ մարդը,- գուցե համաձայնե՞ք, մենք մի քանի օրում ձեր մատները կվարժեցնենք մեր արհեստին:

- Ո՛չ, ո՛չ, մենք չենք կարող ձեր արհեստը բանեցնել,- ասացի ես,- ցո՛ւյց տվեք այստեղից դուրս գնալու ճանապարհը:

- Հե՜յ, ուղեկցի՛ր սրանց,- նիհար ու դեղին դեմքով մարդուն դիմեց բարձրահասակն ու չքվեց:

Նիհար ու դեղին դեմքով մարդը մեզ ուղեկցեց մինչև քաղաքի ելքը. այդ ընթացքում նրա երկար մատները մի քանի անգամ մտան ու դուրս եկան մեր դատարկ գրպանները: Առանց հրաժեշտի նա հեռացավ...





ՊԱՐՍԱՏԻԿԱՎՈՐՆԵՐԸ

Բլրակների լանջերին ճյուղակոտոր ու անտերև ծառեր կային:

- Ինչո՞ւ են այս ծառերն այսպես այլանդակված,- հայացքն անտերև ու ջարդված ճյուղերով ծառերից չկտրելով՝ հարցրեց Չիկարելին:

- Երևի կարկտահարվել են,- ասացի ես:

- Ո՜չ, ո՜չ, մենք կարկտահարված չե՜նք... կարկտահարված չե՜նք,- հառաչեց ծառերից մեկը,- բարի՛ մարդիկ, խնդրում եմ, շատ եմ խնդրում, օգնեցե՜ք,- ջարդված ճյուղերից արցունքներ թափվեցին:

- Դու լա՞ց ես լինում, ծա՛ռ,- ծառի բունը գրկելով՝ հարցրեց Չիկարելին,- ի՞նչդ է ցավում, ասա՛, ի՞նչդ է ցավում...

- Ցավն ի՜նչ... Վիրավորանքը չեմ կարող տանել,- մրմնջաց ծառը,- ցավն անցնում է, վերքը՝ բուժվում, վիրավորանքը չի անցնում: Վիրավորանքը չի բուժվում...

- Ովքե՞ր են քեզ վիրավորել:

- Անտանելի տղաներ են... Նրանք կարծում են՝ հեշտ է ծառ լինելը: Հապա ամբողջ օրը կանգնեք դրսում՝ կիզիչ արևի ու սառը անձրևների

տակ, ձմռան ցրտերի ու աշնան սառնաշունչ քամու դեմ... Ես ծառ եմ, ճիշտ է, բայց խիղճ ունեմ և գիտեմ՝ ինչի համար եմ կանաչում...

Ես, որ բավականին երկար եմ ապրել աշխարհում, հազարավոր անգամներ շրջել եմ անտառներում, տեսել բազմաթիվ ծառեր, երբեք չէի պատկերացնի, որ ծառը կարող է խոսել: Չիկարելին գրկեց ծառի բունը և չէր ուզում նրանից բաժանվել:

- Կարելի՞ է, որ մենք մի քիչ մնանք այստեղ,- խնդրեց նա:

- Իհարկե,- համաձայնեցի ես ու նստեցի խճաքարերի վրա:

Չիկարելին գործի անցավ: Նա կոտրատված ճյուղերը զգուշությամբ հեռացրեց, որ հանկարծ ծառին ցավ չպատճառի, մոտակա առվակից ջուր բերեց ու ջրեց ծառը:

- Շնորհակալություն,- շշնջաց ծառը,- ես երբեք չեմ մոռանա քեզ: Չեմ մոռանա քո լավությունը...

- Մեծ բան չէր իմ արածը,- ասաց Չիկարելին ու նստեց իմ կողքին:

Մենք լռեցինք: Ես չգիտեի, թե Չիկարելին ինչ է մտածում իր մասին, հարազատների, իր ընկերների և այս ճամփորդության մասին... Կարոտն սկսել էր ինձ տանջել, կարոտն հիշողությունների խարույկներ վառեց սրտիս մեջ, ու ես մտքով այցի գնացի այն վայրերը, որտեղ առաջներում եղել եմ... Ես չէի կարողանում ճշտորեն որոշել, թե քանի ժամ է, ինչ գտնվում ենք ցամաքած աղբյուրի հունում, ու քանի ժամ կլինի, որ չեմ տեսել երկինքը, որի կապույտ գմբեթի տակ փռված են մեր դաշտերն ու անտառները, սարերն ու ձորերը, քարակերտ տաճարներն ու հնամյա վանքերը...

Ես հիշեցի Մակարավանքը: Դա Հայաստանի միջնադարյան ճարտարապետության հազարավոր հրաշակերտ կոթողներից մեկն է, որը գտնվում է Իջևանի շրջանի Աչաջուր գյուղի մոտ՝ Պայտաթափ լեռան լանջին:

Ես փակեցի աչքերս ու մի ակնթարթում երևակայությամբ տեղափոխվեցի Մակարավանքի բակը... Ձմեռնամուտ էր: Մերկացած ծառերը ցրտից սրսռում էին: Մրսում էր նաև քարակերտ վանքը, որի պատերին աղավնիների ու բազեների սքանչելի քանդակներ կան: Ձմեռնամուտի մշուշի մեջ ես տեսա այն քանդակագործի դեմքը, որը քանդակել է այդ աղավնիներն ու բազեները: Կարծես ինչ-որ ժամանակ ես տեսել եմ նրա աչքերը, նրա խոհուն ու համեստ ճակատը: Նա բարի է, իմաստուն, և ես լսում եմ նրա ձայնը, որ դարերի հեռվից եկել, հասել է ինձ. «Ների՛ր, եթե որևէ բան այնպես չի քանդակված...: Այս աղավնու թևը քարի մեջ մնաց, հատիչը բթացել էր, խփում էի, խփում՝ քարը չէր կտրում... Հետո ճարտարապետն ասաց՝ թող թևը քարի մեջ մնա: Ես էլ թողեցի... Ների՜ր»:

- Դու, դու մեզ ների՛ր, քանդակագո՛րծ, հազա՛ր անգամ ներիր...

Ես չգիտեմ՝ ո՞վ է սպանել քո աղավնիներին ու բազեներին, ո՞վ է նրանց գլուխները կոտրել... Այդ ի՞նչ ձեռք է եղել, որ չի դողացել, այդ ի՞նչ սիրտ է եղել, որ չի պայթել... Փշրել է, փշրել աղավնիների գլուխները: Ախր ինչպե՞ս կարելի է ձեռք բարձրացնել մարդու ստեղծած սքանչելի կոթողի վրա ու ավերել այն:

Ես չգիտեմ՝ պատժե՞լ են այդ աղավնիների ու բազեների գլուխները փշրող անբանին, թե՞ ոչ: Եթե ոչ՝ անպայման պիտի պատժեն: Նա հանցանք է գործել պատմության հանդեպ, մարդկության հանդեպ...

...Իրիկնանում էր, երբ ես բաժանվեցի Մակարավանքից: Հեռվից նորից նայեցի նրան: Մթնշաղի մշուշի մեջ նա կանգնած էր՝ դարերի խորհուրդն ուսերին, ու կարծես խորհում էր գալիք ժամանակների մասին... Ես հիշեցի վանքի մուտքի մոտ աճած ծառը: Զարմանալի ծառ էր: Գուցե աղավնիներ ու բազեներ քանդակո՞ղն է տնկել: Ո՞վ գիտե: Ծառը փաթաթվել էր քարին: Թե ուզես ծառը կտրել, քարը պիտի կտրես...

Քարը մտել է ծառի ծոցի մեջ, ու ծառը ապրում է քարի հետ: Զարմանալի՜, զարմանալի՜ աշխարհ...

Այդ ծառը խոսեց ինձ հետ: Նա ինձ պատմեց հրաշք մի հեքիաթ կանաչ անտառի ու այդ անտառում ապրող երգող թռչունների մասին: Պատմեց Մակարավանքի քանդակագործի սիրո հեքիաթը...

Մակարավանքի զանգակատունը քարե երգ է՝ կախված երկնքի գմբեթից, ու այդ երգն անվերջ հնչում է իմ ունկերում: Պարզ, խոր, սքանչելի մի երգ է դա, որի բոլոր ձայները հնչում են մարդու հոգու խորքերից՝ նրան հիշեցնելով, որ ինքը ՄԱՐԴ է ու իրավունք չունի արատավորելու մարդու վեհ անունը: ... Քնքուշ ու առնական է այդ երգը, հավերժական ու անմար ...

- Ես այնպես եմ ուզում տուն գնալ,- լռությունը խախտեց Չիկարելին:

- Ինչո՞ւ,- մտքերից սթափվելով՝ հարցրի ես:

- Ուզում եմ մայրիկիս տեսնել... թեկուզ մի ակնթարթ... ուզում եմ լսել նրա ձայնը... Վերադառնանք, խնդրում եմ, տուն վերադառնանք:

- Ես քեզ հասկանում եմ, բայց մենք պետք է շարունակենք ճանապարհը: Նպատակից չի կարելի հրաժարվել: Բացի դրանից, այս տեսքով ո՞ւր ենք գնալու:

- Այո՛, պետք է հասնենք աղբյուրին,- ինձ ընդհատեց Չիկարելին,- ես շատ, շա՜տ եմ կարոտել մերոնց: Կարոտից ուզում եմ լաց լինել, բայց զսպում եմ ինձ... Գնանք, շուտ հասնենք աղբյուրին ու վերադառնանք,- ասաց նա, ոտքի ելավ, բռնեց ձեռքս ու նայեց ինձ: Անանց կարոտ կար

նրա աչքերի մեջ. ես ակամայից հուզվեցի: Այո՛, երեխաները հարազատների քնքշանքի ու բարի խոսքերի կարիքն են զգում. պետք է նրանց գուրգուրել, կարոտի ու քնքշանքի խոսքեր ասել, որ կարոտը հանկարծ տխրություն չդառնա...

- Ծառին մնաս բարով ասեմ, գնանք,- ասաց Չիկարելին:

- Իհարկե, պետք է հրաժեշտ տալ,- ասացի ես:

Չիկարելին մոտեցավ ծառին, ձեռքը հպեց նրա բնին ու ասաց.

- Մնաս բարո՜վ, ծա՛ռ:

- Գնա՜ք բարով, բարի՛ մարդիկ,- շշնջաց ծառը:

Հազիվ էինք մի քանի քայլ արել, երբ մեր գլխին հանկարծ քարե կարկուտ տեղաց: Քարերը վնգում էին մեր ականջների տակ, զարկվում էին ծառերի բներին, ժայռերին ու թափվում խճաքարերի կույտերի վրա:

- Պառկի՛ր, շո՛ւտ,- բղավեցի ես ու պառկեցի գետնին: Չիկարելին պառկեց իմ կողքին:

- Կարո՞ղ է՝ այստեղ չար կախարդ է ապրում և ուզում է մեզ ոչնչացնել,- ականջիս շշնջաց նա:

- Չգիտեմ:

- Ուրիշ ի՞նչ կարող է լինել... Երկրաշա՞րժ, թե՞ կարկտահարություն...

- Ինձ թվում է՝ մենք թիրախ ենք դարձել ինչ-որ մեկի համար,- ասացի ես, գլուխս բարձրացրի, որ տեսնեմ, թե քարերը որ կողմից են գալիս: Քարե կարկուտը դադարեց:

- Ոնց որ էլ քար չեն գցում,- ասաց Չիկարելին:

Մենք զգուշությամբ նստեցինք խճաքարերի վրա:

- Հա՜, հա՜, հա՜... վախեցա՞ք,- հռհռաց մեր գլխավերևում կանգնած մի տղա,- մենք չէինք ուզում ձեզ խփել, մենք պարզապես ուզում էինք ձեզ լեղաճաք անել,- ամբարտավան ժպիտով ասաց նա,- վե՛ր կացեք, ի՞նչ եք լողզվել գետնին:

Չիկարելին գեղեցիկ մի ոստյունով տեղից վեր թռավ, բռնեց մեր գլխավերևում կանգնած բութ հայացքով տղայի օձիքից, որի վզից պարսատիկ էր կախված:

- Այդ ղո՞ւ էիր մեզ խփում,- բղավեց նա:

- Բա՛ց թող,- գոռաց պարսատիկով տղան,- բա՜ց թող:

- Դու ո՞վ ես, որ համարձակվում ես այդպես բղավել:

- Ես պարսատիկ Զվոն եմ: Լսած կլինեք իմ քաջագործությունների մասին,- հպարտ-հպարտ պատասխանեց պարսատիկով տղան:

- Չէ՛, չե՛նք լսել:

- Ես ճանաչված ու անվանի պարսատիկավոր եմ: Ես կարողանում եմ ցանկացած թռչունի թռիչքի պահին տապալել: Իմ պատրաստած

պարսատիկները ամենալավերն են: Ծանոթանանք,- ինքանասիրա-հարվածի հպարտությամբ ասաց տղան ու ձեռքը մեկնեց մեզ:

Սակայն մենք նրա մեկնած ձեռքը չսեղմեցինք: Նրա ձեռքն օդում կախված մնաց: Անհարմար կացությունից դուրս գալու համար նա ձեռքը տարավ գրպանն ու մի բուռ խճաքար հանեց:

- Ես քեզ ճանաչում եմ: Դու այն տղան ես, որ մի գիշերում կոտրատել է իրենց դպրոցի պատուհանների բոլոր ապակիները: Նույն օրը հինգ ճնճղուկ է սպանել, վիրավորել է վեց կատվի և մեկ շան: Կարծեմ միլիցիոներ Հակոբյանը փնտրել է նրան ու չի գտել,- ասացի ես:

- Այո՛: Ես ծլկեցի ու թաքնվեցի այստեղ... Ինչպես հարկն է, դուք ներկայացրիք իմ հերոսությունները: Ես նշանառու եմ: Ահա, տեսնո՞ւմ եք այն ծառի ճյուղը: Ուշադրությո՛ւն,- տղան լարեց պարսատիկը, ու քարը վնգոցով գնաց, դիպավ ծառի ճյուղին:

Ճյուղը կոտրվեց ու կախվեց: Ծառը ճչաց:

- Կեցցե՜ս, պարսատի՛կ Զվո,- գոչեց նա:

- Տո՛ւր պարսատիկդ,- զայրացած բղավեցի ես:

- Չե՛մ տա,- գոռաց նա ու վազեց դեպի քարայրը:

Մենք վազեցինք նրա հետևից, բայց նա մտավ քարայրն ու անհետացավ: Մենք հետևեցինք նրան:

Քարայրը լուսավորված էր դեղնագույն լույսով: Մենք համարյա ոչինչ չէինք զանազանում: Զգուշորեն առաջ գնացինք: Վերևից հանկարծ սկսեցին քարեր թափել:

- Պառկի՜ր,- բղավեցի ես ու փռվեցի գարշահոտ քարանձավի հատակին:

Չիկարելին հետևեց իմ օրինակին՝ ձեռքերով պաշտպանելով գլուխը: Մի պահ քարե կարկուտը դադարեց: Ես բարձրացրի գլուխս, որ տեսնեմ, թե վտանգը որտեղից է գալիս ու տեսա պարսատիկներով զինված տղաների մի խումբ: Նրանց մեջ էր նաև պարսատիկ Զվոն:

- Ահա սրանք էին: Ուզում էին ինձ ծեծել, պարսատիկը ձեռքիցս խլել,- ասաց նա իր կողքին կանգնած մի ուրիշ պարսատիկավորի, որի վզից հինգ-վեց հատ տարբեր մեծության պարսատիկներ էին կախված:

- Հե՜յ, քաջե՛ր, ո՞նց եք,- հարցրեց նա՝ ինքնագոհ ժպտալով:

- Անամոթնե՜ր,- զայրացած ասացի ես ու ոտքի ելա:

- Չհամարձակվե՛ս մոտենալ,- գոռաց պարսատիկավոր տղան, ու բոլորը պարսատիկներն ուղղեցին մեզ վրա,- դուք գիտե՞ք՝ ես ով եմ: Ես պարսատիկավորների համաշխարհային մրցույթի դափնեկիր եմ: Բազում պատուհանների ապակիներ փշրած, հազարավոր ճնճղուկներ ու ագռավներ սպանած, մի քանի երեխայի գլուխ պատռած, մեկ միլիոն ծառի ճյուղ կոտրած, մի քանի աչք հանած, նշան բռնող, ճիշտ խփող Զվոն եմ...

- Գիտե՜մ, գիտե՜մ,- ասացի ես,- քո քաջագործությունները ինձ հայտնի են: Հիմա ասա քո ընկերներին՝ թող իրենց պարսատիկները թաքցնեն: Ես ուզում եմ քեզ հետ լուրջ խոսել:

- Հե՜յ, ցանվե՛ք,- ատամների արանքից իր ընկերներին հրամայեց Զվոն։

Պարսատիկավորների խումբը ցրվեց։

- Ես ձեզ լսում եմ,- ասաց նա։

- Ինչո՞ւ եք մեզ հալածում,- հարցրի ես։

- Չենք հալածում,- ասաց Զվոն,- պարզապես ուզում ենք, որ դուք պարսատիկավոր դառնաք։

- Դրանից ձեզ ի՞նչ օգուտ։

- Ինչպե՞ս թե... Որ պարսատիկավոր դառնաք՝ այլևս մեզ չեք նախատի։ Դե, ասեք, դառնո՞ւմ եք պարսատիկավոր, թե՞ ոչ,- կտրուկ հարցրեց նա ու նայեց մեր դեմքերին։

- Բայց մենք չենք կարող աչք հանել, թռչուն սպանել։ Մենք...

- Հիմա չեք կարող՝ հետո կկարողանաք։ Հե՜յ, սրանց պարսատիկներ տվեք։

- Չենք ուզում,- գոռաց Չիկարելին,- ես խորշում եմ պարսատիկից։

- Մենք էլ ժամանակին խորշում էինք, բայց հիմա առանց պարսատիկի ապրել չենք կարող։

- Խնդրում եմ, շուտ հեռանանք այստեղից, սրանք զարհուրելի երեխաներ են։ Ես սրանց երեսները չեմ ուզում տեսնել,- ճչաց Չիկարելին։

- Հենց տեղից շարժվեք՝ կքարկոծենք։ Պարսատիկավորնե՜ր, պատրա՛ստ,- գոչեց Զվոն ու իր պարսատիկը ուղղեց մեզ վրա։

Պարսատիկավորների խումբը կարծես դրան էր սպասում, բոլորը վզներից հանեցին պարսատիկները, գրպաններից քարերն ու լարված պարսատիկներն ուղղեցին մեզ վրա։

- Համաձա՞յն եք պարսատիկավորներ դառնալ, թե՞ ոչ,- հրամայողաբար ասաց Զվոն։

- Թույլ տուր մի քիչ մտածել։ Մենք քեզ այնքան ենք հարգում, որ չենք կամենում առանց մտածելու որոշումներ ընդունել,- ծանր վիճակից դուրս գալու համար ասացի ես։

- Վերջապես խելքի եկաք... Լա՜վ է, լա՜վ...

- Իհարկե, մենք չենք կարող առանց մտածելու որոշում ընդունել։

- Պարսատիկավորնե՛ր, թույլ տա՞նք, որ սրանք մտածեն,- պարսատիկավորներին դիմեց Զվոն։

- Մենք, որ մտածել չգիտենք, չե՞նք ապրում, չե՞նք ապրում,- ծույլ-ծույլ ասաց պարսատիկավորներից մեկը, որը ո՛չ երեսն էր երբևէ լվացել, ո՛չ էլ ձեռքերը։

- Լռի՛ր, դմբո՛, անլվա՛ սրիկա,- կատաղեց Զվոն,- էդ դու մտածել

չգիտես: Քեզ չվերաբերող բաների մեջ քիթդ մի՛ խոթիր: Թե չէ, որ մի քիչ էլ կատաղեմ, միաչքանի կդառնաս:

- Հասկացա՞, հասկացա՞, շե՛ֆ, ինչ ասում ես՝ այն էլ կանեմ: Ես պարզապես մտածել չեմ կարողանում:

- Սրանց տար մի տեղ նստեցրու, թող մտածեն, երևում է՝ ուղեղ ունեն,-հրամայեց Զվոն,- իսկ դուք,- պարսատիկավորներին դիմեց նա,- մինչև չկանչեմ՝ աչքիս չերևաք: Ցրվե՛ք, շո՛ւտ...

Պարսատիկավորները ցրվեցին: Անլվա տղան մոտեցավ մեզ ու հրամայեց.

- Առա՛ջ անցեք:

Մենք, առանց առարկելու, տեղներիցս վեր կացանք ու գլխահակ քայլեցինք:

Անլվա տղան մեզ տարավ, նստեցրեց խոնավ ու մութ մի անձավում:

- Նստե՛ք և ինչքա՞ն ուզում եք՝ մտածեք: Մտածողնե՞ր... Մենք որ չենք մտածում, չենք ապրում... Հա՞, հա՞, հա՞,- խռխռացնելով ծիծաղեց նա ու գնաց:

Ես ու Չիկարելին մնացինք մենակ:

Մենք շատ հոգնած էինք, դրա համար էլ լուռ ու մունջ նստել էինք ու չգիտեինք՝ ինչ անել: Երբեմն ինձ թվում էր, թե երազ եմ տեսնում, անվերջանալի մի երազ, որտեղ ամեն ինչ խառնվել է իրար: Բայց ոչ, երազ չէր: Ահա իմ կողքին նստած է Չիկարելին, որին ես հանդիպել եմ Ծաղկաձորի անտառում... Հիմա մենք գտնվում ենք ցամաքած աղբյուրի հունում, գնում ենք աղբյուրից ջուր խնդրելու, ինչպես ասել է Անտառապահը, որ Չիկարելին նորից մեծանա ու գնա իրենց տուն...

- Երբ տուն գնամ, այս բոլորը կպատմեմ Շեկոյին, Պետրոսին, Դերենիկին, Գոհարին, Ալբինային... Ճիշտ է, նրանք չեն հավատա, կկարծեն՝ ես հորինում եմ,- հորանջելով ասաց Չիկարելին:

- Ինձ թվում է, մենք պետք է փախչենք այստեղից,- չորսբոլորս նայելով՝ ասացի ես:

- Իսկ եթե նրանք հանդիպե՞ն,- հարցրեց Չիկարելին:

- Կասեմ՝ մենք ուզում ենք պարսատիկավորներ դառնալ:

- Բայց մենք ազնիվ մարդիկ ենք, իսկ ազնիվ մարդը չի կարող ճնճղուկ սպանել, կատվի աչք հանել, պատուհանի ապակիներ փշրել... Ընդհանրապես, պարսատիկը հիմար բան է:

- Փախչե՛նք,- ասացի ես,- գուցե և հաջողվի փրկվել:

- Հե՞յ, ի՞նչ եք քչփչում,- բղավեց անլվա տղան,- ձայներդ կտրե՛ք: Ես ինչքան գիտեմ՝ մտածելու ժամանակ չեն խոսում:

- Մենք բարձրաձայն ենք մտածում,- ասացի ես:

- Չհամարձակվե՛ք բարձրաձայն մտածել,- գոռաց նա,- ցածրաձա՛յն մտածեք:

Մենք լռեցինք: Խոնավ ու մութ քարայրում հնարավոր չէր երկար նստել: Խոնավությունը թափանցում էր մեր ոսկորների մեջ, և մենք ահավոր վատ էինք զգում:

- Երկնակամարում ճանճ է հայտնվել՝ մեծագլուխ մի ճանճ,- հանկարծ բղավեց Զվոն,- հասե՞ք, քաջե՞ր,- հրամայեց նա,- սպանե՛լ ճանճին:

Ահավոր գոռում-գոչյուն բարձրացավ:

- Ոչնչացնե՞լ, ոչնչացնե՞լ,- ամեն կողմից բղավում էին պարսատիկավորները՝ վազելով ճանճի հետևից:

- Գնացինք,- շշուկով ասացի ես,- առիթը պետք է օգտագործել: Արագ-արագ...

Չիկարելին, առանց հարցեր տալու, բռնեց ձեռքս: Մենք աննկատ դուրս եկանք խոնավ քարայրից:

- Ահա՛ նա, ահա՛ ճանճը...

- Չկպավ: Նորի՛ց:

- Ախր շատ փոքր է:

- Առա՞ջ, քաջե՞ր,- գոռում է Զվոն:

- Այս ճանճը մեր փրկիչն է,- ասացի ես ու արագացրի քայլերս: Հեռվից մեզ էին հասնում պարսատիկավորների աղաղակները, իսկ մենք գնում էինք դեպի աղբյուրը...



ԾՈՒՅԼԵՐԸ ՀՎԱՐԾԱՆՈՒՄ ԵՆ

Ունենք ընկանք աղբանոց հիշեցնող մի վայր, որտեղ բարձրախոսներ կային: Երգեցիկ ձայնով մի մարդ, բառերը երկարացնելով, ոտանավոր էր կարդում.

- Ոչի՜նչ, ոչի՜նչ պետք չէ անել,
Ո՛չ գիրք կարդալ, ո՛չ էլ գրել,
Միայն պառկել մեջքի վրա,
Համեղ բաներ խժռել:
Բղավում են ամեն կողմից՝
- Աշխատեցե՛ք, տղանե՛ր...
- Աշխատանքը չեր դաշտերը
Կդարչնի բարեբեր...
Բայց մենք երբեք չենք աշխատի,
Հիմար հո չենք՝ լուծ քաշենք,
Մենք կպառկենք ծառերի տակ
Ու կքնենք շարունակ...

Ոտանավորն ավարտելուց հետո նույն ձայնն ասաց.

- Բարի երազնե՜ր, եղբայրնե՛ր, քույրե՛ր... քնե՜ք, քնե՜ք, թանկագիններ՛ս... Խոր քո՛ւն մտեք, սիրելինե՛ր,- խռխռոց լսվեց, ու ամեն բան թաղվեց խորհրդավոր լռության մեջ:

Ես ու Չիկարելին այդ օրն այնքան արտառոց բաներ էինք լսել ու

տեսել, որ բարձրախոսից հնչող ոտանավորն ու խռխռոցները մեզ այնքան էլ չզարմացրին։

- Ի՞նչ անենք,- հարցրեց Չիկարելին ու նայեց աչքերիս։

- Շարունակե՞նք ճանապարհը, թե՞...

- Իհարկե, պետք է շարունակենք,- ասացի ես,- բայց այն անցնում է այս աղբանոցի միջով...

- Ուրեմն պետք է մտնենք աղբանոց։

- Ուրիշ ճանապարհ չկա,- ասացի ես ու քայլերս ուղղեցի դեպի աղբանոց։

Մի քանի քայլ անելուց հետո պարզվեց, որ դա ոչ թե աղբանոց է, այլ գարշահոտ ու աղտոտ մի քաղաք, որի բնակիչներն իրենց աղբը թափում են ուր պատահի։

Քաղաքի փողոցները գարշահոտ աղբով էին լցված։

- Տեսնես ովքե՞ր են այս աղբաքաղաքի բնակիչները,- հարցրեց Չիկարելին։

- Լքված քաղաք է երևի,- ենթադրեցի ես։

- Այս պատուհանից ինչ-որ ձայն է լսվում,- մի պատուհանի մոտենալով՝ ասաց Չիկարելին ու ծեծեց ապակին։

- Ի՞նչ եք ուզում,- նվնվաց մի ձայն։

- Ուզում ենք Ձեզ տեսնել։

- Սպասե՛ք,- դանդաղ ու հոգնած ասաց նույն ձայնն ու լռեց։

Մենք երկար սպասեցինք։ Կարծում էինք՝ հիմա դուռը կամ պատուհանը կբացվի, ու կհայտնվի մեզ հետ խոսողը։ Բայց ո՛չ պատուհանը բացվեց, ո՛չ էլ դուռը։ Այս անգամ ես ծեծեցի պատուհանը։

- Մենք սպասում ենք,- հիշեցրի ես։

- Սպասե՛ք... Ես էլ մարդ եմ, հո չեմ կարող վեր թռչել ու միանգամից ձեզ մոտենալ։ Սպասե՛ք, էլի՛...- այս անգամ նեղացկոտ նվնվաց նույն ձայնը։

Դարձյալ երկար լռություն տիրեց։

- Գնանք,- ասաց Չիկարելին,- ո՞վ գիտե՝ ինչ մարդիկ են։

- Սպասենք, հետաքրքիր է։

- Ավելի լավ է հեռանանք։ Զուր տեղը նորից ժամանակ պիտի կորցնենք,- ասաց Չիկարելին։

- Եթե չես ուզում՝ գնանք,- Չիկարելիին չզայրացնելու համար ասացի ես,- հենց այդ ժամանակ բարձրախոսներից հնչեց նույն ձայնը, որ մենք լսել էինք քաղաք մտնելիս։

- Սկսում ենք մեր հերթական հաղորդումը։ Ելույթ կունենա երիտասարդ ծույլ Բախտունին։

Խռխռոց լսվեց, որն իբր թե երաժշտություն էր, հետո Բախտունին, բառերը երկարացնելով, սկսեց խոսել.

- Թանկագի՛ն ծույլեր, իմ համեստ կարծիքով աշխարհի ամենահամեստ ապրողները մենք ենք... Մենք պիտի շարունակենք ապրել այնպես, ինչպես ուզում ենք ու երազում: Օ՜ֆ, հոգնեցի, մի քիչ շունչ առնեմ ու շարունակեմ:

Լռություն տիրեց:

Մի ակնթարթ հետո ահավոր խռմփոցով լցվեց քաղաքը, որից հետո նորից հնչեց Բախտունու ձայնը.

- Թանկագի՜ն ծույլեր, այս տարի մենք կարողացանք ապրել այնպես, ինչպես անցյալ տարի: Ոչ մի գործ ոչ ոք չարեց, ոչ մի բանի ոչ ոք ձեռք չտվեց: Անցյալ տարվա համեմատությամբ, այս տարի կրկնակի ավելացել է մեր փողոցներում կուտակված աղբը: Սա մեծ առաջադիմության և մտածողության հաղթանակն է, պարոններ: Իսկ ինչ վերաբերում է ինձ և իմ գործունեությանը, ապա ես ամբողջ տարվա ընթացքում, մեծ տառապանքներ կրելով, ստեղծել եմ սքանչելի մի ոտանավոր: Իմ ոտանավորով ես դիմում եմ աշխարհի բոլոր ծույլերին՝ «Ձեզ մի՛ տանջեք, վերջը լավ կլինի»: Օ՜ֆ, հոգնեցի, այսքան մտածել կլինի, որ ես եմ մտածում: Ամեն ինչի մասին մտածում եմ, ձեր մասին, իմ մասին, աշխարհի մասին... Բայց խնդրում եմ, հանկարծ չկարծեք, թե ես աշխատասեր եմ դարձել... Այդ բանը չի լինի: Ես մտածում եմ, որ մեր շարքերը նորանոր ծույլերով ավելանան: Ներեցե՛ք, մի քիչ քնեմ, հետո միտքս կշարունակեմ: Բարի՜ երազներ,- հորանջելով մրթմրթաց նա, ու բարձրախոսը լռեց:

Մենք չգիտեինք՝ ժպտա՞լ, թե՞ չարանալ:

- Այս հիմարությունը Ձեզ դո՞ւր է գալիս,- վրդովված հարցրեց Չիկարելին:

- Խնդրում եմ, մի քիչ համբերիր, ես ուզում եմ մինչև վերջ լսել այս հաղորդումը:

- Լավ,- ասաց Չիկարելին ու քաշվեց մի կողմ:

- Բարի՛ օր,- խռխռաց բարձրախոսը,- շարունակում եմ հաղորդումը... բայց ավելի լավ կլինի՝ մի քիչ քնենք... Բարի՜ երազներ ձեզ, իմ հարազատնե՜ր, իմ սիրելինե՜ր, թանկագիննե՜ր...

Բարձրախոսը խռխռաց ու նորից լռեց: Չիկարելիի համբերությունը հատավ: Նա մոտեցավ պատուհանին ու սկսեց ծեծել:

- Դուք մոռացե՞լ եք, մենք սպասում ենք Ձեզ:

- Սպասե՛ք, սպասե՜ք, կգա՜մ,- նվնվաց նույն ձայնը:

- Հո չե՞նք կարող օրերով այսպես կանգնած մնալ:

- Շալվարս եմ կորցրել... սպասե՛ք, էլի... հրդեհ հո չի՞...

- Լա՛վ, լա՛վ, կսպասենք,- ժպտաց Չիկարելին ու նայեց ինձ:

Բարձրախոսը նորից խռխռաց, ու Բախտունին շարունակեց իր խոսքը.

- Ես հիմա ձեզ համար ուզում եմ կարդալ այս տարի երկնած իմ նոր ոտանավորը, որի առաջին տողն իր մեջ ամբարել է խորախորհուրդ մի իմաստ. «Ես պառկած եմ ծառի տակ»: Ինչո՞ւ եմ պառկել ծառի տակ: Այս հզոր վիճակը բացահայտում են հաջորդ տողերը, որտեղ ես ասում եմ, թե այդ ծառը ինչ ծառ է, և ինչո՞ւ եմ հատկապես նրա տակ պառկել: Ահա ոտանավորի առաջին տունը, որը, ինչպես ասում են, մեկնաբանության կարիք չի զգում:

Ես պառկած եմ ծառի տակ,
Տանձի ծառ է ծառը այդ,
Վրան հասուն տանձեր շատ,
Ու ես նայում եմ վհատ...

- Ինչո՞ւ «վհատ»,- կհարցնեք դուք, իսկ ես կպատասխանեմ՝

Չկա քամի, չկա հով,
Որ իր հզոր թևերով
Տանձը թափի ծառի տակ,
Ու ես ուրեմ շարունակ...

Բա՞, թե կարող են, թող այսպիսի մի բանաստեղծություն հորինեն իրենց բանաստեղծ հորջորջողները: Երբ առաջին անգամ մեր գյուղից ես քաղաք փախա, բոլորը կարծում էին՝ հիմարի մեկն եմ, ինձնից բան դուրս չի գա: Դե, թող հիմա տեսնեն... Ես աշխարհի ամենասիրուն տղան եմ: Խելքիս մասին էլ չեմ խոսում... հոգնեցի, այսքան մտածե՞լ կլինի... Բարի՜ երազներ...

Բարձրախոսը լռեց:

Հաղորդավարը հոգնած ու տանջված ձայնով հաղորդեց.

- Գրական հաղորդումն ավարտվեց, դուք լսեցիք բանաստեղծ Բախտունուն... Ուշադրությո՜ւն, ուշադրությո՜ւն, հաղորդում ենք լուրեր: Մեր քաղաքի հաշվողական կենտրոնի տվյալներով, անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ, խռմփացնողների թիվն աճել է հարյուր քսանութ ամբողջ հինգ տասնորդական տոկոսով... Մեր հաջողություններն ակնառու են... Բարի՜ երազներ:

- Այս ո՞ւր ենք ընկել, եղբա՛յր,- ասացի ես՝ ձեռքերս ծնկներիս խփելով:

- Ոչինչ, համբերի՛ր, հիմա կիմանանք,- ինձ մխիթարեց Չիկարելին ու դարձյալ ծեծեց պատուհանի ապակին:

- Լսե՛ք, ինչքա՞ն կարելի է Ձեզ սպասել: Խնդրում ենք՝ մեկ վայրկյանով դուրս եկեք:

- Օ՜ֆ, դարձյալ դուք եք,- նվնվաց պատուհանից այն կողմ ապրողը,- զարմանալի մարդիկ եք, չեք թողնում մի քիչ շունչ քաշեմ... Մի քիչ իմ բախտի, իմ ճակատագրի մասին մտածեմ: Վերջապես մենք էլ մարդ ենք, հո չի՞ կարելի այդպես տանջել:

- Մենք ընդամենը մի հարց պիտի տանք,- ասացի ես:

- Սպասե՛ք, գալիս եմ:

Մենք դարձյալ մի քանի րոպե սպասեցինք: Դռան ճռռոց լսվեց ու ոտքերի քստքստոց: Նայեցինք դռան կողմը ու տեսանք կարճ տաբատով, կեղտից պսպղացող վերնաշապիկով, սև ձեռքերով, ճպռոտ աչքերով մի տղայի: Նա, զառամյալ ծերունու պես ոտքերը քարշ տալով, մոտեցավ մեզ:

- Ի՞նչ եք ուզում:

- Ինչպե՞ս կարելի է ձեր քաղաքից դուրս գալ,- հարցրի ես:

- Իսկ ինչո՞ւ եք ուզում դուրս գալ: Մնացե՛ք այստեղ, սա սքանչելի քաղաք է: Ոչ ոք չի ասում՝ լվացվեք, սանրվեք, սովորեք, աշխատեք: Ամբողջ օրը քնում ենք: Շատ լա՜վ է, շատ լա՜վ...

- Բայց սա ի՞նչ ապրելու տեղ է,- վրա տվեց Չիկարելին:

- Իզուր եք այդպես կարծում: Դուք երևի այնտեղի՞ց եք փախել, հա՞... Մենք էլ ենք փախել: Ի՞նչ կարիք կա ամեն օր դաս սովորել, լվացվել, ծառ տնկել, վազել... Վա՜յ, վա՜յ, վա՜յ, էդ բոլորը որ հիշում եմ՝ քիչ է մնում լաց լինեմ... Բա էդ թվաբանության խնդիրները: Երկու գնացք դուրս են գալիս հանդիպակաց կայարաններից... թյո՜ւ, զզվելի՜ բաներ...

- Դու հայր, մայր ունեցե՞լ ես,- հարցրեց Չիկարելին:

- Ես հենց նրանցից եմ փախել: Նրանք էին առավոտից երեկո ասում՝ կարդա՜, կարդա՜, կարդա՜... Ի՞նչ կարդամ, ինչո՞ւ կարդամ... Հոգնեցի: Գնամ, մի քիչ հանգստանամ:

- Սպասի՛ր:

- Լսում եմ,- հորանջեց կարճ տաբատով տղան:

- Ո՞րն է ձեր քաղաքից դուրս գալու ամենակարճ ճանապարհը,- հարցրի ես:

- Չգիտեմ, ես ոչ մի անգամ ոչ մի տեղ չեմ գնացել: Ինձ երբեք ոչ մի բան չի հետաքրքրել,- կեղտից իրար կպած մազերը շոյելով՝ ասաց նա ու քստքստացնելով հեռացավ:

Ես և Չիկարելին նայեցինք իրար ու մոլորված կանգնեցինք: Դարձյալ գերեզմանոցային լռություն տիրեց: Ես ընդհանրապես չեմ վախենում ո՛չ մութից, ո՛չ էլ գերեզմանոցից, հաստատ գիտեմ, որ չարքեր ու սատա-

նաներ չկան, որ դրանք վախկոտ մարդկանց երևակայության ծնունդն են, բայց հանկարծ ես էլ սկսեցի վախենալ: Վախենալ այդ ծույլերի ահավոր ծուլությունից: Ու ինձ թվաց, թե մենք ընկել ենք այնպիսի մարդկանց մոտ, որ կարող ենք ցավից ճչալ, ծարավից մեռնել, բայց նրանցից ոչ ոք մեր ցավին դարման չի անի, ոչ էլ մի պուտ ջուր կտա...

- Ովքե՞ր եք դուք, ողբալի՛ ծույլեր... դուք կորցրել եք ձեր մարդկային նկարագիրը,- ուզում էի բղավել, նախատել նրանց, որ խելքի գան, բայց ինձ զսպեցի: Հայրս ինձ սովորեցրել է, որ ամենադժվար կացության մեջ անգամ կարողանամ ինձ զսպել:

«Ինքնատիրապետումը,- ասում էր հայրս,- մարդու ամենագեղեցիկ հատկություններից մեկն է»: Եվ ես, անսալով հորս պատգամին, հավաքեցի ինձ ու համբերությամբ սպասեցի:

- Հո օրերով այստեղ կանգնած չե՞նք մնալու,- զայրացավ Չիկարելին ու ծեծեց պատուհանը:

- Դուք խիղճ չունե՞ք, ի՜նչ է... Ինչո՞ւ եք ինձ տանջում...,- պատուհանից գլուխը դուրս հանեց կարճ տաբատով տղան:

- Այս փողոցի վերջում մի տուն կա, այդ տան մեջ ապրում է բանաստեղծ Բախտունին: Նա ձեր բոլոր հարցերին կարող է պատասխանել,- բառերը հազիվհազ իրար կպցնելով՝ ասաց նա ու փակեց պատուհանը:

- Շնորհակալություն,- ասացինք մենք և ուղևորվեցինք դեպի փողոցի անկյունի տունը, որտեղ ապրում էր Բախտունի կոչեցյալը:

Հազիվ էինք մի քանի քայլ արել, երբ բարձրախոսը նորից սկսեց խոսել.

- Սկսում ենք մեր հաղորդումը բոլոր նրանց համար, ովքեր տառապում են անքնությամբ: Հաղորդում ենք Բախտունու «Ինչպես երջանկանալ» հոդվածից մի հատված: Կարդում է հեղինակը:

Դարձյալ խռխռոց լսվեց, որն իբր երաժշտություն էր, հետո ինչ-որ մեկը սկսեց ծոր տալով խոսել.

«Երջանկություն, օ՜, երջանկություն... Ինչպե՞ս երջանկանալ, օ՜, ինչպե՞ս երջանկանալ... Օ՜, դուք ասեք, ինչպե՞ս երջանկանալ... Ես և՛ գիտեմ, և՛ չգիտեմ... Ով ուզում է՝ թող երջանիկ լինի, ով չի ուզում՝ թող չլինի... Արևը ճաճանչափայլ՝ երջանիկ է, որովհետև ամեն օր նույն տեղից դուրս է գալիս ու նույն տեղն է մտնում... Օ՜, երջանկություն... Իսկական երջանկությունը հարուստ, շատ հարուստ մեծ պապա ունենալու մեջ է... Պապան ամեն բան անում է՝ քո փոխարեն սովորում է, քո փոխարեն ավարտո՜ւմ է, քո փոխարեն ընդունվում է աշխատանքի, քո փոխարեն քո գործերը դասավորում է... Օ՜, երջանկություն, օ՜,

բախտ... Ով ուզում է երջանկանալ, նախ և առաջ չպետք է մտածի երջանկության մասին... Ով չմտածի, նա շատ երջանիկ կլինի... Բայց չմտածելը դեռ բավական չէ, պետք է նաև բախտ ունենալ... Օրինակի համար՝ ես... բախտ ունեմ, որովհետև պապաս մեջքիս կանգնած է, նա ինձ համար ամեն բան անում է:

- Ես այլևս չեմ ուզում այս հիմարությունը լսել,- ասաց Չիկարելին:

- Հետաքրքիր է,- ժպտացի ես:

- Գնանք, խնդրում եմ, զուր ինչո՞ւ ժամանակ կորցնենք,- թախանձեց նա:

Մենք հեռացանք բարձրախոսից ու մոտեցանք փողոցի անկյունում գտնվող մի տան, որի դռներից ու պատուհաններից աղբ էր դուրս թափված: Զզվանքով մոտեցանք տանը ու թակեցինք դուռը:

- Ո՞վ է,- խզխզաց քնատ մի ձայն, որը նման էր բարձրախոսից հնչող ձայնին:

- Կարելի՞ է:

- Դասերի՞ց եք փախել, թե՞ աշխատանքից,- հարցրեց նույն ձայնը:

- Մենք ուզում ենք Ձեզնից մի խորհուրդ հարցնել:

- Նե՛րս եկեք:

Մենք մտանք պատերն ու հատակը սևացած մի սենյակ: Պատառոտված բազմոցին փռված էր մի տղա ու ծույլ-ծույլ ինչ-որ բան էր ծամում:

- Դո՞ւք եք Բախտունին,- հարցրի ես:

- Այո՛,- տնքաց բազմոցին փռված մարդը,- ուրեմն, այսպես, ես գնացի մեր տան դիմացի այգին, տեսա մի կրպակ, որի վրա գրված էր՝ «Փքաբլիթ»: Հորս արև, շատ լավն էր... Ներս մտա էդ «փքաբլիթանոցը»՝ նոր հասկացա, որ «փքաբլիթը» պոնչիկն է: Նստեցի ու կերա՜, կերա՜, կերա՜... Հորս արև, շատ լավն էր: Դուք է՞լ եք դասից փախել: Էստեղ շատ լավ է: Հորս արև, շատ լավ է: Մի քանի աշխատասերներ կան, գիշեր-ցերեկ աշխատում են, մենք ուտում ենք... Իսկ հիմա բարի քուն, բարի՜ երազներ... մնացածը՝ հետո,- հորանջելով ասաց նա ու խռմփացրեց:

- Արթնացե՜ք - բղավեցի ես:

- Գարշահոտությունից գլուխս պտտվում է,- ձեռքը ճակատին դնելով՝ ասաց Չիկարելին:

- Երևի հիմա կարթնանա...

- Հե՜յ, արթնացե՛ք,- բղավեց Չիկարելին:

- Օ՜ֆ, այս ի՞նչ փորձանքի մեջ ընկա: Ինձ համար հանգիստ ապրում էի,- պատառոտված բազմոցի վրա շուռումուռ գալով՝ թնկթնկաց ծույլը:

- Վե՛ր կացեք, բավակա՛ն է պառկեք,- ասացի ես։

- Վեր չեմ կենա, ի՞նչ կարիք կա, ինչպե՞ս վեր կենամ... Կուտեմ, կքնեմ, կուտեմ, կքնեմ, հետո կարթնանամ՝ էլի կուտեմ, էլի կքնեմ... Բարի երազներ եմ ցանկանում նաև ձեզ,- հորանջեց նա, շուռ եկավ մյուս կողքին։

- Մի՛ քնեք, խնդրում եմ,- նրան ցնցելով՝ ասացի ես։

- Ինձ հանգիստ թողեք, ես հո չե՞մ ծնվել տանջվելու համար...

- Մենք ուզում ենք հեռանալ այստեղից։

- Մի՞թե այստեղ վատ է։ Այստեղ ո՛չ գիրք կա, ո՛չ տետր, ո՛չ գրիչ, ո՛չ թանաք... հորս արև, շատ լավ է։ Ոչ ոք չի ասում՝ արթնացի՛ր, աշխատի՛ր, պարապի՛ր։ Մնացե՛ք այստեղ, հորս արև, շատ լավ է։

- Մենք այստեղ չենք կարող ապրել... - նրան ընդհատեց Չիկարելին,- ես ուզում եմ օդաչու դառնալ։ Ես երազանքներ ունեմ։ Ես ուզում եմ...

- Կարծում եք՝ ես չե՞մ ուզում որևէ բան դառնալ։ Ուզում եմ, բայց հավես չկա...

- Ես այլևս չեմ ուզում Ձեր հիմարությունները լսել։ Ասեք, ո՞նց դուրս գանք այս աղտոտ քաղաքից,- զայրացած հարցրեց Չիկարելին։

- Չգիտեմ... քունս տանում է,- այս անգամ տզզաց նա ու փակեց աչքերը։

- Չքնե՞ք, չքնե՞ք,- բղավեց Չիկարելին։

Ես ծիծաղս հազիվ էի զսպում։

- Ախր հոգնա՞ծ եմ։

- Մեր հարցերին պատասխանեք ու նոր քնեք,- ասացի ես։

- Չեմ հասկանում, ի՞նչ եք ուզում, հորս արև, չեմ հասկանում,- ճպռոտ աչքերը տրորելով՝ հարցրեց ծույլ մարդը։

- Ուզում ենք այստեղից գնալ,- գոռաց Չիկարելին։

- Գնացե՛ք... Ինձ հանգիստ թողեք, դուք ինչ ուզում եք՝ արեք... Ախր ես էլ մարդ եմ, մեկ-մեկ մտածում եմ, մեկ-մեկ ուզում եմ տեղիցս վեր կենալ, վազել, բայց, ախր, ինչի՞ համար... Մեղք եմ, չէ՞... Հո չի՞ կարելի մարդուն այդքան տանջել... Բարի գիշեր,- մրմնջաց նա ու նորից քնեց։ Այս անգամ այնքան խոր քնով, որ չկարողացանք արթնացնել։

- Ի՞նչ անենք,- հարցրեց Չիկարելին։

- Թող քնի... Երևի այսպես քնած էլ անցնի սրա կյանքը։ Իսկ մենք գնանք, մի կերպ ճանապարհը կգտնենք։

Դուրս եկանք գարշահոտ սենյակից, որտեղ խռմփոցով քնել էր ծույլ Բախտունին, ու նորից հայտնվեցինք ոլոր-մոլոր փողոցներում։ Մի քանի անգամ անցանք նույն փողոցներով, մի քանի անգամ հետ դարձանք, աջ շրջվեցինք, ձախ շրջվեցինք՝ հնար չկար, ուր գնում էինք, դարձյալ հայտնվում էինք նույն տեղում...

Այդ անմիտ վազվզուքից հոգնած՝ կանգնեցինք մի սյան մոտ, որ շունչ առնենք ու մտածենք, թե ինչպես դուրս գանք այդ քաղաքից, երբ բարձրախոսից նորից հնչեց մեզ արդեն ծանոթ ձայնը.

- Հաղորդում ենք «Ինչպես երջանկանալ» գիտական հոդվածի շարունակությունը։

- Գնանք,- թևիցս քաշեց Չիկարելին։

- Թույլ տուր մի քանի րոպե լսել,- խնդրեցի ես։

- Ձեզ համար ամեն բան հետաքրքիր է, իսկ ժամանակը թռչում է,- դժգոհ ասաց նա ու նստեց մի քարի։

- Ոչինչ, համբերի՛ր։

- Այս հաղորդումը պատրաստել ենք նրանց համար, ովքեր շատ կարճ ժամանակամիջոցում ուզում են երջանկանալ։ Խնդրում ենք՝ ոչ ոք նեղություն չքաշի հանկարծ տեղից շարժվել։ Ով ինչպես կա, թող այնպես էլ մնա։ Նստածները թող նստած մնան, կանգնածները՝ կանգնած, պառկածները՝ պառկած։ Սա իմիջիայլոց,- ծույլ-ծույլ խոսեց բարձրախոսն ու լռեց։

Քիչ հետո սկսեց խոսել Բախտունին։

- Արևի ճաճանչափայլ շողերը լուսավորում էին աշխարհի ամե-

նաբարի, ամենաաշխատասեր, ամենաքաղաքավարի բնակավայրը, որտեղ ծնվել եմ ես: Ես սիրով կապրեի այնտեղ, եթե չլինեին զզվելի գրքեր, տետրակներ, գրիչներ... Ու մի օր էլ ես զգացի իսկական երջանկության գինը: Դա դասերից փախչելու առաջին օրն էր: Օ՜, երջանկություն... Փախա ու մտա մի տեղ, որը կոչվում էր Քքաբլիթանոց... Այնտեղ էր, որ ես հանդիպեցի ինձ նման դժբախտների, որոնք ուզում էին երջանիկ լինել... Մենք այդ օրը երջանկացանք, որովհետև աննպատակ թափառեցինք քաղաքում, փողոցային շների հետ վազվզեցինք դեսուդեն, պառկեցինք պատերի տակ... Օ՜, երջանկություն, որ գալիս ես աննկատ... Վերջապես ես գտա փրկության ուղին ու մի առավոտ դպրոց գնալու փոխարեն եկա այստեղ... Ահա այստեղ է, որ ես հանգիստ շունչ եմ քաշում: Ոչ ոք չի ասում առաջվա զզվելի բառերը՝ սովորի՛ր, աշխատի՛ր...

Երջանիկ դառնալու առաջին նախապայմանը բացարձակապես ոչինչ չանելն է, հնարավորին չափ շատ քնելը, քիչ խոսելը և որևէ աշխատասերի հետ չընկերանալը...

- Գնա՛նք, խնդրում եմ,- տեղից վեր ելավ Չիկարելին:

- Գնա՛նք, սիրելի՛ս, ճիշտն ասած, ես էլ ձանձրացա, գնանք, գուցե կարողանա՞նք այս աղբանոցից դուրս գալ:

Մենք երկար քայլեցինք աղբակույտերի միջով, աջ թեքվեցինք, ձախ թեքվեցինք, բայց դարձյալ ճանապարհը չգտանք: Կարծես լաբիրինթոսում լինեինք, որը ոչ մուտք ուներ, ոչ ելք:

- Մենք պտտվում ենք տեղում և չենք կարողանում դուրս գալ,- ասաց Չիկարելին ու բղավեց,- հե՜յ, հե՜յ, եթե դուք մարդ եք, օգնեք մեզ դուրս գալ այս աղբանոցից:

Սակայն նրա կանչերին ոչ ոք չպատասխանեց:

- Այստեղ ինչ-որ դուռ եմ նշմարում,- աղբը ոտքով փորփրելով՝ ասացի ես:

Եվ, իրոք, երբ աղբը մաքրեցինք, մեր դեմ տեսանք մի դուռ: Չիկարելին ծեծեց այն:

- Ո՞վ է,- ներսից հաճելի մի ձայն լսվեց:

- Կարելի՞ է:

- Խնդրեմ:

Մենք բացեցինք դուռն ու ներս մտանք: Թափթփված, կեղտոտ մի բնակարան էր դա, ուր երկու աղջիկ՝ գզգզված մազերով, մրոտված շրջազգեստներով, հատակին փռված գորգի վրա պառկած՝ շաշկի էին խաղում:

- Ի՞նչ եք կամենում,- առանց մեզ նայելու՝ հարցրեց նրանցից մեկը:

- Դուք չե՞ք կարող ասել, թե ինչպես պետք է դուրս գանք այս աղբանոցից: .

- Կարող եմ,- տեղից վեր թռչելով՝ պատրաստակամ ասաց աղջիկներից մեկը,- գնանք, ես ձեզ ճանապարհները ցույց կտամ:

- Ա՜խ, դու անամո՛թ, ա՜խ, դու դավաճա՜ն,- ճչաց մյուս աղջիկը,- ես հիմա քո մազերը կպոկեմ, ինչպե՞ս ես համարձակվում...

- Նա խելքը թոցրել է, նա չի հասկանում, թե ինչ է անում,- գոռգոռաց մի ուրիշ աղջիկ...

- Ո՛չ, ո՛չ, ես խելքս չեմ թոցրել, չհավատաք: Գնանք, գնանք, ես ձեզ ցույց կտամ այստեղից հեռանալու ճանապարհը,- Չիկարելիի ձեռքը բռնելով՝ մեզ սենյակից դուրս հանեց բարի աչքերով աղջիկը և փակեց դուռը:

Շուտով մենք հայտնվեցինք համեմատաբար լայն մի փողոցում, քայլելը հեշտացավ:

- Ես էլ եմ շուտով փախչելու այստեղից,- ասաց աղջիկը,- ես պատահաբար եմ հայտնվել այստեղ... Այդ չար աչքերով աղջիկը իմ ընկերուհին է, մենք մի դասարանում էինք սովորում... Ես գնացի նրանց տուն, որ օգնեմ նրան մաթեմատիկայի խնդիրներ լուծելու, իսկ նա ինձ համոզեց, որ փախչենք ու գանք այս աղբանոցը... Այստեղ ոչ ոք ոչինչ չի անում, ամբողջ օրը կամ ուտում են, կամ քնում... Ահա, այսպես, եկե՛ք,- բարի աչքերով աղջիկը բացեց նեղլիկ մի դարպաս, մենք ներս մտանք:

- Հանգստացե՛ք,- շունչը տեղը բերելով՝ ասաց նա: Մենք կանգնեցինք:

- Այսպես ուղիղ կգնաք... Հետ չնայեք: Հե՛տ նայելու պահին կմոլորվեք ու նորից կսկսեք պտտվել նույն տեղում: Առաջ, միայն առաջ պետք է նայել: Ես ձեզ մի քիչ էլ կուղեկցեմ,- ասաց աղջիկն ու առաջնորդեց մեզ:

Մենք լուռ քայլում էինք բարի աղջկա հետևից և հազիվ էինք կարողանում մեզ զսպել, որ հետ չնայենք, իսկ աղջիկն ամեն քայլափոխի ասում էր.

- Արագ, արագ...հե՛տ չնայեք, հե՛տ չնայեք...

Վերջապես մենք դուրս եկանք աղբանոցից:

- Այստեղից դուք կարող եք առանց իմ օգնության գնալ: Ցտեսություն,- ասաց բարի աչքերով աղջիկը և ուզում էր վերադառնալ, բայց Չիկարելին բռնեց նրա ձեռքը:

- Շնորհակալություն, բարի՛ աղջիկ,- ասաց նա:

- Եկ մեզ հետ,- առաջարկեցի ես:

- Ո՛չ, ո՛չ, չեմ կարող... այսպես աղտոտ ու գզգզված չեմ ուզում երևալ մարդկանց աչքին... Մի քանի օրից հետո կփախչեմ... Ցտեսություն...

- Ցտեսություն,- ասացինք մենք:

- Խնդրում եմ, եթե հանկարծ հանդիպեք իմ հասակակիցներին, բոլորին ասեք, որ ծուլությունը ահավոր չարիք է... Որ հանկարծ նրանք չշփոթվեն ու այստեղ գան...

- Այո՛, կասենք, անպայման կասենք,- խոստացա ես:

Բարի աչքերով աղջիկը մեզ հրաժեշտ տվեց: Փոքր-ինչ հանգստանալուց և մաքուր օդ շնչելուց հետո մենք շարունակեցինք մեր ճանապարհը...

Ի՞նձ ինչ, որ ի՞մը չէ...

–Հրդե՜հ, հրդե՜հ... հրդե՜հ,- հեռվում հուրհրատող կրակի լեզուները ցույց տալով՝ բղավեց Չիկարելին:

Ես բարձրացա մի քարի, նայեցի նրա ցույց տված կողմն ու տեսա մի հրաբորբ խարույկ, որի շուրջը մարդիկ էին վազվզում:

- Աշխարհը երևի այրվում է,- ցավով ասացի ես:

- Ի՞նչ անենք,- հարցրեց Չիկարելին:

- Այստեղ ամեն բան այնքան տարօրինակ է, ճիշտն ասած, կասկածում եմ: Գուցե հրդե՞հ չէ... Հիշո՞ւմ ես ստախոսներին, ինչպես էին տանիքներին կանգնած՝ ողբալի աղաղակներով մեզ կանչում: Այս հրդեհն էլ գուցե դրա նման մի բան է կամ...

- Ո՛չ, ո՛չ... սա իսկական հրդեհ է: Գնանք, օգնենք մարդկանց, նրանք վտանգի մեջ են,- հուզված ասաց Չիկարելին ու վազեց:

... Ընկնելով ու վեր կենալով, հևիհև ու շնչասպառ՝ մենք մի կերպ հասանք այն բնակավայրը, որի կենտրոնում գտնվող փայտաշեն տներից մեկն այրվում էր: Սակայն ոչ ոք ուշադրություն չէր դարձնում այրվող տան վրա: Մարդիկ վառվող տանն ու նրա բնակիչների ճիչերին

անտարբեր՝ զբաղված էին իրենց առտնին գործերով...

- Մի՞թե դուք չեք տեսնում, տուն է վառվում, հրդեհ է,- բղավեց Չիկարելին,- հանգցնել է պետք կրակը...

Սակայն ոչ ոք նրա վրա ուշադրություն չդարձրեց: Մի քանի անցորդ տարօրինակ նայեցին, թոթվեցին ուսերն ու շարունակեցին իրենց ճանապարհը:

- Հե՜յ, հե՜յ, լսե՛ք, հրդե՜հ է... Հասե՜ք, օգնե՜ք, հանգցրե՜ք,- դարձյալ բղավեց Չիկարելին: Մի անցորդ ծիծաղեց ու աչքով արեց:

- Գուցե սրանք խուլ են կամ մեր լեզուն չեն հասկանում,- ինձ դարձավ Չիկարելին:

- Երևի,-ասացի ես, բռնեցի փողոցով անցնող ինքնագոհ դեմքով մի անցորդի ձեռքն ու բարձրաձայն ասացի,- բարեկա՛մ, հրդեհ է, մարդիկ են այրվում, պետք է օգնել նրանց...

- Ինչո՞ւ ես բղավում,- զայրացավ ինքնագոհ դեմքով մարդը,- ես խուլ չեմ... Բա՛ց թող ձեռքս... Ես ի՞նչ է, ձեզ նման անգո՞րծ եմ, որ դրանով զբաղվեմ... - չարացած ասաց նա ու արագ-արագ հեռացավ:

- Ա՜յ քեզ մարդ... Չէ՛, սրանք խուլ չեն,- շվարած ասացի ես:

- Մեկ ուրիշին դիմեք, գուցե սա վատ մարդ էր,- ասաց Չիկարելին:

Ես մոտեցա բարեկիրթ մի տիկնոջ, որը, իր գիրուկ շնիկի հետ խոսելով, անցնում էր փողոցով:

- Ներեցե՛ք, տիկի՛ն, հրդեհ է, մարդիկ են այրվում,- տագնապով ասացի ես,- նրանց օգնել է պետք:

- Շնի՜կս, թանկագի՛նս, ի՞նչ է ասում այս մարդը... Ի՞նչ հրդեհ, ի՞նչ բան... Ես Ձեզ չեմ հասկանում... Ինչո՞ւ եք ինձ անհանգստացնում: Գնանք, Լուլո՛ւ, գնանք, սիրելի՛ս,- քրթմնջաց նա, խստեց շնիկին ու անտարբեր հեռացավ:

- Հե՜յ, հե՜յ, հե՜յ, ... հասե՜ք, հասե՜ք,- շուկայի մոտով անցնելիս բղավեց Չիկարելին: Առևտուր անողները զարմացած նայեցին նրան ու շարունակեցին իրենց առևտուրը:

- Տարօրինակ մարդիկ են,- ասացի ես,- ո՛չ անհանգստանում են, ո՛չ էլ հուզվում:

- Այլևս պետք չէ դրանց դիմել... Մենք կհանգցնենք հրդեհը,-ասաց Չիկարելին ու վազեց դեպի այրվող տունը:

Կրակի լեզուները լափում էին փայտաշեն, երկհարկանի տունը: Տան բնակիչները ներսից ողբաձայն ճչում էին:

Քարե աստիճաններով բարձրացանք, հասանք երկրորդ հարկ, կրակին ու ծխին ուշադրություն չդարձնելով՝ մոտեցանք դռանը, բացեցինք ու բոցերի միջից դուրս բերեցինք մի կնոջ՝ իր երկու երեխայի հետ:

Այրվող տան շուրջը անգործ մարդիկ հավաքվեցին:

- Լսի՛ր, ի՞նչ ես կանգնել,- ճերմակ տաբատ ու բաճկոն հագած մի մարդու դիմելով՝ ասացի ես,- չե՞ս կարող մի դույլ ջուր բերել, տուն է այրվում:

- Ի՞նձ ինչ, հո ի՞մը չէ,- առանց դեմքի արտահայտությունը փոխելու ասաց ճերմակ տաբատ ու ճերմակ բաճկոն հագած մարդն ու քաշվեց մի կողմ:

- Ինչպե՞ս թե... եթե քոնը չէ, ուրեմն պիտի այրվի՞,- զարմացած հարցրեց Չիկարելին:

- Շատ եք խոսում... Ի՞նձ ինչ... ես ինչո՞ւ պետք է խառնվեմ,- հանգիստ ասաց նա:

- Լսի՛ր, բարեկա՛մ, այնտեղ երեխա կա, որը այրվածքներ է ստացել, նրան պետք է հասցնել հիվանդանոց,- պիրկ բազուկներով մի անցորդի դիմելով՝ խնդրեց Չիկարելին:

- Իսկ ինչո՞ւ ես պետք է տանեմ... ի՞նձ ինչ, հո իմ երեխա՞ն չէ,- ասաց պիրկ բազուկներով մարդն ու սկսեց արևածաղկի սերմեր չրթել:

- Ընկերուհի՛, խնդրո՜ւմ եմ, օգնի՛ր,- մի աղջկա դիմելով՝ ճչացի ես:

- Ի՞նչ անեմ,- ինձ նայելով՝ հարցրեց աղջիկը:

- Հրշեջներ կանչիր:

Աղջիկն ինձ լեզու ցույց տվեց:

Մենք, ճարներս կտրած, փորձեցինք ինքներս հանգցնել հրդեհը և օգնել տուժածներին: Մենք վազում էինք աստիճաններով վեր-վար, դույլերով ջուր տանում ու լցնում կրակի վրա: Բայց մեր ջանքերն անօգուտ էին: Տունը շարունակում էր այրվել: Մի քանի հետաքրքրասեր կանայք զարմացած նայում էին մեզ ու ծիծաղում:

- Ինչո՞ւ եք ծիծաղում,- մրոտված ձեռքերը թաքցնելով՝ ասաց Չիկարելին:

- Լավ ենք անում... ձե՜զ ինչ... ծիծաղներս գալիս է՝ ծիծաղում ենք: Արգելվո՞ւմ է ծիծաղել,- արհամարհանքով ասացին նրանք ու շարունակեցին ծիծաղել:

- Չե՞ք տեսնում, դժբախտություն է պատահել,- ասացի ես:

- Մե՞զ ինչ, հո մե՞ր տունը չի վառվում,- պատասխանեցին նրանք: Զայրույթից չգիտեի՝ ինչ ասել: Մնում էր ճչալ, աղաղակել մարդկային անտարբերության դեմ, բայց ոչ տեղն էր հարմար, ոչ էլ ժամանակը...

- Շատ լավ կրակ է, կարելի է խորոված անել,- ասաց մի տղամարդ:

- Իսկապես որ,- ձեռքերը կրակի վրա տաքացնելով՝ ասաց մեկ ուրիշը:

- Իսկ ես ջուր կտաքացնեմ այս կրակի վրա,- շորորաց գեր մի տիկին ու գնաց կաթսա բերի, որ ջուր տաքացնի:

- Մենք այսօր կերակուր չենք եփել, կրակ չունեինք, հիմա կգնամ մեր կերակուրը կբերեմ, այս կրակի վրա կեփեմ,- հրդեհը երջանիկ պատահականություն համարելով՝ ասաց նրանց ընկերուհին ու վազեց տուն:

Այրվող տան բնակիչները լալիս էին: Մենք ամեն կերպ ուզում էինք մխիթարել նրանց:

- Ոչի՜նչ, ոչի՜նչ... Կարևորն այն է, որ դուք փրկվել եք, ողջ եք,- ասում էինք մենք,- դուք նորից տուն կկառուցեք...

Բնակիչները կարծես մեզ չէին լսում, գլուխները կախ՝ լալիս էին ու հառաչում:

Մենք նստել էինք նրանց կողքին ու մտածում էինք նրանց օգնելու, նրանց համար կացարան կառուցելու մասին: Չիկարելիի ձեռքերն այրվել էին: Ես դիմեցի աղջիկներից մեկին, որին Չիկարելին հանել էր կրակի միջից:

- Խնդրում եմ, կապե՛ք իմ բարեկամի ձեռքը: Աղջիկը նայեց ինձ, պռոշ արեց ու ասաց.

- Ի՞նձ ինչ, հո իմ ձեռքը չէ՞...

- Ինչպե՞ս թե,- զարմացա ես:

- Այո՛, այո՛,- ասաց աղջիկը,- ինչո՞ւ ես պետք է կապեմ:

- Բայց չէ՞ որ մենք...

- Չանեիք, ձեզ ո՞վ էր խնդրում...

Մեր գլխին կարծես սառը ջուր մաղեցին:

- Վե՛ր կաց, բարեկա՛մս,- դառնացած ասացի Չիկարելիին,- վե՛ր կաց, հեռանանք այստեղից... Այստեղ մնալն անգամ անպատվություն է մարդու համար...

Առանց հրաժեշտի՝ մենք հեռացանք այդ անիծյալ մարդկանց մոտից:





Դու ո՞վ ես

Աշխարհում շատ վատ բաներ կան, որոնք մարդկանց խանգարում են ապրել: Այդ վատ բաներից ամենավատն անտարբերությունն է: Մենք այնքան էինք ազդվել և այնքան վիրավորվել այդ քաղաքի եսասեր բնակիչներից, որ երկար ժամանակ քայլում էինք կողք կողքի ու ամաչում իրար երեսի նայել: Այո՛, այո՛, նրանց փոխարեն մենք ամաչում էինք... Ամաչում, որ մենք էլ մարդ ենք, որ պատկանում ենք նրանց ցեղին, ովքեր անտարբեր են ուրիշի ցավին, ուրիշի վշտին, ուրիշի ողբերգությանը:

- Գուցե չշարունակե՞նք ճանապարհը,- տխուր ասաց Չիկարելին:

- Դա հնարավոր չէ,- ասացի ես:

- Այլևս չեմ ուզում այդպիսի մարդկանց հանդիպել,- վհատ ու տառապալի ձայնով ասաց Չիկարելին ու նստեց ճամփեզրի քարերից մեկի վրա:

- Առանց այն էլ մենք բավականին ժամանակ ենք կորցրել,- ասացի ես,- վե՛ր կաց, գնանք:

- Չեմ գալիս,- գլուխը ափերի մեջ առնելով՝ համառեց Չիկարելին:

- Ինչպե՞ս թե չես գալիս,- զարմացա ես:

- Հենց այդպես, չեմ գալիս և վերջ:

- Բայց մենք նպատակ ունենք:

- Ինձ ոչինչ հարկավոր չէ... Ես կմնամ այստեղ, այս քարին նստած,- լացը մի կերպ զսպելով՝ ասաց նա,- չեմ գալիս, չէ՞... ,- ճչաց Չիկարելին:

- Հանգստացի՛ր...

- Ես ամաչում եմ այդպիսի մարդկանց փոխարեն: Ոչ ոք, ոչ ոք նրանց իրավունք չի տվել այդպիսին լինելու...

Ես նույնպես վրդովված էի, ուզում էի ինչ-որ կերպ հանգստացնել Չիկարելիին, բայց բառեր չէի գտնում: Այդպիսի դեպքերում ճիշտը լռելն է, որ դիմացինդ կարողանա ինքն իրեն տիրապետել:

Ես լռեցի, բայց մտքիս մեջ ակամայից սկսեցի խոսել. «Հավաքի՛ր ուժերդ, փոքրի՛կս, հավաքի՛ր քեզ ու ճանապարհ ընկնենք, ո՞վ գիտե, դեռ ի՞նչ անակնկալներ են սպասում ինձ ու քեզ, դեռ ի՞նչ դժվարություններ պիտի հաղթահարենք: Հավատա՛ ինձ, մենք չենք կարող ո՛չ վերադառնալ, ո՛չ էլ նույն տեղում կանգնած մնալ, մենք պետք է միշտ առաջ գնանք: Կյանքը հետաքրքիր ու գեղեցիկ է նաև ձախորդությունների ու դժվարությունների պահերին: Հավատա՛ ինձ ու ընդմիշտ իմացի՛ր, երբեք թեւաթափ չպետք է լինել, նպատակին հասնելու համար մինչև վերջ պետք է պայքարել... Սրբի՛ր արցունքներդ... Մի՛ ընկճվիր, քանի դեռ ես քեզ հետ եմ... Քայլի՛ր ինձ հետ, քայլի՛ր դեպի քո նպատակը...»:

Իհարկե, այս բոլորը ես չասացի իմ բարեկամին, որը հուսահատ ու տխուր նստել էր ճամփեզրի քարին ու լաց էր լինում, և հետո, ճիշտն ասած, երևի կարիք էլ չկար այսպիսի բաներ ասելու... Միշտ չէ, որ մեծահասակները ասում են այն, ինչ մտածում են, կամ իրենց մտածածը կարողանում են բարձրաձայն ասել: Դրանք դժվար բաներ են, և ես չեմ ուզում ո՛չ դրանց մասին խոսել, ո՛չ դատողություն անել... Ձեզանից յուրաքանչյուրը թող ինքը մտածի իր ՄԱՐԴ լինելու մասին, որ ոչ ոք իր փոխարեն չամաչի մարդ չկոչվելու համար...

Չգիտեմ՝ որքան ժամանակ էր անցել, ինչ մենք հեռացել էինք անտարբերների ու եսասերների մոտից, չգիտեմ՝ որքան էինք նստել ճամփեզրի քարին, երբ հեռվից ինչ-որ ձայներ հասան մեր ականջներին: Ես բարձրացա մոտակա բլրակը, որ տեսնեմ ովքեր են կանչում, և ձայները որ կողմից են գալիս...

Իմ հայացքի դեմ փռվեց թավշապատ մի դաշտ, ուր երկու մարդ, իրար հետ բարձրաձայն վիճելով, առանձին-առանձին իրենց համար առանձնատուն էին կառուցում:

- Այնտեղ երկու մարդ տներ են կառուցում,- զարմացած բացականչեցի ես:

Չիկարելին բարձրացրեց գլուխն ու մի տեսակ հեգնոտ հայացքով նայեց ինձ:

- Գիտե՞ս, ես միշտ ներքին մի ուրախություն ու բավականություն եմ զգում, երբ տուն կառուցողներ եմ տեսնում,- իմ զարմանքը արդարացնելու համար ասացի ես:

- Հետաքրքիր է, ովքե՞ր են,- տեղից վեր կենալով՝ հարցրեց Չիկարելին,- այդ ովքե՞ր են այստեղ տուն կառուցում:

- Գնանք, տեսնենք,- առաջարկեցի ես:

- Գնանք, համաձայնեց Չիկարելին, ու մենք ուղևորվեցինք դեպի թավշյա դաշտը: Նրանց առանձնատները դեմ դիմաց էին ու զարմանալիորեն իրարից տարբեր: Երբ մենք մոտեցանք, նրանք, երկրորդ հարկի պատշգամբում նստած, ակնդետ նայում էին իրար: Նրանցից մեկը, որ կարճահասակ էր ու խորամանկ աչքեր ուներ, հանկարծ տեղից վեր թռավ, աստիճաններով ցած իջավ, դեղին ներկով լցված մի դույլ վերցրեց ու իր տան պատերը սկսեց ներկել:

Հարևանը, որ նույնպես կարճահասակ էր ու երկար մազեր ուներ, առանց բառ ասելու, նույնպես աստիճաններով իջավ, վերցրեց վառ դեղին ներկով լցված դույլն ու սկսեց ներկել իր տան պատերը... Նրանք նայում էին իրար ու արագ-արագ վրձինը քսում պատերին:

- Ինչո՞ւ ես պիտի քեզ նախանձեմ, թանկագի՛ն հարևան,- ասաց խորամանկ աչքերով կարճահասակը,- իմ տան պատերն ավելի վառ գույնով են ներկված, քան քոնը:

- Հա՜, հա՜, հա՜...- պատասխանի փոխարեն խնդմնդաց երկար մազերով կարճահասակը, ես այս գույնը հենց այնպես եմ քսում... Իսկականը մի քիչ հետո կբերեմ...

- Ես էլ հենց այնպես եմ քսում,- վշվշաց խորամանկ աչքերով կարճահասակն ու ավելի եռանդով վրձինը քսեց պատին:

Երկու կարճահասակներն էլ աչքի տակով նայում էին իրար ու առանց շունչ քաշելու՝ ներկում իրենց տան պատերը: Երկարամազ կարճահասակը, ի հեճուկս խորամանկ աչքերով կարճահասակի, գնաց, կապույտ գույնի ներկ բերեց ու սկսեց կապույտ ներկել իր տան պատերը:

- Կարծում ես՝ չե՞մ հասկանում, թե ինչի համար ես այդ բոլորը անում: Ուզում ես, որ քո տունն իմ տնից գեղեցիկ լինի: Ես թույլ չեմ տա... Այո՛, այո՛, իմ տունը քո տնից հազար անգամ պետք է գեղեցիկ լինի,- ասաց խորամանկ աչքերով կարճահասակը, դեղին ներկով լցված դույլն ու վրձինը գցեց մի կողմ, գնաց կապույտ գույնի ներկ բերեց ու սկսեց արագ-արագ կապույտ ներկել իր տան պատերը:

- Զզվելի գույն է,- ասաց երկարամազ կարճահասակը՝ վրձինն ու ներկը մի կողմ դնելով:

Խորամանկ աչքերով կարճահասակը դադարեց իր տան պատերը կապույտ ներկելուց և ուշադրությամբ սկսեց հետևել երկարամազին...

Երկարամազը վերցրեց քլունգն ու բահը և սկսեց իր առանձնատունը քանդել:

- Այնպիսի առանձնատուն պիտի կառուցեմ, որ ոչ ոք չկարողանա նմանը կառուցել,- խորամանկ աչքերով կարճահասակին ստորացնելով՝ ասաց երկարամազը և մինչև հիմքերը քանդեց իր առանձնատունը:

- Հա՜, հա՜, հա՜- բարձրաձայն ծիծաղեց խորամանկ աչքերով կարճահասակը,- դու այլևս չես կարողանա առանձնատուն կառուցել, կմնաս ավերակների վրա, իսկ ես իմ առանձնատունն ավելի շքեղ կկառուցեմ: Վերջին հաշվով, դու ո՞վ ես, որ ուզում ես ինձ հետ չափվել:

- Իսկ դո՞ւ ով ես,- նենգաբար ժպտաց երկարամազն ու սկսեց իր նոր առանձնատունը կառուցել:

Նա աշխատում էր տենդով, առանց շուրջը նայելու: Տան պատերը արագորեն բարձրանում էին: Նա ավարտեց առաջին հարկը, պատուհանների ու դռների շրջանակները դրեց ու սկսեց երկրորդ հարկի պատերը շարել: Առանձնատունը, իրոք, շատ գեղեցիկ ստացվեց: Այն նման էր արքայական դղյակի...

Երջանկությունից շողում էր երկարամազ կարճահասակը. չէ՞ որ իր առանձնատունն ավելի գեղեցիկ ու շքեղ էր, քան հարևանինը, չէ՞ որ ինքը միակ մարդն էր, որ այդպիսի առանձնատուն ուներ:

Խորամանկ աչքերով կարճահասակը գլուխն առավ ափերի մեջ ու լռեց: Նախանձի ու չարության թույնը խեղել էր նրա դեմքը. «Ինչպե՞ս, ախր ինչպե՞ս պատահեց, որ նա ինձանից ավելի բարձր, ավելի գեղեցիկ, ավելի շքեղ առանձնատուն կառուցեց»,- մտածեց նա:

- «Չէ, ես սրան պետք է ոչնչացնեմ, այն էլ որսորդական հրացանով»,- ինքն իրեն որոշեց նա, գնաց, արջ որսալու փամփուշտներից մեկը խցկեց հրացանի փողի մեջ, եկավ նստեց հարևանի դիմաց ու փողն ուղղեց նրա ճակատին:

Երկար մազերով կարճահասակը վախից սայթաքեց ու ցած ընկավ:

- Մեռա՜վ,- հրճվանքով գոչեց խորամանկ կարճահասակն ու պատշգամբից ցատկեց ներքև: Բայց շատ զարմացավ, երբ բակում հարևանին ողջ տեսավ: Հենց այդ ժամանակ լսվեց հարևանի դիվային քրքիջը:

- Կարծում էիր՝ կմեռնե՞մ... Ես նախօրոք ինձ պարանով կապել էի բազրիքից, որ ընկնելու դեպքում չզարկվեմ գետնին, բա՜,- չարախնդաց նա, ներս գնաց, ինքնաեռը բերեց, դրեց պատշգամբի սեղանին և սկսեց թեյ խմել:

Նա նայում էր կարճահասակ խորամանկին, որը մնացել էր իր հին

առանձնատան մեջ ու կատաղությունից եղունգներն էր կրծում։

- Լավ,- մռռաց կարճահասակ խորամանկը,- ես դրանից ավելի շքեղ առանձնատուն պիտի կառուցեմ,- մտածեց նա ու սկսեց իր առանձնատունը քանդել։

Քանդեց, քանդեց, երկար ու խոր հիմքեր փորեց, քար, ավազ բերեց ու սկսեց շինարարությունը։ Քարը քարին էր դնում ու աչքը գցում հարևանի պատշգամբին։ Հարևանը իր համար թեյ էր խմում ու քմծիծաղով նայում նրան։

- Ծիծաղի՜ր, ծիծաղի՜ր, տեսնենք սրանից հետո ի՞նչ ես անելու։ Արևդ կտրելու եմ,- ինքն իրեն մրթմրթում էր կարճահասակ խորամանկն ու կամար-կամար պատուհաններ, դռներ շարում։

Երբ նա ավարտեց իր նոր առանձնատան շինարարությունը, երկարամազ կարճահասակի առանձնատունը կորավ նրա բարձրահարկ առանձնատան ստվերում։

- Հը՞, ինչպե՞ս ես, թանկագի՛ն հարևան,- իր բարձրահարկ տան պատշգամբում կանգնած՝ ձայն տվեց խորամանկ կարճահասակը,- հիմա համոզվեցի՞ր, որ ես քեզանից ավելի հզոր եմ ու խելացի, ավելի հարուստ եմ ու ճաշակով։ Դու ո՞վ ես, որ ուզում ես ինձ հետ չափվել։

- Քեզ թվում է, թե դու ինձանից հարուստ ես ու ճաշակով։ Դու ո՞վ ես,- չարախնդաց երկարամազ կարճահասակն ու առանց հապաղելու գործի անցավ։

Նա տարօրինակ եռանդով մի քանի ժամում քանդեց իր նոր տան տանիքը, հետո քանդեց պատերը, հիմքեր փորեց, գնաց մեծ-մեծ քարեր բերեց, լայն ու ամուր պատեր շարելով՝ բարձրացավ։

- Թող շարի, մեկ է, իմ տան նման առանձնատուն չի կարողանա կառուցել,- փնթփնթաց խորամանկ կարճահասակը։

Բայց նա չէր հասցրել իր խոսքն ավարտել, երբ երկարամազ կարճահասակի առանձնատան պատերը հավասարվեցին իր պատերին ու սկսեցին բարձրանալ։ Երկարամազ կարճահասակը սկսեց իր առանձնատան չորս կողմում շքեղ պատշգամբներ կառուցել, որոնք զարդարված էին երախները բաց առյուծների գլուխներով։ Մի քանի րոպեում երկարամազի առանձնատունն այնքան բարձրացավ, որ ծածկեց խորամանկ կարճահասակի տունը։

- Հը՞, հարևա՛ն, գուցե բարձրանա՞ս ինձ հետ թեյ խմելու,- չարախինդ հեգնանքով իր բարձունքից ձայն տվեց երկարամազը։

- Շնորհակալություն... ես արդեն իմ թեյը խմել եմ,- գոռաց կարճահասակը ու բարձրացավ տանիք, ես թույլ չեմ տա, որ դու ինձնից գեղեցիկ ու շքեղ առանձնատան մեջ ապրես,- մռմռաց նա, տանիքը

քանդեց ու սկսեց նոր հարկեր ավելացնել իր առանձնատան վրա։

Հարկ հարկի հետևից բարձրանում էր երկարամազ կարճահասակի տունը։ Խորամանկ կարճահասակը իր տեղը չէր գտնում, տենդոտ վազվզում էր սենյակից սենյակ, պատշգամբից պատշգամբ ու նայում հարևանի վեր բարձրացող առանձնատան պատերին... Քիչ մնաց, քիչ, հիմա ուր որ է կհասնի իրեն... Ահա և հասավ։ Հիմա իրենք հավասար են։ Ինչպե՞ս կարելի է, ինչպե՞ս... Նա էլ, իր հերթին, քանդեց իր առանձնատան տանիքն ու սկսեց նոր հարկեր ավելացնել։

- Դու միշտ իմ ստվերում պիտի ապրես,- նենգաբար ֆշշացրեց երկարամազ կարճահասակն ու նորից սկսեց իր առանձնատան վրա նոր հարկեր կառուցել։ Այդպես, իրար նայելով, իրար վրա ֆշշացնելով՝ նրանք անվերջ բարձրացնում էին հարկաբաժիններն ու արդեն չէին նայում պատերին, իսկ պատերն արդեն սկսել էին թեքվել...

Ու հանկարծ, երբ նրանք ավելացնում էին հերթական հարկաբաժինները, պատերը փլվեցին... Պատշգամբները, դռները, լուսամուտները ցիրուցան եղան, երկու կարճահասակները մնացին իրենց առանձնատների փլվածքների տակ...

- Պետք է օգնել նրանց, մարդ են վերջապես,- ասաց Չիկարելին ու վազեց դեպի փլատակները։

Ես նույնպես վազեցի։

- Գուցե նրանք դեռ ո՞ղջ են,- ցավով ասաց Չիկարելին՝ մի մեծ քար շուռ տալով։

- Առանց վերամբարձ կռունկների օգնության դժվար կարողանանք այս քարերը շուռ տալ,- ասացի ես։

Չիկարելին կախեց գլուխն ու մնաց կանգնած։ Ես նույնպես լռեցի։ Եվ հենց այդ պահին փլատակների տակից դուրս եկան կարճահասակներն ու նայեցին իրենց ավերված առանձնատներին։

- Քո առանձնատունը իմ տնից ավելի շատ է քանդվել... Իմ առանձնատնից մի բան դեռ մնացել է, իսկ քոնը փոշի է դարձել,- ուրախացած բղավեց խորամանկ կարճահասակն ու սկսեց ցատկոտել։

- Բայց իմ գլխին ավելի մեծ քար է ընկել, քան քո,- չարությամբ ասաց երկարամազ կարճահասակը։

- Չի կարող պատահել... Իմ գլխին երկու քար է ընկել,- բղավեց խորամանկ կարճահասակը։

- Ես ավելի խելացի եմ, քան դու,- կոտրած գլուխը բռնելով՝ հայտարարեց երկարամազ կարճահասակը։

- Հիմա ես քեզ կսպանեմ,- գետնից մի քար վերցնելով՝ բղավեց խորամանկ կարճահասակը։

- Դու իմ բաժին թթվածինն ես շնչում,- ավելի մեծ մի քար վերցրեց երկարամազ կարճահասակը:

- Ախր դու ո՞վ ես, ա՛յ լխպոր,- գոռաց խորամանկ կարճահասակը, բարձրացրեց քարը, որ խփի իր հարևանի՝ առանց այն էլ կոտրված գլխին, բայց Չիկարելին ճարպիկ ցատկով հասավ նրանց ու սահմռկեցուցիչ ձայնով բղավեց.

- Սպասե՞ք:

Նրանք ձեռքերի քարերը գցեցին ու անմեղ երեխաների նման կանգնեցին դեմ-դիմաց:

- Ինչո՞ւ եք անվերջ վիճում,- զայրացած հարցրեց Չիկարելին:

- Ակաս-մակաս՝ դու էիր պակաս,- Չիկարելիի վրա հարձակվեցին կարճահասակները:

- Հանգի՞ստ, հանգի՞ստ,- նրանց սաստեցի ես,- չհամարձակվեք ընկերոջս ձեռք տալ:

Նրանք հեռացան Չիկարելիից ու նստեցին քարերի վրա:

- Դուք ձեր արածից գո՞հ եք,- հարցրեց Չիկարելին:

- Ախր դա ո՞վ է, որ ես դրա հետ չափվեմ,- արհամարհանքով իր

հարևանին մատնացույց արեց երկարամազ կարճահասակը:

- Բա դո՞ւ ով ես... հլա սրան տեսեք,- տեղից վեր թռավ խորամանկ կարճահասակը,- ես թույլ չեմ տա, որ մեկ ուրիշը ինձնից բարձր երևա: Դու ո՞վ ես:

- Ես ու իմ ընկերը կմիանանք, գլխիդ այնպիսի փորձանք կբերենք, որ դու կմոլորվես ու կկորչես ճանճի պես...

- Ախր դու ո՞վ ես, ո՞վ,- գոռգոռաց երկարամազ կարճահասակը:

Խորամանկ կարճահասակը պատասխան չգտավ: Ես խղճացի նրան:

- Գիտե՞ք, սա էլ մարդ է, սա էլ իրավունք ունի ապրելու,- ասացի ես:

- Ի՞նչ կարիք կա կռվելու...

- Բոլորն էլ իրավունք ունեն ապրելու, բայց ոչ ինձ պես,- ճչաց երկարամազ կարճահասակը,- հասակս որ կարճ է, կարծում եք՝ խելքս էլ է կարճ: Ո՛չ: Ես ատում եմ սրան:

- Լսեցի՞ք, լսեցի՞ք՝ ինչեր է ասում... Ստոր նախանձ: Սա չարիք է: Ախր սա ո՞վ է, որ ինձնից լավ ապրի,- տեղից վեր թռչելով՝ իր խոսքը սկսեց խորամանկ կարճահասակը:

- Բայց դուք հարևաններ եք,- միամիտ ասաց Չիկարելին:

- Ավելի վատ,- ասաց երկարամազ կարճահասակը,- սա ամեն բանով ուզում է նմանվել ինձ:

- Դու ես ուզում ամեն բանով ինձ նմանվել,- ասաց խորամանկ կարճահասակը,- ես ինձ համար առանձնատուն էի կառուցել, ապրում էի: Սա սկսեց իր առանձնատունը մեծացնել: Ես հո չէի՞ կարող նստել ու նայել, թե ինչպես է սա իր պուճախը պալատ դարձնում...

- Իսկ դու, ի՞նչ է, կարծում էիր, որ ես պետք է ապրեի քո առանձնատան շվաքո՞ւմ:

- Իմ առանձնատունը ավելի շքեղ պետք է լինի:

- Ո՛չ, իմը ավելի շքեղ պետք է լինի...

- Բայց, կարծեմ, ձեր երկուսի տներն էլ քանդվել են,- ասացի ես:

- Նորից կկառուցենք,- միասին գոչեցին կարճահասակները:

- Բայց, վերջին հաշվով, ովքե՞ր եք դուք, ինչպե՞ս եք հայտնվել այստեղ,- հարցրի ես:

- Իսկ դո՞ւք ովքեր եք,- ոտքից գլուխ մեզ չափելով՝ հարցրին կարճահասակները:

- Ծանոթանանք,- ձեռքս նրանց մեկնելով՝ ասացի ես,- իմ բարեկամը՝ Մուշեղը, և ես...

- Շատ հաճելի է,- վրա տվեց երկարամազը:

- Բայց դուք ինչպե՞ս եք հայտնվել այստեղ,- հարցրեց խորամանկ կարճահասակը՝ աչքերը կկոցելով:

- Պատահաբար։

- Իսկ մենք պատահաբար չենք հայտնվել այստեղ,- վրա տվեց երկարամազ կարճահասակը,- մենք, այսպես ասած, նախանձների ակադեմիայի գիտահետազոտական կենտրոնի ամենագլխավոր մասնագետներն ենք։ Մենք նախանձության նոր մեթոդներ ենք ստեղծում և այդ մեթոդները տարածում ենք աշխարհով մեկ,- ասաց խորամանկ կարճահասակը։

- Բայց չէ՞ որ նախանձությունը չարիք է ծնում,- ասաց Չիկարելին։

- Առանց նախանձության հասարակություն գոյություն ունենալ չի կարող,- մատը վեր տնկելով՝ ասաց երկարամազ կարճահասակը։

- Այստեղ նախանձների մասին գրված բազմահատոր աշխատություններ կան, որոնք կարող են զարդարել աշխարհի ցանկացած գրադարան,- ասաց խորամանկ կարճահասակն ու դիմեց երկարամազին,- հե՜յ, վազի՛ր գրադարանից նախանձության մասին հիմնարար գրքերից մեկը բեր։

- Ի՛նքդ վազիր, ես քո ծառան չեմ,- նեղացավ երկարամազը։

- Այս մարդը ոչ միայն ինձ է նախանձում, այլև ինքն իրեն։

- Ես բոլորին, բոլորին նախանձում եմ։ Նախանձն իմ մեջ վերափոխվում է ատելության։

- Լավ, մի՛ կռվեք, ես կգնամ՝ գիրքը կբերեմ,- ասաց Չիկարելին։

- Ոչ, մենք կգնանք, մենք կգնանք- տեղներից վեր թռան կարճահասակները։

Իրար առաջ կտրելով՝ նրանք վազեցին գիրքը բերելու։

- Ի՜նչ զարհուրելի մարդկանց հանդիպեցինք,- վախեցած ասաց Չիկարելին,- տեսնես ուրիշ մի երկրում սրանց նմաններ կա՞ն, ապրո՞ւմ են...

- Ամեն տեղ էլ կան,- տխուր ասացի ես։

- Ահա, բերեցինք,- մի մեծ գիրք գլխներին՝ հևիհև մեզ մոտեցան կարճահասակները։

- Դուք շատ արագ վերադարձաք,- ասաց Չիկարելին։

- Մեր քաղաքը շատ մոտ է։ Այնտեղ բոլորը նախանձ են։ Ազատորեն վայելում են իրենց նախանձությունը,- ժպտալով ասաց խորամանկ կարճահասակն ու շարունակեց,- խնդրեմ, գնանք մեր քաղաքը։ Ամեն բան այնտեղ այնպես չէ, ինչպես նախանձ չունեցող մարդկանց քաղաքներում։ Մեր քաղաքը երբեք չի քնում։ Առավոտից երեկո, երեկոյից առավոտ մարդիկ իրար նախանձում են։ Եթե որևէ մեկը մի նոր բան է կառուցում, ապա հարևանը անպայման քանդում է։ Եթե որևէ մեկը մի նոր զգեստ է հագնում, ապա անպայման հարևանը կամ ընկերուհին

այդ զգեստի վրա պատահաբար թանաք է թափում, եթե մեկը ծառ է տնկում, ապա մյուսը անպայման այն հանում է ու դեն շպրտում, եթե մեկը...

- Բավակա՛ն է,- բղավեց Չիկարելին։

- Ես էլ եմ ձեզ հրավիրում մեր քաղաքը։ Եկե՛ք գնանք։ Նրան մի՛ լսեք, ի՛նձ լսեք։ Երևի ձեզ մեր քաղաքը դուր կգա, դուք կդառնաք նրա պատվավոր բնակիչները։ Ես կուղեկցեմ ձեզ և ինձ շատ երջանիկ կզգամ, եթե դուք նույնպես դառնաք նախանձություն տարածող ակտիվ գործիչներ,- արագ ասաց երկարամազ կարճահասակն ու ուզում էր շարունակել իր միտքը, բայց Չիկարելին ընդհատեց նրան։

- Ես չեմ ուզում նախանձ դառնալ։

- Ախր դուք չեք պատկերացնում, թե ինչ հրաշալի բան է նախանձ լինելը։ Ես հիմա ձեզ համար կկարդամ նախանձության մասին գրված այս սքանչելի գրքից մի քանի գլուխ, և դուք կհամոզվեք, որ...

- Ո՛չ, ես կկարդամ,- գիրքը երկարամազ նախանձի ձեռքից խլելով՝ ասաց խորամանկ կարճահասակը։

- Ես քեզնից վատ չեմ կարդում,- գոռաց երկարամազ կարճահասակը։

- Ախր դու ո՞վ ես, որ ինձանից լավ կարդաս։

- Հիմա աչքդ կհանեմ՝ նոր կիմանաս, թե ես ով եմ,- կատաղած բղավեց երկարամազ կարճահասակը՝ գրպանից մի մեծ ու ժանգոտ մեխ հանելով։

- Պետք է միջամտել,- վախից ինձ կպչելով՝ ասաց Չիկարելին։ Ես մոտեցա նախանձությունից մոլեգնած կարճահասակներին։

- Վե՛րջ տվեք,- բղավեցի ես ու երկարամազի ձեռքից խլեցի ժանգոտ մեխը։

- Սրանց աչքերը պետք է հանել։ Սրանք են մեղավոր, որ մենք կռվում ենք,- մեզ վրա հարձակվեցին կարճահասակ նախանձները։

- Սպասե՛ք,- գոռացի ես ու գրկեցի Չիկարելիին, որ հանկարծ նրան վնաս չտան։

- Ինչո՞ւ սպասենք,- գոչեց խորամանկ կարճահասակը,- ո՞ւմ սպանենք։

- Ձեր աչքերը հանելու իսկական ժամանակն է,- չարախնդաց երկարամազ կարճահասակը։

- Բայց դու գիտե՞ս, որ քո ընկերը քեզնից գեղեցիկ է ու խելացի,- երկարամազի ականջին շշնջացի ես։

- Ո՞վ է ասում,- հարցրեց նա։

- Ինքը,- պատասխանեցի ես։

- Ախր նա ո՞վ է, որ ինձանից գեղեցիկ ու խելացի լինի,- կատաղած բղավեց երկարամազ կարճահասակն ու հարձակվեց խորամանկ կարճահասակի վրա։

- Իսկ դո՞ւ ով ես,- փրփրեց խորամանկ կարճահասակը։

- Ես քո աչքերը հանողն եմ։

- Ախ, դո՜ւ, անպե՛տք կենդանի։

- Ե՞ս եմ անպետքը։

- Դո՜ւ...

Նրանք դարձյալ հարձակվեցին իրար վրա։ Իրար կոկորդ բռնեցին ու սկսեցին մոլեգնած բղավել։

- Կարծես ազատվեցինք դրանցից,- թեթևացած շունչ քաշեցի ես,- գնանք, սիրելի՛ս,- ասացի Չիկարելիին։

Առանց բառ ասելու նա հետևեց ինձ։



Գույնը փոխող ծառը

Թեղենիս սարի ծոցից բխող սառնորակ աղբյուրը, որ դար ու դարեր կարկաչել է ծաղկաշատ մարգագետնում, հագեցրել մարդկանց ծարավը, ջուր հասցրել պապակ դաշտերին, հիմա ցամաքել է...

Ինչո՞ւ է ցամաքել, ո՞վ է նեղացրել, որ նա այլևս արևերես դուրս չի գալիս...

...Ես հիշեցի մի գիրք, որ դարեր առաջ գրվել է Կեչառիսի հինավուրց վանքում: Այնպիսի ծաղիկներ, ծառեր, կենդանիներ են նկարված այդ գրքի լուսանցքներում, որ զարմանալ կարելի է: Այդտեղ գրված է նաև խոսող կաղնու ու աղբյուրի պատմությունը: «Երբ աչոք տկարացա, աղբյուրը վերադարձրեց աչքերիս լույսը, երբ երկար ու տքնաջան աշխատանքից ուժահատ եղա, անտառը վերականգնեց ուժերս... Ուրեմն թող երիցս անիծվի այն ձեռքը, որ քար կգցի աղբյուրի ակի մեջ կամ կփակի նրա հունը: Բայց այսօր աղբյուրի մասին չէ, որ ուզում եմ պատմել, այլ քայլող մի ծառի, որ իմ աչոք տեսա գարնանամուտի մի իրիկուն...

Անտառի փեշին, բոլոր ծառերից ու թփերից զատ, հաղթահասակ ու սաղարթախիտ մի կաղնի էր կանգնած: Տարին բոլոր նա նայում էր անտառին ու զրուցում նրա հետ: Երբ ահեղագոչ քամին ուզում էր արմատախիլ անել մատղաշ ծառերը, կաղնին կանգնում էր քամու դեմ

ու չէր թողնում, որ անտառ մտնի: Երբ սարերից պոկված հեղեղը ահեղ մռնչյունով գալիս էր, որ քշի ու իր հետ տանի անտառի ծառերը, կաղնին իր ամուր բունը դեմ էր անում հեղեղին: Հեղեղը զարնվում էր նրան ու փոխում հունը: Բայց մի անգամ պատահեց զարհուրելին:

Չարագործ մի մարդ մի առավոտ, կացինն ուսին, մտավ անտառ: Ծառերը սարսռացին: Բայց ի՞նչ կարող էին անել անօգնական ծառերը, երբ անտառ մտած մարդը չար էր ու անխիղճ: Նա կտրատում էր մատղաշ ծառերը, տապալում գետնին: Ծառերը հառաչում էին ու օգնություն կանչում: Երբ անտառի եզրին կանգնած կաղնին լսեց տապալվող ծառերի կանչը, արմատները հողից հանեց ու քայլեց դեպի կացնով մարդը, նրա ճյուղերը ձեռքեր դարձան ու սկսեցին ծեծել կացնով մարդուն: Կացնով մարդը ուզում էր փախչել, ազատվել կաղնու ձեռքերից, բայց ո՞ւր փախչեր... Կաղնին այնքան ծեծեց մարդուն, որ նա ուժահատ փռվեց իր կտրած ծառերի կողքին... Այդ ժամանակ կաղնին նրան փաթաթեց իր արմատներով ու խրեց հողի ընդերքը...»:

Այս պատմությունը գրառված էջերի լուսանցքներում նկարված է քայլող կաղնին: Այնքան գեղեցիկ, անքան հրապուրիչ է նա, որ նկարին նայելիս մարդու սիրտը լցվում է ուրախությամբ... Անտառի եզրի այդ ծառը հիմա չկա: Ով գիտե՝ ի՞նչ է եղել... Մինչ ես հիշում էի ծառի մասին գրված այս պատմությունը, Չիկարելին ինձնից առաջ էր անցել, կանգնել խճճված, իրար հյուսված անանցանելի արմատների դիմաց ու սպասում էր ինձ:

- Այստեղ մեր ճանապարհը վեջանում է,- տխուր ասաց նա,- ինչպե՞ս ենք անցնելու այս արմատների միջով:

- Չգիտեմ,- արմատներին նայելով՝ պատասխանեցի ես:

- Գուցե շրջանցե՞նք:

- Պետք է մտածել,- ասացի ես ու մոտեցա վիշապ հիշեցնող մի արմատի: Արմատը շարժվեց. նրա տակից, կացինն ուսին, մի մարդ դուրս ելավ:

Մեզ տեսնելով՝ մարդը կացինը գցեց մի կողմ ու խռպոտ ձայնով ասաց.

- Սիրելինե՜րս, իմ թանկագի՛ն բարեկամներ, երբեք, ոչ մի օր ես այսքան երջանիկ չեմ եղել, ինչպես այս պահին, որովհետև իմ աչքերը տեսնում են ձեզ: Թույլ տվեք ողջագուրվել ու բարի գալուստ մաղթել ձեզ:

- Բայց դուք ո՞վ եք,- նրանից խույս տալով՝ հարցրեց Չիկարելին:

- Ձեր հավատարիմ ծառան եմ, ձեր հարազատն եմ, ձեր ստրուկն եմ, ձեր ոտքի տակի հողն եմ,- մինչև գետին խոնարհվելով՝ բարբաջեց նա:

- Այդքան մի՛ կռացեք,- զզվանքով ասացի ես:

- Մի՛ զայրացեք, խնդրում եմ,- պաղատեց նա ու շարունակեց,- դուք

այնքան բարձրահասակ եք, այնքան գեղեցիկ, այնքան իմաստուն, որ ես չգիտեմ, թե ինչպես ընդունեմ ու մեծարեմ ձեզ:

- Մենք ոչ բարձրահասակ ենք, ոչ գեղեցիկ, ոչ էլ իմաստուն:

- Համեստությունը զարդարում է ձեզ... Եթե բարձրահասակ և գեղեցիկ չեք, ուրեմն իմաստուն եք: Իսկ ահա այս երիտասարդը մեծ ապագա ունի: Շուտով նա դառնալու է մեր Հանրապետության թագավորը: Օ՜, այն ժամանակ արևը կիջնի երկնակամարից ու կզարդարի նրա կուրծքը...

- Ի՞նչ արև, ի՞նչ կուրծք, ի՞նչ երկնակամար,- զայրացա ես,- դու երևի սխալվում ես: Մենք հասարակ մարդիկ ենք: Այդ բառերը երևի ուրիշների համար ես պատրաստել:

- Ո՛չ, ի՞նչ եք ասում... Ի՜նչ եք ասում...

- Դու ո՞վ ես, ինչո՞վ ես զբաղված, ի՞նչ ես անում այստեղ...

- Երևի իմ գույնը ձեզ դուր չեկավ: Հիմա, հիմա, սիրելի՛ բարեկամներ, ես կփոխեմ իմ գույնը,- սրտակեղեք ձայնով ասաց արմատի տակից դուրս ելած մարդն ու կորավ արմատների լաբիրինթոսում:

- Վա՜յ, հազիվ ազատվեցինք դրանից,- ասաց Չիկարելին:

- Այդպիսի մարդկանցից այնքան էլ հեշտ չէ ազատվելը,- խոսքս դեռ չէի ավարտել, երբ դարձյալ հայտնվեց արմատի տակից դուրս ելած մարդը՝ ոտքից գլուխ ճերմակ:

- Ես մի մարդ եմ, որ կարողանում եմ հարմարվել ցանկացած իրադրության և իրավիճակի: Ամեն տեղ ինձ համար լավ է, բոլոր մարդիկ ինձ համար ընդունելի են: Ցանկացած երաժշտության տակ ես կարող եմ պարել... Իսկ ձեզ այնքան եմ սիրում, որ կարող եմ սիրտս կրծքավանդակիցս հանել ու նվիրել ձեզ: Դուք ձեր խելքով, ձեր վարվեցողությամբ, ձեր համեստությամբ գերեցիք ինձ... Ես չգիտեմ՝ աշխարհում ձեզ նման մարդիկ կան: Դժվար լինեն... Օ՜, բախտ, ի՜նչ շռայլ ես իմ նկատմամբ,- ձեռքերը տարածելով՝ հրճվագին ասաց նա ու մի քանի անգամ խոնարհվեց իմ առաջ:

Չիկարելին ծիծաղեց:

Ոտքից գլուխ ճերմակը ծիծաղն ընդունեց որպես խրախուսանք ու ավելի շատ սկսեց խոնարհվել:

- Բավական է,- զայրացա ես,- ընդհանրապես տանել չեմ կարող քծնող մարդկանց:

- Օ՜, ի՞նչ եք ասում, ի՛մ հայր... ուզո՞ւմ եք Ձեզ համար ամեն ինչ անեմ, միայն մի՛ նեղացեք ինձնից:

- Ես չեմ նեղանում, ես գարշում եմ: Բացի դրանից, ես ձեր հայրը չեմ:

- Երևի իմ գույնը դարձյալ ձեր դուրը չեկավ: Մի րոպե սպասեք...,- առանց վրդովվելու ասաց նա ու նորից կորավ արմատների անտառի մեջ:

- Հե՜յ, ո՞ւր կորար,- կանչեց Չիկարելին:

Նրա դեմքի արտահայտությունից կռահում էի, որ այդ խաղը նրան դուր է գալիս:

- Ես կորչող մարդ չեմ: Կորա՜ր: Հի՜, հի՜, հի՜...,- ժպիտը դեմքին, ոտքից գլուխ կանաչած, մեր դիմաց ցցվեց արմատի տակից դուրս ելած մարդը:

- Իմ կարծիքով, իմ այս գույնը ձեզ դուր եկավ... Ես այսուհետև այս գույնով կներկայանամ ձեզ,- ձեռքերը կրծքին դրեց նա:

- Լսի՛ր, ի՞նչ անենք, որ դու ձեռք քաշես մեզնից,- ճարահատված ասացի ես:

- Ինձ ոչինչ հարկավոր չէ,- իբր նեղացած ասաց նա:

- Հապա ինչո՞ւ ես գույնդ անվերջ փոխում:

- Որպեսզի ձեզ դուր գամ:

- Միայն այդքա՞նը:

- Ես մի մարդ եմ, որ կարողանում եմ հարմարվել, ամեն վայրկյան կարող եմ փոխել իմ հայացքները, համոզմունքները, դավանանքը, դասակարգը, սկզբունքները, բայց մարդիկ ինձ չեն հասկանում... Դրա համար ես ուզում եմ, որ դուք ինձ հասկանաք և գնահատեք...

- Թո՜ւ, ինչ զզվելի է քո գույնը,- դեմքը մի կողմ թեքեց Չիկարելին:

- Ինչո՞ւ շուտ չասացիք, որ Ձեզ դուր չի գալիս իմ գույնը,- հուզված ասաց արմատի տակից դուրս ելած մարդը,- համբերե՛ք, խնդրում եմ, հիմա ես կփոխեմ իմ գույնը:

Նա հետ-հետ գնաց ու նորից կորավ արմատների անտառում: Չիկարելին նայեց ինձ ու աչքով արեց:

- Քեզ դո՞ւր է գալիս այս մարդը,- հարցրի ես:

- Չգիտեմ...

- Իսկ այս գույնը Ձեզ դո՞ւր է գալիս,- ոտքից գլուխ վարդագույն դարձած՝ հարցրեց նա ու սպասողական նայեց ինձ: Ես ձայն չհանեցի:

- Լռությունը համաձայնության նշան է,- ասաց նա ու մոտեցավ Չիկարելիին:

- Դե, ինչպե՞ս է, գոնե Դուք ասեք, այս գույնը Ձեր ճաշակո՞վ է:

- Հեռանանք այստեղից, ես այլևս չեմ ուզում այս մարդուն տեսնել,- առանց նրա հարցին պատասխանելու՝ ինձ դիմեց Չիկարելին:

- Մի՛ գնացեք... Ես չեմ դիմանա այդ դժբախտությանը: Առանց Ձեզ չեմ կարող ապրել: Եթե իմ գույնը ձեզ դուր չի գալիս, հենց հիմա

կփոխեմ... համբերե՛ք, խնդրում եմ, համբերե՛ք...,- տագնապով ու հուզմունքով ասաց նա ու նորից կորավ արմատների մեջ:

- Ես այսպիսի մարդ երբեք չեմ տեսել,- շշուկով ասաց Չիկարելին,- Դուք չե՞ք ասի, սա լա՞վ մարդ է, թե՞ վատ:

- Քո կարծիքով ինչպիսի՞ն է:

- Չգիտեմ... առաջին անգամ եմ այսպիսի մարդու հանդիպում,- ուսերը թոթվեց Չիկարելին:

- Համբերի՛ր, տեսնենք վերջն ինչ է լինելու:

Հենց այդ պահին, ասես գետնի տակից, մեր դեմ ցցվեց արմատի տակից դուրս ելած մարդը: Նա լեղակագույն էր:

- Հը՞, այս գույնի մասին ի՞նչ կասեք:

- Մենք քեզ ասելու բան չունենք...

- Հարազատնե՛րս, ի՛մ թանկագիններ,- խոսքս ընդհատելով՝ վրա տվեց նա,- մի քանի րոպե չկա, ինչ մենք հանդիպել ենք իրար, բայց արդեն հարազատներ ենք դարձել: Ես առանց ձեզ այլևս չեմ կարող ապրել: Ի՜նչ գեղեցիկ ճակատ ունի այս երիտասարդը: Երդվում եմ, այսպիսի ճակատ ոչ ոք չունի: Հանճարեղ ճակատ... հասակն ուղղակի հրաշք է, այսպիսի բոյով-բուսով տղայի ոչ մի տեղ չեմ հանդիպել... խնդրում եմ, ինձ ճիշտ հասկացեք...

- Ե՞ս... - կմկմաց Չիկարելին,- իմ հասակը... իմ ճակատը... ե՜ս...

- Համեստությունը զարդարում է մարդուն, իսկ Քեզ՝ առավել ևս: Դուք շատ մեծ մտածող եք, շատ զորեղ անհատականություն...

- Բավակա՛ն է,- ճչաց Չիկարելին,- այդպիսի բառեր մի՛ ասա, ես ամաչում եմ: Քեր փոխարեն ես ամաչում եմ:

- Երևի իմ գույնը Քեզ դուր չի գալիս... Մի՛ վրդովվեք, խնդրում եմ, ես կարող եմ այն դարձյալ փոխել: Ես չեմ հոգնում,- անամոթաբար ժպտաց նա ու նորից անհետացավ:

- Չեմ հասկանում, ի՞նչ է ուզում այս մարդը,- ասացի ես:

- Ես էլ չեմ կռահում,- ասաց Չիկարելին:

- Դուք սրտիս մեջ եք... Մի վայրկյան չկա, որ հեռացա ձեզնից, և կարոտն արդեն տանջեց ինձ,- նրա կերպարանքը, ձայնը, բառերը սկսեցին ազդել մեր զգայարանների ու մտածողության վրա, մենք կորցրեցինք կողմնորոշվելու մեր ընդունակությունը:

- Զզվելի՛ է,- բղավեց Չիկարելին:

- Տարօրինակ է... Տարօրինակ, որ դուք չեք ուզում ինձ օգտագործել ձեր նպատակներն ու շահերը իրագործելու համար: Ափսո՜ս, հազա՜ր ափսոս... - խորազգաց ցավով ասաց նա ու չքվեց:

Մեկ ակնթարթ հետո հայտնվեց՝ ոտքից գլուխ մոխրագույն:

- Դե, սա՞ ինչպես է,- ժպտալով հարցրեց նա:

- Ոչինչ,- ասացի ես, հուսահատված ու հոգնած...

- Շատ ուրախ եմ, որ վերջապես իմ գույնը Քեզ դուր եկավ, որովհետև ձեզ նման մարդիկ հազվագյուտ են, իսկ հազվագյուտ մարդիկ միշտ սիրելի են: Դուք չեք պատկերացնում՝ որքան երջանիկ կլինեմ, եթե

շնորհ անեք մեր տուն գալ: Ես գլուխս կդնեմ շեմի վրա, որ ներս մտնելիս տրորեք այն:

- Հոգնեցի,- հոգոց հանեց Չիկարելին,- էլ չեմ դիմանում քծնանքին:

- Ես հիմա ձեզ համար աթոռներ կբերեմ,- ասաց նա ու չքվեց:

- Գնանք, խնդրում եմ,- նրա հեռանալուց հետո ասաց Չիկարելին:

- Գնանք, բայց ինչպե՞ս... ճանապարհն անցնում է այս արմատների միջով, կհաջողվի՞ անցնել...

- Խնդրե՜մ, նստե՛ք,- երկու բազկաթոռ շալակած՝ հայտնվեց մոխրագույն մարդն ու բազկաթոռները դրեց արմատների մոտ,- այսօր իմ կյանքի ամենաերջանիկ օրն է, որ հավերժորեն հիշելու եմ,- ասաց նա ու սրբեց ճակատի քրտինքը:

- Ես քեզնից վախենում եմ, ինձ չմոտենաս,- հանկարծ ճչաց Չիկարելին ու կպավ ինձ:

Եվ, իրոք, մոխրագույն դեմքով, մոխրագույն ձեռքերով, մոխրագույն ատամներով, մոխրագույն աչքերով մարդը շատ զարհուրելի էր: Դիվային ինչ-որ բան կար նրա արտաքինի ու շարժումների մեջ:

- Իմ գլուխը երևի ձեզ դուր չի գալիս, հենց հիմա ես կփոխեմ,- ասաց նա ու դարձյալ կորավ արմատների անտառում:

Մենք այնքան հոգնած էինք, որ փռվեցինք հարմարավետ բազկաթոռների մեջ ու նիրհեցինք...

- Դե ինչ, իմ գլուխը հիմա ձեզ դո՞ւր է գալիս: Ես այն փոխեցի, ներկեցի տարբեր գույներով,- մեր դիմաց կանգնելով՝ ասաց նա:

Մենք բացեցինք մեր աչքերն ու տեսանք հարյուրավոր երանգներով ներկված մի գլուխ, որը շատ ծիծաղելի էր:

- Դու սեփական գույն չունե՞ս,- հարցրեց Չիկարելին:

- Ո՛չ: Ինչպե՞ս կարելի է մի գույնով, մի երազանքով, մի գաղափարով, մի հավատով ապրել այս աշխարհում: Ի՞նչ եք ուզում՝ ասեք, ես կանեմ ձեզ համար:

- Ես ուզում եմ, որ դու թավալվես այս ցեխի մեջ,- չարաճճիորեն ասաց Չիկարելին:

- Թավալվեմ,- ժպտաց նա, առանց երկմտելու պառկեց ցեխի մեջ ու սկսեց թավալվել:

- Բավակա՛ն է,- զզվանքով բղավեցի ես:

Գույնը փոխող մարդը դուրս թռավ ցեխի միջից, իրեն թափ տվեց, բոլորովին մաքուր կանգնեց մեր դիմաց ու ժպտալով հարցրեց.

- Ուրիշ ի՞նչ եք ուզում, որ անեմ:

- Ես ուզում եմ, որ դու այս արմատներից մի քանիսը կտրես, մեզ համար ճանապարհ բացես,- ասաց Չիկարելին:

- Աչքիս վրա,- ասաց նա, վերցրեց կացինն ու հարձակվեց արմատների վրա։

- Սպասի՛ր,- բղավեցի ես։

- Ինչո՞ւ,- հարցրեց նա։

- Չէ՞ որ ծառերը կչորանան։ Արմատները կտրել չի կարելի։

- Չեք ուզում՝ չեմ կտրի, միայն խնդրում եմ, ինձնից մի նեղացեք։

- Ա՜խ, ա՜խ...,- հառաչեցի ես։

- Աա՜, հասկացա՜, հասկացա՜։ Հիմա ես կգամ, համբերե՜ք...

- Ո՛չ, ո՛չ։ Ո՛չ գնա, ո՛չ էլ արի։

- Երկար չի տևի, խնդրում եմ,- ասաց նա ու չքվեց։

- Ինչո՞ւ հառաչեցիք,- հարցրեց Չիկարելին,- մի՞թե զարմանալի ու ծիծաղելի չէ այդ մարդը։

- Ո՛չ ծիծաղելի է, ո՛չ էլ զարմանալի,- տխուր ասացի ես։

- Հապա՞։

- Զարհուրելի է։

- Ինչո՞ւ։

- Այդպիսի մարդիկ ամեն ինչի ընդունակ են,- ասացի ես,- ահա, նա գալիս է...

Նրա գույներից, նրա խոսքերից, նրա պահվածքից մեր գլուխները սկսեցին պտտվել ու ցավել։

- Գիտե՞ք, ոչ մի անգամ ձեզ պես իմաստուն ու բարձրահասակ մարդկանց ես չեմ հանդիպել։ Ասեք վերջապես, ի՞նչ անեմ ձեզ համար։

- Ես ուզում եմ, որ ինքդ քեզ ծեծես,- ասաց Չիկարելին։

- Բայց ես ոչ մի վատ բան չեմ արել։

- Ինչպե՞ս չես արել։ Քիչ առաջ դու չէի՞ր թավալվում ցեխի մեջ,- վրա տվեց Չիկարելին։

- Իսկապես,- քծնանքով ժպտաց գույնը փոխող մարդը,- հիմա, հիմա կծեծեմ,- ասաց նա, մեզնից մի քանի քայլ հեռացավ, գետնից մի ճիպոտ վերցրեց ու սկսեց ինքն իրեն ծեծել։

- Թավալվում էիր ցեխի մե՞ջ, հա՞, անամո՛թ, անդաստիարա՛կ, կեղտո՛տ... չէի՞ր հասկանում, որ չի կարելի,- բարձրաձայն ասում էր նա ու հարվածներ տեղում գլխին, փորին, ոտքերին։

- Լա՜վ, բավական է,- զզվանքով կանչեց Չիկարելին ու թեքեց երեսը։

- Ո՛չ, ո՛չ... ես այնքան պիտի ինձ ծեծեմ, որ դուք համոզվեք, որ ես նվիրված եմ ձեր գաղափարներին... Ա՜խ, հիմա՛ր գլուխ, թավալվո՞ւմ էիր, հա՞... ցեխոտվո՞ւմ էիր ցեխաջրում, հա՞... Դե ա՛ռ քեզ, ա՛ռ քեզ, ապո՛ւշ գլուխ,- գոռգոռաց նա ու շարունակեց ինքն իրեն անողոք ծեծել։

- Բավակա՛ն է,- չդիմացա ես։

- Լավ, լավ, չե՞ք ուզում՝ չեմ ծեծի,- նա ճիպոտը մի կողմ շպրտեց ու մոտեցավ մեզ:

- Ես այլևս չեմ ուզում դրան տեսնել,- բազկաթոռից վեր թռավ Չիկարելին:

- Ես նույնպես: Մենք չենք ուզում Ձեր երեսը տեսնել...

- Ո՞ւր եք գնում,- վախեցած հարցրեց նա:

- Աղբյուրի մոտ:

- Ի՞նչ կարիք կա, մի՞թե այստեղ վատ է: Հասկանո՞ւմ եք, երբ դուք գնաք՝ ես բոլորովին մենակ կմնամ, էլ ո՞ւմ համար գույնս պիտի փոխեմ...

- Մի՛ փոխիր:

- Չեմ կարող: Դա իմ ապրելակերպն է:

- Հեռացի՛ր,- բղավեցի ես:

- Չե՛մ հեռանա,- հոխորտաց նա,- այդ ո՞ւմ վրա եք բղավում: Կարծում եք ես հենց այնպե՞ս էի գույնս փոխում: Ո՛չ: Դուք ինձ պետք է նշանակեք գլխավոր անտառապահ:

- Այդ էր պակաս,- ասացի ես:

- Ա՜խ, չե՞ք ուզում... Լա՜վ, լա՜վ...- նենգորեն շշնջաց նա:

Նրա վրա ուշադրություն չդարձնելով՝ մենք մտանք արմատների անտառը, որ մի կերպ շարունակենք մեր ճանապարհը, հանկարծ Չիկարելին թևիցս քաշեց ու բղավեց.

- Պաշտպանվի՛ր,- ես մի կերպ ինձ գցեցի մի հաստ արմատի տակ: Ուղիղ ոտքերիս առաջ մի մեծ քար ընկավ: Եթե հանկարծ այդ քարը դիպչեր գլխիս, Չիկարելին մենակ պիտի շարունակեր իր ճանապարհը:

- Ա՜խ, դու, գարշելի արարած, ուզում էիր ինձ սպանե՞լ,- ասացի ես ու վեր կացա:

Իմ դիմաց կանգնած էր խոշոր մի քար գլխից վեր բարձրացրած գույնը փոխող մարդը և ուզում էր այդ քարով գլուխս ջնջխել:

- Քարը գցի՛ր:

- Չե՛մ գցի:

- Գցի՛ր, ասում եմ:

- Չե՛մ գցի... զզվելի՛ մարդիկ,- թունոտ ասաց նա:

- Լսի՛ր, եթե նորից գույնդ փոխես, մենք կկատարենք քո ցանկությունը,- առաջ վազելով՝ ասաց Չիկարելին:

Գույնը փոխող մարդն անմիջապես քարը գցեց ու կորավ:

- Գնանք, քանի դեռ չի վերադարձել,- ասաց Չիկարելին ու առաջ անցավ:

Ես հետևեցի նրան:

- Հե՜յ, չփախչեք, ես ձեզ հետևում եմ,- անընդհատ բղավում էր գույնը փոխող մարդը:

- Արա՜գ, արա՜գ,- արմատների մեջ շուլալվելով՝ ինձ իր հետևից տարավ Չիկարելին:

- Չվախենաք, ես եմ... ձեր բարեկամը, ձեր հարազատը... Օ՜, ձեզ նման ազնիվ մարդկանց առաջին անգամ եմ հանդիպում,- սատանայի կերպարանք ստացած՝ նորից մեր դեմ հայտնվեց գույնը փոխող մարդը:

- Ի՞նչ ես ուզում... մեզ հանգի՛ստ թող,- ասացի ես:

- Արդեն ասել եմ, թե ինչ եմ ուզում... Ոչինչ, ոչինչ, ես նպատակիս կհասնեմ...

- Իհարկե՜, իհարկե՜, կհասնես, ես քեզ ճանաչում եմ:

- Այո՛, անպայման կճանաչեք... Իմ մասին գրված է գրքերում: Ես միշտ ծառայել եմ իմ տերերին, միշտ եղել եմ նրանց կամակատարն ու հասել մեծ հաջողությունների... Ես մի ժամանակ ծառեր էի կտրում... հետո ձախորդություն պատահեց, մի կաղնի ինձ փաթաթեց իր արմատների մեջ ու խցկեց այստեղ... Բայց ես այդ կաղնու հերը անիծեցի... Աննկատ, կամաց-կամաց կտրատեցի նրա արմատները, ու նա չորացավ...

- Ստո՛ր, ստո՛ր մարդ, հեռացի՛ր,- ասացի ես ու շարունակեցի առաջ գնալ, բայց Չիկարելին արդեն չկար: Նա կարծելով, որ ես գնում եմ իր հետևից, շարունակել էր ճանապարհն ու ինձնից հեռացել:

Զայրացած հետ դարձա, բայց չկար նաև գույնը փոխող մարդը... Չքվել էր:

- Չիկարելի՜, Չիկարելի՜,- բղավեցի ես:

- Այստեղ եմ,- հեռվից կանչեց Չիկարելին:

Ես շնչասպառ հասա նրան, ու մենք շարունակեցինք մեր ճանապարհը:



ՀԱՆԴԻՊՈՒՄ ԲԱՐԻ ԾԵՐՈՒՆՈՒ ՈՒ ԱՆԿՈՒՇՏ ԹԱԳԱՎՈՐԻ ՀԵՏ

Խառնիճաղանջ արմատների միջից մեծ դժվարությամբ դուրս եկանք: Մեր դեմ փռվեց կանաչ մի դաշտ: Այդ դաշտում և՛ օդն էր ուրիշ, և՛ լույսն էր անսովոր: Դաշտի միջով բարակ առու էր հոսում, որի ափին չալպտուրիկ մի կով էր արածում:

Մենք շատ ուրախացանք: Վաղուց ոչ մի կենդանի չէինք տեսել: Երբ մոտեցանք կովին՝ նկատեցինք, որ նրա մոտ՝ թմբի վրա, մի ծերուկ է նստած: Ծերուկը թախծոտ աչքերով նայեց մեզ:

- Բարև՛, պապի՛կ,- ուրախացած ասացինք մենք:

- Բարև՛, զավակնե՛րս,- տխուր ասաց ծերուկն ու հառաչեց:

- Ինչո՞ւ ես հառաչում, պապի՛կ,- հարցրեց Չիկարելին:

- Է՜, թոռնի՛կս, էս ո՞ւր եմ ընկել, ախր իմ ի՞նչն է էստեղ կորել... ընկել ու չեմ կարողանում դուրս գալ: Էս տեսակ էլ անբախտություն կլինի, որ օր ծերության պատահեց ինձ:

- Բայց ինչպե՞ս ընկար այստեղ,- հարցրի ես:

- Էս աղբյուրի ակի մոտ կովս մի խոտ կերավ ու միանգամից էսպես փոքրացավ: Ես էլ էդ խոտից փորձի համար դրի լեզվիս ու մեկ էլ հոպ, տեսնեմ փոքրացել եմ... Էս խեղճ անասունը նայում էր ինձ ու բառաչում, ես նայում էի սրան, ու լացս գալիս էր... հետո չգիտեմ՝ ոնց եղավ, ինչ եղավ, ինչպես պատահեց, մտանք էս աղբյուրի ցամաքած հունն ու մոլորվեցինք...

- Ոչինչ, այդպես մի՛ հառաչիր և մի՛ հուսահատվիր, պապի՛կ... Փորձանքից դուրս գալու համար միշտ մի դուռ բացվում է,- ծերունուն հուսադրեցի ես ու մտածեցի, որ անպայման պետք է օգնենք նրան:

- Է՞, ու՞ր է թե մի դուռ բացվեր, փրկվեինք,- հառաչեց ծերունին:

- Վե՛ր կաց, վե՛ր, գնանք,- ասացի ես:

- Ո՞ւր, որդի՛:

- Դեպի աղբյուրը:

- Հաա՞... լավ կլինի, գնանք,- ոտքի ելավ ծերուկն ու դիմեց իր կովին,- գնանք ջուր խմենք, սրտներս հովանա... Գնանք, Միլոնա՛ ջան, կովի՛կ ջան...

Երբ ուզում էինք ճանապարհ ընկնել, վազքով դաշտ մտավ ոտքից գլուխ զինավառ մի ոստիկան, մոտեցավ ծերուկին ու բղավեց.

- Կանգնե՛լ, չշարժվե՛լ, անասո՛ւն:

- Անասունը ես չեմ: Անասունը սա է,- կովին ցույց տվեց ծերուկը:

- Չհակաճառե՛լ,- բղավեց ոստիկանը:

- Մեր հայր թագավորը հիվանդացել է, ասում են, որ կովի անարատ կաթ խմի՝ կառողջանա:

- Այո՛, ճիշտ են ասում, կովի կաթը բուժիչ է: Իմ կովը ազնվացեղ կով է: Անունը՝ Միլոնա:

- Առա՛ջ անցիր, անասո՛ւն,- հոխորտաց ոստիկանը:

- Ես առաջ կանցնեմ, դու կովին հասկացրու, որ առաջ անցնի,- ասաց ծերուկը:

- Կովին էլ կասեմ, քեզ էլ կասեմ, անասո՛ւն,- բոթբոթաց ոստիկանը, մոտեցավ կովին, քացով խփեց փորին ու գոռաց,- առա՛ջ անցիր, անասո՛ւն:

Կովը թախծոտ աչքերով նայեց ոստիկանին, կախեց գլուխն ու շարունակեց արածել:

- Քեզ հետ չե՞մ, անասո՛ւն,- նորից կովին քացով խփեց ոստիկանն ու հրեց, բայց կովն այս անգամ էլ նրան բանի տեղ չդրեց:

- Անասո՛ւն, քեզ եմ ասում, առա՛ջ անցիր,- զայրույթից կարմրելով՝ գոռգոռաց ոստիկանն ու մի քանի անգամ քացով խփեց կովի փորին:

Կովն այս անգամ էլ նրան բանի տեղ չդրեց: Կովը հո մարդ չէր, որ

ոստիկանից վախենար, բացի այդ, նա ծնված օրից ոչ մի վատ բան չի արել:

- Կսատկացնեմ, անասո՛ւն,- փրփրեց ոստիկանը, ծերուկի ձեռքից խլեց ձեռնափայտն ու սկսեց ծեծել կովին:

Մենք ուզում էինք կարգի հրավիրել ամբարտավան ոստիկանին, բայց ծերուկը չթողեց:

- Դուք մի՛ խառնվեք,- ասաց ծերուկը, միևնույն է, ոստիկանը ձեզ մարդու տեղ չի դնի, դուք նրա աչքին չեք էլ երևում:

- Ինչպե՞ս,- զարմացա ես:

- Այո՛, այստեղ նա միայն կովին է տեսնում ու մեկ էլ ինձ: Դուք նրա և նրա նմանների համար ենթադրյալ հանցագործներ եք ու զզվելի արարածներ,- բացատրեց ծերուկն ու մոտեցավ ոստիկանին:

- Պարո՛ն ոստիկան, այդպես չի՛ կարելի,- ասաց ծերուկը՝ ոստիկանի ձեռքից վերցնելով ձեռնափայտը: - Կովի հետ պետք է մարդավարի խոսել, քաղաքավարի խոսել: Կովը շատ քնքուշ սիրտ ունի: Նա կոպիտ, գռեհիկ բառեր ու վերաբերմունք տանել չի կարող:

Ոստիկանը մի կողմ քաշվեց: Ծերուկը մոտեցավ կովին, շոյեց աչքերը, ճակատը ու ականջին ինչ-որ բան փսփսաց: Կովը թափահարեց գլուխն ու առանց ձայն հանելու առաջ անցավ: Ոստիկանն ու ծերուկը հետևեցին նրան: Մենք նույնպես գնացինք նրանց հետևից:

Թագավորական պալատը գտնվում էր կանաչագեղ մի հովտում: Ոստիկանը ծերուկին ու կովին կանգնեցրեց պալատի դարպասների առաջ ու գոռգոռալով զեկուցեց.

- Կովը բերել եմ:

Պալատի դարպասից դուրս եկան մի խումբ մարդիկ ու մտատանջված մոտեցան կովին:

- Այսօր թագավորը ոչինչ չի խմել, ոչինչ չի կերել... Անվերջ տնքում է ու տնքում,- ասաց նիհար, մեծ գլխով մի մարդ:

- Ժամանակ կորցնել պետք չէ, անմիջապես կթենք, կաթը տանենք թող խմի,- առաջարկեց նրա կողքին կանգնած բարձրահասակը, որը կռացել ու շոշափում էր կովի պտուկները:

- Ոչ՛, պարո՛ն առողջապահության նախարար,- նրան դիմեց մեծ գլխով մարդը,- պետք է Վեհին հարցնել՝ նոր կթել, այլապես նա շատ կզայրանա ու կաթը չի խմի:

- Ուրեմն գնանք և զեկուցենք,- ասաց առողջապահության նախարարը, ու նրանք միասին պալատ մտան: Մենք աննկատ հետևեցինք նրանց:

Պալատը շատ շքեղ էր՝ մարմարյա աստիճաններ, ոսկյա ջահեր,

շատրվաններ, փառահեղ բազմոցներ, մի խոսքով, ինչեր ասես, որ չկային այդ պալատում շքեղաշուք... Թագավորի գաղտնի գործակալն ու առողջապահության նախարարը, իրար հրմշտելով, շնչապատառ մտան ընդարձակ մի սենյակ, որտեղ երկար սեղանի շուրջ բազմաթիվ աթոռներ էին շարված: Սեղանի գլխավերևում, գլուխը սեղանին դրած, նիրհում էր թագավորը: Գաղտնի գործակալն ու առողջապահության նախարարը ոտքերի թաթերի վրա մոտեցան նրան:

- Կովը բերել ենք, հա՛յր առաջնորդ,- խոնարհվեց առողջապահության նախարարը:

- Դուք չեք բերել... ես եմ բերել,- նրան առարկեց գաղտնի գործակալը, ավելի կռացավ և ավելի համարձակ ասաց.

- Կովը բերել եմ, հա՛յր առաջնորդ...

- Ի՞նչ եք փսփսում, կատվի՛ ձագեր,- առանց գլուխը բարձրացնելու՝ խռխռացրեց թագավորը:

- Դուք քնա՞ծ եք...

- Ես քնած ժամանակ էլ արթուն եմ: Քնած ժամանակ էլ տեսնում եմ, լսում: Գիտեմ՝ ով ինչ է անում, նույնիսկ ինչ է մտածում,- ասաց թագավորը՝ գլուխը մի քիչ բարձրացնելով:

- Օ՜ֆ, ցավում է, գլուխս ցավում է...

- Հա՛յր հարազատ, ժողովուրդների իմաստո՛ւն առաջնորդ,- մինչև գետին խոնարհվեց առողջապահության նախարարը,- ոչ միայն մենք, այլև աշխարհն արար տեսնում է Ձեր հանճարի լույսը, և մենք՝ մահկանացուներս, առանց Ձեզ մեկ ակնթարթ անգամ չենք կարող շնչել, էլ ուր մնաց ապրել... Դուք մեր օդն եք, ջուրն ու արևը...

- Կա՛ռճ կապիր,- տնքաց թագավորը:

- Կովը բերել եմ, գուցե մի կում խմեք նրա կաթից, ասում են՝ այդ կաթը շատ բուժիչ է,- վրա տվեց գաղտնի գործակալը՝ մեծ գլուխը մի քանի անգամ խոնարհելով:

- Կաթը, իմաստո՛ւն հայր, օգուտից բացի, վնաս չի տա... Ես ասացի՝ կթեն, կաթը բերեն,- ասաց առողջապահության նախարարը:

- Ինչ անե՞ն... կթե՞ն ... ապո՜ւշ... Սա ի՞նչ նախարար է, սրան պետք է կախել... Ասեք թող չկթեն,- բառերը հատ-հատ ասելով՝ ոտքի կանգնեց թագավորը:

- Չեն կթի... բայց, բայց... բա՜յց...,- բլբլացրեց առողջապահության նախարարը:

- Կթեն, որ մեջը թո՞ւյն գցեն, հա՜... Ուզում եք ինձ հետ ձեր հաշիվնե՞րը մաքրել, հա՞: Կովը թող բերեն այստեղ,- հրամայեց թագավորը, նորից նստեց իր տեղը, գլուխն առավ ափերի մեջ:

- Հիմա, իմաստո՛ւն հայր, հիմա կովը իր ոտքով կգա Ձեզ մոտ,- վախից չորացած շրթունքները լիզելով՝ շշնջաց առողջապահության նախարարն ու դուրս թռավ: Նրա հետևից վազքով դուրս թռավ նաև գաղտնի գործակալը:

Մենք լուռ ու անշարժ մնացինք մեր տեղերում:

Կովն ու ծերուկը իրենց կյանքում երբեք այդքան սահուն ու հարթ հատակի վրա ոտք չէին դրել և թագավոր էլ չէին տեսել, դրա համար էլ չգիտեին՝ իրենց ինչպես պահեն:

- Բարձրացրո՛ւ ոտքերդ, անասո՛ւն, զգո՛ւյշ քայլիր, անասո՛ւն,- շշուկով կովին ասաց գաղտնի գործակալը,- առջևիդ երկու ոտքը դի՛ր աստիճանների վրա, անասո՛ւն... Կամա՜ց, անասո՛ւն, սա պալատ է, ախոռ չէ... Անասո՜ւն...

- Հասկացանք, որ պալատ է,- շշուկով պատասխանեց ծերուկը,- կովը առաջին անգամ է այսպիսի բախտի արժանանում ու հուզմունքից չգիտե ինչ անել, իրեն ինչպես պահել:

- Լռի՛ր,- ծերուկին սաստեց առողջապահության նախարարը:

Կովը մի կերպ բարձրացավ աստիճաններով, ներս մտավ պալատ ու գլխահակ կանգնեց թագավորի առաջ: Ծերուկը հանեց գլխարկն ու բարևեց թագավորին, բայց թագավորը նրա բարևին չպատասխանեց: Ծերուկը ժպտաց: Թագավորը շատ նման էր այն հաստագլուխ ոստիկանին, որն ամեն օր գալիս, ձրի կաթ էր խմում ու ծեծում կովին... «Էդպես է, ոստիկաններն անում են այն, ինչ անում են իրենց թագավորները...»,- մտածեց ծերուկը, գլխարկը դրեց թևի տակ ու կանգնեց կովի կողքին: Երկար տարիներ թագավորը կով չէր տեսել: Ընդհանրապես, բացի ոտքերի թաթերի վրա ման եկող ու անվերջ ժպտացող նախարարներից, նա ուրիշ ոչ մեկի չէր տեսնում: Նա մոտեցավ կովին, զգուշությամբ բռնեց պոզից ու լռեց: Նա հիշեց իր անուրախ մանկությունը, հիշեց մորը, որը, դռնեդուռ ընկած, լվացք էր անում, որ մի պատառ հաց վաստակի, հիշեց հորը, որը հարբում ու թավալվում էր փողոցի ցեխի մեջ, հիշեց իրենց հարևանի կովին, որի կաթից մեկ-մեկ ինքը խմում էր... Սիրտը չարությամբ լցվեց բոլորի հանդեպ...

- Բացի կովից, թող բոլորը ռադ լինեն,- հրամայեց թագավորը: Բոլորը, առանց բառ ասելու, դուրս թռան:

Մնացին թագավորն ու կովը: Մենք հետաքրքրությամբ սպասում էինք, թե ինչ է լինելու: Թագավորը մոլորված ու տխուր նայեց կովին: Կովի ծիծաղը եկավ, բայց վախեցավ ծիծաղել: Անպիտան ու դաժան մարդու մոտ ծիծաղե՞լ կլինի...

- Կո՛վ, ա՜խ, կո՜վ, ի՞նչ ասեմ քեզ,- հառաչեց թագավորը,- ասում են՝

քո կաթն ամեն տեսակ հիվանդություն բուժում է... Բա որ չբուժի՞: Քեզ մորթել կտամ... Սատկացնել կտամ: Հա՜, հա՜, կմորթեն ու միսդ որսի շներին կտան: Մո՛տ արի, մո՛տ արի, անասո՛ւն,- ասաց թագավորը: Կովը նրա բոլոր ասածները հասկացավ, ու նրա մեջ ատելություն ծնվեց, ատելություն ոչ միայն թագավորի, այլև բոլոր նախարարների, ոստիկանների ու պալատականների հանդեպ:

- Մո՛տ արի, կաթդ խմեմ, առողջանամ, տես ինչե՞ր եմ անելու: Էդ հիմար բանաստեղծները վերջերս իմ մասին դադարել են բանաստեղծութուններ գրել, կարծում են՝ մեռել եմ: Մո՛տ արի, ա՛յ կով...

Կովը մոտեցավ թագավորին: Թագավորը մտավ նրա տակ, պտուկն առավ բերանն ու սկսեց ծծել:

Իրոք, կաթը շատ համեղ էր ու դուրալի: Թագավորը չորս պտուկներն էլ իրար հետևից այնքան ծծեց, որ կովի կուրծքը դատարկվեց: Թագավորի քունը տարավ, նա այդպես հատակին պառկած էլ քնեց:

Կովը երկար նայեց քնած թագավորի ծաղկատար դեմքին ու ցանցառ, շեկ բեղերին: Նա ուզեց թքել թագավորի երեսին, բայց վախեցավ, որ իր անխոհեմ արարքի համար կարող են մորթել աշխարհի բոլոր կովերին, դրա համար էլ այդ բանը չարեց: Նա մի քիչ էլ սպասեց ու դուրս եկավ:

Նրան դիմավորեց առողջապահության նախարարը:

- Խմե՞ց,- հարցրեց նախարարը՝ կովի աչքերին նայելով:

Նախարարի հարցին կովը չպատասխանեց, լուռ մոտեցավ ծերուկին:

- Խմե՞ց,- նորից հարցրեց առողջապահության նախարարը:

- Այո՛,- կովի կուրծքը ցույց տալով՝ ասաց ծերուկը,- չե՞ք տեսնում՝ դատարկվել է:

- Դե, կորե՛ք, կորե՜ք,- նրանց դուրս վռնդեց ներքին գործերի նախարարը:

Ծերուկն ու կովը հեռացան: Մենք նույնպես ուզում էինք հեռանալ, երբ թագավորը ձայն տվեց:.

- Հե՜յ, հիմարնե՛ր, դավաճաննե՛ր, սրիկանե՛ր...:

Բոլոր դռները միանգամից բացվեցին ու գլխապատառ ներս վազեցին գաճաճ ու բարձահասակ, նիհար ու գեր, ապուշ ու խելացի, խորամանկ ու նենգ, դաժան ու ստորաքարշ, կաշառակեր ու երեսպաշտ գեներալները, ոստիկանապետը, դատավորները, նախարարները:

Այնուամենայնիվ, զարմանալի էր, որ մենք բոլորին տեսնում ու լսում էինք, բայց նրանցից ոչ ոք մեզ չէր տեսնում:

Նախարարները, իրար հրմշտելով, շարվեցին թագավորի առաջ ու աչքները չռած՝ սկսեցին նայել նրան:

Թագավորի այտերը կարմրել էին: Նա իրեն առողջ ու առույգ էր զգում:

- Հը՞, կատվի՛ ձագեր, կարծում էիք՝ կմեռնե՞մ, հա՞,- հայացքը նախարարների վրա նենգորեն սահեցրեց թագավորը,- պարո՛ն արդարադատության նախարար, անցած օրը ինչե՞ր ես դուրս տվել... Ուրեմն, քո կարծիքով, ես երկիրը բա՞նտ եմ դարձրել, ազատություն չկա՞... Ապո՛ւշ, որ ազատություն տամ, գիտե՞ս ինչ փորձանքի մեջ կընկնես: Կարծում եք՝ ազատությունը լա՞վ բան է... Քո փոխարեն արդարադատության նախարար կդառնա...

- Ներեցե՛ք, ներեցե՛ք,- աչքերը թագավորի ճակատից չկտրելով՝ ասաց արդարադատության նախարարը,- թույլ տվեք մի բան ասել:

- Ասե՛ք,- առանց նրա երեսին նայելու՝ թույլ տվեց թագավորը:

- Ինձ թվում է, որ Ձեր ճակատին ինչ-որ բաներ են բուսել, որոնք նման են... Ներեցե՛ք, ներեցե՛ք...

- Ինչի՞ են նման, ապո՛ւշ,- գոռաց թագավորը:

- Նման են... Ներեցե՛ք, ներեցե՛ք... իմ կարծիքով, նման են պո-պո-պո... պո-զե-րի՛...

- Պոզերի՞,- կատաղեց թագավորը,- ինչ ասացի՞ր...

Քար լռություն տիրեց:

- Մե՛նք... մե՛նք, մե՛նք...- կմկմացին նախարարները,- մենք ոչինչ չենք տեսնում, մենք ոչինչ չգիտենք, մենք ոչինչ չենք լսել...

- Հայելի՛ բերեք,- բղավեց թագավորը:

Բոլորը դուրս վազեցին ու մի-մի հայելի գրկած՝ ներս եկան:

- Թող արտաքին գործերի նախարարը մոտենա ինձ,- ճչաց թագավորը,- ես միայն նրա բերած հայելուն եմ վստահում:

Արտաքին գործերի նախարարը, շունչը փորը գցած, մոտեցավ թագավորին ու հայելին պահեց նրա դիմաց:

Թագավորը հայելու մեջ տեսավ իր աչքերը, իր բերանը, իր քիթը, իր ճակատը ու ճակատի վրա՝ երկու պոզ, որոնք վայրկյան առ վայրկյան մեծանում էին:

- Այս ի՞նչ է,- ճչաց նա:

- Մե՛նք... մե՛նք... մե՛նք... մենք ոչնչից տեղյակ չենք,- տերևի պես դողալով՝ միաբերան ասացին նախարարները:

- Ի՞նչ եք կանգնել, կատվի՛ ձագեր, շո՛ւտ, կանչե՛ք պալատական փականագործին,- գոռաց թագավորը:

- Հիմա, հիմա, մեր իմաստո՛ւն հայր,- գոչեցին նախարարներն ու նորից դուրս վազեցին:

- Կանգնի՛ր,- արդարադատության նախարարի ձեռքը բռնեց

թագավորը,- դու ոչ մի տեղ չգնաս: Ես քեզ լավ եմ ճանաչում, դու անմիջապես կտարածես, որ ես պոզեր ունեմ:

- Ազնի՛վ խոսք, ոչ մեկին ոչինչ չեմ ասի... թույլ տվեք գնալ փականագործի հետևից,- կմկմաց արդարադատության նախարարը:

Այդ ժամանակ դուռը բացվեց, ներս եկավ առողջապահության նախարարը՝ պալատական փականագործի հետ:

- Ամբողջ օրը աշխատեցնում են, չթողեցին էս մի պատառ հացը կուլ տամ...,- բողոքեց փականագործը, որի մի աչքը չկար:

- Առա՛ջ արի, անասո՛ւն,- փականագործի վրա բղավեց թագավորը:

Փականագործի լեզուն կապ ընկավ: Նա նոր հասկացավ, որ իրեն բերել են թագավորի մոտ:

- Ե՛ս... ե՛ս... ե՛ս... Հայրն ես դու մեր, մեր պարծանքը, մեր իմաստուն առաջնորդը,- տեղում ձգվելով՝ բարձրաձայն երգեց փականագործը:

- Լա՜վ, լա՜վ,- երգն ընդհատեց թագավորը,- տեսնում ես՝ ինչ օրի է քո հայրը,- պոզերը ցույց տալով՝ ասաց թագավորը։

- Ի՞նչ անեմ, հա՛յր,- արցունքները սրբելով՝ ասաց փականագործը։

- Կտրի՛ր։

- Կտրեմ, այնպես կտրեմ, որ իսպառ վերանան,- ասաց փականագործն ու գործիքների արկղից հանեց մետաղ կտրող սղոցը։

- Հա՛յր, խնդրում եմ, չոքի՛ր ու գլուխդ դեմ տուր այս աթոռին,- ասաց փականագործը։

Թագավորը հնազանդորեն չոքեց ու գլուխը դեմ տվեց աթոռին։ Փականագործը արագ կտրեց թագավորի պոզերն ու թեթևացած շունչ քաշեց։

- Ի՜նչ էլ լավ պոզեր են,- թագավորի պոզերը ձեռքի մեջ խաղացնելով՝ ասաց նա։

- Տարե՛ք, փականագործի գլուխը կտրե՛ք,- քացով փականագործին խփելով՝ գոռաց թագավորը։

- Մի տուն լիքը երեխեք ունեմ, հա՜յր... կինս մեղք է,- աղերսեց փականագործը։

- Տարե՛ք։

Արդարադատության ու արտաքին գործերի նախարարները ոլորեցին փականագործի թևերը և ուզում էին քարշ տալով դուրս տանել, երբ թագավորը ճչաց.

- Թողե՛ք։

Նախարարները բաց թողեցին փականագործին ու նայեցին թագավորին։ Նրա ճակատին նորից պոզեր էին դուրս եկել, որոնք արագությամբ մեծանում էին։

- Կտրի՛ր,- ճչաց թագավորն ու գլուխը դրեց աթոռի վրա։

- Կտրեմ, հա՛յր, կտրեմ,- ուրախությունը մի կերպ զսպելով՝ ասաց փականագործը, նորից ձեռքն առավ երկաթ կտրող սղոցն ու արագ-արագ կտրեց թագավորի պոզերը։

- Այս անգամվա պոզերը շատ ամուր էին, հազիվ կտրեցի,-շունչը տեղը բերելով՝ ասաց փականագործն ու սրբեց ճակատի քրտինքը։

- Տարե՛ք, գլուխը կտրե՛ք,- պոզերից ազատվելուց հետո հրամայեց թագավորը։

Գաղտնի գործակալը, արդարադատության ու ներքին գործերի նախարարները նորից հարձակվեցին փականագործի վրա, նորից ոլորեցին թևերն ու քարշ տալով տարան դեպի դուռը։

- Թողե՛ք,- նորից ճչաց թագավորը։

Նախարարները բաց թողեցին փականագործին։

- Նորից, նորից աճում են այդ զզվելի պոզերը,- աղեկտուր ճչաց

թագավորը՝ պոզերը բռնելով,- կտրի՛ր, կտրի՛ր...

- Կտրե՜մ, կտրե՜մ,- ուրախացած ասաց փականագործն ու եռանդով սկսեց կտրել թագավորի պոզերը։

- Օ՜ֆ, հոգնեցի,- պոզերից մեկը կտրելուց հետո ասաց փականագործն ու ծալապատիկ նստեց հատակին,- էլ չեմ կարող, շունչ քաշեմ, նոր շարունակեմ...

- Կտրի՛ր,- հոխորտացին նախարարները։

- Հոգնել եմ... Մի քիչ հանգստանամ,- ասաց փականագործը։

- Չես սատկի, կտրի՛ր,- գոռաց թագավորը։

Փականագործը դժվարությամբ կտրեց նաև թագավորի մյուս պոզը, նորից հավաքեց գործիքները, բայց պոզերը նորից աճեցին։

- Նորից են աճում,- գոռաց թագավորը,- ի՜նչ անեմ ... աճո՜ւմ են...

- Գուցե իմաստունների՞ն կանչեմ, հա՛յր,- ասաց առողջապահության նախարարը։

- Պետք չէ... պետք չէ՛...

- Ո՛չ իմաստուն է պետք, ո՛չ բժիշկ,- ծխախոտ վառելով՝ ասաց փականագործը։

- Հապա՞,- հարցրեց թագավորը։

- Առանց պատճառ ոչինչ չի լինում։ Պետք է պատճառը գտնել։ Այսօր առավոտյան ի՞նչ եք կերել կամ խմել, հա՛յր առաջնորդ,- հարցրեց փականագործը։

- Խոհարարները ստոր մարդիկ են, այնպիսի կերակուր են տվել, որ պոզ է բուսեցնում,- ասաց ատենապետը։

- Նրանք արդեն չկան։ Մենք նրանց հարցաքննեցինք ու կախեցինք,- զեկուցեց ներքին գործերի նախարարը,- նրանք խոստովանեցին, որ կամեցել են Ձեզ թունավորել, հա՛յր առաջնորդ։

- Ապրե՜ք, ապրե՜ք,- պոզերը բռնելով՝ ասաց թագավորը։

- Բայց, հա՛յր, Դուք չասացիք՝ ինչ եք կերել կամ խմել,- նորից զգուշությամբ հարցրեց փականագործը։

- Նախաճաշից հետո ես վատ զգացի։ Առողջապահության նախարարն ասաց, եթե կովի կաթ խմեմ՝ կառողջանամ... Ես էլ խմեցի... Շատ համեղ կաթ էր։

- Կաթից է,- հայտնագործություն արածի պես բղավեց ներքին գործերի նախարարը։

- Իսկապես, կաթից հետո պոզեր աճեցին,- ատամները կրճտացրեց թագավորը։

- Անիծյալ կովին ու նրա տիրոջը անմիջապես բերե՛ք այստեղ,- հրամայեց ներքին գործերի նախարարը։

Ոստիկանները պալատ բերեցին կովին ու ծերունուն։

- Ձեր պատճառով էս ի՞նչ օրն եմ ընկել, դավաճա՛ն անասուններ։ Ասա՛, ասա՛, ծերո՛ւկ, ինչո՞վ ես կերակրել կովիդ,- ձեռքը սեղանին խփելով՝ մռլտաց թագավորը։

- Ես մեղավոր չեմ,- թագավորի պոզերին նայելով՝ հառաչեց ծերուկը,- դժվար թե արդար կաթից այդպիսի պոզեր աճեն... Ես չեմ հավատում։

- Չես հավատո՞ւմ, հա՞, քավթա՛ռ անասուն,- զայրացավ թագավորը,- հիմա, հիմա կտեսնենք..., հե՜յ, կատվի՛ ձագ,- դիմեց նա արտաքին գործերի նախարարին,- չոքի՛ր կովի տակ... Շո՛ւտ, չոքի՛ր...

- Ի՞նչ եմ արել... ես,- կմկմաց արտաքին գործերի նախարարը,- ես ոչ մի... ես հանցանք... իմ ոչ մի տեղը չի ցավում...

- Չոքի՛ր,- կատաղեց թագավորը։

Արտաքին գործերի նախարարը, որը գեր ու կլոր մարդ էր, դժվարությամբ չոքեց։

- Դե, հիմա մտի՛ր կովի տակ ու կա՛թ կեր,- հրամայեց թագավորը։

Արտաքին գործերի նախարարը չոքեչոք մտավ կովի փորի տակ, պտուկներից մեկն առավ բերանն ու սկսեց ծծել։

- Ա՜խ, ի՜նչ համեղ կաթ է,- հաճույքից բերանը չփչփացրեց արդարադատության նախարարն ու շարունակեց ծծել կովի պտուկները։

Կովը երբեմն-երբեմն նայում էր նրան ու գլուխը տարուբերում։

Ծերուկը ապշած նայում էր կովի տակ պառկած նախարարին ու մտածում՝ մի՞թե այս «հորթուկներն» են երկրի տերերը։

Նախարարը դժվար թե կովի տակից դուրս գար, եթե թագավորը չբղավեր.

- Բավակա՛ն է, ապո՛ւշ։

- Շատ համե՜ղ է, շա՜տ համեղ...,- ինքնամոռաց գոռոաց արդարադատության նախարարը։

- Կովի տակից դրան հանե՛ք,- կարգադրեց գաղտնի գործակալը։

Երկու ոստիկան կովի տակից դուրս քաշեցին արտաքին գործերի նախարարին, որը, երանության մեջ ընկած, անվերջ բղավում էր.

- Շա՜տ համեղ է, շա՜տ համեղ... Կեցցե՜ մեր իմաստուն առաջնորդը... մեր հայրը... մեր...

- Բերանդ փակի՛ր, հանգի՛ստ նստիր,- նրա վրա գոռաց թագավորը։

Արտաքին գործերի նախարարը քարե արձան դարձավ։

- Լա՜վ է, շա՜տ լավ է,- ծափ-ծափ տալով՝ քրքմնջաց թագավորը,- հիմա՛ր, քավթա՛ռ անասուն, տես սրա ճակատին էլ պոզեր բուսնեցին... Ուրեմն կաթից է։ Քո կովի կաթից է...

- Կախե՛լ,- ձեռքը ատրճանակին դնելով՝ գոռաց ներքին գործերի

նախարարը՝ աչքերը արտաքին գործերի նախարարի պոզերին հառած։

Անմիջապես ներս թափվեցին ոստիկանները, շրջապատեցին կովին ու ծերունուն և ուզում էին նրանց ծեծելով, քաշքշելով դուրս տանել, երբ թագավորը գոռաց.

- Դո՛ւրս կորեք, ապուշնե՞ր, կատվի՛ ձագեր։

Ոստիկանները փախան։

Թագավորը ոտքից գլուխ չափեց ներքին գործերի նախարարին։

- Գիտե՞ք, հա՛յր, բժիշկները թույլ չեն տալիս, որ ես կաթ խմեմ, ասել են, որ կաթը վնաս է իմ առողջությանը...- արագ-արագ ասաց ներքին գործերի նախարարն ու հետ-հետ գնաց դեպի դուռը։

- Չոքի՛ր, աղվե՛ս,- գոռաց թագավորը,- չոքի՛ր, կատվի՛ ձագ։

Ներքին գործերի նախարարը լուռ չոքեց ու սողեսող մտավ կովի տակ, պտուկներից մեկը բերանն առավ ու սկսեց ծծել։

- Բավական է,- աչքերը ոլորելով՝ ասաց թագավորը։

Ներքին գործերի նախարարն արագ դուրս եկավ կովի տակից ու նստեց արտաքին գործերի նախարարի մոտ։ Եվ չէր անցել մեկ վայրկյան, երբ նրա ճակատին երկու փառահեղ պոզեր աճեցին...

- Լա՞վ է,- ծիծաղեց թագավորն ու նայեց առողջապահության նախարարին։

- Ես հաճույքո՞վ, հաճույքո՞վ... ես կաթ շատ եմ սիրում,- հատակին փռվելով՝ ասաց առողջապահության նախարարն ու սողալով մտավ կովի տակ, բերանն առավ պտուկներից մեկն ու ծծեց։

- Բավական է, ինչքան լափեցիր,- հանգիստ ասաց թագավորը։ Առողջապահության նախարարը դուրս եկավ կովի տակից ու նստեց պոզավոր նախարարների կողքին. քիչ հետո նրա ճակատին էլ պոզեր աճեցին։

Թագավորը շատ ուրախացավ։ Նա հերթով բոլոր նախարարներին ստիպեց, որ մտնեն կովի տակ ու կաթ ծծեն...

- Աղվեսնե՞ր,- բեղի տակ ժպտալով՝ ասաց թագավորը,- ես իմ մասին չեմ մտածում, այլ ժողովրդի... Նրանց էլ պիտի այս կաթից խմեցնել... Թե չէ ի՞նչ է ստացվում, մենք բոլորս՝ մի կողմ, ժողովուրդը՝ մի կողմ... Դա գեղեցիկ չէ... Ժողովուրդն էլ պետք է այսպես ապրի, ինչպես մենք։

- Կեցցե՞, կեցցե՞, կեցցե՞ մեր իմաստուն հայրը...,- գոչեցին նախարարները՝ պոզերը ճոճելով։

- Ես թույլ չե՛մ տա, թույլ չե՛մ տա,- այլևս իրեն զսպել չկարողանալով՝ բղավեց Չիկարելին, որը մինչ այդ զարմացած ու ապշած նայում էր պալատի անցուդարձին, պոզավոր թագավորին ու նախարարներին, բարի ծերուկին ու կովին, ոստիկանապետերին ու գեներալներին,

դատավորներին ու գանձապետերին, որոնց ճակատներին փառահեղ պոզեր էին աճել...

- Ո՞վ էր: Ո՞վ ասաց՝ թույլ չեմ տա,- քար լռության մեջ հարցրեց թագավորը:

- Ես ասացի,- գոռաց Չիկարելին:- Ժողովուրդը պոզավոր չի դառնա... Ժողովուրդն արդար է ու ազնիվ...

- Ես քեզ չեմ տեսնում...,- աչքերը ատելությամբ լցված՝ գոռաց թագավորը,- բայց ո՛չ, ո՛չ... ես կույր չեմ, ես բոլորին տեսնում եմ... Ուրեմն, ժողովրդի թշնամիները սողոսկել են պալատ... Բռնե՛լ, կախե՛լ, ժողովրդի թշնամիներին ոչնչացնե՛լ...

- Դուք անզոր եք, Դուք չեք կարող ինձ կախել,- բղավեց Չիկարելին ու վազեց դեպի թագավորը:

Ես բռնեցի նրա ձեռքն ու շշուկով ասացի.

- Սրանք իսկապես կարող են մեզ կախել... Սրանք ամեն ինչի ընդունակ են:

Չիկարելին սսկվեց:

Թագավորն ու նախարարները պոզերն ուղղեցին մեր ձայների կողմն ու իրար հարու տալով՝ առաջ եկան:

- Պոզահարե՛լ դրանց,- հրամայեց թագավորը,- դրանց բոլոր հարազատներին, բարեկամներին, մերձավորներին աքսորե՛լ Սիբիր...

Նրանք, օդը պոզահարելով, պտտվում էին պալատով մեկ: Աստված մի արասցե, եթե նրանցից մեկնումեկի պոզը հանկարծ դիպչեր մեզ. այս գիրքը կամ չէր գրվի, կամ ուրիշ շարունակություն կունենար...

- Հեռացե՛ք այստեղից, շո՛ւտ,- մեզ մոտենալով՝ շշնջաց բարի ծերուկն ու ցույց տվեց դռներից մեկը:

Մենք աննկատ դուրս թռանք պալատից:

ԽՈՌՎԱԾ ԱՂԲՅՈՒՐԸ

Բռնությունն ու հալածանքը, դժբախտությունն ու տառապանքը, ցավն ու տանջանքը, խարդավանքն ու խաբեբայությունը ամեն ժամ, ամեն վայրկյան մահանում են, ու դրանցից ոչ մեկն այս աշխարհում անպատիժ չի մնում, որովհետև անիծված են ու վերջ ունեն...

Բարությունն ու սերը, գթասրտությունն ու ազնվությունը, բարեհոգությունն ու հոգատարությունը, հավատն ու կամքը ամեն ժամ, ամեն վայրկյան նորից ու նորից ծնվում են, նորոգվում, որովհետև հավերժական են ու օրհնված... Ես այդ բանում համոզվել եմ շատ անգամներ. այստեղ էլ՝ ցամաքած աղբյուրի այս հունում, կրկին համոզվեցի, որովհետև մենք բազում նեղություններ ու տանջանքներ կրելուց հետո վերջապես հասանք գեղեցիկ ու ընդարձակ մի մարգագետին, որտեղ լույսը ծիծաղում էր, որտեղ մենք ազատ շունչ քաշեցինք, նայեցինք մեր շուրջբոլորն ու հավատացինք ինքներս մեզ՝ մեր ճշմարտությանն ու մեր հաղթանակին:

Քարե ծառեր տեսանք... Այո՛, այո՛, քարե ծառեր: Այնքան անսովոր ու տարօրինակ էին, որ չէինք համարձակվում մոտենալ ու ձեռք տալ: Մենք զգուշությամբ անցանք նրանց մոտով, որ հանկարծ որևէ ճյուղ կամ տերև չկոտրենք: Շատրվանի նման գետնից դուրս էր ժայթքել

լացող մի ուռենի: Հրա՜շք էր: Նրա գեղեցիկ ճյուղերը կախվել էին գետակի վրա, ու թվում էր՝ երգ է լսում՝ հայացքը ջրերի հայելուն հառած... Ուռենուց քիչ հեռու բազմաթիվ գեղեցիկ արձանախմբեր, հրաշակերտ քանդակներ կային, որոնք ստեղծել էր բնությունը... Հեռվից մեր ականջին հասավ ջրի խոխոջյունը:

- Մենք կարծես հասնում ենք աղբյուրին... Լսո՞ւմ ես, լսո՞ւմ ես ջրերի խոխոջյունը,- ուրախացած ասաց Չիկարելին ու սկսեց վազել դեպի ձայնը:

- Այո՛, լսում եմ,- ասացի ես ու հետևեցի նրան:

Որքան մոտենում էինք աղբյուրին, լույսն ավելի շատանում էր, և օդն ավելի թափանցիկ էր դառնում:

Մենք դուրս եկանք քարե ծառերի անտառից:

Մեր դեմ բացվեց անսահման մի տարածություն, որը լցված էր հոգեզմայլ երաժշտությամբ: Մենք հմայվել էինք այդ երաժշտությամբ ու ինքնամոռաց կանգնել՝ նայում էինք հեռուներին:

Չիկարելին իր տխուր, խոշոր աչքերով նայեց ինձ ու հարցրեց.

- Ի՞նչ երաժշտություն է: Առաջին անգամ եմ նման երաժշտություն լսում:

- Այսպիսի երաժշտությունը ծնվում է անհուն կարոտից ու հոգու մաքրությունից,- ասացի ես ու նստեցի մի քարի, որ ըմբոշխնեմ հոգեպարար երաժշտությունը, որի հնչյունները մեզ տանում էին տուն, ու մենք երևակայությամբ ճեմում էինք ծաղկաշատ դաշտերում ու զովաշունչ անտառներում, տեսնում մեր հարազատներին, ովքեր կարոտած հայացքներով սպասում էին մեզ...

- Այսպես անվերջ մենք կարող ենք այս երաժշտությունը լսել ու չհագենալ,- մի պահ սթափվելով՝ ասաց Չիկարելին:

- Այո՛, պետք է շարունակենք ճանապարհը,- ասացի ու ոտքի ելա:

Մենք քայլեցինք: Ճանապարհին երաժշտությունը ուղեկցում էր մեզ ու գնալով ավելի էր զուլալվում, ավելի զորեղ ու գերող էր դառնում:

Հանկարծ մեր դեմ բացվեց լուսեղեն մի պատկեր, մարմարյա գահի վրա նստած էր չքնաղ մի աղջիկ: Նրա աչքերը կապույտ էին երկնքի լազուրի պես, մազերը ջրվեժի նման թափվում էին հոլանի թևերին, ողողում մարմինն ու հոսում երկրի ընդերքը:

- Ահա աղբյուրը,- ակնածանքով շշնջացի ես ու մոտեցա նրան:

- Բարև՛, աղբյո՛ւր,- ասաց Չիկարելին և ձեռքերը պարզեց, որ աղբյուրը ջուր տա իրեն:

Երաժշտությունը ընդհատվեց, ջուրը քարացավ: Չիկարելին ձեռքերը հետ քաշեց ու վախեցած նայեց ինձ:

- Ի՞նչ պատահեց, ինչո՞ւ ջուրը քարացավ,- լացակումած շշնջաց Չիկարելին:

- Աղբյո՛ւր, քեզ համար ենք մենք այսքան ճանապարհ կտրել՝ փորձություններ ու տառապանքներ հաղթահարելով, եկել հասել ենք քեզ, խնդրում եմ, մի բուռ ջո՛ւր տուր: Դու ես մաքրություն ու կյանք շնորհողը, մի մերժիր մեր խնդրանքը,- նրա առաջ ծնկի գալով շշնջացի ես:

Աղբյուրը լուռ էր:

- Ինչո՞ւ մեզ ջուր չես տալիս, ինչո՞ւ,- լացակումած հարցրեց Չիկարելին և ընդհուպ մոտեցավ չքնաղ աղբյուր-աղջկան:

Աղբյուր աղջիկը շարժվեց: Խոնավ, խորունկ աչքերով նայեց մեզ, դառը ժպտաց ու ասաց.

- Ես խռովել եմ մարդկանցից:

- Ինչո՞ւ,- ակամա հարցրի ես:

- Ինչո՜ւ... - հառաչեց չքնաղ աղբյուր աղջիկը,- դար ու դարեր ես կարկաչել եմ մարգագետինների ու դաշտերի մեջ, երգել ծաղիկների ու ծառերի համար... Որքա՜ն ծաղիկներ էին իրենց սիրտը բացում իմ առաջ: Ես նրանց պապակ սրտերը լցնում էի քնքուշ մեղեդիներով: Ամեն գիշեր զրուցում էի աստղերի հետ, իսկ լուսադեմին լուսաստղը իջնում էր, լողանում իմ զուլալ ջրերում ու գնում քնելու: Ես բոլորին, բոլորին օգնում էի, և ոչ ոք ինձնից դժգոհ չէր: Ես կյանք էի պարգևում ու մաքրություն,- աղբյուրը հառաչեց ու լռեց: Երկնքի լազուրի պես կապույտ նրա աչքերը արցունքներով լցվեցին:

- Դու ինչ-որ բան հիշեցի՞ր, աղբյո՛ւր,- հարցրի ես ու նայեցի նրա տխուր աչքերին:

- Այո՛... հիշեցի այն մարդկանց, ովքեր վիրավորել են ինձ:

- Ովքե՞ր էին,- զայրացած հարցրեց Չիկարելին:

- Ես նրանց անունները չգիտեմ, բայց բոլորի դեմքերը հիշում եմ,- ասաց աղբյուրը:

- Իսկ ի՞նչ են արել:

- Մի՛ հիշեցրեք... հիշելն անգամ վիրավորական է,- դժկամորեն ասաց աղբյուրը:

- Խնդրում եմ, ասա՛, այնպես եմ ուզում ամեն բան իմանալ,- թախանձեցի ես:

- Ես չգիտեմ՝ ինչ պատահեց մարդկանց... Ինչո՞ւ նրանք այդքան անհարգալից վերաբերվեցին ինձ ու արհամարհեցին իմ մաքրությունը... Տարիներ շարունակ նրանք իրենց հետ բերած շշերը լցնում էին իմ ակի մեջ, որ ես սառեցնեմ: Նրանք կեղտոտ ափսեները, կաթսաները լվանում էին ուղղակի իմ ակի մոտ: Զայրույթից պղտորվում էի, բայց ոչինչ անել չէի կարողանում... Ամենացավալին ու վիրավորականը հետո եղավ: Նրանք շշերը կոտրատեցին ու թափեցին ուր պատահեր, հետո կերակրի մնացորդ-

ները թափթփեցին չորս բոլորս... Չեք պատկերացնի, սիրտս ոնց էր խառնվում... Ես խոցված էի, արհամարհված: Ինչո՞ւ են մարդիկ այդքան զարհուրելի, անհոգի դարձել: Նրանք պոկոտեցին իմ ափերը զարդարող ծաղիկները, սպանեցին իմ թիթեռներից շատերին, որոնց ես ամեն օր ջուր էի տալիս, կտրտեցին ծառերը, որոնց ես մեծացրել էի կաթի պես համեղ իմ ջրով...

Երկնքի լազուր աչքերով չքնաղ աղբյուր-աղջիկն այնպիսի երազային ձայնով էր խոսում, և այնքան վիրավորանք ու թախիծ կար նրա ձայնի մեջ, որ մենք էլ ակամայից տխրեցինք ու մեղավորների պես գլխահակ կանգնեցինք նրա դիմաց:

- Փրկի՛ր ինձ,- առանց գլուխը բարձրացնելու՝ թախանձեց Չիկարելին:

- Ես վաղուց եմ լսել ձեր ոտնաձայները,- ասաց աղբյուրը,-գիտեի, որ գալիս եք ինձ մոտ, բայց ձեզ ջո՛ւր տալ չեմ կարող:

Նա լռեց՝ հասկացնելով, որ այլևս չի ուզում մեզ հետ խոսել:

- Անտառապահը մեզ խորհուրդ տվեց, որ գանք քեզ մոտ,- շշուկով ասաց Չիկարելին,- ախր մենք ի՞նչ գործ ունեինք այստեղ: Հիմա ինչպե՞ս ենք այստեղից դուրս գալու:

- Անտառապա՞հը... Նա՞ է ձեզ ուղարկել ինձ մոտ: Ես հավատում եմ անտառապահին, հարգում նրան,- աղբյուրի հայացքը պայծառացավ,- լա՜վ, լա՜վ, ես ձեզ ջուր կտամ: Բայց մի պայմանով միայն...

- Ի՞նչ պայման է,- հուզմունքից դողացող ձայնով հարցրինք մենք:

- Դուք պետք է մաքրեք իմ հունը, որով ես պիտի հոսեմ,- ասաց աղբյուրը,- այնքան ապիկարներ են լցվել այդ հունի մեջ, ես զզվում եմ նրանցից... Իմ հունը պետք է մաքուր, շատ մաքուր լինի:

- Բայց ինչպե՞ս մաքրենք,- հարցրի ես ու հիշեցի բոլոր նրանց, ում հանդիպել էինք մինչև այստեղ հասնելը:

- Վերցրե՛ք այս քարե սափորները, լցրե՛ք ջրով,- ասաց աղբյուրը,- բայց հանկարծ չխմեք,- զգուշացրեց նա,- դե, ի՞նչ եք կանգնել, վերցրե՛ք քարե սափորները...

Մենք վերցրինք քարե սափորները, մոտեցանք աղբյուրին:

Մի ակնթարթում սափորները լցվեցին աղբյուրի սառն ու զուլալ ջրով:

- Ահա, ես ջուր տվեցի ձեզ,- ժպտաց աղբյուր-աղջիկը,- բոլոր նրանց, ում կհանդիպեք հետդարձի ճանապարհին, մահվան չափ վախենում են մաքրությունից: Ջուրս շաղ կտաք նրանց վրա ու կանցնեք... Եվ այդպես դուրս կգաք այնտեղ, որտեղից ներս եք մտել և կսպասեք ինձ...

- Այո՜, այո՜, այդպես էլ կանենք,- ոգևորված ասացի ես:

- Դե, բարի ճանապարհ,- ասաց աղբյուր-աղջիկը,- ինձ կսպասեք իմ ակի մոտ, ես անպայմա՜ն, անպայմա՜ն կգամ:

- Ցտեսությո՜ւն, աղբյո՜ւր,- ասացինք մենք, վերցրինք քարե սափորները, որոնք լցված էին փրկարար ջրով, ու ճանապարհ ընկանք...

Հետդարձի ճանապարհին առաջինը հանդիպեցինք բարի ծերունուն ու նրա չալպտուրիկ կովին՝ Միլոնային:

Պոզավոր թագավորն ու նրա պոզավոր նախարարները այնքան էին ծեծել խեղճ ծերուկին, որ նա կուրացել, անօգնական նստել էր ճամփեզրի քարերից մեկի վրա ու անվերջ հառաչում էր:

- Պապի՜կ, սիրելի՜ պապի՜կ,- նրան մոտենալով՝ կանչեց Չիկարելին,- ինչպե՞ս ես:

- Է՜հ, որդի՛ս, ի՞նչ ասեմ... ճիշտ էին ասում իմ պապերը. «Տերովին տերն է տարել, անտերին՝ գելը»:

- Դու անտեր չես, պապի՛կ,- ասաց Չիկարելին,- մի՛ մտածիր, մենք քո վրեժը կլուծենք, մենք կկռվենք նրանց դեմ:

- Իհարկե, չարերին պետք է պատժել... Ափսոս, որ ես չեմ տեսնի,- ասաց ծերուկը:

- Մենք քո աչքերը կբուժենք,- ասացի ես ու իմ քարե սափորից մի բուռ ջրով լվացի ծերունու աչքերը:

Ջուրը ճերմակ փրփուր դարձավ նրա դեմքի վրա, հետո զուլալվեց ու կաթիլ-կաթիլ թափվեց ցած: Ծերուկը վեր թռավ ու բղավեց.

- Ես տեսնում եմ... Ես նորից տեսնում եմ... Շնորհակալությո՜ւն, մարդի՜կ, շնորհակալությո՜ւն, աղբյո՛ւր... Վերադարձավ աչքերիս լույսը... Ես տեսնում եմ... Ձեր ջուրը կախարդական է...

Չալպտուրիկ կովն ուրախությունից տրտինգ տվեց ու բառաչեց: Ծերուկը փաթաթվեց կովին, համբուրեց նրա աչքերը:

- Իմ բարի՛, իմ սիրելի՛ չալպտուրիկ, խնդրում եմ, կա՛թ տուր իմ բարեկամներին, որ նրանք առույգանան և ուժեղանան, որ հաղթեն չարերին, ու մենք տուն վերադառնանք: Մարդը երջանիկ է միայն ու միայն իր տանը, իր հայրենի հողում...

- Շնորհակալ ենք, բարի՛ ծերուկ,- ասացի ես՝ նրա ձեռքը սեղմելով:

Չալպտուրիկը մեզ կաթ տվեց, խմեցինք, ու մեր ուժը տասնապատիկ ավելացավ:

- Ուրեմն այսպես, մենք կգնանք առջևից, իսկ Դուք և չալպտուրիկը կգաք մեր հետևից:

- Մենք տուն ենք գնում,- ասաց Չիկարելին:

- Մենք պետք է անցնենք պայքարի ճանապարհով, որից հետո միայն կարող ենք վերականգնել մեր մարդկային դեմքն ու հասակը, մեր ազնվությունն ու բարությունը, մեր ճշմարտությունն ու ազատությունը,- ասացի ես ու առաջ ընկա:

... Պոզավորների արքայական պալատում խրախճանք էր: Բոլորը՝ և՛ անկուշտ թագավորը, և՛ ամբարտավան նախարարները, և՛ կաշառակեր ոստիկաններն ու դատավորները, և՛ գեներալները, և՛ գանձապետերը, և՛ գաղտնի գործակալները իրենց պոզերին, կրծքերին, ճակատներին բազմաթիվ շքանշաններ ու մեդալներ կախել ու քեֆ էին անում: Մի քանի պալատական բանաստեղծներ բարձրաձայն կարդում էին իրենց ոտանավորները, չափածո ներբողները՝ նվիրված «լուսաշող առաջնորդի հանճարեղ պոզերին»:

Ես ու Չիկարելին մտանք պալատ, զզվանքով նայեցինք նրանց:

- Ստո՛ր արարածներ, դուք իրավունք չունեք ապրելու,- գոչեց Չիկարելին ու սկսեց բուռ-բուռ ջուր շաղ տալ նրանց վրա:

Պոզավորները մի պահ համրացան, հետո իրենց պոզերն ուղղեցին մեր կողմն ու չարագույժ բառաչով հարձակվեցին մեզ վրա:

- Չվախենա՛ս,- ասացի ես՝ ընդհուպ մոտենալով Չիկարելիին:

- Չեմ վախենում,- ասաց Չիկարելին ու նորից մի քանի բուռ ջուր շաղ տվեց:

- Օ՜յ, օ՜յ, օ՜յ... այս մաքրությունից ես կուրանում եմ... կուրանո՜ւմ,- բառաչեց անկուշտ թագավորն ու փռվեց հատակին: Փռվեցին նաև պոզավոր նախարարները, գեներալները, ոստիկանները, դատավորները

գանձապետերը, գաղտնի գործակալները... Այդ ժամանակ ես իմ սափորից մի բուռ ջուր շաղ տվեցի նրանց վրա:

Ջուրը միանգամից հազարապատիկ ավելացավ, փոթորկվեց, ալիք տվեց, ալիք առավ, փրփուր կապեց ու իր հետ քշեց տարավ պոզավոր թագավորի թագավորությունը...

Այլևս ո՛չ պալատ կար, ո՛չ թագավոր, ո՛չ նախարար: Ջուրը, աղբյուրի զուլալ ջուրը մաքրեց մեր ճանապարհը, ու մենք շարժվեցինք առաջ:

Բարի ծերունին ու չալպտուրիկ կովը հրճվանքով ընդունեցին պոզավորների թագավորության վախճանը:

- Արա՛գ, արա՛գ, առա՜ջ,- ոգեշնչված ասաց Չիկարելին ու վազեց դեպի խառնիճաղանջ արմատները, որտեղ մենք հանդիպել էինք գույնը փոխող մարդուն:

- Ա՜խ, սիրելինե՛րս, ի՛մ հարազատներ, ի՛մ թանկագիններ, ի՜նչ լավ է, որ բախտ ունեցա նորից հանդիպելու ձեզ,- մեր դեմ ցցվեց գույնը փոխող մարդը,- եթե իմ գույնը ձեզ դուր չի գալիս, կարող եմ հենց հիմա փոխել,- մինչև գետին խոնարհվեց նա և ուզում էր գույնը փոխել, երբ Չիկարելին ասաց.

- Քեզ նման մարդիկ իրավունք չունեն ապրելու, նրանք աղտոտում են աղբյուրի ակը:

- Ո՛չ, ո՜չ, ի՞նչ եք ասում... Ես զարդարում եմ կյանքը... ե՜ս...

- Լռի՛ր,- կատաղած ասաց Չիկարելին ու իր քարե սափորից մի բուռ ջուր նետեց նրա վրա:

Ջուրը փոթորկվեց, հեղեղ դարձավ ու իր հետ քշեց-տարավ գույնը փոխող մարդուն, որը խեղդվելիս էլ դեռ բղավում էր.

- Երևի իմ գույնը ձեր դուրը չի գալիս... Ես կփոխե՜մ... իմ գույնը կփոխե՜մ...

- Գնացինք,- ասացի ես ու հետ նայեցի: Բարի ծերունին ու չալպտուրիկ կովը գալիս էին մեր հետևից:

Մենք դժվարությամբ անցանք արմատների անտառի միջով ու դուրս եկանք մեզ ծանոթ դաշտը, որտեղ նախանձները դարձյալ տուն էին կառուցում ու քանդում, դարձյալ վիճում էին իրար հետ ու իրար անիծելով՝ ապրում: Մենք մոտեցանք նրանց, բայց նրանցից ոչ մեկը մեզ վրա ուշադրություն չդարձրեց:

Ես իմ քարե սափորից մի քանի բուռ ջուր շաղ տվեցի նրանց վրա, նրանց նույնպես ջուրը քշե՜ց, տարա՜վ...

- Առա՜ջ, առա՜ջ,- ոգեշնչված ասաց Չիկարելին:

Հեռվում նշմարվեց հրդեհվող տունը:

Չիկարելին սկսեց վազել: Ես հազիվ էի հասնում նրան:

- Հրդե՞հ է, հրդե՞հ է,- գոռաց նա...

- Մե՞զ ինչ, հո մե՞րը չէ,- անտարբեր ասացին փողոցով անցնող մարդիկ ու շարունակեցին իրենց ճանապարհը:

- Ա՜խ, ուրեմն այդպե՞ս,- նրանց անտարբերությունից վրդովվեց Չիկարելին ու իր քարե սափորից մի քանի բուռ ջուր շաղ տվեց անտարբերության ճահճում խեղդվողների վրա:

Ամեն ինչ ծածկվեց փոթորկվող ջրերով, ու մի ակնթարթ հետո հեղեղը բոլորին տարավ:

Ես հետ նայեցի: Բարի ծերուկն ու չալպտուրիկ կովը չէին երևում: Անհանգստացա: «Չլինի՞ թե նրանք մոլորվել են արմատների անտառում»,- մտածեցի ես ու մի քանի քայլ հետ գնացի:

- Ո՞ւր,- հարցրեց Չիկարելին:

- Ծերուկն ու կովը չկան,- ասացի ես:

- Պետք է սպասել նրանց,- ասաց Չիկարելին ու մոտեցավ ինձ:

Հենց այդ ժամանակ արմատների անտառի միջից դուրս եկան ծերուկն ու չալպտուրիկ կովը: Ծերուկը թափահարեց ձեռքը, որ նշանակում էր՝ գնացեք, ես կհասնեմ ձեզ:

Մենք շարունակեցինք ճանապարհը:

- Ես գիտեմ, կգա այն երջանիկ ժամանակը, երբ ողջ աշխարհը կհետևի մեր օրինակին՝ բոլորը կուտե՜ն, կխմե՜ն, կքնե՜ն... կուտե՜ն, կխմե՜ն, կքնե՜ն,- անվերջ կրկնում էր ծույլերի քաղաքի բարձրախոսը:

Աղտոտությունից այդ քաղաքում ամեն բան սկսել էր նեխել: Այնպիսի գարշահոտություն էր տարածվել, որ առանց քթերս բռնելու հնարավոր չէր քայլել: Ծույլերը որդերի պես վխտում էին աղբակույտերի մեջ: Մենք զզվանքով կանգնեցինք քաղաքի կենտրոնում ու առանց երկմտելու սկսեցինք ջուր շաղ տալ:

Ջուրը փրփրեց, փոթորկվեց, հետո սկսեց պտույտներ գործել և բոլորին իր մեջ առնելով՝ քշե՜ց, տարա՜վ... Գարշահոտությունը վերացավ, աղբանոցների փոխարեն մերկ քարեր մնացին:

Վազելով մեզ մոտեցավ մեր ծանոթ աղջիկը, նա, որ մեզ օգնել էր դուրս գալ այդ աղտոտ քաղաքից:

- Բարև ձեզ,- հևիհև ասաց նա ու ժպտաց:

Նա գեղեցիկ ու համակրելի աղջիկ էր և ամենևին նման չէր կեղտոտ ու ճպռոտ այն աղջկան, որին մենք տեսել էինք ծույլերի քաղաքում:

- Ինչպե՞ս ես, աղջի՛կս,- նրա ոսկեհեր գլուխը շոյելով՝ հարցրի ես:

- Շնորհակալություն,- ժպտաց աղջիկը,- ես էլ եմ ձեզ հետ տուն գալիս,- ասաց նա:

- Խնդրեմ,- ասացի ես,- մենք ուրախ կլինենք, որ դու ընկերակցես մեզ:

Աղջիկը ուրախությունից շողում էր: Չիկարելին բռնեց նրա ձեռքը, ու մենք դուրս եկանք լայն մի ճանապարհ, որը մեզ տանում էր դեպի պարսատիկավորների քաղաքը...

Ճանապարհին տհաճությամբ էի հիշում բոլոր նրանց, ովքեր հանդիպել էին մեզ ու ցավ պատճառել: Չհասած պարսատիկավորների քաղաքի դարպասներին՝ մենք խելագար հարայհրոց լսեցինք: Մեզ թվաց, թե ինչ-որ մարդիկ պատերազմ են մղում իրենց իրավունքը ոտնահարողների դեմ: Բայց ոչ, այդպես չէր... Քաղաքի դարպասից լեղապատառ դուրս թռավ մի կատու: Կատվի պոչից պահածոյի դատարկ տուփ էր կապված, ու ահագին մի բազմություն վազում էր նրա հետևից: Հանկարծ նրանցից մեկը նկատեց մեզ:

- Ահա՛ նրանք,- ասաց նա ու պարսատիկը լարեց մեզ վրա:

- Գրո՛հ,- գոչեցին պարսատիկավորներն ու հետևեցին նրա օրինակին:

Բայց ես ավելի ճարպիկ գտնվեցի: Աղբյուրի ջրից մի մեծ բուռ շաղ տվեցի նրանց վրա... Նրանց ձեռքերն անմիջապես թուլացան, պարսատիկներն ընկան...

Ջուրը փրփրեց, փոթորկվեց ու քշեց-տարավ պարսատիկավորներին:

Հալածանքից ազատված կատուն մոտեցավ մեզ ու մլավեց: Բարի աչքերով աղջիկը արձակեց նրա պոչից կապված պահածոյի տուփը:

- Կարելի՞ է այս կատվին ինձ հետ վերցնեմ,- հարցրեց նա:

- Իհարկե, կարելի է,- ասացի ես:

Այդ պահին մեզ հասավ նաև ծերուկը՝ իր չալպտուրիկ կովի հետ, ու ասաց.

- Բոլոր ճանապարհներն այնքան մաքուր են, այնքան մաքուր, որ զարմանալ կարելի է:

- Այո՛, պիտի բոլորին, բոլորին վռնդենք,- հրճվանքով ասաց Չիկարելին:

Հետդարձի ճանապարհը ավելի դյուրին էր, որովհետև մենք արդեն անցել էինք այդ ճանապարհով և գիտեինք, թե ինչեր են սպասվում մեզ: Երկարամատներին, շատակերներին, ստախոսներին, ծխողներին, անգին քարերի արքային մենք չհանդիպեցինք: Նրանց քաղաքների մոտով անցնելիս մենք շաղ էինք տալիս աղբյուրի ջուրը, որը հեղեղ էր դառնում ու ամեն ինչ անդարձ քշում էր, տանում...

Մենք մեծ դժվարությունների հանդիպեցինք մարդկային արժանիքների ու ապրանքների արժեքները խախտված քաղաքում...

Չգիտեինք՝ ինչպես վարվել նրանց հետ: Այնտեղ բարի ու ազնիվ մարդիկ էլ կային, հո մենք չէի՞նք կարող բոլորին ջրի բերանը գցել...

Մինչ մտածում էինք այդ մասին, հանկարծ քաղաքի փողոցները լցվեցին թագավորական բանակի զինվորներով ու զինված ոստիկաններով, որոնք անխնա կոտորում էին բոլորին: Նրանք շրջապատեցին նաև մեզ և քայլ առ քայլ առաջ գալով՝ սեղմում էին օղակը:

Չիկարելին նայեց ինձ: Ես անմիջապես հասկացա, որ նա ուզում է խորհրդակցել ինձ հետ: Մոտեցա նրան:

- Ի՞նչ անենք,- շշուկով հարցրեց նա:

- Չգիտեմ... Այստեղ բարի մարդիկ էլ կան...

- Բայց մենք նահանջելու տեղ չունենք,- ասաց Չիկարելին ու ուժով հրեց ոստիկաններից մեկին, որն ուզում էր նրա ձեռքից խլել ջրամանը:

Այդ ժամանակ շարքերի մեջ ես նկատեցի մեզ ծանոթ դարբնին, որը ժպտաց ու բղավեց.

- Ի՞նչ եք հապաղում, մի բան արեք... Մի՛ խնայեք սրանց...

- Այո՛, չպետք է խնայել,- գոչեց Չիկարելին ու սկսեց ջուր շաղ տալ խառնամբոխի վրա:

- Վա՜յ, վա՜յ, վա՜յ,- գոռգոռացին նրանք,- այս ի՞նչ փոթորիկ է, այս ի՞նչ հեղեղ է...

- Փրկեցե՜ք, փրկեցե՜ք...

- Մա՜հ, մա՜հ դավաճաններին...

- Էլի՜, էլի՜ շաղ տվեք,- գոռաց ծերուկը՝ չալպտուրիկին մի կողմ քաշելով:

Ես միացա Չիկարելիին ու առանց երկմտելու իմ սափորից ջուր շաղ տվեցի նրանց վրա:

Ջուրը փրփրեց, փոթորկվեց, հեղեղ դարձավ, բոլորին ու ամեն ինչ առավ իր մեջ ու տարավ...

Մենք մի պահ կանգնեցինք մեր տեղերում, նայեցինք իրար և փոքրինչ տխրեցինք: Միշտ չէ, որ հաղթանակը ուրախություն է բերում...

- Մեր ճանապարհին այլևս ոչ ոք չկա: Աղբյուրի ակը մաքուր է,- ասացի ես ու մի քանի քայլ արեցի դեպի այն քարերը, որոնք ընկած էին մեր ճանապարհին:

- Այս քարերը պետք է մի կողմ գլորել,- ասաց Չիկարելին:

- Ճիշտ է, մաքրենք աղբյուրի ճանապարհը,- ասաց ծերունին:

- Դե, գործի՛,- ասացի ես ու սկսեցի քարերը գլորել:

Ծերունին, Չիկարելին և աղջիկը հետևեցին իմ օրինակին: Մի քանի րոպե հետո ճանապարհին ոչ մի քար չէր մնացել:

- Այլևս ոչ ոք չի պղտորի աղբյուրի ջուրը,- ասացի ես ու նստեցի՝ շունչ առնելու:

- Գնանք, այլևս չեմ կարող սպասել,- թախանձեց Չիկարելին:

- Քիչ է մնացել, համբերե՛ք,- ասացի ես ու դիմեցի մեր ուղեկիցներին,- բարեկամնե՛րս, մի քանի րոպե հետո մենք դուրս կգանք լույս աշխարհ, նորից կտեսնենք մեր սքանչելի, մեր չքնաղ երկիրը: Ճիշտ է, այստեղ մենք շատ բաներ տեսանք, երբեմն զարմացանք, երբեմն զայրացանք,

երբեմն էլ հիացանք, բայց ոչինչ այնքան հրապուրիչ ու գեղեցիկ չէ, որքան այն աշխարհը, որտեղ ապրում ենք մենք... Ուրեմն ամեն օր, ամեն ժամ պետք է գուրգուրենք նրան, պետք է մաքուր պահենք, պետք է մեր սիրտը դողա ամեն ծաղկի ու թփի համար, որ հանկարծ նրանք չչորանան... Ուրեմն ուժ և եռանդ ձեզ՝ ճանապարհի այս վերջին հատվածի դժվարությունները հաղթահարելու և տուն վերադառնալու համար...

- Շնորհակալ եմ,- ժպտաց բարի ծերունին ու շոյեց իր չալպտուրիկ կովի գլուխը:

Բարի աչքերով աղջիկը, կատվին կրծքին սեղմած, ուրախությունից շողացող աչքերով լսում էր ինձ: Նա երջանիկ էր, որ շուտով պիտի հանդիպեր իր հարազատներին, բարեկամներին, ընկերուհիներին...

- Մենք այստեղ այլևս անելիք չունենք,- ասացի ես ու վեր կացա:

Բոլորը հետևեցին ինձ: Մենք լիքը սրտով, ուրախ քայլեցինք դեպի լույսը: Մոտենում էր երանելի պահը...



Հեռվում մի բուռ կապույտ երկինք նշմարվեց... Աստվա՜ծ իմ, ի՜նչ երջանկություն էր դա: Մենք մի պահ կանգնեցինք ու նայեցինք երկնքին: Մեր աչքերը արցունքով լցվեցին: Շա՜տ, շա՜տ էինք կարոտել երկնի կապույտին, կանաչ անտառներին, ծաղկաշատ դաշտերին, հպարտ լեռներին ու կարկաչահոս գետակներին...

- Արա՜գ, արա՜գ,- շունչը հազիվ տեղը բերելով՝ մրմնջաց Չիկարելին,- քիչ մնաց, հիմա մենք դուրս կգանք աղբյուրի ակից ու նորից կտեսնենք երկիրը: Ես այլևս չեմ համբերում, վազենք,- ասաց նա ու վազեց դեպի կապույտը:

Մենք վազեցինք նրա հետևից... Աղբյուրի ակից դուրս գալու պահին բոլորս լուռ էինք, և մեզնից յուրաքանչյուրը յուրովի էր ապրում արևի լույսն ու ջերմությունը վայելելու, ծաղիկների բույրով հագեցած օդը նորից շնչելու երջանկությունը: Մենք հեռացանք իրարից, կանգնեցինք տարբեր տեղեր ու երկար ժամանակ լուռ նայում էինք մեր դեմ փռված դաշտերին ու անտառներին, սարերին ու ձորերին:

Ես մոտեցա այն ծաղկին, որի ծննդյան տարեդարձի հանդեսին ներկա էինք:

Ծաղիկը ժպտաց ու խոնարհեց գլուխը։

- Ծարա՜վ եմ,- ասաց նա,- եթե այսօր էլ ջուր չլինի՝ կչորանամ։

- Համբերի՛ր, քիչ հետո ջուրը կգա,- ասացի ես ու մոտեցա աղբյուրի ակին։

Ինձ մոտեցան նաև իմ բարեկամները։ Մենք այնքան փոքր էինք, որ ծաղիկների ցողուններն ու խոտերը անանցանելի անտառ էին թվում։

- Ինչո՞ւ ջուրը չի գալիս,- անհանգստացած հարցրեց Չիկարելին։

- Երևի պետք է ձայն տանք,- ասացի ես։

- Այո՛, այո՛, պետք է կանչել նրան,- ասաց ծերունին ու ծնկի իջավ։

Մենք նույնպես ծնկի իջանք։

- Աղբյո՜ւր, բարի՛ աղբյուր,- կանչեց Չիկարելին,- մենք մաքրել ենք քո հունը, մենք սպասում ենք քեզ։

Աղբյուրի ակից խորհրդավոր ձայներ լսվեցին։ Ծերունին դարձավ մեզ ու շշուկով ասաց.

- Բոլորս միասին պետք է կանչենք նրան։

Մենք կռացանք դեպի ակն ու միասին ձայն տվինք.

- Աղբյո՜ւր, բարի՛ աղբյուր, մենք մաքրել ենք քո հունը, ջո՛ւր տուր մեզ։ Մենք մաքուր ենք հոգով, մենք սպասում ենք քեզ, արի՛, արի՛, փրկությա՛ն աղբյուր։

Այս անգամ աղբյուրի ակից խոխոջյուն լսվեց, հետո խնդուն մի ճիչով երկրի ընդերքից դուրս ժայթքեց կենարար ջուրը։

Մենք ցնծությունից վեր-վեր թռանք ու բղավեցինք.

- Ջո՜ւր, ջո՜ւր, ջո՜ւր...

- Սպասե՛ք, դեռ չխմեք,- զգուշացրեց ծերունին։

Իրոք, աղբյուրի ջուրը պղտոր էր։

Աչքներս ջրին հառած՝ մենք սպասում էինք, որ զուլալվի։ Ջրի հոսքը կամաց-կամաց հանդարտվեց ու զուլալվեց։

- Հիմա կարելի՞ է խմել,- հարցրեց Չիկարելին։

- Իհարկե, կարելի է,- ասաց ծերունին։

Չիկարելին անհամբերությամբ իրար հետևից մի քանի բուռ ջուր խմեց, և չէր անցել մի քանի վայրկյան, երբ մեր աչքի առաջ հասակ առավ ու ժպտալով նայեց մեզ Մուշեղ անունով գեղեցիկ տղան։

- Դուք էլ խմեք, ի՞նչ եք կանգնել, խմե՛ք,- ասաց նա։

Բոլորս հերթով խմեցինք ու հասակ առանք, դարձանք առաջվանը։ Չիկարելին մոտեցավ ինձ ու փարվեց կրծքիս։ Նա ինչ-որ բան էր ուզում ասել, բայց հուզմունքից բառեր չէր գտնում։

- Իսկ ո՞ւր է աղջիկը,- անհանգստացա ես։

- Այստեղ եմ, մի՛ անհանգստացեք,- թփերի միջից լսվեց բարի աչքերով աղջկա ձայնը։

Մենք մոտեցանք նրան: Նա կանգնել ու լաց էր լինում: Ես սրբեցի նրա արցունքները:

- Ես ուրախությունից եմ լալիս.... ե՜ս... ե՜ս... ե՜ս...

- Ոչինչ, ոչինչ, պատահում է,- ասացի ու շոյեցի նրա ոսկեհեր գլուխը:

- Ես ուզում եմ հրաժեշտ տալ ձեզ ու վազել տուն: Մայրիկս ու հայրիկս սպասում են ինձ... Ցտեսություն,- ասաց բարի աչքերով աղջիկը, հրաժեշտ տվեց մեզ, գրկեց իր կատվին ու մարգագետնով վազեց դեպի տուն:

- Դե ինչ, մենք էլ հրաժեշտ տանք իրար,- ասաց ծերունին,- ես ու չալպտուրիկը ապրում ենք այն տանը,- սարի կրծքին ծվարած մի տուն ցույց տալով՝ ասաց ծերունին,- համեցե՛ք մեր տուն, ես շատ ուրախ կլինեմ:

- Գնաս բարո՛վ, պապի՛կ,- ասաց Չիկարելին ու մոտեցավ չալպտուրիկ կովին,- դու էլ գնաս բարով: Թող քո կաթը երբեք, երբեք չցամաքի:

Չալպտուրիկը թափահարեց գլուխն ու առաջ անցավ: Ծերունին գնաց նրա հետևից:

Մնացինք ես ու Չիկարելին:

Անբացատրելի ինչ-որ տխրություն իջավ մեզ վրա... Մենք և՛ ուզում էինք բաժանվել, և՛ չէինք ուզում: Ես այնպես էի կապվել Չիկարելիին, որ չէի պատկերացնում, թե առանց նրա ոնց եմ ապրելու...

- Չիկարելի՛,- ասացի ես,- վազի՛ր մեղվանոց, հիմա պապիկդ քեզ է սպասում:

- Ես արդեն Չիկարելին չեմ: Իմ անունը Մուշեղ է:

- Իսկապես,- ժպտացի ես,- գնաս բարո՜վ, Մուշե՛ղ:

- Ցտեսություն... Ես երբեք, երբեք Ձեզ չեմ մոռանա,- ասաց նա ու ամուր, շատ ամուր գրկեց ինձ, հետո միանգամից պոկվեց ու կանաչ դաշտի միջով վազեց դեպի իր պապի մեղվանոցը:

Ես մի քիչ էլ նստեցի աղբյուրի մոտ, մտածեցի շատ բաների մասին ու ճանապարհվեցի տուն...

Հեռվից տեսա իմ ծանոթ ծաղկին, որը կանգնել էր իրիկնամուտի մշուշի մեջ ու թափահարում էր ծաղկաթերթերը:

Հովն ինձ բերեց նրա շշունջը.

- Շնորհակալությո՜ւն ջրի համար... շնորհակալությո՜ւն...

Ծաղկի շշունջը տարածվեց նիրհող դաշտերի ու անտառների վրա:

ՀՐԱԺԵՇՏԻՑ ԱՌԱՋ

Սիրելի՛ բարեկամ, այս գրքի վերջին էջում ուզում եմ հրաժեշտի խոսքեր ասել քեզ:

Ուզում եմ բարի ճանապարհ ու հաջողություն մաղթել. չէ՞ որ դու գնալու ես քո երազանքի հետևից:

Չես պատկերացնում, որքան երջանիկ կզգամ ինձ, երբ իմանամ, որ իրականացել է քո երազանքը, այսինքն՝ դու հասել ես նրան, ինչին ձգտում էիր... Իսկ երազանքին հասնելը այնքան էլ հեշտ չէ, պետք է աշխատել, պայքարել: Այո՛, այո՛, պայքարել՝ երազանքին հասնելու համար: Պետք է ուժեղ լինել, խելացի, բանիմաց, աշխատասեր, որ պայքարդ հաղթանակով պսակվի:

Իհարկե, կարող են դժվարություններ, ձախորդություններ, Աստված մի արասցե, նաև դժբախտություններ լինել, երբեք չվհատվես ու թևաթափ չլինես, երբեք չմտածես, որ դու այլևս ոչ մի բանի ընդունակ չես ու ձեռքերդ ծալած չնստես, քանի որ ես քեզ հետ եմ և այսուհետ միշտ քեզ հետ կլինեմ, առավել ևս այն պահերին, երբ քեզ վիճակվի անցնել Չիկարելիի անցած ճանապարհով:

Եղի՛ր երջանիկ, ու թող կատարվեն քո բոլոր երազանքները:

Ցտեսություն:

Միշտ քո բարեկամ՝ **ՌՈՒԲԵՆ ՄԱՐՈՒԽՅԱՆ**



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Դավիթ Մկր Սարգսյան. Չիկարելիի վերադարձը 3
Մուտք 7
Անակնկալ հանդիպում 9
Թե ինչպես կիրակի օրվա ուրախությունը
փոխվեց տխրության 22
Սառնանուշի խորհուրդները 30
Կարոտից մորմոքող փիղը 38
Ինչի՞ մասին էին զրուցում մայրիկս ու քույրիկս 51
Հանդիպում կախարդ պառավի հետ 53
Հյուրասիրություն 66
Լուսաբաց 91
Անտառապահի խորհուրդը 95
Փրկություն չկա 105
Անգին քարերի արքան 121
Ցխի գերության մեջ 128
Կարոտ 136
Ստերի տոպրակներ 138
Շա՛տ կեր, քի՛չ խոսիր 148
Երկարամատները 158
Պարսատիկավորները 169
Ցույլերը զվարճանում են 178
Ի՞նձ ինչ, հո իմը չէ՞ 190
Դու ո՞վ ես 196
Գույնը փոխող մարդը 207
Հանդիպում բարի ծերունու
ու անկուշտ թագավորի հետ 217
Խռոված աղբյուրը 231
Պայքար 235
Վերադարձ 243
Հրաժեշտից առաջ 246

Ռուբեն Արամի Մարուխյան
ՉԻԿԱՐԵԼԻԻ ԱՐԿԱԾՆԵՐԸ
Վիպակ

Տպագրությունը՝ օֆսեթ:
Չափսը՝ 70x100 1/16: Տպ. 15.5 մամուլ:

ԷԴԻԹ ՊՐԻՆՏ
հրատարակչություն
Թումանյան 12, 3,
(37410) 52 08 48
56 08 41
info@editprint.am